Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2024 թվականի
օգոստոսի 29-ի N 100-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ (ՋՐՎԵԺ, ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ԵՎ ՁՈՎՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ) ՀԱՄԱՅՆՔԸ ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՈՏԱՅՔ-10 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Հայնախագիծ ԲԲԸ

Հասցե. Երևան. Չարենցի 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

ԿՈՏԱՅՔ-10 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆ

*գ.գ. **Ջրվեժ, Զորաղբյուր, Զովք***

Պատվիրատու՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
Պատվեր՝ *N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/2*

ՏՆՕՐԵՆ՝ Գ. ԱԶԻԶՅԱՆ

Երևան 2023

ԳԻՐՔ 1

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 9

ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ 9

Գլուխ I 13

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ 13

1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ 13

1.1.1. Մարզի ընդհանուր նկարագիրը 13

1.1.2. Բնակչություն 22

1.1.3. Բնական պայմանները և հարստությունները 22

1.2. Ջրային ռեսուրսները 25

1.3. Կենսաբազմազանություն 26

1.3.1. Բուսականությունը 26

1.3.2. Կենդանական աշխարհ 26

1.4. Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ 27

1.5. Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ 28

1.6. Բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ) 29

1.6.1. «Էրեբունի» պետական արգելոց *29*

1.6.2. Ջրվեժ համայնքի տարածքում է գտնվում «Ջրվեժ» անտառպարկը *29*

1.6.3. Բնության հուշարձաններ 31

1.7. Օգտակար հանածոներ 33

1.8. Ջրագրություն 39

1.8.1. Գետեր 39

1.8.2. *Լճեր, ջրամբարներ 39*

1.8.3. Ջրանցքներ *40*

1.8.4. Ջրվեժներ 41

1.8.5. Աղբյուրներ 41

1.9. Ինժեներաերկրաբանական պայմաններ 41

1.9.1. Երկրաբանական կառուցվածքը 41

1.9.2. Սեյսմատեկտոնական պայմանները 44

1.10. Լանդշաֆտների դասակարգում և գնահատում 47
1.11. Բնակչություն և ժողովրդագրության վերլուծություն 47
1.12. Հուշարձաններ 50
1.12.1.Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ *56*
1.13.Ջրոսաշրջության աշխարհագրություն 53
1.13.1.*Ջրոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը 56*
1.14. Հաղորդակցուղիներ 56
1.14.1.Տրանսպորտային ենթակառուցվածքներ *56*
1.14.2.Ջրամատակարարում *57*
1.15. Հատակագծային առկա կառուցվածք 57
Բնակելի ֆոնդի վերլուծություն և հեռանկարային առաջարկներ 58
1.16.Սոցիալական ենթակառուցվածք 58
1.16.1. Կրթական հաստատություններ 58
1.16.2.Առողջապահության մատչելիություն: 60
1.16.3.Մշակութային մատչելիություն: 60
1.17. Տնտեսություն 61
1.17.1.Արդյունաբերություն 62
1.17.2.Գյուղատնտեսություն 66
1.17.2.1.Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծություն *66*
1.18. «Կոտայք-10» միկրոռեգիոնի առկա վիճակի վերլուծություն 73
1.18.1.Ջրի, կեղտաջրերի և կոշտ թափոնների կառավարման ենթակառուցվածքներ:..... 74
1.18.2.Էներգետիկ ենթակառուցվածքներ: 76
1.19. «Կոտայք-10» միկրոռեգիոնի բնակավայրերի առկա վիճակի վերլուծություն 77
1.20. Ջրվեժ 77
1.21. Ձորաղբյուր 84
1.22. Ձովք 86
1.23. Սողանքավտանգ գոտիներ 88
1.24.Հողերի ռեկուլտիվացիա 90
II ԳԼՈՒԽ 94
ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 94
2.1. Սոցիալ տնտեսական զարգացում 94

2.2. Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը.....95

2.2.1.Զբոսաշրջային ոլորտ.....95

2.3. Բնակավայրերի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպում և գործառական կառուցվածք.....97

2.3.1.Բնակավայրերի տարածքային զարգացման հիմնական սկզբունքները.....97

2.4. Հասարակական սպասարկման ոլորտ.....97

2.5.Համայնքի քաղաքաշինական զարգացում.....99

2.5.1.Արդյունաբերության զարգացման հեռանկարները.....100

2.5.2.Ագրոարդյունաբերական համալիրի զարգացման հեռանկարները.....100

2.5.3.Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը.....101

2.7. Գյուղերի հատակագծային կառուցվածքի հեռանկարային զարգացում.....101

2.7.1.Գյուղական լանդշաֆտների վերլուծություն.....101

2.8. Քաղաքաշինական հեռանկարային զարգացում.....105

2.9. Զբոսաշրջության ռեսուրսները և զարգացման միտումները.....107

2.10. Զբոսաշրջություն.....109

2.11. Բնակչություն և ժողովրդագրության վերլուծություն.....110

2.12. Համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի նկարագրություն.....112

2.13. Կրթություն.....110

2.14.Սոցիալական ենթակառուցվածքի հեռանկարային զարգացում.....115

2.14.1.Կրթական հաստատություններ.....115

2.14.2.Առողջապահության մատչելիություն.....115

2.14.3.Մշակութային մատչելիություն.....116

2.14.4.Հեռանկարային զարգացում.....116

2.15. Հաղորդակցուղիներ.....118

2.15.1.Տրանսպորտային ենթակառուցվածքներ.....*118*

2.15.2.Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն.....120

2.15.3.Ներդրումային գրավչություն.....121

2.15.4.Զբոսաշրջության.....121

2.16. Գյուղական տարաբնակեցում.....123

2.17. Ժամանակակից գյուղական բնակավայրի զարգացման օրինաչափություններն ու սկզբունքները.....127

2.17.1. Նորարարություն համագործակցության միջոցով 129

2.17.2. Կլաստերի զարգացման սկզբունքները 129

2.17.3. Կլաստերում մասնակցության առավելությունները 129

2.17.4. Կլաստերի բոլոր անդամների համար ընդհանուր ծառայությունների մատուցման իրավասությունների ստեղծում և զարգացում 130

2.18. Սոցիալական ձեռնարկատիրություն 133

2.19. Աճի բևեռներ 135

2.20. Բնակավայրերի սահմանում արտադրական տարածքների հիմնախնդիրները 139

2.21. Քաղաքաշինական համատեքստը *142*

2.21.1. Գյուղական տարածքների ապագա զարգացման մոդելի ձևավորում 142

2.21.2. Կանաչապատում 143

2.22. *Բնակավայրերի հեռանկարային զարգացման ցուցանիշներ* 147

2.23. Ինժեներական ենթակառուցվածքներ 167

2.23.1. Ջրամատակարարում *167*

2.23.2. Ջրահեռացում 170

2.23.3. Ոռոգման համակարգեր 170

2.23.4. Էներգամատակարարում 176

2.23.4.1. Էլեկտրամատակարարում 176

2.23.4.2. Գազամատակարարում 181

2.23.4.3. Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ 183

2.23.5. Հեռահաղորդակցություն 185

2.23.6. Աղբահանություն 185

2.24. Աղետների ռիսկերի կառավարումը 187

2.25. Արտադրական և ընդերքօգտագործման տարածքներ 187

2.26. Գերեզմանոցները 187

2.27. Կլիմայի փոփոխությունն ու գյուղատնտեսությունը 187

Գլուխ III. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 191

3.1. Շրջակա միջավայրի բարելավման միջոցառումներ 191

3.1.1. Համայնքի կանաչապատման միջոցառումներ 192

3.1.2. Մթնոլորտային օդի պահպանություն 196

3.1.3.Հողային ռեսուրսների պահպանություն 197

3.1.4.Աղբահանում 199

Գլուխ IV. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....200

4.1. Ներածություն 200

4.2. Ընդհանուր բնութագիրը.....200

4.3. Վտանգավոր բնական երևույթներ 201

4.4. Տարածքի սեյսմիկ շրջանացման քարտեզ.....201

4.5. Տեխնածին վտանգներ.....203

4.6. Պաշտպանական կառույցներ 204

4.7. Բնակչության պատսպարում.....205

4.8. Բնակչության ազդարարում և իրազեկում 206

4.9. Բնակչության տարահանումը.....209

4.10. Բնակչության տարահանման ձևերն ու միջոցները 209

4.11. Բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովում 211

4.12. Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ.....211

4.13. Հրդեհային անվտանգություն.....212

ԳԼՈՒԽ V. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ 214

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....214

5.1. Գոտևորման նախագծի կապը գլխավոր հատակագծի հետ.....214

5.2. Գոտևորման համակարգի կառուցվածքը.....214

5.3. Գոտևորման նախագծի կիրառման բնագավառը.....214

5.4. Սահմաններ.....215

5.5. Գոտևորման նախագծի կազմը.....215

5.6. Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) սահմանափակումների հիմնավորումները.....215

5.7. ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ 216

5.8. Հատուկ իրավական ռեժիմով գոտիներ (ՍՊԳ).....227

5.9. ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԱՄՓՈՓ ԱՂՅՈՒՍԱԿ..230

5.10. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ 238

5.11. Լրացուցիչ պահանջներ.....241

5.12. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 241

5.13. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 245

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ **248**

Քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտերն ու նորմատիվային փաստաթղթերը 251

ԳԻՐՔ 2

ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Միկրոռեգիոնի բնակավայրերի համակցված.

1. Միրոռեգիոնի դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում
2. Հենակետային հատակագիծ Մ 1:25 000
3. Տարածքի համալիր գնահատում Մ 1:25 000
4. Տարածքի զարգացման հատակագիծ/հիմնական գծագիր/ Մ 1:25 000
5. Տրանսպորտային և ինժեներական հաղորդակցության ուղիների ուրվագիծ Մ 1:25 000
6. Ջրոսաշրջության զարգացման քարտեզ
7. Բնության և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանման ուրվագիծ

Միկրոռեգիոնի առանձին բնակավայրերի.

1. Հենակետային հատակագիծ/տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ/ 1:5 000
2. Տարածքի համալիր գնահատում Մ 1 : 5 000, 1:10 000
3. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների գծագիր Մ 1 : 5 000
4. Հողատեսքերի բաշխումն ըստ սեփականության սուբյեկտների Մ 1:5 000
5. Հողերի նպատակային նշանակության փոփոխությունների գծագիր Մ 1 : 5 000
6. Տարածքի զարգացման հատակագիծ/հիմնական գծագիր/ Մ 1 : 5 000
7. Քաղաքաշինական գոտիավորման նախագիծ Մ 1 : 5 000

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա փուլի սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիական իրավիճակն առաջնահերթ պահանջ է դրել մշակելու և իրականացնելու նոր, կայացվող պայմաններին համապատասխանող, մարզի իրական հնարավորությունները հաշվի առնող քաղաքաշինական գործունեություն: Դրա հետ կապված առաջացել է անհրաժեշտություն փաստաթղթերի մշակման նոր տիպի նպատակային ծրագրի, որը կհամապատասխանի մարզի հավասարակշռված և ներդաշնակ զարգացման նպատակներին ու խնդիրներին և կներառի տարածական պլանավորման հիերարխիական երեք մակարդակ՝ մարզի (տարածքային հատակագծման նախագիծ), բնակավայրի (գլխավոր հատակագիծ) և բնակավայրի (գոտևորման նախագիծ):

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանական խնդիրների համալիրի իրականացմամբ:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (Կոտայք-10՝ գ.գ. Ջրվեժ, Ձորաղբյուր, Զովք) նախագիծը մշակվել է ՀՀ Կառավարության որոշմամբ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N ՀՀՔԿ-ԲՄ ԱՇՁԲ-23/2) և վերջինիս կողմից տրամադրված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

Մշակվող միկրոռեգինալ մակարդակի փաստաթուղթն իրենից ներկայացնում է բազմանպատակ նախագիծ, որի հիմնական նպատակը համայնքների տարածքում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումն է, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, տարածական-տնտեսական գործունեության համակարգված կազմակերպումն է, տարածաշրջանի և համայնքների գործառնական-հատակագծային տնտեսական և մշակութային կապերի, ճարտարապետա-հատակագծային կառուցվածքի և ֆունկցիոնալ գոտևորման խնդիրների լուծումը՝ քաղաքաշինության, արտադրության զարգացմանը նպաստող արդյունավետ պայմանների և բնական միջավայրի, նյութական մշակութային ժառանգության պահպանման ու կատարելագործման ապահովմանն ուղղված միջոցառումների առաջադրմամբ, բնական, տնտեսական և աշխատանքային ռեսուրսների համալիր և արդյունավետ օգտագործմամբ:

ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հասարակության հետխորհրդային ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական արմատական փոփոխությունները շոշափելի փոփոխություններ մտցրեցին նաև քաղաքաշինական գործունեության մեջ: Պետությունը դադարեց անշարժ գույքի և ֆինանսական միջոցների միահեծան սեփականատերը լինել, ներկայումս որպես կառուցապատող, ներդրող (այսինքն՝ քաղաքաշինական գործընթացի առավել ակտիվ մասնակիցներ) հանդես են գալիս բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք: Հետևաբար, արդի՝ նոր սերնդի քաղաքաշինական փաստաթղթերում հարկ է կանոնակարգել քաղաքաշինական գործունեության իրականացման մեխանիզմները՝ հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները և ապահովելով տարածաշրջանի կայուն զարգացում: Տարածաշրջանի կայուն քաղաքաշինական զարգացման նպատակները ներառում են.

- քաղաքային ու գյուղական բնակավայրերի, ուրբանիզացված և միջբնակավայրային տարածքների հավասարակշռված զարգացում և էկոլոգիական վերակառուցում,
- բնակչության բնակության պայմանների մակարդակի բարձրացում,
- սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործում՝ բնակչության ռեկրեացիայի և առողջության կազմակերպման համակարգերի ներառումով,
- էկոլոգիապես անվտանգ արդյունաբերական, տրանսպորտային և ինժեներա-տեխնիկական ենթակառուցվածքների ձևավորում,
- պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանում վերակենդանացում,
- տարածքների քաղաքաշինական կանոնակարգման միասնական համակարգի ձևավորում՝ խթանելու ներդրումային գրավչությունը:

Հայեցակարգային դրույթներ

Միկրոռեգիոնալ տարածական պլանավորման հիմնադրութային փաստաթղթերի մշակման հայեցակարգի հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել բարենպաստ ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում կարտացոլվեն միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, այն է՝

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի համակողմանի վերլուծությունը,
- մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային անհրաժեշտ խնդիրների բացահայտումը,
- համայնքի հեռանկարային զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը:

<u>Նախագծման համար ուղեցույց են ծառայել համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, հետևյալ նորմատիվային և նախագծային փաստաթղթերը.</u>

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի № 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 108-Ն որոշումը:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 23-ի № 227-Ն որոշումը:

• Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 997-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-ն որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին N 855-Ն որոշումը:

• Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին» № 625–Ն որոշումը:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերը կանոնակարգում են համայնքների քաղաքաշինական զարգացումը՝ հիմնված հետևյալ հիմնական փուլերի վրա.

• համայնքներում առկա քաղաքաշինական իրավիճակի բացահայտում ու վերլուծությունը,

• քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու սահմանազատումը:

• առաջնային սպասարկման և սոցիալական ենթակառուցվածքի անհրաժեշտ կազմի առաջադրումը և տեղաբաշխումը,

• համայնքի համար հիմնական հեռանկարային ուղղությունների զարգացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,

• միասնական քաղաքաշինական միջավայրի ձևավորմանը միտված՝ բնակավայրերի տարածքում կառուցապատման սահմանափակումների և չափորոշիչների համակարգի մշակումը:

<u>Նախագծում հաշվի են առնվել նաև.</u>

• Նախագծային տարբեր կազմակերպությունների կողմից մշակված մարզի առանձին բնակավայրերի գլխավոր հատակագծերը: ՀՀ Կառավարության, շահագրգիռ նախարարությունների, ՀՀ կադաստրի կոմիտեի, ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի, ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի, Կոտայք 10-ում ներառված բնակավայրերի ելակետային տվյալները, որոշումները, ծրագրային փաստաթղթերը:

• ՀՀ կադաստրի կոմիտեի կադաստրային քարտեզները:

• «Հայնախագիծ» ԲԲԸ-ում մշակված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» N 610-Ն որոշմամբ հաստատված հիմնադրույթները:

Նախագծում հաշվի են առնված ՄԵՄԱԹ-ի «Հիմնադիր սկզբունքները Եվրոպական մայր ցամաքի կայուն զարգացման» և «Հայաստանում Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայի» միջոցառումների և տարածքային պլանավորման փոխկապակցվածության սկզբունքները, որոնք կարելի է խմբավորել հետևյալ բլոկներով.

- Տնտեսության կայուն զարգացում՝
  - Արդյունաբերություն,
  - Գիտատար արդյունաբերական արտադրություն,
  - Ագրոարտադրական համալիր,
  - Ռեկրեացիա, հատկապես տուրիզմ,
  - Փոքր և միջին բիզնես,
  - Բնապահպանական միջոցառումներ:

- Քաղաքաշինության կայուն զարգացում՝
  - Բնակելի շինարարություն,

- _ Բնակելի-կոմունալ շինարարություն,
- _ Լանդշաֆտի ռացիոնալ օգտագործում,
- _ Բնապահպանական միջոցառումներ:

- Ինժեներական, տրանսպորտային և տեխնիկական ենթակառուցվածքների կայուն զարգացում՝
- _ Տրանսպորտ,
- _ Ջրամատակարարում, ջրահեռացում,
- _ Էներգամատակարարում,
- _ Թափոնների օգտահանում,
- _ Բնապահպանական միջոցառումներ:

Ակնկալվող արդյունքներ

1) Միկրոռեգիոնի և մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
2) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
3) Արդյունաբերության զարգացում
4) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
5) Տնտեսության դիվերսիֆիկացում և արտադրության գիտատար, ստեղծարար տեխնոլոգիաների ճյուղերի զարգացում
6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
9) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
10) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդլայնում
11) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում:

ԳԼՈՒԽ I
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Նախագծի շրջանակում միկրոռեգիոնների տարածքները դիտարկվում են որպես քաղաքաշինական ընդհանուր հիմնախնդիրներով շաղկապված տարածական միավորներ և որպես միասնության անբաժանելի մասեր կազմող վարչատարածքային միավորների՝ բնակավայրերի համախումբ, որոնք ընդհանուր հիմնախնդիրների շարքում, պահանջում են ընդհանրությունից և յուրահատկությունից բխող համապատասխան քաղաքաշինական լուծումների առաջադրում:

Տվյալ բաժնում կատարվել է առկա վիճակի վերլուծություն ըստ հետևյալ ենթաբաժինների.

- Տարածաշրջանի սահմաններում բնական և անտրոպոգեն հողօգտագործումների ամրագրում,
- Սահմանվել են տարբեր նպատակային նշանակության հողօգտագործումների նկատմամբ վերգետնյա կամ ստորգետնյա սահմանափակումների համալիրը,
- Վերլուծվել են ընթացիկ մարզային և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրարգրերը և դրանց իրականացման գործընթացը:

1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ

1.1.1. Մարզի ընդհանուր նկարագիրը

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900-2500մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանն ու Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Մարզի տարածքով են անցնում Երևան-Շորժա և Հրազդան-Իջևան երկաթուղիները, իսկ մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք ընդամենը 45 կմ է: ՀՀ Կոտայքի մարզի տարածքը 2076 քառ. կմ է և ունի մոտ 320000 բնակչություն: Մարզի տարածքով են անցնում Թբիլիսի-Երևան երկաթուղու մի հատվածը: Մարզում գրանցված են 3208 պատմամշակութային արժեքներ և հուշարձաններ:

Մարզկենտրոնը՝ ք. Հրազդան

Տարածաշրջանները՝ Հրազդան Կոտայք Նաիրի

Քաղաքները՝ Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Եղվարդ, Բյուրեղավան, Նոր Հաճըն, Ծաղկաձոր:

Գտնվելով ՀՀ տարածքի կենտրոնում Կոտայքի մարզը միակն է, որը միջպետական սահման չունի ՀՀ հարևան որևէ պետության հետ:

Մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որոնց մեջ հիշարժան է Գառնու հեթանոսական տաճարը՝ կառուցված մ.թ. 1-ին դարում և համարվում է մինչ օրս պահպանված նախաքրիստոնեական հայկական արվեստի եզակի նմուշ: Նշանավոր են նաև Գ.Մագիստրոս Պահլավունու կողմից կառուցված Բջնի բերդը, միջնադարյան Կեչառիսի վանքային համալիրը և Գեղարդավանքը, որտեղ գտնվում է հայտնի «գեղարդը», որով հռոմեացի զինվորը խոցել է «Քրիստոսի կողը»: Մարզը հարուստ է հանքային ջրերով, դրա վկայությունն են «Բջնի», «Հանքավան» և «Արզնի» հանքային ջրերը: Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները: Հատիս լեռը (նախկին անվանումը՝ Շամիրամի) կոնաձև հրաբխային զանգված է (բարձրությունը՝ 2 528 մ): Լեռը ծածկված է մարգագետնատափաստանային բուսականությամբ: Արայի լեռը (բարձրությունը՝ 2 577 մ)՝ հանգած հրաբխային զանգված է, գտնվում է Արագած լեռից արևելք՝ Քասախ և Հրազդան գետերի միջև:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1 200 – 1 300 մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1 700 – 1 800 մ բարձրության վրա): Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան-Սևան ավտոմայրուղին և Երևան-Հրազդան-Իջևան երկաթգիծը:

2021թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 11.6 %,
- գյուղատնտեսություն 8.4 %,
- շինարարություն 9.8 %,
- մանրածախ առևտուր 5.1 %,
- ծառայություններ 2.9 %:

Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է: Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերությունն է: Մարզը մեծ դեր ունի էներգետիկայի ոլորտում: Այստեղ են գտնվում էլեկտրաէներգիայի արտադրության 2 խոշոր կազմակերպություն: Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ոլորտները. ա) սննդամթերքի և խմիչքների արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, խմիչքների արտադրություն, ծխախոտային արտադրատեսակների արտադրություն), բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրատեսակների արտադրություն (ապակու և ապակե արտադրատեսակների արտադրություն, ցեմենտի արտադրություն), գ) հիմնական մետաղների արտադրություն, (թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն), դ) ոսկերչական արտադրատեսակների, ոչ թանկարժեք զարդերի արտադրություն. Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

<u>Աբովյան քաղաքը</u> (2022թ. տարեսկզբին՝ 45.0 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 18 կմ հեռավորության վրա: Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է, արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը: Քաղաքի արդյունաբերության հիմնական

ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում գարեջրի արտադրությունը:

Բյուրեղավան քաղաքի (2022թ. տարեսկզբին՝ 9.2 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 24 կմ հեռավորության վրա) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում ոչ մետաղական հանքային այլ արտադրատեսակների արտադրությունը (ապակու և ապակե արտադրատեսակների արտադրություն):

Եղվարդ քաղաքը (2022թ. տարեսկզբին՝12.1 հազ. բնակիչ) գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում, հեռավորությունը Երևանից 18 կմ է: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և խմիչքների արտադրությունը (թորած ալկոհոլային խմիչքների (կոնյակի), կաթնամթերքի), կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրությունը: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի մեջ հիմնական ուղղությունը հացահատիկի մշակությունն է:

Նոր Հաճըն քաղաքի (2022թ. տարեսկզբին՝ 9.2 հազ. բնակիչ, հեռավորությունը Երևանից 30 կմ է) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի կահույքի և ոսկերչական (մասնավորապես՝ ադամանդի) արտադրանքների արտադրությունը:

Հրազդան քաղաքի (2022թ. տարեսկզբին՝ 39.9 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 50 կմ է: Գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ է գտնվում Հրազդանի ՋԷԿ-ը, որը հզորագույնն է Հայաստանի Հանրապետությանում: Արդյունաբերության մյուս ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնավորապես՝ ցեմենտի արտադրություն):

Չարենցավան քաղաքը (2022թ. տարեսկզբին՝20.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 36 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի ձախ ափին: 1953թ. ՀԷԿ-ի շինարարության ավարտից հետո քաղաքում կառուցվեցին մի շարք խոշոր արդյունաբերական կազմակերպություններ և Չարենցավանը դարձավ կարևոր արդյունաբերական կենտրոն: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի մետաղագործական արդյունաբերությունը և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը (թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն):

Ծաղկաձոր քաղաքի (2022թ. տարեսկզբին՝1.2 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 55 կմ հեռավորության վրա) կլիման մեղմ է և առողջարար: Ծաղկաձոր քաղաքը զբոսաշրջային, առողջարանային և լեռնադահուկային սպորտի կենտրոն է:[1]

Միակ մարզն է, որը միջպետական սահման չունի Հայաստանի հարևան որևէ պետության հետ: Կոտայքը միաժամանակ նաև այն չորս մարզերից մեկն է, որոնք անմիջապես հարում են մայրաքաղաք Երևանին:

Մարզի տարածքն ընդգրկում է Կոտայքի սարավանդը, Մարմարիկ գետի ավազանը, Հրազդան գետի ավազանի վերին ու միջին հատվածը, ինչպես

[1] https://armstat.am/file/doc/99533688.pdf

նաև Գեղամա լեռնաշղթայի արևմտյան լանջերը: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

Կոտայքի մարզը զբաղեցնում է 2089 կմ² տարածք (8-րդը Հայաստանի մարզերի շարքում), վարչական կենտրոնը Հրազդան քաղաքն է:

Կոտայքի արևմտյան մասը նախկինում մտել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Կոտայք, իսկ արևելյանը՝ Մազազ գավառների մեջ: Ներկայիս վարչատարածքային միավորը ձևավորվել է Հայկական ԽՍՀ-ի մաս կազմող Աբովյանի, Հրազդանի և Նաիրիի շրջանների միավորման հետևանքով: Կոտայքի մարզը խորհրդային տարիներին ունեցել է զարգացած մեքենաշինական, հաստոցաշինական արդյունաբերություն, որն այժմ գրեթե վերացել է:

Կոտայքի մարզը Հանրապետության տնտեսական խոշորագույն կենտրոններից է: Հրազդանում մինչ օրս գործում է ջերմաէլեկտրակայան և ջրաէլեկտրակայան, որոնք բավարարում են Հայաստանի էներգետիկ պահանջների մի մասը:

Մարմարիկ գետի ձախ ափին գտնվող Մեղրաձոր գյուղում պահվում են երկրի ոսկու պաշարների մեծ մասը: Ծաղկաձոր քաղաքը Հայաստանի լեռնադահուկային սպորտի կենտրոնն է, որն ունի կարևոր զբոսաշրջային նշանակություն: Մարզի տարածքը հարուստ է նաև պատմամշակութային հուշարձաններով: Դրանց մարգարիտը Գառնու հեթանոսական տաճարն է, որը կառուցվել է 1-ին դարում և համարվում է մինչ օրս պահպանված նախաքրիստոնեական հայկական արվեստի եզակի նմուշներից մեկը: Նշանավոր են նաև Գրիգոր Մագիստրոս Պահլավունու կողմից կառուցված Բջնի բերդը, ինչպես նաև միջնադարյան Կեչառիսի վանքային համալիրը և Գեղարդավանքը՝ ուր և պահվում էր հայտնի գեղարդը, որով հռոմեացի զինվորը խոցել է Քրիստոսի կողը:

Անվան ծագումնաբանություն

Ըստ ընդունված վարկածի՝ Կոտայք անվանումը կապված է Մեծ Հայքի Արշակունի թագավոր Խոսրով Կոտակի անվան հետ: Սակայն որոշակի այլ աղբյուրներ էլ իրենց հերթին վկայում են, որ Կոտայք երկրամասի անվանումը բոլորովին էլ կապված չէ «Խոսրով Մեծի թոռ, քաջ և հզոր Տրդատ թագավորի որդի» Խոսրովի հետ և ունի էթնիկական ծագում:

Ենթադրվում է, որ Կոտայք անվանումը կապված է հինաշխարհյան նույնանուն ցեղանվան հետ: Նույնացվում է ուրարտական սեպագիր արձանագրությունների Էտունի երկրի անվան հետ: Ղևոնդ Ալիշանը հնարավոր է համարում, որ հույն նշանավոր աշխարհագրագետ Կլավդիոս Պտղոմեոսի հիշատակած Կոտակենե գավառը նույն Կոտայքն է:

Ոմանք կարծում եմ, որ Կոտայքի անվանումը կապված է Միջնադարյան Հայաստանում ապրող մի իշխանի անվանը, ուրիշները՝ Կոտայքի Կենտրոն (այժմ՝ Գետամեջ) գյուղի անվանը, կամ էլ Սյունյաց աշխարհի Գեղարքունիք գավառի Կոթ կամ Կոթաքար գյուղաքաղաքի անվան հետ, իբրև Կոթա փոխադրվածների կամ Կոթայեցիքի գավառ:

Կոտայքի մասին տեղեկություններ են պահպանվել Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ում և մատենագիրների երկերում: Հայ մատենագիրներից առաջին հիշատակությունը Սեբեոսինն է (7-րդ դար): Արաբ պատմագիր Բալաձորին Կոտայքը հիշում է Կույտա ձևով: Միքայել Չամչյանը, այլ տեղեկություններից օգտվելով, Կոտայքն անվանում է Խատա կամ Խատայոց:

Պատմություն

Վաղ շրջան

Կոտայքի արևմտյան մասը հնում մտնում էր Այրարատ նահանգի Կոտայք, իսկ արևելյանը՝ Մազազ գավառների կազմի մեջ: Կոտայք գավառի մասին տեղեկություններ պահպանվել են 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ում և հայ մատենագիրներ Սեբեոսի, Թովմա Արծրունու, Ասողիկի, Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի և Զաքարիա Քանաքեռցու աշխատություններում, հայկական հին ձեռագրերում և հիշատակարաններում: Նրա անցյալի պատմական և մշակութային կյանքի վկայություններն են Կոտայքում պահպանված բազմաթիվ հուշարձանները: Ըստ հնագույն վկայությունների՝ Կոտայքի ներկայիս տարածքը բնակեցված է եղել դեռևս հազարավոր տարիներ առաջ: Հրազդան քաղաքի տարածքում հայտնաբերվել են մ.թ.ա. 2-1-ին հազարամյակների դամբարաններ: Պահպանվել է մ.թ.ա. 13-րդ դարի քարավանատուն: Վաղ ժամանակներում մարզի ներկայիս տարածքում և հարակից շրջաններում ապրող ուրարտացիները կարողացան միավորել տեղի ցեղախմբերին և ստեղծել Վանի թագավորությունը, որի մեջ էլ մտնում է Կոտայքի տարածքը:

Ըստ ուրարտական արձանագրությունների՝ մարզի ներկայիս տարածքն ընդգրկվում էր Էթիունի խոշոր ցեղային միության տիրապետության մեջ: Աբովյան քաղաքի տարածքում հայտնաբերվել է Արգիշտի I թագավորի (մ.թ.ա. 8-րդ դար) սեպագիր արձանագրությունը: Քաղաքի հարավային մասում կա մ.թ.ա. 2-1-ին հազարամյակի կիկլոպյան ամրոց, բնակատեղի և դամբարաններ:

Կոտայքի մարզի ներկայիս տարածքը եղել է հին հայերի հեթանոսության գլխավոր կենտրոններից մեկը: Այստեղ է գտնվում Հայաստանի տարածքում մինչ օրս պահպանված միակ հեթանոսական կառույցը՝ Գառնու տաճարը: Միջնադարյան հայկական մատենագիտության մեջ Մովսես Խորենացու առաջ քաշած ավանդությունը ճանաչվել է ճշմարիտ-իրական: 14-րդ դարի մի ձեռագրի մեջ էլ դաստակերտ-ամրոցի հիմնադրման տարի է համարվում մ.թ.ա. 2166 թվականը:

Միջնադար

Գեղարդի վանք

Վաղ միջնադարում (3-5-րդ դարեր) այս հողերը պատկանել են հայոց թագավորի կալվածքները տնօրինող Վարաժնունիների տոհմին: 5-րդ դարում հովիտն անցավ հայկական ազդեցիկ Կամսարական տոհմի տիրապետության տակ, որը սերվել էր Իրանի 7 մեծագույն տներից մեկի՝ Կարենյաններ-Պահլավունիներից: Կամսարական տոհմի հետնորդ, Պահլավունի տոհմի առաջնորդ Գրիգոր Մագիստրոսը 1033 թվականին հրամայեց Ծաղկաձոր ավանում կառուցել եկեղեցի, որը կոչեցին Գրիգոր Լուսավորիչի անունով: Արդյունքում՝ հիմնվեց Կեչառիս վանական համալիրը:

Արշակունիների ժամանակ Կոտայքը պատկանում էր հայոց արքունիքին, իսկ 5-7-րդ դարերում, ըստ որոշ տվյալների՝ Ամատունյաց նախարարական տանը: Կոտայքի տարածքը կռվախնձոր է եղել Ամատունիների և հայոց իշխան Գրիգոր Ա Մամիկոնյանի միջև: Ըստ Հայոց կաթողիկոս և պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու գրառումների՝ Արամոնք գյուղը եղել է հայոց կաթողիկոսական կալված: 9-10-րդ դարերում պատկանել է Բագրատունիների թագավորությանը, իսկ 10-րդ դարի վերջում գավառը նվիրվել է Պահլավունիներ իշխանական տոհմին: Հետագայում՝ 12-13-րդ դարերում տարածքը եղել է Զաքարյանների իշխանության տակ և պատկանել է Իվանե Զաքարյանին, ինչպես նաև նրան ենթակա հայ իշխաններին: 13-15-րդ դարերում վերջինիս մի մասն անցել է Պռոշյանների և Խաղբակյանների ենթակայության տակ: 1253 թվականին ներկայիս մարզի տարածքի մի մասը Մանգու Խանը շնորհել է իշխան Սմբատ Օրբելյանին՝ թուրք սելջուկների և թաթար մոնղոլների տիրապետության շրջանում:

Նոր և նորագույն ժամանակներ

Տարածքի հետագա տիրապետողների թվում եղել են ակ-կոյունլու, կարա-կոյունլու ցեղախմբերը, Մեֆյան Պարսկաստանը, իսկ 18-րդ դարի կեսերին Կոտայքը ձևավորել է Երևանի խանության Կարբի-Բասարի և Կըրխբուլաղ մահալները: Այս տարածքը նույնպես ենթարկվել է Շահ Աբասի իրականացրած բռնագաղթին, ինչի հետևանքով բնակիչները լքել են այն: 1828-1829 թվականներին Արևելյան Հայաստանում Ռուսաստանի տիրապետության հաստատումից հետո այն մտել է Կոտայք գավառի մեջ: Թուրք-պարսկական տիրապետության օրոք բաժանված էր Երևանի խանության Կըրխ-Բուլաղի և Գասանի-Բասարի մահալների միջև: Արևելյան Հայաստանը վերջնականապես Ռուսաստանին միացվելուց և Երևանի նահանգը կազմվելուց հետո (1849) Կոտայքը մտավ այդ նահանգի մեջ: Բնակչությունը հիմնականում զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ: Շրջանում չկային արդյունաբերական քաղաքներ: Գյուղերը փոքր էին և անբարեկարգ:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին, մինչև 1925 թվականի հոկտեմբերի 20-ը, Կոտայքը որպես գավառակ մտել է Երևանի գավառի մեջ, այնուհետև դարձել առանձին շրջան: Կոտայքը Հայաստանի հետամնաց գյուղատնտեսական շրջաններից էր: 1700 գաղթական ընտանիքներ բառացիորեն ընչազուրկ էին և անօթևան: 1922 թվականին կայացած անկուսակցականների համագումարը որոշեց, մինչև կառավարության օգնությունը, գյուղում միջոցներ ձեռնարկել սովի դեմ պայքարելու համար: Այս ժամանակահատվածում շրջանի բնակչության մոտ 95% անգրագետ էր: Բոլոր գյուղերում բացվեցին անգրագիտության վերացման կայաններ (լիկվիդացիոն կայաններ) և սկսվեց զանգվածային տարրական կրթության իրագործումը: Այդ նպատակով տարրական դպրոցներ բացվեցին



գյուղերում: Քանաքեռում 1926 թվականին բացվեց յոթնամյա դպրոց, իսկ Ելղովանում՝ կոլերիտ դպրոց: 1925 թվականին շրջանում գործում էր արդեն 24 դպրոց՝ 2684 աշակերտով:

1922 թվականին նախկին աղայապատկան հողերի վրա կազմակերպվեց Ձագ գյուղի Մյասնիկյանի անվան տնտեսությունը: Այստեղ աճեցվող ծխախոտի, խնձորի և վարունգի բերքատու տեսակները հետագայում տարածվեցին շրջանի մյուս գյուղերում: Առաջին կոլեկտիվ տնտեսություններն Կոտայքում կազմակերպվեցին 1928 թվականին, Ելղովանում (այժմ՝ Կոտայք) և Ճաթղռանում (այժմ՝ Գեղաշեն): Նրանցից յուրաքանչյուրը միավորում էր 12 տնտեսություն: 1930 թվականի սկզբներին կոլտնտեսություններ կազմակերպվեցին ևս 24 գյուղերում: 1934 թվականին կոլտնտեսությունները միավորում էին 3514, 1935 թվականին՝ 5408 ընտանիք: 1936 թվականին կոլտնտեսություններն արդեն ընդգրկում էին շրջանի բնակչության 95%-ը: 1934 թվականին ստեղծվեց մեքենա-տրակտորային կայան, որը սպասարկում էր 26 տնտեսությունների: Ավելի ուշ Ջրվեժում կազմակերպվեց 2-րդ ՄՏԿ:

Կոտայքի առաջին արդյունաբերական ձեռնարկությունը՝ Արզնիի հանքային ջրերի գործարանը, կառուցվեց 1927 թվականին: 1928 թվականին այնտեղ կառուցվեց նաև Հայաստանում առաջին առողջարանը: Շրջանի կուսակցական կազմակերպության ղեկավարությամբ աշխատավորները եռանդուն մասնակցություն ունեցան Քանաքեռի ՀԷԿ-ի, հատկապես՝ նրա ջրանցքի և ջրավազանի կառուցմանը: Կոտայքի աշխատավորությունը մասնակցեց նաև 1930-ական թվականներին սկսված և 1950-ական թվականներին շարունակված Երևան-Աղստաֆա երկաթուղու շինարարությանը:

Ետպատերազմյան տարիներին զգալի փոփոխություններ տեղի ունեցան Կոտայքի տնտեսության կառուցվածքում. աննախընթաց չափով աճեց արդյունաբերության տեսակարար կշիռը շրջանի տնտեսության ընդհանուր հաշվեկշռում. կառուցվեցին և գործարկվեցին 12 կարևոր արդյունաբերական ձեռնարկություններ: Արդյունաբերական ձեռնարկությունների հետ մեկտեղ շրջանում հայտնվեցին նոր բնակավայրեր՝ Նոր Հաճընն և Արզնի քաղաքատիպ ավանները: 1958 թվականին նախկին շրջկենտրոններ Քանաքեռ ու Ավան գյուղերը միացվեցին Երևանին, իսկ Գառնի, Գողթ, Քյուլլուջա գյուղերում, Աբովյանում և Քանաքեռավանում (նոր բնակավայր, որի կառուցումն սկսվել է 1960 թվականից) ստեղծվեցին մասնագիտացված խորհրդային տնտեսություններ: Նախկին կոլտնտեսությունների և բնակատեղիների հիմքի վրա ստեղծվեցին նաև Աբովյանի ծխախոտի զոնալ փորձակայանը, անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի Բալահովտի ուսումնա-փորձնական տնտեսությունը, Առինջի պտղատնկարանային տնտեսությունը, Հրազդանի անտառտնտեսությունը, Ջրվեժի, Ձորաղբյուրի, Ողջաբերդի, Պտղնիի, Ջրաբերի, Հացավանի պետական տնտեսությունները, Աբովյանի ջերմոցային տնտեսությունը:

Կոտայքի գյուղատնտեսության մասնագիտացման և մշակվող հողատարածությունների բերքատվության բարձրացման համար մեծ նշանակություն ունեցավ Կոտայքի ջրանցքի շինարարությունը, որի առաջին հերթն ավարտվեց 1958 թվականին: 1970 թվականին ջրովի հողատարածությունները կազմեցին մոտ 10 000 հա (1940 թվականին՝ 4936 հա): Ակնա լճից անցկացված ջրանցքով ջրվում են Գեղամա լեռնաշղթայի արոտավայրերը՝ մոտ 1000 հա:

Աշխարհագրություն

Աժդահակ լեռը

Կենտրոնական դիրք գրավելով Հայաստանի տարածքում Կոտայքի մարզը արևելքում սահմանակցում է Գեղարքունիքի մարզին, հյուսիսում և հյուսիս-արևելքում համապատասխանաբար Լոռու և Տավուշի մարզերին, հարավում սահմանակից է Արարատի մարզին և քաղաքամայր Երևանին, իսկ ամբողջ արևմուտքում՝ Արագածոտնի մարզին: Ամենաերկար սահմանագիծը Արագածոտնի մարզի հետ անցնող սահմանն է, իսկ ամենակարճը՝ Տավուշի մարզի սահմանը: Կոտայքը գտնվում է Արարատյան գոգավորության նախալեռան հյուսիս-արևելքում՝ Հրազդան և Ազատ գետերի միջև, Կոտայքի սարավանդի վրա: Հյուսիս-արևելքում բարձրանում են Գեղամա լեռնաշղթան (Աժդահակ լեռ 3598 մ) և Ողջաբերդի լեռնաբազուկը, արևմուտքում ձգվում է Հրազդանի կիրճը, իսկ հարավում՝ Նորքի բարձրությունը:

Լեռնային գոտու մակերևույթը բավականին բարդ է: Աժդահակի գագաթամերձ բարձրավանդակը կազմված է հրաբխային ապարներից՝ մասնատված բազմաթիվ խորը հովիտներով: Գեղամա լեռների արևմտյան լանջերն ալիքաձև և սանդղավոր են, կտրտված ժամանակավոր հոսք ունեցող հեղեղատներով, որոնք վարարում են գարնանային ձնհալքերի ժամանակ: Միջին լեռնային մասում գերակշռում են չորրորդային անդեզիտո-բազալտներ և բազալտներ: Դեպի Նորք – Ջրվեժ սարահարթ իջնող լեռնալանջերը խիստ մասնատված են էրոզիայի ենթարկված հովիտներով և ձորակային ցանցով, որոնցով ձնհալքի և գարնանային վարարումների ժամանակ հոսում են սելավներ: Դրանց մի մասը իրացնում է Գետառ գետը, իսկ մյուս, հիմնական մասը չի առաջացնում մակերեսային հոսք, այլ ներծծվում է: Շատ տեղերում ներծծված ջրերը երկրի մակերես են դուրս գալիս քաղցրահամ ջրերի աղբյուրների ձևով:

Ջրվեժ-Ողջաբերդ տարածքում գերիշխում է տափաստանային, իսկ լեռնալանջերին՝ ալպիական լանդշաֆտը, որը ծառայում է որպես արոտավայր:

Կոտայքի մարզի կենտրոնական հատվածում՝ Հրազդան գետի երկու ափերին, տարածվում են Կոտայքի և Եղվարդի թույլ մասնատված լավային սարավանդները: Կենտրոնական հատվածում են գտնվում Գութանասարի, Արայի և Հատիս լեռնագագաթները:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1200-1300 մետր բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1700-1800 մետր բարձրության վրա): Ամենաբարձր կետը Աժդահակ լեռն է՝ 3598 մետր բարձրությամբ: Աժդահակ լեռը գտնվում է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմանագլխին: Ռելիեֆը մեղմ ալիքավոր է, տեղ-տեղ բարձրանում են մնացորդային բլուրներ և խարամային կոներ: Ծածկված է Գեղամա լեռնաշղթայի հրաբուխներից արտավիժած լավաներով ու տուֆերով, որոնք ընդարձակ աստիճաններով Ողջաբերդի լեռնաբազուկից ձգվում են դեպի Գետառի ալյուվիալ հովիտը:

Թեք ու անտառազուրկ լանջերում շատ են հեղեղատներն ու փոքր հովիտները: Շրջանի տարածքի մեծ մասում տեղանքի թեքությունները 8°-ից չեն անցնում, ուստի տնտեսական յուրացման համար համեմատաբար դյուրին են: Կոտայքի մարզի հողաբուսական ծածկույթը բավականին խայտաբղետ է: Գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, բարձրադիր վայրերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը: Սարավանդներին բնորոշ են շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերին սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստաններ: Ծաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ տարածվում են գորշ դարչնագույն հողերը: Բարձրադիր լեռնային գոտուն բնորոշ է լեռնամարգագետնային լանդշաֆտը: Գետահովիտներում կուլտուրացված ոռոգվող հողեր են: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային արոտավայրերը: Լավ են արտահայտված բնական լանդշաֆտային գոտիները:

Արաքատ լեռան համայնապատկերը Կոտայքի մարզից

Կառավարում

Վարչական բաժանում

Կոտայքի մարզն իր տարածքի մեջ ընդգրկում է Խորհրդային Հայաստանի մաս կազմող Հրազդանի, Աբովյանի և Նաիրիի նախկին շրջանները: Ներկայումս դրանց անվանում են տարածաշրջաններ: Կոտայքի մարզը բաղկացած է երեք տարածաշրջաններից՝ Հրազդանի, Աբովյանի և Նաիրիի:

Կոտայքի կենտրոնական տարածաշրջանը Հրազդանն է, որը գտնվում է Հրազդան գետի վերին և միջին ավազանում: Հրազդանի տարածաշրջանում են գտնվում նաև Չարենցավան քաղաքը, որոնք նախկին արդյունաբերական հսկաներ էին: Այստեղ է գտնվում նաև Հայաստանի խոշորագույն զբոսաշրջային և առողջարանայի կենտրոններից մեկը՝ Ծաղկաձորը:

Գյուղական բնակավայրերն են՝ Ալափարս, Աղավնաձոր, Արզական, Արտավազ, Բջնի, Լեռնանիստ, Կարենիս, Հանքավան, Մարմարիկ, Մեղրաձոր, Սոլակ, Ջրառատ, Քաղսի և Ֆանտան:

Կոտայքի մյուս տարածաշրջանը Աբովյանն է: Այն գտնվում է Ազատ և Հրազդան գետերի միջև, Կոտայքի սարավանդի վրա: Աբովյանի տարածաշրջանում է գտնվում Աբովյան քաղաքը, ինչպես նաև բավականին երիտասարդ Բյուրեղավանը: Գյուղական բնակավայրերն են՝ Ակունք, Առինջ, Արամուս, Արզնի, Բալահովիտ, Գեղաշեն, Զառ, Զովաշեն, Զովք, Կաթնաղբյուր, Կամարիս, Կապուտան, Կոտայք, Հատիս, Ջորաղբյուր, Մայակովսկի, Նոր գյուղ, Նուռնուս, Պտղնի, Ջրաբեր, Ջրվեժ, Սևաբերդ, Վերին Պտղնի, Գառնի, Գեղադիր, Գեղարդ, Գողթ, Հացավան, Ողջաբերդ:

Նաիրիի տարածաշրջանը Կոտայքի մարզի տարածքով ամենափոքր բաղադրիչն է: Աշխարհագրորեն այն գտնվում է Քասաղ և Հրազդան գետերի միջև՝ Եղվարդի հրաբխային

սարավանդի վրա: Նախրիի տարածաշրջանում են գտնվում Եղվարդ և Նոր Հաճըն քաղաքները: Քաղաքներից Եղվարդը Խորհրդային Միության և Հայաստանի կազմում նշանավորվել է, որպես գինու և կոնյակի արտադրությամբ առաջատար քաղաք, իսկ Նոր Հաճընը հայտնի է թանկարժեք քարերի մշակմամբ: Գյուղական բնակավայրերն են՝ Արագյուղ, Արգել, Բուժական, Գետամեջ, Զովունի, Զորավան, Թեղենիք, Մրգաշեն, Նոր Արտամետ, Նոր Գեղի, Սարալանջ, Քանաքեռավան, Քարաշամբ, Նոր Երզնկա, Պռոշյան և Քասախ:

1.1.2. Բնակչություն

Հայաստանի Կոտայքի մարզի բնակչության էթնիկական կազմ



Բնակչության էթնիկական կազմը խայտաբղետ է: Հիմնական բնակիչները հայերն են, որոնք դավանում են քրիստոնեություն (Հայ Առաքելական եկեղեցի): Ըստ 2011 թվականի տվյալների՝ Կոտայքի մարզում ապրում են 249 508 հայեր, որոնք կազմում են ամբողջ մարզի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 98,08 %: Գյուղերում ապրում են նաև եզդիներ (3 211 մարդ), ասորիներ (676 մարդ), ռուսներ (590 մարդ), քրդեր (94 մարդ), ուկրաինացիներ (93 մարդ), պոնտոսի հույներ (70 մարդ) և այլազգիներ:

1.1.3. Բնական պայմանները և հարստությունները

Կոտայքի մարզը Հայաստանի Հանրապետության տարածքում կենտրոնական դիրք գրավող մարզերից մեկն է: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին: Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ և Ազատ գետերը: Հրազդան գետը (նախկին անվանումը՝ Զանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կա 340 վտակ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը: Մարմարիկ գետը Հրազդանի աջ վտակն է: Այն սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերից՝ 2 520 մ բարձրությունից: Երկարությունը 37 կմ է: Ջրերն օգտագործվում են ոռոգման և արդյունաբերական ձեռնարկություններին ջրամատակարարման նպատակներով: Մարմարիկի հովտում է գտնվում «Հանքավան» ջրի հանքավայրը: Ազատ գետը նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

Կոտայքի մարզն աչքի է ընկնում բնական պայմանների ու հարստությունների մեծ բազմազանությամբ: Այստեղ համեմատաբար սահմանափակ տարածության վրա հանդիպում են և՛ բարձրաբերձ

լեռնագագաթներ ու խոր կիրճեր, և՛ լայնարձակ գետահովիտներ ու մեղմաթեք սարավանդներ: Գեղամա լեռները կազմող հրաբխային ապարների մեջ ներծծվող ջրերը աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև՝ Հրազդան և Ազատ գետերի կիրճերում: Հոչակված են Քառասունակնի, Արզնիի և Գառնիի աղբյուրները, որոնց սառնորակ ջրերը հատուկ խողովակներով հասցվում են նաև քաղաքամայր Երևանի բնակչությանը: Հրազդան և Ազատ գետերի կիրճերի առանձին հատվածներ բնական հիանալի հուշարձաններ են: Տպավորիչ են լավաների մեջ գոյացած բազալտե սյունաձև առանձնացումները՝ անձեռակերտ բազմանիստ պրիզմաները:

Մարզի ռելիեֆը գրավիչ է ինչպես դահուկային սպորտի, այնպես էլ լեռնագնացների համար, առկա են տարաբնույթ բարդության ուղիներ, հարմար տարբեր պատրաստվածություն ունեցող անձանց համար:

Տարածքի կլիմայական պայմանները ձևավորվում են միջին լայնությունների օդային զանգվածների անմիջական ազդեցությամբ, չոր մերձարևադարձային օդային զանգվածների ներխուժումներով տարվա տաք եղանակներին, ինչպես նաև բևեռային զանգվածների ադվեկցիայով՝ տարվա ցուրտ ամիսներին: Կլիման այստեղ առանձնանում է շեշտված կոնտինենտալ /չորային/ ռեժիմով, երբ օդի ջերմաստիճանի տարեկան ամպլիտուդը հասնում է 27,5° C, իսկ միջին տարեկան ջերմաստիճանը՝ 8,8° C: Շեշտակիորեն ընդգծված է նաև ջերմաստիճանի օրական տատանումը: Մթնոլորտային տեղումները համեմատաբար քիչ են՝ 450 մմ տարեկան, գարնանային մաքսիմումով՝ 171 մմ:

Քամու տարեկան միջին արագությունը 2-3 մ/վրկ է: Հարաբերական խոնավությունը ունի պարզ արտահայտված տարեկան և օրական ընթացք՝ ամռանը՝ 46-52 %, ձմռանը՝ 74-81 %: Ձյան ծածկույթով օրերի թիվը փոքր է, սակայն առանձին տարիներին ձևավորվում է կայուն և խորը ձյան ծածկույթ: Տարածաշրջանը հարուստ է արևի ճառագայթային էներգիայով, ուլտրամանուշակագույն ճառագայթների բալանսն ամբողջ տարվա ընթացքում դրական է: Ստորև ներկայացվում է «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ II-

ՀՀՇՆ II-7.01-2011

ՀԱՎԵԼՎԱԾ 1
(պարտադիր)

Աղյուսակ 1.1. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												Միջին տարեկան. °C	Բացարձակ նվազագույն. °C	Բացարձակ առավելագույն. °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Երևան «Արաբկիր»	1113	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

Աղյուսակ 1.2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան,%	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Արաբկիր»	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Աղյուսակ 1.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	միջին ամսական տեղումների քանակը, մմ — օրական առավելագույն													Ձնածածկույթ		
	ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Երևան «Արաբկիր»	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353	50	53	152
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47			

7.01-2011» (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=71542) նորմատիվային

փաստաթղթում առկա «Երևան Արաբկիր» օդերևութաբանական կայանի կլիմայական տարրերի օդի ջերմաստիճան, հարաբերական խոնավություն, մթնոլորտային տեղումներ, քամի ամսեկան և տարեկան տվյալները՝ աղյուսակային տեսքով։

Աղյուսակ 1.4. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (hՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ——— ըստ ուղղությունների Միջին արագությունը, մ/վ								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «n» տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Երևան «Արաբկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0,9	2,0	30	20	23	25
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9							
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1					
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5							
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4					
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6							
		հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8					
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0							

«Ջրվեժ» անտառապուրակային համալիրը հիմնվել է 20-րդ դարի 60-ական թվականներին պետական անտառային ֆոնդի տարածքում: Անատառպուրկի տարածքը ունի մոտ 420 հա մակերես: Ծառերի տեսակային կազմը ներկայացված է սոճու, եղևնու, թեղու, բարդու, հացենու և այլ ծառա-թփային բույսերի տարբեր տեսակներով:

1.2. Ջրային ռեսուրսները

Տարածաշրջանի հիմնական ջրային ռեսուրսը Ազատ գետն է Ազատի ջրամբարով: Ազատ գետն ունի 56 կիլոմետր երկարությունը և 548 քառ. կիլոմետր տարածությամբ ջրահավաք ավազան: Այն սկիզբ է առնում Գեղամա լեռներից և թափվում Արաքս գետը: Այն մեծ մասամբ արագահոս է և սահանքավոր: Հոսում է ապառաժոտ նեղ կիրճի միջով և միայն ստորին հոսանքում դուրս է գալիս Արարատյան դաշտավայր: Աջից ընդունում է Գողթ վտակը (երկ. 16 կմ.):

Ազատ գետի հովիտը շատ մասերում լցված է փլուզումների հետևանքով առաջացած հսկայական ժայռաբեկորներով: Հոսքի բնույթով Ազատ գետն աչքի է ընկնում զարմանալի կանոնավորությամբ, որը հետևանք է աղբյուրներից ստացվող ջրերի առատության:

1.3. Կենսաբազմազանություն

1.3.1. Բուսականությունը

Տափաստանային արծիվ

Չոր տափաստանային գոտու կլիմայական պայմաններում 1300-1600 մ բաձրության սահմաններում տարածված են փետրա-խոտա-շյուղախոտերը, բոխի-կծմախոտային տիպերը:

1600-1700 մ բաձրության վրա չոր տափաստաններին փոխարինում են տափաստանները, որտեղ զարգանում են փետրախոտային, փետրախոտա-շյուղախոտային և շյուղախոտային-կելերային տեսակները:

Հանդիպում է նաև կիսաանապատային բուսականությունը, օշինդրա-էֆեմերային մասնակցությամբ՝ Artemisia Fragrans Willd, Kochia Prostrata (L.) Schrad., Atraphaxis Spinosa L., և այլն:

1.3.2. <u>Կենդանական աշխարհ</u>

Կոտայքի մարզի կենդանական աշխարհը համեմատաբար ավելի աղքատիկ է: Կոտայքի մարզը տեղադիրքով Միջերկրածովյան կենսաշխարհագրական տարածաշրջանի Իրանական, Փոքրասիական ու Պոնտոս-կովկասյան մարզերի խաչմերուկ է, որով և պայմանավորված է այդ աշխարհագրական շրջանների ազդեցությունը Հայաստանի և առանձին մարզերի կենդանական աշխարհի տեսակների վրա:

<u>Հայկական լեռնատափաստանային իժ</u>

Կոտայքի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, լուսան, կզաքիս, գորշուկ, նապաստակ և այլն: Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Կոտայքի մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր: Կոտայքի մարզի սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իժը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճայ, կովկասյան մայրեհավ, տափաստանային արծիվ և այլն:

Կոտայքի մարզի կենդանական աշխարհը հանրային հարստություն է և կարևոր նշանակություն ունի հասարակության գիտական, գեղագիտական, ճանաչողական զարգացման համար: Կենդանիները, լինելով կարևոր բնական պաշար և ունենալով կարևոր նշանակություն մարդու տնտեսական գործունեության համար, միաժամանակ կարող են հանդիսանալ գյուղատնտեսության վնասատուներ, որոշ վարակիչ հիվանդությունների ու մակաբույծների փոխանցողներ կամ մարդու և կենդանիների համար վտանգավոր կենդանական թույների կրողներ:

Կոտայքի մարզը սակավ անտառածածկ վարչատարածքային միավոր է, իսկ բուսական աշխարհը նման է Հայաստանի մյուս շրջաններին: Կոտայքի մարզի բուսականության հիմնական տիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ:

Այստեղ աճում է հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն: Կոտայքի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն:

Կոտայքը Հայաստանի այն երկու մարզերից մեկն է, որտեղ հայտնաբերվել են բրածո բույսեր (բրածո բույսեր են հայտաբերվել նաև Տավուշի մարզում): Դրանց համալիրներն աչքի են ընկնում իրենց հազվագյուտ տեսակային կազմի բազմազանությամբ և առատությամբ: Հայաստանում մինչ այժմ հայտնի բրածո ֆլորաներից ամենաերիտասարդը նուռնուսինն է, որը աճում է միայն Կոտայքի մարզում:

Տարածաշրջանում հանդիպում են կենդանական աշխարհի հետևյալ ներկայացուցիչները՝ գորշուկ, նապաստակ, ճահճակուղբ, ժայռային մողես, լորտու սովորական, դաշտամուկ, քարակզաքիս և այլն: Անողնաշարավորներից հանդիպում են՝ անձրևավորդը, մրջյունը, ծղրիդը, ճռիկը, մորեխը և այլն:

Թռչուններից հանդիպում են ճնճղուկը տնային, մոխրագույն ագռավը, անտառային արտույտը (Lullula arborea), գյուղական ծիծեռնակը (Hirundo rustica), եղինջաթռչնակը (Troglodytes troglodytes), ժայռային ծիծեռնակը (Ptyonoprogne rupestris):

Օձերից հանդիպում են գյուրզան և Արևմտյան վիշապիկը (Eryx jaculus):

1.4. Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ գրեթե չեն ներառում:

Տվյալ լանդշաֆտային գոտուն բնորոշ բուսատեսակների պահպանության համար, շինարարության համար հատկացված տարածքներում դրանց առկայության պարագայում, սերմնադրման ժամանակահատվածում անհրաժեշտ է հավաքել սերմերը և օգտագործել գարնան սերմնացանի համար: Գլխավոր հատակագծում տեղ գտած շինարարական աշխատանքների ժամանակ ծառահատումներ չեն իրականացվելու:

Բնակավայրերի հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով տնտեսական գործունեություն իրականացնողները՝

1) առանձնացնում են օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակում են առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

Հողերում հայտնաբերված՝ կարմիր գրքում գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների առանձնյակների տեղափոխումն իրականացվում է տնտեսական գործունեություն իրականացնողների միջոցների հաշվին՝ տնտեսական գործունեություն իրականացնողի կողմից ներկայացված տվյալ բուսատեսակի առանձնյակների տեղափոխման միջոցառումների իրականացման վերաբերյալ բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնի հետ կնքված համապատասխան պայմանագրի համաձայն:

1.5. Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Նախագծի շրջանակում խոշորածավալ շինարարական աշխատանքներ չեն նախատեսվում: Դրանք հիմնականում նախատեսվում են արդեն իսկ յուրացված և ձևավորված բնակավայրերի ներքին ռեզերվային տարածքներում: Գյուղական բնակավայրերում նախատեսվող հիմնական յուրացումներն իրենցից ներկայացնում են տնամերձ հողամասերով բնակելի թաղամասրեի ընդլայնում, որտեղ կառուցապատումն զբաղեցնում է տարածքի մոտ 20 %-ը, իսկ մնացած հատվածը դարձյալ պահպանվում է որպես տնամերձ օգտագործվող հողամաս, հետևաբար կենդանական աշխարհի ներկայացուցիչները կշարունակեն համակեցությունը տվյալ հատվածներում:

Հնարավոր ազդեցությունը կարող է արտահայտվել բնակչության գյուղատնտեսական հողհանդակները մշակելուն միտված նոր գծային ենթակառուցվածքի (ջրագծեր, ոռոգման խողովակաշար և այլն)՝ հողային աշխատանքների ժամանակ կենդանիների բների ոչնչացումը կանխելու նպատակով ջրատարերի կառուցման ընթացքում հնարավորինս զերծ մնալ պայթեցման կամ այլ աղմկոտ միջոցներից և ամենահնտենսիվ շինարարական աշխատանքները իրականացնել ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ - մայիս) դուրս: Պայթեցումների անհրաժեշտության պարագայում դրանց ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով իրականացնել փոքր հզորության լիցքերով:

Գծային այլ ենթակառուցվածքների իրականացման ժամանակ ծրագծերի երկայնքով ցանկապատման միջոցով սահմանափակել շինարարական աշխատանքների ազդեցության տարածումը հարակից՝կենդանիների պոտենցիալ տարածման վայրեր՝ դեգրադացիայից և ոչնչացումից պաշտպանելու համար: Միևնույն ժամանակ նախատեսելով էկոդուկներ՝ հետագա շահագործման ընթացքում կենդանիների անարգել տեղաշարժն ապահովելու համար: Բուսական և կենդանական աշխարհի կառավարման պլանի մշակմամբ նախատեսել միջոցառումներ՝ Կարմիր գրքում գրանցված բուսական

և կենդանական աշխարհի տեսակների չվերահսկվող վնասում և անտեղի անհանգստությունները կանխելու համար:

Առավել խոշորամասշտաբ շինարարական աշխատանքները, որոնք կարող են աշոնչվել բուսական կամ կենդանական աշխարհի առանձինե տեսակների դեգրադացմանը կամ ոչնչացմանը, իրականացնել աշնանը կամ ձմռանը, երբ առավել բարենպաստ ժամանակահատված է վտանգի տակ գտնվող կենդանինենրին բացասական ազդեցություններից զերծ պահելու համար: Կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակների կամ կենդանիների բույների հայտնաբերման դեպքում անհապաղ անհրաժեշտ է տեղեկացնել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը՝ հետագա գործողությունները հստակեցնելու նպատակով:

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ջրատարերի կառուցման ընթացքում պայթեցման և ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակա–շրջանից (ապրիլ - մայիս) դուրս: Բացի այդ, պայթեցումների ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով դրանք կիրականացվեն փոքր հզորության լիցքերով:

Ընդհանուր առմամբ, համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրաձավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

1.6. Բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ)

Տարածաշրջանի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումը ապահովելու նպատակով տարածաշրջանում կազմակերպվել է բնության հատուկ պահպանվող տարածք.

1.6.1. «Էրեբունի» պետական արգելոց

Գտնվում է 1300 – 1400 բացարձակ բարձրությունների վրա, կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիների անցումային հատվածում: Հանդիպում են շուրջ 230 տեսակի բույսեր: Նպատակն է պահպանել վայրի ցորենների աշխարհում եզակի գենոֆոնդը՝ վայրի միահատիկ ցորենը, վայրի ուրարտու ցորենը և վայրի երկհատիկ ցորենը: Արգելոցը գտնվում է գյուղից 4-5կմ հեռավորության վրա:

1.6.2. Ջրվեժ համայնքի տարածքում է գտնվում «Ջրվեժ» անտառպարկը

ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 18-ի N684-Ն որոշմամբ հաստատվել են անտառպարկի սահմանների նկարագիրն ու տարածքը (400.43 հեկտար): Ներկայումս մակերեսը կազմում է 423.72 հա:

«Ջրվեժ» անտառապարկը սահմանակից է Ողջաբերդ բնակավայրին և Երևան քաղաքին։



Ջրվեժի համայնքի տարածքում է գտնվում «Ջրվեժ» անտառպարկը: ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 18-ի N 684-Ն որոշմամբ հաստատվել են անտառպարկի սահմանների նկարագիրն ու տարածքի չափը: (առ 2013 թ. 423.82 հեկտար):

423.72 հա մակերեսով Ջրվեժի անտառպարկը և բնակավայրի արևելքում գտնվող ամառանոցային թաղամասերը ստեղծում են բնական լանդշաֆտներով և ռեկրեացիոն որակյալ հատկություններով հագեցած տարածքներ: Դրանք համայնքի արժեքավոր բուժական և առողջարարական ռեսուրսներն են, որոնց պահպանումը և կայուն օգտագործումը կարող են նպաստել համայնքի էական տնտեսական զարգացմանը:

1.6.3. Բնության հուշարձաններ

Բնության հուշարձանները բնության բացառիկ կամ տիպիկ, գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտներ են:

Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման

Ց Ա Ն Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
Երկրաբանական հուշարձաններ

N ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
31.	«Անանուն» խզվածքներ	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ,

		ավազահանքի մոտ
32.	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
33.	«Թագավորանիստ» խարամային կոն	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
34.	«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
35.	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
36.	«Ծակ քար» բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
37.	«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
38.	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
39.	«Անանուն» լանջային էրոզիա	Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին
40.	«Անանուն» լավային ծալքեր	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
41.	«Անանուն» խորշեր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
42.	«Հատիս» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ջովաշեն գյուղից 2.0 կմ արմ
43.	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ
44.	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ
45.	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև
46.	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
47.	«Անանուն» քարե կուտակումներ	Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
48.	«Գութանասար» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ
49.	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարաբ» գյուղատեղիի մոտ
50.	Ջորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	Կոտայքի մարզ, գյուղ Ջորաղբյուր

Ջրաերկրաբանական հուշարձաններ

11.	«Հաղպրտանք» աղբյուր	Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան)թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
12.	«Համով» աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
13.	«Քաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին,

		ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
14.	«Ձորի» աղբյուր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
15.	«Ավազան» աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

9.	«Սագերի» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
10.	«Վիշապա» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
11.	«Բազմալիճք» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս
12.	«Լուսնալիճ» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ

Բնապատմական հուշարձաններ

6.	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում

Կենսաբանական հուշարձաններ

6.	«Ռելիկտային կրկես Քյորօղլի լեռան մոտ»	Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ
7.	«Ալպյան գորգ»	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)
8.	«Թանթրվենի, Տիգրանի»	Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

1.7. Օգտակար հանածոներ

Մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ ոսկու, ալյումինի, երկաթի, պերլիտի, մարմարի, գրանիտի, լիտոիդային պեմզայի, նեֆելենային սիենիտների, անդեզիտի, հրաբխային խարամների, բազալտի, քարաղի, զանազան շինարարական նյութերի և հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրերով (Հանքավան, Բջնի, Արզնի): Երկրաբանահետախուզական աշխատանքներ են կատարվում բազմամետաղային, ոսկու պղինձ-մոլիբդենի, բազալտի, լիտոիդային պեմզայի, պաշարների հաստատման և վերագնահատման ուղղությամբ: Զգալի են ջրային ռեսուրսների պաշարները (Գառնիի, Կաթնաղբյուրի, Սոլակի, Ալափարսի, Նուռնուսի, Արզականի, Գյումուշի, Մաքրավանի քաղցրահամ ջրերի աղբյուրներ), որոնք խմելու ջրով ապահովում են ոչ միայն մարզի բնակավայրերը, այլ նաև Երևան քաղաքը:

Սև մետաղներ

ՀՀ տարածքում հայտնաբերվել են սև մետաղների պաշարներ, որոնցից գործնական նշանակություն կարող են ունենալ առաջին հերթին երկաթի հանքաքարի պաշարները:

Երկաթ

Հայտնաբերված երկաթի հանքավայրերը իրենց պաշարներով, հանքային կազմով, շահագործման և տրանսպորտա-աշխարհագրական պայմաններով համարժեք չեն:

Արդյունաբերական առավել մեծ արժեք են ներկայացնում Հրազդանի, Կապուտանի երկաթի հանքավայրերը։

<u>Միկրոռեգիոնի բնակավայրերի տարածքներում տեղակայված են հետևյալ ոչ մետաղային հանքավայրերը.</u>

- Ջորաղբյուր բնակավայրի տարածքում է տեղակայված Անտառամուտի բազալտի հանքավայրը։
- Ջովքի տարածքում տեղակայված է Քուլուջայի պեմզայի հանքավայրը։
- Ջրվեժ գյուղի վարչական սահմաններում տեղակայված են.
- Ջրվեժի գիպսատար կավեր և բազալտ
- /նայել նաև Աստղիկի գիպսատար կավեր և բազալտ, կավերի 3-րդ տեղամաս։





Ըստ ՏԿԵՆ տրամադրած տեղեկատվության՝ ստորև ներկայացվում են մարզի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին տեղեկատվություն.

Տեղեկատվություն
ՀՀ Կոտայքի մարզում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին

h/h	Իրավաբանական անձի անվանումը	Հանքավայրի անվանումը	Լեռնահատկացման ակտով տրամադրված տարածքի մակերեսը
1	2	3	4
1.	«Նաիրիտ գործարան» ՓԲԸ	Քարաղի հանքավայր, Էլարի տեղամաս	20.6հա
2.	«Բազալտ» ԱԿ	Գյամրեզի անդեզիտաբազալտ	7,8 հա
3.	« Խառնարան»ՍՊԸ	Կարենիսի լիթոիդային պեմզա /Կենտրոնական տեղ./	5 ,0 հա
4.	«Սիրեկան» ԱԿ	Կարենիսի լիթոիդային պեմզայի հանքավայրի կենտրոնական տեղամաս	2.3 հա
5.	«Կապուտանցի Դավիթ» ՍՊԸ	Ջրաբերի լիթոիդային պեմզա /Կենտրոնական տեղ./	6,6357 հա
6.	«ԴԵՄԵՐ» ՍՊԸ-ին	Արամուսի բազալտ /Պարիսպ տեղ./	3,1 հա
7.	«Սթոուն Լենդ» ՍՊԸ	Նորագյուղի անդեզիտա բազալտ	5.48հա
8.	«Սթոուն Լենդ» ՍՊԸ	Բալահովտի բազալտ	15,85 հա
9.	«Ճանապարհ» ՍՊԸ	Բալահովիտի բազալտի հանքավայրի «Արծիվ» տեղամաս	5,02 հա
10.	«Վանոս-Վար» ՍՊԸ հվհհ	Ջրաբերի լիթոիդային պեմզա /Հյուսիսային տեղ./	4.93հա
11.	«ԼեոէդԱրտ» ՍՊԸ	Ջրաբերի լիթորդային պեմզա	2.9հա
12.	«Ա. Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ	Արամուսի բազալտի հանքավայրի Արմենիուս տեղամաս	55,62 հա
13.	«Ամադեղա» ՍՊԸ	Ջրաբերի լիթոիդային պեմզա	4.48հա
14.	«Հատիկ» ՍՊԸ	Գյումուշի լիթոիդային պեմզա	9.8հա
15.	«ՆԱԻՐԻՒ ՃՇՇ» ԲԲԸ	Նորագյուղի անդեզիտա բազալտներ	5.96հա
16.	«Արարատ ճանշին» ՍՊԸ	Նորագյուղի անդեզիտա բազալտ	12,4 հա
	«Քար և ավազ» ՍՊԸ	Նորագյուղի անդեզիտա-բազալտ	*14,7հա*
	«ՔԱՐ ԵՎ ԱՎԱԶ-ՋՐԱԲԵՐ» ՍՊԸ	Ջրաբերի լիթոիդային պեմզա /Հարավային տեղ./	*4,64հա*
17.	«Մինբիլդ» ՍՊԸ	Առինջի հրաբխային խարամ	24,0 հա
18.	«Ալմաքար» ՍՊԸ	Նուռնուսի բազալտ	9,3հա

19.	«ՌԱՖ-ՇԻՆ» ՍՊԸ	Եղվարդի անդեզիտաբազալտ	3,96հա
20.	«Զեփյուռ-երեք» ՍՊԸ	Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամաս	19,17 հա
21.	«Հրաչ և Գ.Ա.Ս.» ՓԲԸ	Ջրաբերի լիթոիդային պեմզա /Կենտրոնական տեղ./	9.54հա
22.	«Գլոբինվեստ Մենեջմենթ Սըլյուշնս» ՓԲԸ	Մայմեխի մարմար	14.55հա
23.	«Տիգարբո» ՍՊԸ	Նորագյուղի անդեզիտա բազալտ	13,02 հա
24.	«Ֆրակցիա» ՓԲԸ	Ջրաբերի լիթոիդային պեմզա /Հարավ-արևմտյան տեղամասի Արևմտյան թև/	5.0հա
27	«ՆԱՌՇԻՆ» ՍՊԸ	Արամուսի բազալտի հանքավայրի «Արմենիուս» տեղ.	7.4 հա
28	«ԼԱՄՕ» ՍՊԸ	Արամուսի բազալտի հանքավայր	3,37 հա
29	«ԷՍԷՆԴ» ՍՊԸ	Նորագյուղի անդեզիտաբազալտի հանքավայր	14,7 հա
30	«ԱՐՍԹՈՈՒՆ» ՍՊԸ Հվհհ 03538275	Քաղսիի բազալտի հանքավայր	2,4 հա
31	«ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» ՍՊԸ	Աբովյանի բազալտի հանքավայրի 3-րդ տեղամաս	37,5 հա
32	«ՆԱԻՐԻԻ ՃՇՇ» ԲԲԸ	Եղվարդի ռիոլիտա-դացիտների հանքավայրի հարավ-արևելյան տեղամաս	5,1 հա
33	«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	Կարապիձորի լիթոիդային պեմզայի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասեր	17,8 հա (1-ին տեղ.-7.2 հա 2-րդ տեղ.-10,6 հա)
34	«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	Կարապիձորի բազալտի հանքավայր (ՀՀ Կոտայքի մարզի Կարապիձորի լիթոիդային պեմզայի և բազալտների հանքավայրի լիթոիդային պեմզայի և բազալտների արևմտյան և արևելյան տեղամասեր, Կարապիձորի լիթոիդային պեմզայի և բազալտների հանքավայրի բազալտների կենտրոնական տեղամաս)	12,37 հա
35	«ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲԸ	Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի Լանջ տեղամաս	3,5 հա
36	«ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» ՍՊԸ	Ֆանտան-Ջրաբերի պեռլիտների հանքավայրի 2-րդ տեղամաս	5,5 հա
37	«ՀՐԱԶԴԱՆ ՑԵՄԵՆՏ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ	Հրազդանի կավերի հանքավայր	5,3 հա
38	«ԱՐԵԳ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	Նորաշենի պեմզայի հանքավայրի 2-րդ և 3-րդ հանքային մարմիններ	16,25 հա
39	«ԲԱԶԱԼՏ» ԱԿ	Արամուսի բազալտների	9,36 հա

		հանքավայրի Բազալտ տեղամաս (1-ին և 2-րդ բլոկներ)	
40	«ԴՐԵԱՄ ՍԹՈՆ» ՍՊԸ	Արամուսի բազալտների հանքավայր	4,05 հա
41	ԱԲԳԱՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ	Հրաբխային խարամների հանքավայր	4.39 հա
42	ԼԵՎՈՒՇ ՍՊԸ	Կամարիսի բազալտի հանքավայրի 2-րդ տեղամաս	1-ին՝ բացահանք և արտադրական հրապարակ 4.87 հա , 2-րդ՝ լցակույտ 1,82 հա
43	«ՀՐԱԶԴԱՆԻ ՃՇՇՁ» ԲԲԸ	Կաքավաձորի գրանոդիորիտների հանքավայր	4,9 հա
44	«ՆՎԵՐ ԷԴԳԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ՍՊԸ	Աղվերանի մարմարի հանքավայր	0,69 հա
45	«ԷՅ ԷՄ ԹԻ» ՍՊԸ	Արամուսի բազալտի հանքավայրի ԷՅ ԷՄ ԹԻ» տեղամաս	6,47 հա
46	«ԱԳՐՈՀԱՆԴ» ՍՊԸ	Լանջաղբյուրի բազալտի հանքավայր	6,04 հա
47	«ԱԶՈՒՐԻՏ» ՍՊԸ	Արամուսի բազալտների հանքավայրի «Շամիրամ» տեղամաս	11,6 հա
48	«ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ	Արամուսի բազալտների հանքավայր	7,3 հա
49	«ԴԵՄԵՐ» ՍՊԸ	Արամուսի բազալտների հանքավայրի «Դեմեր-1 տեղամաս	4,37 հա
50	«ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ	Կամարիսի բազալտի հանքավայրի 2-րդ տեղամաս	11,49 հա
51	«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	Սարանիստի բազալտի հանքավայրի առաջին տեղամաս	9.38 հա
52	«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	Եղվարդի հրաբխային խարամների հանքավայրի Արևմտյան տեղամաս	9,32 հա
53	«ԱՆՏՐԱՑԻՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայր	17.56 հա
54	«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	Մեղրաձորի ոսկու հանքավայր	569.07 հա
55	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Մեղրաձորի ոսկու հանքավայր /Լուսաջուրի տեղ./	39,85 հա
56	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Հրազդանի երկաթ	67,8հա

Տեղեկատվություն
ՀՀ Կոտայքի մարզում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին

N	Իրավաբանական անձի անվանումը	Գործունեության իրականացման վայրը	Տրամադրված տարածքի մակերեսը

1	2	3	10
1	«ԷՍ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզի Նուռնուսի վանակատի երևակում	2.2 հա
2	«ՆՈԳԱՌԱ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի «ՆՈԳԱՌԱ» երևակում	5,81 հա
3	«ԱՆՏՐԱՅԻՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի «ԱՆՏՐԱՅԻՏ» երևակում	2.68 հա
4	«ԱՐ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի Սալմաստ տեղամաս	10.8հա

1.8. Ջրագրություն

1.8.1. Գետեր

ՀՀ Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան և Ազատ գետերը: Հրազդան գետը (նախկին անվանումը՝ Զանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կա 340 վտակ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը: Ազատ գետը նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

Հրազդանը (նաև՝ Իլդարունի, Զանգու), ՀՀ խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակը: Ունի 141 կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650 կմ² է (առանց Սևանա լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով ու թափվում Արաքսը:

Վերին հոսանքում մոտ 20 կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150 մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820 մ բարձրության վրա լցվում Արաքսը: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Բնական պայմաններում Հրազդանի սնումը 62.5%-ով ստորերկրյա է, հորդացումը՝ գարնանային, վարարումները՝ ամռանն ու աշնանը: Հրազդանի վրա կառուցվել են Սևանի, Աթարբեկյան, Գյումուշի, Արզնիի, Քանաքեռի, Երևանի ՀԷԿ-երը, մի շարք ջրանցքներ, Երևանյան լիճը:

1.8.2. Լճեր, ջրամբարներ

Աղբյուրակի ջրամբար

Կոտայքի մարզն աչքի է ընկնում ներքին ջրերի առատությամբ: Գետերից Հրազդանը, Գետառը, Ազատը ունեն ոռոգիչ նշանակություն: Ակնա լճի (բարձրությունը՝ 3032 մետր) ջրերով

ջրարմիացվում են ամառային արոտավայրերը: Հրաբխային ապարների մեջ ներծծված ջրերն աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ազատ գետերի կիրճերում: Հայտնի են Քառասունակնի, Գառնիի և Արզնու աղբյուրները, որոնց ջրերը հասնում են Երևանին և օգտագործվում կենցաղային և արդյունագործածական նկատառումներով:

Մարմարիկի ջրամբարը

Կոտայքի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերի տարածքներում կան տասնյակ լճեր, որոնց մի մասը չորանում է ամռանը: Կոտայքի մարզի լճերը տնտեսական նշանակություն գրեթե չունեն: Դրանք հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակներով և ունեն տեղական նշանակություն: Մարզի ջրամբարներն օգտագործվում են ոռոգման, էներգետիկայի, ձկնաբուծական և բուժական նկատառումներով: Հայտնի են Մարմարիկի և Աղբյուրակի ջրամբարները:

Կոտայքի մարզի ստորգետնյա ջրերի պաշարները բաշխված են անհամաչափ: Ստորգետնյա ջրերը մեծ նշանակություն ունեն ջրային հավասարակշռության մեջ: Կոտայքի մարզում կան նաև մի քանի ջրառատ ջրվեժներ: Դրանցից ամենաջրառատն ու բարձրադիրը Գողթ գյուղում գտնվող Խոսրովի ջրվեժն է, որն ունի 8 մետր բարձրություն: Ջրվեժն ունի զբոսաշրջային կարևոր նշանակություն: Ճահիճների թիվը բավականին քիչ է: Տարեց տարի դրանց քանակն էլ ավելի է կրճատվում:

1.8.3. Ջրանցքներ

Կոտայքի ջրանցք, ջրանցք Հայաստանի Կոտայքի մարզում: Սկիզբ է առնում Սևան-Հրազդան կասկադի Արգելի ջրաէլեկտրակայանի երրորդ աստիճանի դերիվացիոն ջրանցքից (խոտորումից): Կառուցվել է և ահագործման է հանձնվել 1962 թվականին: Երկարությունը 43 կմ է, թողունակությունը՝ 6 մ³/վրկ: Ոռոգիչ ցանցը լրիվ երեսապատված է: Ջրանցքի թողարկումից հետո Ակունքի աղբյուրների բարձրորակ ջրերը օգտագործվում են Երևան քաղաքի ջրամատակարարման համար: Ոռոգում է Կոտայքի մարզի (8,3 հզ. հա) և Երևանի շրջակա (192 հա) հողատարածքները:
«Կոտայքի մարզի ջրանցքներ»-ի շարքում են.

Արզնի-Շամիրամի ջրանցք, ոռոգում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի շուրջ 30 հազար հա հողատարածությունները: Մայր ջրանցքը (երկարությունը՝ մոտ 92 կմ) սկիզբ է առնում Արզնիի հիդրոէլեկտրակայանը սնող ճնշման ավազանից և սկզբնամասում ունի 25 մ3/վրկ թողունակություն: Շինարարությունն ավարտվել է 1973 թվականին: 2010-ականների սկզբին կատարվել են վերանորոգման աշխատանքներ: Ջրանցքի համակարգում կառուցվել է ՓՀԷԿ:

Արզնու ջրանցք, ջրանցք Կոտայքի մարզում, Արզնի գյուղի մոտ: Հանված է Հրազդան գետի ձախ ափից: Ոռոգում է Կոտայքի մարզի հողերը: Երկարությունը 8 կմ է:

Գառնու ջրանցք, ջրանցք Հայաստանի Կոտայքի մարզում: Կառուցվել է 1949 թվականին, վերակառուցվել 1972 թվականին: Մինչև վերակառուցումը սնվում էր Գառնի և Գողթն գյուղերի աղբյուրներից: 1972 թվականից ջրանցքը սնող աղբյուրների ջրերի մեծ մասը տրվել է Երևանին: Ոռոգման ջրի պակասը լրացնելու համար 1973 թվականին կառուցվել է 11 կմ երկարությամբ ինքնահոս խողովակաշար, որով Գառնիի ջրանցքին լրացուցիչ ջուր է տրվում Ազատ գետից: Երկարությունը 21,4 կմ է, ջրթողունակությունը՝ 0,95 մ³/վ: Ոռոգում է Գառնի գյուղի հողատարածքները:

Եղվարդի ջրանցք, ջրանցք Հայաստանի Կոտայքի մարզում: Սկիզբ է առնում Բուժական գյուղի մոտից: Կառուցվել է միջնադարում: Երկարությունը 13 կմ է, ջրթողունակությունը՝ 0,6 մ/վ: Ջրառը կատարվում է ոչ պատվարային եղանակով: Ջրանցքի վրա կառուցված են 2 ջրարգելակ վահաններ, թունել, 2 կամուրջ-անցումներ: Ջրանցքը ոռոգում է Արագյուղ և Բուժական գյուղերի հողատարածքները:

Հրազդան-Սոլակի ջրանցք, ջրանցք ՀՀ Կոտայքի մարզում: Սկիզբ է առնում Հրազդանի ջրէկի դերիվացիոն ջրանցքի 13 կմ-ից: Շահագործման է հանձնվել 1964 թվականին: Ձգվում է Հրազդան քաղաքից մինչև Սոլակ գյուղ: Մայր ջրանցքի երկարությունը 12 կմ է (ընդհանուր երկարությունը՝ 22,7 կմ), ջրթողունակությունը՝ 1,1 մ³/վ: Ջրառը կատարվում է ջրարգելակ կարգավորիչի միջոցով: Ոռոգում է Քաղսի, Սոլակ գյուղերերի և Հրազդան քաղաքի հողատարածքները:

Քասաղի ջրանցք, ջրանցք Հայաստանի Արագածոտնի և Կոտայքի մարզերում: Սկիզբ է առնում Քասաղ գետից: Շահագործման է հանձնվել 1973 թվականին: Մայր ջրանցքը սկսվում է ջրարգելակ-վահան կարգավորիչով, անցնում 2,5 կմ թունելով, Քասաղի կիրճով: Երկարությունը 3,8 կմ է, ջրթողունակությունը՝ 18 մ³/վ: Բաժանվում է ձախ և աջ ճյուղերի: Ձախափնյա ջրանցքը ձգվում է Քասաղից դեպի արևելք, հասնում Ձորավան գյուղի սահմանները: Երկարությունը 8,9 կմ է, ջրթողունակությունը Արզնի-Շամիրամին փոխհատուցող ջրանցքի հետ՝ 16,4 մ³/վ: Կառուցվել է Արզնի-Շամիրամ ջրանցքին լրացուցիչ ջուր (14 մ³/վ) տալու համար: Աջափնյա ջրանցքը դյուկերով անցնում է Քասաղը, ձգվում արևմուտքից մինչև Օհանավան և Ուշի գյուղերի հողատարածքները: Երկարությունը 6,6 կմ է, ջրթողունակությունը՝ 1,65 մ³/վ:

1.8.4. Ջրվեժներ

Խոսրովի արգելոցի տարածքում կան մի քանի ջրվեժներ, որոնցից երկուսը հայտնի են հայկական հեթանոսական աստվածների անուններով՝ Վահագնի և Աստղիկի ջրվեժներ:

1.8.5. Աղբյուրներ

Հրազդան գետի ձախ ափին, ՙՀրազդան՚ երկաթգծի կայարանի շրջանում կան խոշոր աղբյուրների ելքեր (Մաքրավանի աղբյուրներ), որոնք ձգվում են 20-30 մ երկարությամբ, Հրազդանի մակարդակից 1 մետր վերև, 1700 մ բացարձակ բարձրության վրա: Աղբյուրների ելքը գերազանցում է 1000 լ/վրկ, որից 200 լ/վրկ-ն օգտագործվում է խմելու-տնտեսական նպատակներով: Աղբյուրների օգտագործվող ելքերն աղբրակապված են (կապտաժ) և պոմպերի օգնությամբ հասցվում են Հրազդան քաղաքին:

Աղբյուրների մի ուրիշ խումբ է հանդիպում Աթարբեկյան գյուղի շրջակայքում, 300 մ երկարությամբ: Աղբյուրների գումարային ելքը կազմում է 105 լ/վրկ:

1.9. Ինժեներաերկրաբանական պայմաններ

1.9.1. Երկրաբանական կառուցվածքը

<u>Մշակվող միկրոռեգիոնալ փաստաթղթի շրջանակում կատարվել է միկրոռեգիոնում (տվյալ դեպքում՝ Ջրվեժ համայնքում) ներառված բնակավայրերի համար տարածական պլանավորման փաստաթղթերի համար հիմք հանդիսացող ինժեներաերկրաբանական պամանների վերլուծություն:</u>

<u>Ջրվեժ</u>

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի տարածքի գոտիավորման նախագծի մշակման համար կատարվել է նշված տարածքի ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրություն շուրջ 122 հա մակերեսի վրա:

Տարածքի ինժեներաերկրաբանական պայմաններն ուսումնասիրելու նպատակով, համաձայն առաջադրանքի, կատարվել է տարածքի ակնադիտական տեղազննում 1:10000 մասշտաբի տեղագրական հիմքի վրա՝ վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսների ու երևույթների բացահայտման նպատակով:

Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի տարածքի ինժեներաերկրաբանական շրջանացման սխեմատիկ քարտեզն ըստ վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսների ու երևույթների (Մ 1:10000) բերված է «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ-ի կողմից մշակված ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացության մեջ:

Տարածքի համառոտ ինժեներաերկրաբանական բնութագիր

Ջրվեժ գյուղը գտնվում է Կոտայքի մարզի հարավ-արևմտյան մասում, Հրազդան մարզկենտրոնից շուրջ 44 կմ հեռավորության վրա:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Ողջաբերդի լեռնաբազկի հյուսիս-արևմտյան լանջերի ստորոտներում, Ջրվեժ գետի միջին հոսանքի ձախափնյա հատվածում: Ռելիեֆն համեմատաբար հարթ է, մակերևույթի ընդհանուր թեքությամբ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք:

Շրջանի և տարածքի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է միջին չորրորդական հասակի բազալտային անդեզիտներով, որոնք ծածկված են ժամանակակից էլուվիալ, դելուվիալ, ալուվիալ-պրոլուվիալ կավային, ավազային, խճա-խճավազային, ճալաքարա-կոպճային գոյացումներով:

Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը տեղադրված են 30 մ-ից խորը:

Վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսներն ու երևույթները ներկայացված են.

- սողանքային պրոցեսներով, որոնք դիտվում են գյուղի տարածքի սահմանի երկայնքով, զառիթափ լանջերի վերին եզրով, զբաղեցնում են շուրջ 41 հա մակերես, և բնակելի տարածքից բավարար հեռավորության վրա գտնվելով, վտանգ չեն ներկայացնում շինությունների համար:
- քարաթափման երևույթներով, որոնք դիտվում են գյուղի հարավային սահմանի հատվածում, Ջրվեժ գետի կիռճի եզրագծով, ձևավորվում են ապարների ակտիվ ֆիզիկական հողմահարման արդյունքում, և բնակելի տարածքից բավարար հեռավորության վրա գտնվելով, վտանգ չեն ներկայացնում շինությունների համար:

Ելնելով շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստման աշխատանքների բնույթից ու ծավալից, գեոմորֆոլոգիական նշաններից, հիդրոերկրաբանական պայմաններից, ֆիզիկաերկրաբանական պրոցեսների տարածումից, տարածքում անջատված է երկու ինժեներաերկրաբանական շրջան՝ պայմանականորեն բարենպաստ և անբարենպաստ շինարարության համար:

ՀՀՇՆ 20.04-2020 համաձայն Ջրվեժ գյուղը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում (a=0.4g):

<u>Ձորաղբյուր</u>

ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղի տարածքի գոտիավորման նախագծի մշակման համար կատարվել է նշված տարածքի ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրություն շուրջ 249 հա մակերեսի վրա:

Տարածքի ինժեներաերկրաբանական պայմաններն ուսումնասիրելու նպատակով, համաձայն առաջադրանքի, կատարվել է տարածքի ակնադիտական տեղազննում 1:10000

մասշտաբի տեղագրական հիմքի վրա՝ վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսների ու երևույթների բացահայտման նպատակով:

Կոտայքի մարզի Զորղբյուր գյուղի տարածքի ինժեներաերկրաբանական շրջանացման սխեմատիկ քարտեզն ըստ վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսների ու երևույթների (Մ 1:10000) բերված է «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ-ի կողմից մշակված ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացության մեջ:

Տարածքի համառոտ ինժեներաերկրաբանական բնութագիր

Զորաղբյուր գյուղը գտնվում է Կոտայքի մարզի հարավ-արևմտյան մասում, Հրազդան մարզկենտրոնից շուրջ 45 կմ հեռավորության վրա:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Ողջաբերդի լեռնաբազկի հյուսիս-արևմտյան լանջերի ստորոտային հատվածում: Ռելիեֆը համեմատաբար հարթ է, մակերևույթի ընդհանուր թեքությամբ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք:

Շրջանի և տարածքի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է միջին չորրորդական հասակի բազալտային անդեզիտներով, որոնք ծածկված են ժամանակակից էլուվիալ, դելուվիալ կավային, ավազային, խճա-խճավազային գոյացումներով:

Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը տեղադրված են 90 մ-ից խորը:

Վտանգավորֆիզիկաերկրաբանական պրոցեսներ ու երևույթներ չեն դիտվել:

Ելնելով շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստման աշխատանքների բնույթից ու ծավալից, գեոմորֆոլոգիական նշաններից, հիդրոերկրաբանական պայմաններից, ֆիզիկաերկրաբանական պրոցեսների տարածումից, տարածքում անջատված է մեկ ինժեներաերկրաբանական շրջան՝ պայմանականորեն բարենպաստ շինարարության համար:

ՀՀՇՆ 20.04-2020 համաձայն Զորաղբյուր գյուղը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում (a=0.4g):

<u>Զովք</u>

ՀՀ Կոտայքի մարզի Զովք գյուղի տարածքի գոտիավորման նախագծի մշակման համար կատարվել է նշված տարածքի ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրություն շուրջ 122 հա մակերեսի վրա:

Տարածքի ինժեներաերկրաբանական պայմաններերն ուսումնասիրելու նպատակով, համաձայն առաջադրանքի, կատարվել է տարածքի ակնադիտական տեղազննում 1:5000 մասշտաբի տեղագրական հիմքի վրա՝ վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսների ու երևույթների բացահայտման նպատակով:

Կոտայքի մարզի Զովք գյուղի տարածքի ինժեներաերկրաբանական շրջանացման սխեմատիկ քարտեզն ըստ վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսների ու երևույթների (Մ 1:5000) բերված է «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ-ի կողմից մշակված ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացության մեջ:

Տարածքի համառոտ ինժեներաերկրաբանական բնութագիր

Զովք գյուղը գտնվում է Կոտայքի մարզի հարավ-արևմտյան մասում, Հրազդան մարզկենտրոնից շուրջ 49 կմ հեռավորության վրա:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Ողջաբերդի լեռնաբազկի հյուսիսային լանջերի ստորոտներում, Անանուն գետակի ձախափնյա հատվածում: Ռելիեֆը համեմատաբար հարթ է, մակերևույթի թեքությամբ հարավից հյուսիս:

Շրջանի և տարածքի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է միջին չորրորդական հասակի բազալտային անդեզիտներով, որոնք ծածկված են ժամանակակից էլուվիալ, դելուվիալ կավային, ավազային, խճա-խճավազային գոյացումներով:

Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը տեղադրված են 25 մ-ից խորը:

Վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսներ ու երևույթներ չեն դիտվել:

Ելնելով շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստման աշխատանքների բնույթից ու ծավալից, գեոմորֆոլոգիական նշաններից, հիդրոերկրաբանական պայմաններից, ֆիզիկաերկրաբանական պրոցեսների տարածումից, տարածքում անջատված է մեկ ինժեներաերկրաբանական շրջան՝ պայմանականորեն բարենպաստ շինարարության համար:

ՀՀՇՆ 20.04-2020 համաձայն Զովք գյուղը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում (a=0.4g):

1.9.2. Սեյսմատեկտոնական պայմանները

ՀՀ Կոտայքի մարզի տարածքը բնութագրվում է համեմատաբար միջին սեյսմիկ



ակտիվությամբ, մարզը գտնվում է 0.2-0.3g առավելագույն հորիզոնական արագացման գոտում՝ ըստ ՀՀ տարածքի սեյսմաշրջանացման քարտեզի.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04.-երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»՝ որտեղ ներդրված են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2021 թվականի մարտի 31-ի N 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզները

Երկրի տարածքի առանձին շրջանների սեյսմիկ ազդեցությունների մակարդակը որոշվում է ըստ ստորև՝ Հավելված 1 քարտեզում բերված սեյսմիկ գոտիավորման:



Սեյսմիկ ազդեցությունների ուժգնությունը գետնի մակերևույթի վրա գնահատվում է գրունտի սպասվելիք հորիզոնական արագացման մեծությամբ:

Տվյալ ուժգնության երկրաշարժերի կրկնողության պարբերականությունը ընդունված է հավասար 475 տարվա՝ 50 տարվա ընթացքում ուժգնության մեծության՝ 10%-ով գերազանցման հավանականությամբ:

Սեյսմիկ գոտիներ

Սեյսմակայուն շինարարությունը իրականացվում է տարբերակված՝ երեք, ըստ ուժգնության աճող հաջորդականությամբ՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում, որոնք ցույց են տրված Հավելվաս 1-ում բերված քարտեզում: Գրունտների սպասվելիք հորիզոնական արագացումների մեծությունները, ըստ սեյսմիկ գոտիների, ընդունվում են համաձայն աղյուսակի 1-ի:

Աղյուսակ 1

Սեյսմիկ գոտիներ	1	2	3
Գրունտի հորիզոնական արագացման մեծությունը **a**, սմ/վրկ^2	300	400	500

Հայաստանի Հանրապետության 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում գտնվող բնակավայրերի ցանկը բերված է ստորև՝ Հավելված 2 քարտեզում:



1.10. Լանդշաֆտների դասակարգում և գնահատում

Դիտարկվող տարածքն ընդգրկված է նախալեռնային բնական լանդշաֆտային գոտում: Գոտու տարածքը հիմնականում հարթ է (մինչև 3° թեքություններ): Պասիվ են արտահայտված հիդրոլոգիական պրոցեսները:

Գոտու հողատարածությունները օգտագործվում են և ամբողջապես ծածկված են հացահատիկի և կերախոտերի ցանքերով:

Հաշվի առնելով միկրոռեգիոնի լանդշաֆտային գոտու միատարրությունը՝ հետագա դասակարգման տաքսոնոմիկ միավոր է ընտրվել լանդշաֆտների քաղաքաշինական օգտագործման հիմնական ձևերը.

- Կառուցապատված լանդշաֆտներ
- Կառուցապատման ենթակա լանդշաֆտներ

- Գյուղատնտեսական նշանակության հողահանդակներ
- Անտառտնտեսության հողեր:

Կառուցապատված և կառուցապատման ենթակա լանդշաֆտների օգտագործման ռեժիմը նախատեսում է.

- կառուցապատման կանոնակարգում՝ ըստ բնակչության և կառուցապատման նորմատիվ խտությունների,
- գյուղատնտեսական ռեզերվային հողերի կառուցապատում միայն տնամերձ հողամասերով ,
- հարմարավետ կապերի ստեղծում,
- ինժեներական նախապատրաստման միջոցառումների կիրառում (ուղղաձիգ հատակագծում, մակերևութային ջրերի հեռացում),
- տարբեր օբյեկտների և ենթակառուցվածքների սանպահպանման գոտիների պահանջների կիրառում:

Գյուղատնտեսական նշանակության հողահանդակների օգտագործման ռեժիմը նախատեսում է միջոցառումների լայն համալիրի կիրառում, որն ընդգրկում է.

Ագրոտեխնիկական միջոցառումներ՝

- ցանքաշրջանառության կիրառում,
- ցածր արտադրողականության վարելահողերի բարելավում (քարերի հավաքում),
- խորը հերկ երեք տարին մեկ անգամ,
- պարարտանյութերի օգտագործման չափաբաժինների որոշում, պահեստենրի կառուցում՝ ըստ սանպահպանման ստանդարտների պահանջների,
- վնասատուների դեմ պայքարի կենսաբանական մեթոդների կիրառում:

Մարգագետնամելիորատիվ միջոցառումներ՝

- արոտավայրերի բարելավում, ջրարբիացում,
- անասունների արածեցման քանակների և ժամկետների որոշում,
- արոտավայրերում ճանապարհային ցանցի կարգավորում,
- ոռոգվող խոտհարքների կազմակերպում,
- մոլախոտերի, վնասակար և թունավոր բուսատեսակների ոչնչացում:

Հիդրոտեխնիկական միջոցառումներ՝

- լեռնային առուների կառուցում,
- ձյունապահ վահանների ստեղծում:

Անտառտնտեսության հողերում նախատեսվում է.

Անտառմելիորատիվ միջոցառումներ

- անտառածածկ տարածքների մեծացում՝ տեղական պայմաններին հարմարվող ծառատեսակների ընտրությամբ,
- գոյություն ունեցող անտառների բոնիտետի բարելավում:

1.11. Բնակչություն և ժողովրդագրության վերլուծություն

Կոտայքի մարզի բնակչության սեռատարիքային կազմը

Կոտայքը մարդու բնակության հնագույն վայրերից է: Առաջին մարդիկ այստեղ հաստատվել են դեռևս վաղ ժամանակներում՝ հազարամյակներ առաջ:



1830-ական թվականներին Պարսկահայաստանից և Արևմտյան Հայաստանից գաղթելով հանգրվանել են այս տարածքներում: 1950-ականների սկզբին սկսվեց մեծ ներհոսք դեպի Արմավիրի մարզ՝ Վրաստանից, Ադրբեջանից, ինչպես նաև բուն Հայաստանի այլ շրջաններից: Սրա գլխավոր հետևանքը կարելի է համարել այն, որ զարկ տրվեց արդյունաբերության կտրուկ զարգացմանը:

Սրա ազդեցությամբ Խորհրդային Հայաստանի մի շարք քաղաքների բնակչության թիվը կտրուկ աճեց: Միայն Հրազդան քաղաքն ուներ 53,7 հազար մարդ բնակչություն: Խորհրդային տարիներին այս վարչական միավորում աչքի էին ընկնում նաև Աբովյան (47,3 հազար մարդ), Չարենցավան (25,2 հազար մարդ), Եղվարդ (12,5 հազար մարդ), Նոր Հաճըն (10,4 հազար մարդ), Բյուրեղավան (8,6 հազար մարդ) քաղաքները:

Կոտայքի մարզի կազմի մեջ մտնող գյուղական բնակավայրերը մարդաշատ են: Մարզի 62 գյուղերից 11-ն ունի ավելի քան 3000 բնակիչ: Առավել խոշոր և հայտնի գյուղերից են Գառնի (7,0 հազար մարդ), Նոր Գեղի (6,0 հազար մարդ), Քասախ (5,6 հազար մարդ) և Զովունի (5,5 հազար մարդ) գյուղերը:

Ըստ 2011 թվականի մարդահամարի տվյալների՝ Կոտայքի մարզի բնակչությունը կազմում էր 254 397 մարդ, իսկ բնակչության միջին խտությունը՝ 121,14 մարդ/կմ²: Բնակչության թվի և միջին խտության ցուցանիշներով Կոտայքը Հայաստանում զիջում էր միայն Արմավիրի և Արարատի մարզերին, ինչպես նաև մայրաքաղաքային ինքնավարություն և մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքին:

Մարզի բնակչության ներկայիս պատկերը ձևավորվել է բնակչության մեխանիկական աճի ազդեցությամբ:

Բնակչության քանակը 2022 թ. Դրությամբ կազմում է հետևյալ պատկերը[2].

Քաղաքներ

ՀՀ	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
1	2	3
1	Հրազդան	39 957
2	Աբովյան	45 025
3	Չարենցավան	20 368
4	Եղվարդ	12 106
5	Բյուրեղավան	9 142
6	Նոր Հաճըն	9 197
7	Ծաղկաձոր	1 165

Գյուղերն ըստ համայնքների.

ՀՀ	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
1	2	3
Հրազդանի համայնք		

[2] https://armstat.am/file/doc/99533688.pdf

1	Լեռնանիստ	2 927
2	Ջրառատ	491
3	Սոլակ	2 439
4	Քաղսի	2 541
Աբովյանի համայնք		
1	Առինջ	6 638
2	Արամուս	3 906
3	Բալահովիտ	3 652
4	Գեղաշեն	4 384
5	Գետարգել	823
6	Կաթնաղբյուր	651
7	Կամարիս	2 313
8	Մայակովսկի	2 215
9	Պտղնի	1 756
10	Վերին Պտղնի	820
Բյուրեղավանի համայնք		
1	Ջրաբեր	464
2	Նուռնուս	697
Նաիրիի համայնք		
1	Արագյուղ	1 114
2	Բուժական	1 615
3	Զովունի	6 503
4	Զորավան	1 673
5	Սարալանջ	321
6	Պռոշյան	5 588
7	Քասախ	6 158
Ծաղկաձորի համայնք		
1	Աղավնաձոր	1 214
2	Արտավազ	517
3	Գոռգոչ (Կորչլու)	17
4	Հանքավան	61
5	Մարմարիկ	727
6	Մեղրաձոր	2 587
7	Փյունիկ	338
Նոր Հաճընի համայնք		
1	Արգել	3 101
2	Գետամեջ	821
3	Թեղենիք	518
4	Մրգաշեն	2 221
5	Նոր Արտամետ	1 013
6	Նոր Գեղի	6 630
7	Քանաքեռավան	3 862
8	Քարաշամբ	713
Չարենցավանի համայնք		
1	Ալափարս	1 980
2	Արզական	2 692
3	Բջնի	2 786

4	Կարենիս	738
5	Ֆանտան	890
Ակունքի համայնք		
1	Ակունք	2 249
2	Զառ	1 420
3	Զովաշեն	168
4	Կապուտան	1 357
5	Կոտայք	1 808
6	Հատիս	313
7	Նոր գյուղ	1 586
8	Սևաբերդ	234
Արզնու համայնք		
1	Արզնի	2 764
Գառնու համայնք		
1	Գառնի	8 015
2	Գեղադիր	714
3	Գեղարդ	257
4	Գողթ	2 079
5	Հացավան	580
6	Ողջաբերդ	947
Ջրվեժի համայնք		
1	Ջրվեժ	6 206
2	Զովք	846
3	Ձորաղբյուր	2 446

Դիտարկվող միկրոռեգիոնի բնակչության թիվը ներկայում կազմում է 9498 մարդ:

1.12. Հուշարձաններ

1.12.1. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ (այսուհետ՝ հուշարձաններ) են պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձանները գտնվում են պետության պահպանության ներքո:

Հուշարձաններն ըստ արժեքավորման չափանիշների դասակարգվում են հանրապետական և տեղական նշանակության:

Հանրապետական նշանակության կարգին են դասվում ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի նշանակալի հուշարձանների բարձրարժեք, հնագույն, տիպական կամ հազվագյուտ նմուշները:

Տեղական նշանակության կարգին են դասվում հանրապետության որևէ տարածաշրջանի պատմությունն ու մշակույթը, տեղական առանձնահատկությունները բնութագրող հուշարձանները:

Պատմամշակութային բացառիկ արժեք ունեցող հուշարձանները միջազգային մակարդակով սահմանված չափանիշներով կարող են սահմանված կարգով ընդգրկվել համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակում:

Հուշարձանները դասակարգվում են նաև ըստ բնույթի՝

ա) հնագիտական՝ քարեդարյան կայաններ, քարայր-կացարաններ, հնագույն և միջնադարյան բնակատեղիներ, ամրոցներ, դամբարանադաշտեր, գերեզմանոցներ, մեգալիթյան կոթողներ, ժայռապատկերներ, վիմագրական հուշարձաններ, հնագիտական մշակութային շերտեր.

բ) պատմական՝ պատմության և մշակութային նշանավոր իրադարձությունների և նշանավոր գործիչների հետ առնչվող կառույցներ, կոթողներ, հուշահամալիրներ, գերեզմաններ.

գ) քաղաքաշինական և ճարտարապետական՝ պատմական բնակավայրերի, թաղամասերի, փողոցների, այգիների կառուցապատման հատվածներ, բնակելի, պալատական, պաշտամունքային, հասարակական, արտադրական և ճարտարագիտական կառույցներ, ժողովրդական տներ, ճարտարապետական կոթողներ.

դ) մոնումենտալ արվեստի՝ մոնումենտալ քանդակագործության, գեղանկարչության և դեկորատիվ արվեստի նմուշներ:

Հուշարձանի տարածքը իր զբաղեցրած և պատմականորեն ու գործնական առումով դրա հետ կապված և սահմանված կարգով առանձնացված հողատարածքն է:

Հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության ապահովման, պատմագեղարվեստական արժեքների բացահայտման, նպատակային օգտագործման և բարենպաստ տեսողական ընկալման նպատակով սահմանվում է հուշարձանի պահպանական գոտիների համակարգ և օգտագործման ռեժիմ:

Հուշարձանների պահպանական գոտիների համակարգը կարող է ներառել՝

ա) հուշարձանի պահպանության գոտին.

բ) կառուցապատման կարգավորման գոտին.

գ) լանդշաֆտի պահպանման գոտին:

Հուշարձանների պահպանական գոտիները, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերը ելակետային հիմք են տարածաշրջանների, քաղաքների և մյուս բնակավայրերի մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծերի համար: Նշված գոտիների տարածքներում հողային, շինարարական և այլ տեսակի աշխատանքների, ինչպես նաև տնտեսական գործունեության իրականացումը կատարվում է լիազորված մարմնի թույլտվությամբ:

Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը

Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը ներառում է՝

ա) հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը.

բ) հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը.

գ) պատմամշակութային արգելոցների ստեղծումը.

դ) պատմական բնակավայրերի, դրանց առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի կազմումը.

ե) հուշարձանների և դրանց տարածքի պահպանության ապահովումն ու վերահսկումը.

զ) շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքների իրականացման ընթացքում հուշարձանների ու դրանց պատմական միջավայրի անվթարության ապահովումը.

է) հուշարձանների պեղումների, ամրակայման, վերականգնման, նորոգման աշխատանքների և օգտագործման կարգերի սահմանումը.

ը) հուշարձանների պահպանության քարոզչությունը:

Նորահայտ հուշարձանների պահպանության և անվթարության ապահովումը

Պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող նոր հայտնաբերված կամ նոր արժեքավորված օբյեկտն ստանում է նորահայտ հուշարձանի կարգավիճակ և պահպանվում է մինչև հուշարձանների պետական ցուցակում ընդգրկվելը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նորահայտ հուշարձանը տնօրինող իրավաբանական կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել դրա անվթարությունը, իսկ պետության կողմից այն վերցնելու դեպքում սեփականատիրոջ կրած վնասը փոխհատուցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հուշարձանի հայտնաբերման փաստը թաքցնող, այն հաշվառելու և ուսումնասիրելու համար արգելքներ ստեղծող, ինչպես նաև գտածոները ոչնչացնող կամ յուրացնող անձը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հուշարձանների քանդման արգելումը: Հուշարձանների տեղափոխման և փոփոխման կարգը

Հուշարձանների քանդումն արգելվում է:

Հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխումը, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխումը կարող են կատարվել միայն բացառիկ դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվությամբ, իսկ տեղական նշանակության հուշարձանների փոփոխումը՝ պետական կառավարման տարածքային մարմինների թույլտվությամբ:

Հուշարձանների տեղափոխման և փոփոխման թույլտվություն տրվում է միայն լիազորված մարմնի եզրակացության հիման վրա:

Նախքան հուշարձանը տեղափոխելը կամ փոփոխելը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև դրանք կատարելու ընթացքում, լիազորված մարմինը կազմակերպում է հուշարձանի գիտական ուսումնասիրման, չափագրման և լուսանկարման աշխատանքները:

Սույն հոդվածով նախատեսված աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը կատարվում են հուշարձանի տեղափոխման կամ փոփոխման թույլտվություն ստացողի հաշվին:

Հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը

Հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ կարգի աշխատանքների համար հողի հատկացումները, կառուցապատման, ինժեներատրանսպորտային հաղորդակցության ուղիների նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

Եթե նշված աշխատանքները կարող են վտանգել այդ տարածքներում գտնվող հուշարձանների պահպանությունն ու անվթարությունը, նախապես, աշխատանքների պատվիրատուի միջոցներով իրագործվում են հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումներ՝ հետախուզություն, պեղումներ, վերականգնման աշխատանքներ, բացառիկ դեպքերում՝ տեղափոխում և լիազորված մարմնի կողմից առաջարկվող այլ աշխատանքներ:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1793-Ն որոշմամբ հաստատվել է Գոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը և միաժամանակ ուժը կորցրած է ճանաչվել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1983 թվականի հուլիսի 4-ի «Հայկական

ՍՍՀ տարածքում պետական պահպանության տակ վերցված պատմության և կուլտուրայի հուշարձանների և նրանց պահպանական գոտիների ցուցակների հաստատման մասին» N 377 որոշման 1-ին կետը՝ նախկին Աբովյանի, Եղվարդի և Հրազդանի շրջանների պատմության և կուլտուրայի հուշարձանների ցուցակի մասով:

1.13. Զբոսաշրջության աշխարհագրություն

Ծաղկաձորի ճոպանուղին գործում է 1967 թվականից:

«Մարիոթ» հյուրանոցային համալիրի տեսք

Կոտայքի մարզի և ընդհանրապես՝ Հայաստանի տնտեսության կարևոր ճյուղերից մեկը զբոսաշրջությունն է: Կոտայքի մարզի բնակավայրերն ունեն Հանրապետության մասշտաբով միջինից բարձր ցուցանիշներ: Դա պայմանավորված է նպաստավոր բնակլիմայական պայմաններով, ժողովրդական ավանդույթներով և սովորույթներով, ինչպես նաև պատմամշակութային և բնական հուշարձանների հարուստ բազմազանությամբ: Կենտրոնական այս մարզը հատկապես հարուստ է իր բնակլիմայական պայմաններով և քաղցրահամ ջրերի մեծ պաշարներով:

Կոտայքի մարզում զբոսաշրջության ոլորտի զարգացած լինելու վառ ապացույց է այն հանգամանքը, որ հյուրանոցային համալիրների թվով այս մարզը զիջում է միայն Երևանին: Հյուրանոցների հիմնական մասը տեղակայված է Ծաղկաձոր քաղաքում, Հանքավանում, Արզնիում, ինչպես նաև Արզականի տարածքում գտնվող Աղվերան հանգստյան գոտում: Մարզի տարածքում են գտնվում հազարից ավելի պատմամշակութային օբյեկտներ՝ կրոնական կառույցներ (հիմնականում՝ եկեղեցիներ և մատուռներ), հայտնի անձանց տուն-թանգարաններ, խաչքարեր և այլն: Կոտայքի մարզն ունի միջազգային չափանիշներին գրեթե համապատասխանող ավտոճանապարհային ցանց, որը լիովին ընդգրկում է միաժամանակ և՛ մարզի բոլոր համայնքները, և թե՛ պատմամշակութային օջախների շրջակա տարածքները: Հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը կայուն է, իսկ մարզային ու համայնքային նշանակության ավտոճանապարհների վիճակը հետզհետե զարգացման միտում ունի: Կոտայքը Հայաստանի ամենաեկեղեցաշատ մարզն է: Այստեղ վեր խոյացող ամենահոյակերտ կառույցներից են Ալափարսի Սուրբ Աստվածածնի տաճարը, Սուրբ Վարդան Զորավար եկեղեցին (5-րդ դար), Սուրբ Հովհաննես Եռախորան եկեղեցին (9-րդ դար), Թուխ Մանուկ մատուռ-պաշտամունքավայրը (մ.թ.ա 2-րդ հազարամյակ), Այլաբերդ-Սանգայառ ամրոցը (քարի դար), Աբովյանի կիկլոպյան ամրոցը և ուրարտական սեպագիր արձանագրությունը, Գառնիի ամրոցը, հեթանոսական տաճարը (1-ին դար) ու միանավ եկեղեցին (4-րդ դար), Ողջաբերդի գմբեթավոր եկեղեցին (5-րդ դար), Արզնիի քառաբսիդ եկեղեցին (6-րդ դար), Պտղավանքի գմբեթավոր դահլիճը (6-րդ դար), Արամուսի տաճարը (6-րդ դար), Առինջում՝ Զագավանքը (7-13-րդ դարեր) ու միջնադարյան ամրոցը, Ջրվեժի խաչաձև եկեղեցին (7-րդ դար). Գեղարդի վանքը (12-13-րդ դարեր), Կապուտանի երկհարկանի եկեղեցին (14-րդ դար), Բջնիի Սուրբ Աստվածածին, Սուրբ Սարգիս եկեղեցիները և ամրոցը, Եղվարդի Սուրբ Աստվածածին եկեղեցին, Կեչառիսի վանքը, Մաշտոց Հայրապետ եկեղեցին և այլն:

Կոտայքի մարզում է գտնվում Հայաստանի ամենաշատ այցելվող պատմամշակութային կառույցներից երկուսը՝ Գառնու տաճարը և Գեղարդի վանքը:

Գառնու հեթանոսական տաճարը հելլենիստական շրջանի ճարտարապետությանը բնորոշ պերիպտեր տիպի կառույց է: Ենթադրվում է, որ տաճարը նվիրված է եղել հին հայկական դիցարանի արևի աստված Արեգ-Միհրին: Տաճարը կանգնած է բարձր պատվանդանի վրա, որի գլխավոր մուտքի առաջ ունի ինն աստիճանից բաղկացած քարե սանդուղք: Ժամանակի ճարտարապետները մեծ ուշադրություն են դարձրել տաճարի հարդարանքին: Քանդակազարդման արվեստի հիմքում ընկած է միասնական հորինվածքում բազմազան մոտիվների կիրառման սկզբունքը՝ բազմազանությունը միասնության մեջ: Տաճարի հարևանությամբ գտնվում է Գառնու ամրոցը, որը նախկինում եղել է Արարատյան դաշտի հյուսիսարևելյան մատույցների պաշտպանական համակարգի հենակետ: Գառնու տաճարից ոչ այքան հեռու՝ Գողթ գյուղի տարածքում, գտնվում է Գեղարդավանքը, որը միջնադարյան հայկական ճարտարապետության մարգարիտներից է: Այստեղ է պահվել հայտնի գեղարդը, որով հռոմեացի զինվորը ծակել է Քրիստոսի կողը: Այն Հայաստան էր բերել քրիստոնեության առաջին քարոզիչներից Թադեոս առաքյալը: Գեղարդի վանքը ՅՈւՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցված միակ օբյեկտն է, որը գտնվում է Կոտայքի մարզի տարածքում:

Զբոսաշրջային առաջնային կարևորություն ունի Ծաղկաձոր քաղաքը: Քաղաքի տարածքում կա մարզական բազան, քաղաքից Թեղենիսի գագաթը տանող 6 կմ երկարությամբ ճոպանուղի, մանկական առողջարան, հանգստյան տները և զբոսաշրջային մի շարք օբյեկտներ: Ծաղկաձորում է գտնվում նաև Կեչառիսի վանական համալիրը:

Վերը նշված բնակավայրերը և ուրիշ շատերը կարող են դառնալ ագրոզբոսաշրջության խոշոր կենտրոններ, պայմանավորված իրենց գյուղատնտեսական ուղղվածությամբ, արժեքավոր կառուցապատմամբ, պատմամշակութային արժեքներով:

<u>Եզրակացություններ.</u>

Հանրագումարի բերելով և համադրելով վերլուծության արդյունքները, կարելի է եզրահանել.

- մարզում ագրոզբոսաշրջության զարգացման համար առկա են բոլոր նախադրյալները,
- բացակայում է համապատասխան ենթակառուցվածքը (ճոպանուղի, լեռնային բարեկարգ արահետներ, ցուցանակ-վահանակներ և այլն),
- Բնակավայրերի բարենպաստությունն առավել ընդգծվում է մայրաքաղաքի հարևանությունը:
- Սակայն սպասարկման ցածր մակարդակը,
- առկա ենթակառուցվածքների տեխնիկական վատ վիճակը,
- շահագրգիռ կազմակերպությունների և միասնական փոխկապակցված և լրացնող համակարգի բացակայությունը:

<u>Ակնկալվող արդյունք</u>

- բնակչության սոցիալական մակարդակի բարձրացում
- տնտեսության բարգավաճում:
- Պատմամշակութային ժառանգության, ենթակառուցվածքների բարեկարգում, զարգացում:

Միկրոռեգիոնի տարածքում առկա են խոշոր հյուրանոցային օբյեկտներ, որտեղ ձմեռային տուրիզմի, լեռնագնացության, հանգստի, առողջարարական սպորտի, ալպինիզմի կազմակերպման մեծ հնարավորություններ կան:

Արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կհասնի ցանկալի արդյունքի:

Զբոսաշրջության զարգացման ապահովման համար ձեռնարկվելիք քայլերը.

- քաղաքային տուրիզմ,
- պատմա-ճարտարապետական տուրիզմ,
- ձմեռային տուրիզմ
- արկածային տուրիզմ, գյուղական տուրիզմ և էկոտուրիզմ:

Նշված զբոսաշրջային ուղղությունների զարգացման արդյունքում մարզ այցելող զբոսաշրջիկների թիվը կավելանա շուրջ 20-30%:

Զբոսաշրջության զարգացման համար ՀՀ Կոտայքի մարզն ունի հետևյալ առավելությունները.

1) Հարմար աշխարհագրական դիրք և տրանզիտային հնարավորություններ,
2) Հարմար տրանսպորտային ենթակառուցվածքներ,
3) Հարուստ պատմամշակութային ժառանգություն,
4) Էկոլոգիապես մաքուր և գեղեցիկ բնություն,
5) Շուրջտարյա զբոսաշրջության կազմակերպման մեծ պոտենցիալ,
6) Յուրահատուկ խոհանոց:

Զբոսաշրջության ոլորտի թույլ կողմերից է՝ տուրիստական ենթակառուցվածքների, ոչ բավարար վիճակ, այդ թվում՝ հյուրատների, հյուրանոցների, բարձրորակ սպասարկման ծառայությունների, ոչ բավարար Նախատեսված է զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանն ուղղությամբ իրականացնել զգալի ներդրումներ: Այդ միջոցների հաշվին նախատեսվում է հիմնել հանգստի և ժամանցի հասարակական սպասարկման օբյեկտներ, կառուցել և ընդլայնել հյուրանոցային և ռեստորանային համալիրներ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կձևավորվեն առնվազն 100 աշխատատեղ, մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն կունենա:

1.13.1. Զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը

Մարզում զբոսաշրջության զարգացման ռազմավարությունը կարելի է դասակարգել ըստ տարբեր բնութագրիչների, մասնավորապես՝ ըստ առանձին համայնքների տնտեսությունների:

Կոտայքի մարզում զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ ռազմավարությամբ.

1) զբոսաշրջության զարգացման համար առաջնահերթ պայման է ենթակառուցվածքների համաչափ զարգացումը՝ հյուրանոցային համալիրների, հանգստյան տների վերանորոգումը, վերակառուցումը, ինչպես նաև դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող ավտոճանապարհների վերանորոգումը,

2) այլընտրանքային հանգստի կենտրոն կարող է դառնալ Հանքավանի ձորը՝ ամբողջացնելով Ծաղկաձորի հետ համատեղ միջազգային նշանակության հանգստի, առողջարանային և զբոսաշրջության կենտրոն ստեղծելու հեռանկարը, քանզի վերջին տարիներին այնտեղ կառուցված Մարմարիկի ջրամբարը լրացուցիչ նպաստավոր պայմաններ է ստեղծել լողափնյա հանգստի համար:

3) անհրաժեշտ է իրականացնել ծրագիր, որը կհամատեղի Աղվերան, Արզական, Արալեռ տարածքների հնարավորությունները,

4) մարզի տարածքում էկոտուրիզմի զարգացման խթանում,

5) մոտ ապագայում Եղվարդի ջրամբարի կառուցմանը զուգահեռ, այդ կառույցը նաև տուրիստական կենտրոնի վերածելու նպատակով անհրաժեշտ է մշակել և կյանքի կոչել հատուկ ծրագիր, մասնավորապես՝ ջրամբարի տարածքում կառուցել հանրային սպասարկման, հանգստի և զվարճանքի կենտրոններ: Ի տարբերություն Սևանի երկու ամսվա տևողությամբ հանգստի, այս ջրային մակերեսների հնարավորությունից կօգտվեն առնվազն չորս ամիս, և Երևանին ավելի մոտ գտնվելու հանգամանքը ավելի մեծ թվով հանգստացողների ուշադրությունը կգրավի,

6) Կոտայքի մարզում զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակում, որն իր մեջ կներառի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունները:

7) անհրաժեշտ է ստեղծել Կոտայքի մարզի տուրիստական ինտերնետային կայք,

8) շատ կարևոր է ստեղծել գյուղական տուրիզմի զարգացման միասնական հայեցակարգ:

Զբոսաշրջության զարգացման ապահովման համար ձեռնարկվելիք քայլերն են.

1) մարզի զբոսաշրջային տնտեսության գույքագրում,

2) բազմաբնույթ գովազդային նյութերի պատրաստում,

3) մարզում զբոսաշրջության կենտրոնների ստեղծում,

4) հանգստի գոտիների մոտակա տարածքներում տեղակայված առանձնատների և անավարտ շինությունների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում և դրանց մասին ներդրողներին տեղեկատվության ներկայացում,

5) զբոսաշրջության ոլորտի զարգացման պատասխանատուների, ինչպես նաև աշխատակիցների վերապատրաստման և միջազգային փորձի փոխանակման նպատակով դասընթացների կազմակերպում,

6) զբոսաշրջային ծառայություններ մատուցող կազմակերպությունների և ՓՄՁ զարգացմանն աջակցող կազմակերպությունների հետ համագործակցության ապահովում[3]:

1.14. Հաղորդակցուղիներ

1.14.1. Տրանսպորտային ենթակառուցվածքներ

Կոտայքի մարզը գտնվելով Հայաստանի կենտրոնում (սահմանակցում է վեց մարզերին և քաղաքամայր Երևանին) ձեռք է բերել տրանսպորտային կարևոր նշանակություն: Մարզի ավտոճանապարհներին զգալի է նաև տարանցիկ երթուղիների թիվը:

Կոտայքի մարզի տրանսպորտային համակարգի կարևոր բաղկացուցիչ մաս են կազմում ավտոմոբիլային ճանապարհները: Դրանք մեծ նշանակություն ունեն մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:

Տրանսպորտային ենթակառուցվածքների շարքում կարևոր նշանակություն ունեն ավտոմոբիլային փոխադրումները: Դրանք կազմում են Կոտայքի մարզի տարածքում կատարվող ավտոմոբիլային փոխադրումների 95 %-ը: Կոտայքի ընդհանուր օգտագործման ճանապարհային ցանցը խմբավորվում է տարբեր նշանակության երեք հիմնական ավտոճանապարհային ուղիների:

Դրանց ընդհանուր երկարությունը կազմում է 579.48 կմ: Գերակա են համարվում մարզային կամ տեղական նշանակության ավտոճանապարհները (256.1 կմ):

267.2 կմ երկարությամբ աչքի են ընկնում հանրապետական նշանակության ավտոճանապարհները, իսկ միջպետական ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 56.18 կմ:

[3] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2015/01/15_0040.pdf

Մարզի ներսում կատարվող 38 երթուղիների սպասարկման աշխատանքները կատարվում են թվով 12 փոխադրող կազմակերպությունների միջոցով: Կոտայքի 3 քաղաքային բնակավայրերում կատարվում են նաև ներհամայնքային ուղևորափոխադրումներ (6 երթուղիներով): Կոտայքի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերից դեպի Երևան գործում է 8 ավտոբուսային և նույնքան միկրոավտոբուսային, իսկ դեպի Հայաստանի այլ մարզեր՝ 1 ավտոբուսային միջմարզային կանոնավոր երթուղիներ: Նշանավոր է Հրազդան-Երևան մարդատար էլեկտրագնացքը:

Կոտայքի հյուսիս-արևմուտքով անցնում է Երևան-Սևան երկաթուղու 27 կմ հատվածը, որի գլխավոր կայարանը գտնվում է Աբովյան քաղաքում: Արդյունաբերական կենտրոնները գտնվում են երկաթուղու մոտ, կամ՝ 6-9 կմ հեռավորության վրա (Արզնի, Նոր Հաճըն): Խճուղային ճանապարհների համեմատաբար զարգացած, ցանցի շնորհիվ (260 կմ, որից ավելի քան 200 կմ՝ կոշտ ծածկով, 1972) բնակավայրերն ավտոմոբիլային հաղորդակցությամբ կապված են շրջկենտրոնի և Երևանի հետ: Ունի կապի 13 բաժանմունք:

Խողովակաշարային տրանսպորտը Կոտայքի մարզի էքստենսիվ զարգացող և ոչ կենտրոնացված ճյուղ է: Այն տարածված է հիմնականում մարզի լեռնային շրջաններում:

1.14.2. Ջրամատակարարում

Կոտայքի մարզի տարածքը հարուստ է բնական ջրի պաշարներով: Այն ոչ միայն բավարարում, այլև գերազանցում է բնակչության անհրաժեշտ պահանջարկը: Կոտայքի մարզի բնակչության կողմից խմելու ջրի պաշարների տնօրինվող ռեսուրսները ընդհանուր հաշվով կազմում են 1929 լիտր/վրկ: Այն իր հերթին կազմում է ամբողջ խմելու ջրի 30 %-ը: Խմելու ջրի արտաքին ցանցի երկարությունը կազմում է 566.9 կմ: 1280 կմ երկարություն ունի ներքին ցանցը:

«Վեոլիա» փակ բաժնետիրական ընկերությունները պատասխանատվություն է կրում մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերի ջրամատակարարման իրականացման գործում: Այն համակարգում աչքի են ընկնում 50 բաց աղբյուրներ, 16 խորքային հորեր, 13 պոմպակայաններ, 60 օրվա կարգավորման ջրամբարներ, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 174.9 հազար խորանարդ մետր:

Կոտայքում տարբերակվում են ջրամատակարարման երկու հիմնական եղանակներ: Գերակա է մեխանիկական եղանակը, սակայն վերջին տարիներին մեծանում է նաև ինքնահոս համակարգի տեսակարար կշիռը:

1.15. Հատակագծային առկա կառուցվածք

Առկա վիճակի վերլուծության նպատակն է բացահայտել ձևավորված կառուցվածքում առկա բացերը, և հեռանկարային առաջարկներում փորձել լրացնել դրանք և կատարելագործել առկա քաղաքաշինական միջավայրը՝ ստեղծելու մարդու հիմնական կենսական պահանջների բավարարմանն ու տեղաբնակների առօրյան լիարժեք կազմակերպելուն միտված համարավետ կենսամիջավայր:

Բնակելի ֆոնդի վերլուծություն և հեռանկարային առաջարկներ
ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԱՌ. 01.01.2023 Թ (ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՎԻՃԱԿԸ)

NN	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ (ՀԱ)	1-2 ՀԱՐԿԱՆԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՎ ՏՆԵՐ					2-5 ՀԱՐԿԱՆԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐ					ԸՆԴԱՄԵՆԸ		
			ՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ ՀԱ	ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՐՔ	ԲՆԱԿ. ՖՈՆԴ Մ²	ՏԵԽ.-ԿԱՆ ՎԻՃԱԿԸ	ՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ ՀԱ	ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՐՔ	ԲՆԱԿ. ՖՈՆԴ Մ²	ՏԵԽ.-ԿԱՆ ՎԻՃԱԿԸ	ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ ՀԱ	ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՐՔ	ԲՆԱԿ. ՖՈՆԴ Մ²
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Կոտայք-10 միկրոռեգիոն															
1	Ջրվեժ	1851.02	1648	659.2	8240	329600	լավ	2	5.28	12	3917	գերազանց	664.48	8252	333517
2	Զովք	947.23	208	104	1040	41600	լավ	3	0.589	58	752	բավարար	104.589	1098	42352
3	Ձորաղբյուր	2692.23	1217	608.5	6085	243400	լավ	1	0.53	21	280	լավ	609.03	6106	243680

1.16. Սոցիալական ենթակառուցվածք
1.16.1. Կրթական հաստատություններ

Խորհրդային իշխանության անկումից հետո կրթության ոլորտը Կոտայքի մարզում զարգացման ուղին է բռնել: 1972-1973 թվականներին Կոտայքում կար 39 դպրոց (այդ թվում՝ 21 միջնակարգ)՝ 18 100 աշակերտով, 13 մսուր և մանկապարտեզ (շուրջ 620 երեխա):

Դպրոցների թիվը գնալով ավելանում են: Կոտայքի մարզի բոլոր խոշոր գյուղական և քաղաքային բնակավայրերն ունեն առանձնացված դպրոց, իսկ քաղաքերի դեպքում՝ մի քանի դպրոցներ:

2014 թվականի դրությամբ մարզի հանրակրթական կրթարանների ընդհանուր թիվը կազմել է 105 հաստատություն: Այդ թվում են նաև Կոտայքում գործող մեկական հատուկ և մասնավոր դպրոցներն ու երկու կրթահամալիրները: Հանրակրթական ուսումնական հաստատություններից 91-ը, այդ թվում՝ նաև 1 հատուկը, գործել են մարզպետի աշխատակազմի ենթակայության ներքո:

11 ավագ դպրոցները և Աբովյանի կրթահամալիրը գործում է Հայաստանի Հանրապետության ԿԳ նախարարության հովանավորությամբ: Նաիրիի ոչ պետական միջնակարգ դպրոցը միակն է իր տեսակով Կոտայքում՝ ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն: Նշանավոր է «Փոքր Մհեր» ռազմական կրթահամալիրը, որը նաև գիշերօթիկ դպրոց է:

Պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում ծնելիության մակարդակի աճով՝ մարզի տարածքում աճել է առաջին դասարան հաճախող աշակերտների թիվը: Այսպես, եթե 2010-2011 և 2011-2012 ուսումնական տարում մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարան են հաճախել շուրջ 3300-ական երեխաներ, ապա 2012-2013 ուսումնական տարում այդ թիվը կազմել է 3375, իսկ 2013-2014 ուսումնական տարում՝ 3620:

Մարզում գործում է 105 հանրակրթական ուսումնական հաստատություն՝ 59 միջնակարգ, 31 հիմնական, 1 հատուկ (օժանդակ), 11 ավագ դպրոց, 2 կրթահամալիր (Աբովյանի և <<Փոքր Միեր>>) և 1 ոչ պետական դպրոց (Նոր Գեղիի): Գործում է նաև 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն (Հրազդանի հումանիտար ինստիտուտ), 5 նախնական (արհեստագործական), 6 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնցից 3-ում իրականացվում են նաև նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագրեր և 1 կրթահամալիր, որտեղ նույնպես իրականացվում է նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագիր: 2015/2016 ուստարում մարզի դպրոցական հաստատություններում աշակերտների թվաքանակը կազմել է 34754, իսկ մանկավարժների թվաքանակը՝ 3071: Մարզում նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների թիվը 2015-2016 ուսումնական տարում կազմել է 675, իսկ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ 1265:

Հանրակրթության զարգացման գործընթացը բազմակողմանի դարձնելու համար կարևորվում է ներառական կրթությունը հասանելիությունը առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար: Այսպես, մարզի 11 դպրոցներում սովորում է 112 աշակերտ (ներառված): Մատչելիության տեսանկյունից մինչև 2020 թվականը բոլոր դպրոցներում անհրաժեշտ է ենարավորություններ ստեղծել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար, որպեսզի յուրաքանչյուր երեխա հաճախի իր բնակավայրի դպրոց:

Մարզի 39 դպրոցներում ՄԱԿ-ի Պարենի Համաշխարհային ծրագրի կողմից իրականացվում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը, որում ընդգրկված երեխաների թիվը կազմում է 6800:

Աղյուսակ 11. ՀՀ, Կոտայքի մարզի դպրոցական հաստատությունների ցուցանիշները 2014-2016թթ.

Մարզ	Դպրոցական հաստատությունների քանակը		աշակերտների թվաքանակը		մանկավարժների թվաքանակը		մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը	
	2014-2015 ուս տարի	2015-2016 ուս տարի	2014-2015 ուս տարի	2015-2016 ուս տարի	2014-2015 ուս տարի	2015-2016 ուս տարի	2014-2015 ուս տարի	2015-2016 ուս տարի
ՀՀ	1437	1438	359 559	364 398	39 018	38 690	9.2	9.4
Կոտայք	105	105	33703	34754	3107	3071	10.8	11.3

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., (http://armstat.am/am/?nid=81&id=1834)

ՀՀ Կոտայքի մարզում 2015-2016 ուս տարում մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը կազմել է 11.3: Այդ նույն ժամանակահատվածում մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը հանրապետությունում կազմել է 9.4, իսկ ՀՀ Լոռու մարզում՝ 8.4: Մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը 2015-2016 ուս. տարում 2014-2015 ուս. տարվա համեմատ ՀՀ Կոտայքի մարզում ավելացել է 0.5-ով, ՀՀ Լոռու մարզում՝ 0.1–ով, իսկ հանրապետությունում՝ 0.2-ով: Մարզում առկա են նախադպրոցական, դպրոցական ուսումնական հաստատություններ, որոնք ունեն կապիտալ վերանորոգման, շուրջօրյա ջրամատակարարման, կոյուղով, խաղահրապարակներով, մարզադահլիճներով և ջեռուցման կենտրոնացված

համակարգերով ապահովման խնդիրներ, մասնավորապես Գեղարդի, Կամարիսի, Գեղանիշի, Զառի, Կոտայքի միջնակարգ դպրոցները և Հրազդանի թիվ 2, 4, 5, 6, 7, 8, 9, 11, 12, 13, 15, 16, Աբովյանի թիվ 3, 4, 9, 10, Գառնիի, ք. Բյուրեղավանի «Արև» նախադպրոցական ուսումնական հաստատությունները ունեն վառարանային ջեռուցում:

Ելնելով մարզի սոցիալ-տնտեսական զարգացման դինամիկայից՝ կարիք կա նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտի արդիականացման և վերազինման: Անհրաժեշտ է այն իրականացնել հատկապես 3 ուղղությամբ՝ գյուղատնտեսական, բժշկական և տեղեկատվական ուղղվածություն ունեցող քոլեջների և ուսումնարանների մասնագիտությունները համապատասխանեցնել և հնարավորինս մոտեցնել աշխատաշուկայի պահանջներին: Այս իմաստով մեծ ուշադրություն պետք է դարձնել մատուցվող ծրագրերի նյութին:

Սպորտային հաստատություններ

Աբովյանի քաղաքային մարզադաշտը

Սպորտի բնագավառում Կոտայքն առաջատար դիրքեր է գրավում Հայաստանի Հանրապետության մարզերի մեջ: 2016 թվականի տվյալներով Կոտայքի մարզի տարածքում գործում են 15 խոշոր մարզադպրոցներ: Մարզի բնակավայրերում գործում են 23 մարզաձևի պարապմունքներ: Այդ մարզաձևերից 16-ը օլիմպիական են: Կոտայքի մարզում լայն տարածում ունեն սամբո, ձյուդո, ազատ ոճի ըմբշամարտ, բազկամարտ, բռնցքամարտ, շախմատ, աթլետիկա, ֆուտբոլ, մականախաղ և դահուկային սպորտ մարզաձևերը[33]:

Կան նաև վոլեյբոլով, կարատեյով, սուսերամարտով և այլ սպորտաձևերով զբաղվող երիտասարդներ և պատանիներ: Մարզի մարզական դպրոցներ են հաճախում թվով 5400 մարզիկներ: Գրեթե 5000-ն էլ պարապում են մարզական ակումբներում և հանրակրթական դպրոցների արտադասարանական մարզական խմբակներում:

Մարզի տարածքում սպորտի զարգացման կարևոր խթան է հանդիսանում այն, որ բոլոր քաղաքային և գյուղական բնակավայրերում դասավանդվում են ֆիզիկական կուլտուրայի խորացված դասընթացներ:

Մարզադաշտը Աբովյանի «Կոտայք» մարզադաշտն է, որտեղ ֆուտբոլային ակումբի ֆուտբոլիստներն անց են կացնում իրենց մարզումներն ու տնային հանդիպումները:

1.16.2. Առողջապահության մատչելիություն

ՀՀ Կոտայքի մարզում գործում են 100 տոկոս պետական բաժնեմասով 35 առողջապահական ընկերություններ՝ 4 բժշկական կենտրոն, 1 ծննդատուն, 1 քաղաքային պոլիկլինիկա, 1 մարզային արյան բանկ, գյուղական բնակավայրերում գործում են 2 առողջության կենտրոն, 26 առողջության առաջնային պահպանման հաստատություններ: Մարզի 5 առողջապահական ընկերություններ ունեն համայնքային ենթակայություն: Մարզում գործում է ՀՀ ԱՆ Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն (ք. Աբովյան) և ՀՀ ԱՆ նևրոզների կլինիկա (գ. Քասախ):

1.16.3. Մշակութային մատչելիություն

Կոտայքի մարզում կան մի շարք մշակութային օջախներ՝ գրադարաններ, թանգարաններ, թատերասրահներ և այլն: Դրանցից 14-ը գտնվում են Կոտայքի մարզի

քաղաքներում, իսկ մնացած 51-ը՝ գյուղերում: Եվս մեկը ունի մարզային կարգավիճակ և համարվում է Կոտայիք մարզի գլխավոր գրադարանը: Նշանավոր գրադարաններից է Ծաղկաձոր քաղաքի հանրային գրադարանը: Այն 2013 թվականին ստացել է հանրային կարգավիճակ՝ ի շնորհիվ նորագույն կահավորման, գրական բազայի և տեխնոլոգիական զարգացման:

ՀՀ Կոտայքի մարզում գործում են 1 թատրոն, 5 թանգարան, 62 գրադարան, 23 արվեստի, գեղարվեստի և երաժշտական դպրոցներ, 52 մշակույթի կենտրոն, մշակույթի տուն և ակումբ: Մշակույթի տներում գործում են ժողովրդական ստեղծագործության տարբեր ուղղությունների՝ պարարվեստի, թատերարվեստի, կերպարվեստի, երաժշտարվեստի, գործագործության, փայտարվեստի և այլ խմբեր: Գեղարվեստական կրթության հաստատություններում սովորում են 4550 աշակերտներ: Թանգարաններ, ցուցասրահներ, համերգասրահներ այցելուների քանակը տարեկան կտրվածքով կազմում է 6000-7000 մարդ: Գրադարանային ծառայություններից օգտվողների թիվը կազմում է ավելի քան 42789 մարդ: Պետական ու ազգային տոներին, ավանդական ծեսերին ու տոնախմբություններին մասնակիցների թիվը տարեկան կազմում է շուրջ 10000 մարդ: Թատերական և տիկնիկային ներկայացումների քանակը կազմում է շուրջ 25-30: Մշակույթի ոլորտում մարզում իրականացվող ծրագրերը պայմանավորված են համայնքներում մշակութային կազմակերպությունների համաչափ տեղաբաշխման, նյութատեխնիկական պայմանների բարելավման, շենքերի հիմնանորոգման, մշակութային գործունեություն իրականացնելու և մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովման գերակայություններով, որը կբերի մշակույթի ոլորտի շահառուների թվի ավելացման:

Բացի գրադարաններից, Կոտայքում գործում են նաև թանգարաններ և մեկ պատկերասրահ, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության տակ: Դրանք են Հրազդանի երկրագիտական թանգարանը, Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանը, Ծաղկաձորի Օրբելյան եղբայրների տուն-թանգարանը, Նոր Հաճընի Կիլիկիայի հայերի պատմության թանգարանը և «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանը:

Միակ պատկերասրահը գտնվում է Հրազդան քաղաքում և համարվում է Հայաստանի ազգային պատկերասրահի (գտնվում է Երևանում) մասնաճյուղը:

Կոտայքում գործում են մի շարք մշակութային տներ և գեղարվեստական դպրոցներ: Այստեղ գործում է թվով 23 մասնագիտական գեղարվեստական կրթական հաստատություն: Դրանց թվում են մարզում գործող 8 երաժշտական, 13 արվեստի, 2 գեղարվեստի դպրոցները՝ 3514 աշակերտներով և 427 մանկավարժներով: Որպես հենակետային դպրոցներ մարզում աչքի են ընկնում Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական, Երվանդ Քոչարի անվան արվեստի և Աբովյանի գեղարվեստի դպրոցները:

1.17. Տնտեսություն

ՀՀ Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է: Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերությունն է: Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի,ալյուրի, ըմպելիքի արտադրություն)

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

գ) մետաղագործական արդյունաբերություն և մետաղե արտադրատեսակների արտադրություն (պողպատի և թուջի ձուլում),

դ) կահույքի արտադրություն, այլ կատեգորիաների մեջ չմտցված պատրաստի իրերի արտադրություն (ոսկերչական իրերի և կից ապրանքների (ադամանդի) արտադրություն):

1.17.1. Արդյունաբերություն

Արդյունաբերության ոլորտի իրավիճակի վերլուծություն

ՀՀ Կոտայքի մարզը արդյունաբերական տեսանկյունից եղել է Հայաստանի ամենազարգացած մարզերից մեկը:

ՀՀ Կոտայքի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են: Արդյունաբերությունը հանդիսանում է Կոտայքի մարզի տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: Մարզի արդյունաբերական արտադրության ծավալի ներուժը կենտրոնացված է հիմնականում քաղաքային բնակավայրերում՝ Հրազդան, Չարենցավան, Աբովյան, Նոր Հաճըն, Եղվարդ, Բյուրեղավան քաղաքներում: Մարզում մեծ թիվ են կազմում էներգետիկայի, մեքենաշինական, սննդի արդյունաբերության, քարամշակման, հանքարդյունահանման, ձկնաբուծության, շինանյութերի, փայտամշակման և այլ ձեռնարկությունները: Այս ձեռնարկությունների կողմից թողարկվող արտադրանքի մեծ մասն իրացվում է տեղական շուկայում, մյուս մասը արտահանվում է արտերկիր: Արդյունաբերության ճյուղերից առաջատար են համարվում էներգետիկայի, մեքենաշինական և սննդի արդյունաբերության, քարամշակման, հանքարդյունահանման, ձկնաբուծության, շինանյութերի և փայտամշակման ոլորտները: Արդյունաբերության արտադրանքի մեծ մասը բավարարում է հայաստանյան շուկայի ներքին պահանջները, իսկ մի մասն էլ արտահանվում է արտասահման՝ Ռուսաստանի Դաշնություն, Չինաստան, Վրաստան, Բուլղարիա, Իրանի Իսլամական Հանրապետություն և այլն:

2013թ. տվյալներով մարզում գործում են 164 արդյունաբերական ձեռնարկություններ: ՀՀ Կոտայքի մարզի տնտեսական ներուժին զգալի վնաս հասցրեց նախկինում տասնյակ հազարավոր աշխատատեղեր ապահովող խոշոր կազմակերպությունների քայքայումը՝ սեփականաշնորհման, հումքի, իրացման շուկաների նվազման կամ բացակայության և հիմնական միջոցների բարոյաֆիզիկական մաշվածության հետևանքով: Մարզի տասնյակ մեքենաշինական, թեթև և սննդի արդյունաբերական ձեռնարկություններ դադարեցրեցին իրենց գործունեությունը կամ էլ սկսեցին աշխատել փոքրաթավալ հզորությամբ:

Մարզի արդյունաբերության համախառն արտադրանքի կառուցվածքն ունի հետևյալ պատկերը.



Հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի 13.4%-ը բաժին է

ընկել ՀՀ Կոտայքի մարզի արդյունաբերական ձեռնարկություններին՝ զբաղեցնելով երրորդ տեղը Երևանից և Սյունիքի մարզից հետո: Արդյունաբերության բնագավառում առանձնակի նշանակություն ունի էլեկտրաէներգիայի արտադրությունը: Էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմում է մարզի արդյունաբերական արտադրանքի մոտ 36.7%-ը, իսկ հանրապետությունում արտադրված էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալում՝ 28.5%-ը:

Կոտայքի մարզի արդյունաբերության գլխավոր ճյուղերից մեկը սննդի արդյունաբերությունն է: Այս բնագավառի կարևոր ոլորտներն են կաթնամթերքի վերամշակումը, ինչպես նաև գինու և կոնյակի, պահածոների, ձվի և թռչնամսի, մսամթերքի արտադրությունը: Կոտայքում զարգացած է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի (այդ թվում և ոսկու) վերամշակումը: Մարզում ամենաթույլ զարգացած ճյուղը թեթև արդյունաբերությունն է:

Արդյունաբերությունը տալիս է Հայաստանի ռադիոէլեկտրոնիկայի և սարքաշինության արտադրանքի մոտ մեկ հինգերորդ մասը, ապակու և բյուրեղապակու 40%-ից ավելին, ոչ ոգելից խմիչքների և հանքային ջրերի մոտ 12%: Տնտեսության զարգացման հեռանկարները կապված էին մշակող արդյունաբերության աճի, հանքային հարստությունների շահագործման և մերձերևանյան գոտում գյուղատնտեսական արտադրանքի ավելացման հետ: Հայաստանի Կոտայքի մարզի տնտեսական ներուժին զգալի վնաս է հասցրել նախկինում տասնյակ հազարավոր աշխատատեղեր ապահովող խոշոր կազմակերպությունների քայքայումը՝ սեփականաշնորհման, հումքի, իրացման շուկաների նվազման կամ բացակայության և հիմնական միջոցների բարոյաֆիզիկական մաշվածության հետևանքով: Մարզի տասնյակ մեքենաշինական, թեթև և սննդի արդյունաբերական ձեռնարկություններ դադարեցրեցին իրենց գործունեությունը կամ էլ սկսեցին աշխատել փոքրածավալ հզորությամբ: Կոտայքի մարզի կայուն զարգացող ոլորտներից է էներգետիկ արդյունաբերությունը: Դրա երաշխիքներն են 17 հիդրոէլեկտրակայանների և «Հրազդան-5» էներգաբլոկի առկայությունը:

Կոտայքի մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռը՝ ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում, 2020[4]



[4] Աղբյուրը՝ armstat.am

արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որտեղ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),

2) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

3) մետաղագործական արդյունաբերություն և մետաղե արտադրատեսակների արտադրություն (պողպատե և թուջե ձուլվածքներ),

4) թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտադրություն և մշակում:

Մարզում վերջին տարիներին էականորեն ավելացել է մշակող արդյունաբերության ծավալը, հիմնականում ի հաշիվ խմիչքների (աճ՝ 77.5%), հիմնային մետաղե արտադրատեսակների (աճ՝ 16.4%), դեղագործական արտադրանքի արտադրության (աճ՝ 56.3%)։ 2013թ. մշակող արդյունաբերության ընդհանուր ծավալում սննդամթերքի և խմիչքների արտադրությունը կազմել է 60.2%, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակներինը՝ 21.0%, հիմնային մետաղե արտադրատեսակների արտադրությունը՝ 11.1%: 57. Սննդի արդյունաբերությունը մարզի առաջատար ճյուղերից մեկն է և շատ կարևոր դեր է խաղում մարզում գործազրկության նվազման և զբաղվածության խնդրի լուծման հարցում: Այս ոլորտի առավել հայտնի կազմակերպություններն են. Կաթնամթերքի վերամշակում. < Չանախ > ՍՊԸ, < Թամարա > ՍՊԸ, <Անի և Թամարա> ՍՊԸ, < Զոհրաբյանի Տիգրան Մեծ> ՓԲԸ, <Արզնի կաթ> ՍՊԸ,

Գինիների և կոնյակների արտադրություն. Պռոշյանի կոնյակի գործարանը, Գինու-կոնյակի տուն < <Շահնազարյան > ՍՊԸ,

Պահածոների արտադրություն: < <Սավա> ՍՊԸ, <Նիկոլա ինթերնեյշնլ Արմենիա> ՍՊԸ, < Գամմա>> ՍՊԸ, <Արտաշես> ՍՊԸ,

Ձվի և թռչնամսի արտադրություն: < Արզնու տոհմային ԹՏՖ > ԲԲԸ, < Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա> ՍՊԸ,

Մսամթերքի արտադրություն:< Ջրվեժի մսամթերքի կոմբինատ> ՍՊԸ, <Բակոն պրոդուկտ> ՍՊԸ, <Ա.Շիրվանյան և ընկերներ> ՍՊԸ, <Լումա մսամթերքի արտադրական կազմակերպություն> ՍՊԸ:

Մարզում զարգացած է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի մշակումը: Չնայած որ դրանց ծավալները կրճատվել են նախորդ տարիների համեմատ, սակայն աղամանդագործության զարգացման համար առկա են զգալի նախադրյալներ, և անհրաժեշտ օժանդակության դեպքում ճյուղը կարող է դառնալ մարզի տնտեսության զարգացման հզոր ուժ: 60.Մարզում թույլ է զարգացած թեթև արդյունաբերությունը, որը ևս համապատասխան ներդրումների առկայության դեպքում կարող է առաջ ընթանալ:

2011-2013թթ. մարզում գործարկվել են նոր արտադրական կարողություններ: 2011թ. վերջին շահագործման է հանձնվել բնական աղբյուրի ջրի շշալցման գործարանը, որի համար ներդրվել է ավելի քան 2.9 մլրդ. դրամ: 2011 թվականից Եղվարդում գործում է Գինու-կոնյակի տուն համալիրը, որը հայտնի է իր թողարկած արտադրանքի մրցունակ բարձր հատկանիշներով: Ընկերությունը տարեկան արտադրում է 1 մլն. շիշ կոնյակ: Արտադրանքի հիմնական մասն արտահանվում է ԱՊՀ և եվրոպական մի շարք երկրներ: 2013թ. վերագործարկվել է <Ասկե գրուպ> գործարանը, որը մետաղի ձուլման արտադրության վերազինման շնորհիվ թողարկում է շինարարական ամրաններ: Գործարանի հզորությունը տարեկան 125 հազ. տոննա է. այն կարող է ամբողջովին ապահովել տեղական պահանջարկը, ինչպես նաև արտադրանքի մի մասը արտահանել:

Մարզում զարգացած է նաև հանքահումքային արդյունաբերությունը: Մարզում օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություններ են տրվել թվով 59 հանքավայրերի տեղամասերի համար, որից 25-ը՝ բազալտի, 17-ը՝ լիթոիդային պեմզայի, 3-ը՝ մարմարի, 2-ը՝ գրանիտի և 2-ը՝ երկաթի արդյունահանման: Նշված հանքավայրերը պատկանում են 46 տնտեսվարող սուբյեկտների: Թվարկվածներից շահագործվում են 32-ը, շուրջ 10-ը չեն շահագործվում պահանջարկ և հնարավորություններ չունենալու պատճառով, իսկ մնացածը գտնվում են փաստաթղթային ձևակերպումների փուլում:

Արդյունաբերության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

Մարզում արդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներն են.

1) արդյունաբերական ներուժի ճիշտ գնահատում և միջազգային փորձի ուսումնասիրություն,

2) աշխատատեղերի քանակի ավելացում՝ ի հաշիվ նոր արտադրական ճյուղերի ստեղծման և գործող արտադրական հզորությունների ընդլայնման,

3) ոչ արդիական տեխնոլոգիաները նորերով փոխարինելու գործընթաց

4) աջակցություն գործող ձեռներեցության կենտրոնների կայացմանը և նորերի ստեղծմանը,

5) տնտեսության այլ ճյուղերում համապատասխան ոլորտի արտադրանքի և ծառայությունների ներդրում,

6) մարզի արդյունաբերական արտադրանքի ցուցահանդես-վաճառքների կազմակերպում՝ ներգրավելով արտերկրի արտադրողներին,

7) մարզի արդյունաբերական ձեռնարկություններ արտադրանքի արտահանման խթանման նպատակով արտերկրի առանձին մարզերի կամ շրջանների հետ հորիզոնական կապերի հաստատման և խորացման գործընթացի շարունակում,

8) գործող փոքր և միջին կազմակերպությունների զարգացմանը խոչընդոտող հիմնական պատճառներից մեկի՝ ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքարի դեպքում տնտեսվարող սյուբեկտների համար կստեղծվեն մրցակցային հավասար պայմաններ, ինչը կնպաստի արտադրության ծավալների զգալի աճին, ինչպես նաև դրական դեր կունենա արտադրանքի որակական հատկանիշների բարելավման և իրական գնագոյացման վրա:

ՀՀ Գոտայքի մարզն ունի անհրաժեշտ բոլոր նախապայմանները մարզի արդյունաբերության ոլորտի առկա հիմնախնդիրները լուծելու, սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու համար: Նշված խնդիրների լուծմանը մեծապես կնպաստի երկարաժամկետ ներդրումների և վարկավորման ծրագրերի իրականացումը:

ՀՀ Գոտայքի մարզում 2017-2025 թվականներին նախատեսվում է ստեղծել նոր կազմակերպություններ մարզի հիդրոէներգետիկ պոտենցիալի օգտագործմամբ՝ փոքր ՀԷԿ-եր կառուցելով և շահագործելով, ինչպես նաև տեղական հումքի վերամշակման, սննդի արտադրության, թեթև արդյունաբերության կազմակերպություններ ստեղծելով: Այս առումով մարզի արդյունաբերության զարգացման հեռանկարը կարելի է կապել հետևյալ ճյուղերի զարգացման հետ.

1) մետաղամշակում,
2) գյուղմթերքների վերամշակում,
3) թեթև արդյունաբերություն,
4) ադամանդագործություն,
5) ձկնաբուծություն,
6) սննդի արդյունաբերություն,
7) վերականգնվող էներգիայի արտադրություն,
8) զբոսաշրջություն:

Մարզի արտադրության ընդհանուր ծավալում իրենց առաջատար դիրքերը զիջել են մեքենաշինությունն ու սարքաշինությունը, թեթև արդյունաբերությունը: Զգալիորեն բարձրացել է սննդի արդյունաբերության, սննդի կազմակերպման, զբոսաշրջության, այլ ծառայությունների տեսակարար կշիռը: Մննդամթերքի արտադրությունը Կոտայքի մարզի տնտեսության հեռանկարային ճյուղերից է:

Կոտայքի մարզն ունի բավականաչափ ռեսուրսներ մրգերի, հատապտուղների և բանջարեղենի մշակման համար: Առկա մրգերի, բանջարեղենի և հատապտուղների ծավալը կարող է բավարար լինել պահածոյագործությունը զարգացնելու համար, որը կարող է իրականացվել պահածոյագործական նոր արտադրությունների հիմնման, ինչպես նաև գոյություն ունեցող արտադրությունների ծավալների ընդլայնման միջոցով իհարկե համապատասխան ներդրումների ներգրավման պարագայում[5]:

1.17.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսությունը մարզի տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է: Հայաստանի այս մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Բնորոշ է ինտենսիվ ապրանքային ճյուղերի զարգացումը: Մասնագիտացած է, որպես այգեգործական-անասնապահական շրջան՝ ծխախոտագործության ու բանջարաբուծության օջախներով:

Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 154 584.3 հա, որից՝ վարելահողեր՝ 37 708.6 հա (մշակվում է 19 351.2 հեկտարը կամ 51.3%-ը): Զարգացած է հիմնականում անասնապահությունը և բուսաբուծությունը: Գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Մարզում գործում են 32 660 ընտանեկան (գյուղացիական) տնտեսություններ, գյուղատնտեսական մթերքներ վերամշակող 30 կազմակերպություններ: Գյուղատնտեսության մեջ զբաղված է մարզի բնակչության 35%-ը: Մարզում մշակվում են հիմնականում հացահատիկային մշակաբույսեր, բանջարեղեն, կարտոֆիլ, պտուղ, խաղող: Գործում են 10 ջերմոցային տնտեսություններ՝ 61.0 հա տարածքով (որից՝ ժամանակակից տեխնոլոգիաներով՝ 52.6 հա), որտեղ արտադրվում են հիմնականում բանջարեղեն և ծաղիկ: Մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են նաև կորիզավոր և հնդավոր պտղատեսակների արտադրության համար: 2016թ. մարզի ընդհանուր ցանքատարածությունները կազմել են 19 351.2 հա, ինչը 2014թ. համեմատ ավելացել է 13.4 %-ով. հիմնականում ավելացել են հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները 16.5%-ով:

1.17.2.1. Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծություն

Կոտայքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 76.8%-ը (154639.9 հա): Մարզը սահմանամերձ չէ և ըստ բնակլիմայական պայմանների բաժանվում է լեռնային և բարձր լեռնային գոտիների: Մարզում ըստ բարձունքային գոտիականության հանդիպում են Հանրապետության

[5] http://kotayk.mtad.am/11/

տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները: Արևափայլքի տարեկան տևողությունը տատանվում է 1920 ժամից մինչև 2400 ժամի սահմաններում: Տարվա ամպամած օրերի միջին թիվը կազմում է 75: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին - 7.9°C-ից մինչև - 19.8°C է, հուլիս-օգոստոսին՝ 13.0-25.4°C: Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Հրազդանում (-31°C), առավելագույնը՝ Եղվարդում (32°C): Տեղումների տարեկան քանակը տատանվում է 310 մմ - մինչև 726 մմ: Տեղումների առավելագույն մասը դիտվում է ապրիլին, նվազագույնը՝ օգոստոսին: Աշնանը դիտվում է առատ տեղումների երկրորդ շրջանը:

Մարզի 37.8 հազ. հա վարելահողերից 2013թ. ընտանեկան (գյուղացիական) տնտեսությունների կողմից օգտագործվել է 17.1հազ. հա, որից 12.1հազ. հա՝ հացահատիկային մշակաբույսերի տակ: Համայնքում փաստացի չի օգտագործվել 20.7 հազ. հա վարելահող: Չօգտագործվող վարելահողերը հիմնականում գտնվում են բարձրադիր գոտիներում և բնակավայրից զգալի հեռավորության վրա, քարքարոտ են ու դժվարամշակ:

Գյուղատնտեսական նշանակության հողերի, մասնավորապես վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման գործում անհրաժեշտ է կարևորել պետական մոտեցումը. չօգտագործվող վարելահողերը, որոնք հիմնականում գտնվում են բնակավայրերից հեռու՝ բարձրադիր գոտում և ունեն մեծ թեքություններ, թփակալումների, ճանապարհների վատ լինելու, տեխնիկայի բացակայության, մելորացիայի ենթակա լինելու, ինչպես նաև հողատերերի բացակայության և ֆինանսական սղության պատճառով հողատարածքները օգտագործվում են որպես խոտհարքներ:

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը /51.0%/ և վարելահողերը /24.4%/: Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2013թ. կազմել է 56.7 մլրդ դրամ, որը հանրապետության գյուղատնտեսության ամբողջ համախառն արտադրանքի 6.2%-ն է:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման մակարդակը կազմում է 80-85%, ընդ որում խոտհարքեր՝ 90% (առանձին բնակավայրերում այն կազմում է մինչև 100%), արոտավայրեր՝ 100%, վարելահողեր՝ 50-55%:

Մարզի գյուղատնտեսության մասնագիտացումը - Մարզն ունի անասնապահության /կաթ, միս/ և բուսաբուծության /հացահատիկ, կարտոֆիլ/ արտադրության ուղղվածություն: Վերջին տարիներին փաստացի ձևավորված մասնագիտացման հետ մեկտեղ մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են կորիզավոր հնդավոր պտղատեսակների արտադրության համար: Առաջիկա ծրագրային միջոցառումները իրականացնելիս պետք է հաշվի առնել նշված նախընտրելի մասնագիտացումը:

Մարզի գյուղատնտեսության արտադրության կազմակերպումը - Կոտայքի մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Մարզում գործում են 32222 ընտանեկան (գյուղացիական) տնտեսություններ, գյուղատնտեսական մթերքներ /կաթ, միս, հացահատիկ, պտուղ/ վերամշակող 30 կազմակերպություններ:

Կոտայքի մարզի ընտանեկան (գյուղացիական) տնտեսությունների միջին ապահովվածությունը՝ ըստ գյուղատնտեսական հողատեսքերի (2014թ. հունվարի 1-ի դրությամբ)

/հա /

Մարզը	Մեկ ընտանեկան (գյուղացիական) տնտեսությանը բաժին ընկնող գյուղատնտեսական հողատեսքը	այդ թվում՝		
		վարելահող	բազմամյա տնկարկ	խոտհարք
Կոտայք	2.23	1.17	0.71	0.35

Աղյուսակ 5.3

Մեկ ընտանեկան (գյուղացիական) տնտեսությանը միջին հաշվով բաժին ընկնող անասնագլխաքանակը (2014թ. հունվարի 1-ի դրությամբ)

/գլուխ/

Մարզը	Մեկ ընտանեկան (գյուղացիական) տնտեսությանը միջին հաշվով բաժին ընկնող անասնագլխաքանակը				
	Խոշոր եղջերավոր անասուններ	որից՝ կովեր	Ոչխարներ և այծեր	Խոզեր	Պայմանական անասնագլխաքանակ
Կոտայք	1.8	0.8	1.3	0.5	2.06

Ներկայացված տվյալները վկայում են մարզում ընտանեկան (գյուղացիական) տնտեսությունների մասնատվածության մասին. մարզի գյուղատնտեսության առաջնահերթ հիմնախնդիր է հողատեսքերի փոքր չափերը: Ինչի հետևանքով ցածր է արտադրության արդյունավետությունը, հնարավոր չէ կիրառել անհրաժեշտ ցանքաշրջանառություն և արտադրության նոր տեխնոլոգիաներ, դժվարություններ են ծագում գյուղատնտեսական արտադրության սպասարկումների, արտադրանքի իրացման և այլ բնագավառներում: Ստեղծված իրավիճակը պահանջում է տնտեսությունների միավորման, դրանց համատեղ գործունեության կազմակերպման մեխանիզմների (կոոպերացիաների ստեղծում և ֆերմերային տնտեսությունների հզորացում) մշակում և ներդնում:

Վերջին տարիներին մարզում էական առաջընթաց է գրանցվել ջերմոցային տնտեսությունների ընդլայնման և զարգացման ուղղությամբ: Մարզի ջերմոցային տնտեսությունները հիմնականում զբաղվում են բանջարանոցային մշակաբույսերի և ծաղիկների արտադրությամբ:

Անասնապահությունը մարզում համարվում է առաջատար ճյուղերից մեկը, որն ավելի զարգացած է բարձրադիր բնակավայրերում: Մարզում արտադրվում է հանրապետության անասնապահական մթերքների 7.6 %-ը: Ճյուղի զարգացումը կարևորագույն նշանակություն ունի հատկապես լեռնային գոտու բնակավայրերի համար, ուստի պետական ծրագրերի իրականացումը համարվում է ուղղակի անհրաժեշտություն:

Մարզի անասնաբուծության ճյուղի հիմնական ցուցանիշների փոփոխության գնահատման արդյունքներից պարզվում է, որ դեռևս ցածր է գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը: Արտադրության ծավալների ավելացումը հիմնականում իրականացվում է էքստենսիվ եղանակով, ուստի առաջնահերթ հիմնախնդիրը գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումն է:

Մարզի անասնաբուծության հիմնական ուղղությունը կաթնամթերքի և մսամթերքի արտադրությունն է: Մարզում գործում են անասնաբուծական մթերքների վերամշակման ավելի քան 13 մասնագիտացված ընկերություններ, որոնց արտադրատեսակների պահանջարկը հանրապետության շուկայում զգալիորեն բարձր է: Սակայն կաթի

իրացումից ընտանեկան (գյուղացիական) տնտեսությունների ստացված եկամուտը դեռևս ցածր է (կաթի 1 լիտրը իրացվում է 120-150 դրամով)։ Մարզում գործում են 2 խոշոր տոհմային տնտեսություններ՝ Արզնի և Առինջ բնակավայրում։ Նախատեսվում է առաջիկա տարիներին տոհմային անասունների ձեռք բերման միջոցով տոհմային կովերի գլխաքանակը հասցնել մինչև 200 գլխի։ Այդ տնտեսությունների բազայի վրա նախատեսված է մարզի ընտանեկան (գյուղացիական) տնտեսություններին ապահովել բարձր մթերատու կենդանիներով։

Մարզի անասնաբուծության ճյուղի հիմնական ցուցանիշների փոփոխության գնահատման արդյունքներից պարզվում է, որ դեռևս ցածր է գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը։ Արտադրության ծավալների ավելացումը հիմնականում իրականացվում է էքստենսիվ եղանակով, ուստի առաջնահերթ հիմնախնդիրը գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումն է։

Մարզում լայն թափ են ստացել նաև թռչնաբուծությունն ու մեղվաբուծությունը։ 2014թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 620.6 հազ. թև թռչուն։ 2013թ. արտադրվել է 117.3 մլն. հատ ձու, որը կազմել է հանրապետության ձվի արտադրության 19.1 %-ը (ՀՀ-ում՝ 615.2 մլն. հատ ձու)։

Մեղվաբուծություն - Մարզում մեղվաբուծության զարգացման համար առկա են բնակլիմայական բարենպաստ պայմաններ։ Մարզի տարածքը, ունենալով տարբեր գոտիներ՝ ցածրադիրից մինչև բարձրադիր, ալպիական և մարգագետինային արոտավայրեր, բարենպաստ է էկոլոգիապես մաքուր մեղր արտադրելու համար։

Մեղվաընտանիքների շարժի դինամիկայից նկատվում է, որ մեղվաբուծությունը զարգացման լայն հեռանկարներ ունի։ Եթե 2013թ հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա էր 22714 մեղվաընտանիք, ապա 2014թ. հունվարի 1-ի դրությամբ այն հասել է 26046 մեղվաընտանիքի կամ 2013թ համեմատ աճը կազմել է 14.6%։

Տոհմաբուծություն - Անասնագլխաքանակի մասնատվածությունը, կերի կայուն բազայի բացակայությունը, կերային մշակաբույսերի ցանքատարածությունների նվազումը ոչ միայն հանգեցրեցին անասնագլխաքանակի և անասնապահական մթերքների և հումքի արտադրության կրճատմանը, այլև լուրջ խոչընդոտներ ստեղծեցին լայնածավալ տոհմասելեկցիոն համալիր միջոցառումների իրականացման համար։ Վերջինից անմասն չմնաց նաև Գոտայքի մարզը։

Գյուղատնտեսական մթերքների իրացումը և ապրանքայնության մակարդակըԳյուղատնտեսության կայունության, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ապահովման և գյուղատնտեսության վերարտադրության համար կարևորվում է արտադրանքի իրացման խնդրի լուծումը, որը բնութագրվում է արտադրության ապրանքայնության մակարդակով։

Չնայած վերջին տարիներին մարզում որոշակի դրական տեղաշարժեր են արձանագրվել գյուղատնտեսական մթերքների իրացման, հատկապես պտղատեսակների արտահանման ուղղությամբ, սակայն իրացման հիմնախնդիրները մարզում դեռևս առկա են։ Այդ մասին է վկայում այն փաստը, որ վերջին տարիներին մարզում դժվար լուծելի խնդիր է դարձել կարտոֆիլի իրացումը։

Մարզի գյուղատնտեսության համար կարևոր հիմնախնդիր է ապրանքայնության մակարդակի բարձրացումը, որի ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել համապատասխան միջոցառումներ, որը կհանգեցնի գյուղացիական տնտեսությունների կայունության հաստատմանը և գյուղական բնակավայրերում աղքատության կրճատմանը։

Գյուղատնտեսական մթերքների մրցունակությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում մեծապես պայմանավորված է միավոր արտադրանքի վրա կատարվող ծախսերի մակարդակով:

Բարձրորակ տնկանյութի և սերմանյութի օգտագործման, ագրոտեխնիկայի պահանջների կատարման, գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման միջոցով անհրաժեշտ է բարձրացնել մշակաբույսերի բերքատվությունը և կենդանիների մթերատվությունը՝ արդյունքում բարձրացնելով արտադրության արդյունավետությունը:

Վերը նշվածից կարելի է հետևություն անել, որ մարզում առաջնային հիմնախնդիր է գյուղատնտեսական մթերքների արտադրության ինքնարժեքի իջեցման և արտադրության արդյունավետության բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականացումը:

Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածությունը - Մարզում գյուղատնտեսական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար կարևորվում է գյուղատնտեսության արտադրության ոլորտի՝ նորագույն տեխնիկայով համալրումը: Ներկայիս շահագործվող տեխնիկան օգտագործվում է քսան տարուց ավելի և բարոյապես ու ֆիզիկապես մաշվածության հետևանքով ցանկալի արդյունք չի ապահովում, ինչը իր հերթին հանգեցնում է վառելանյութի և քսայուղերի գերածախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, թանկացնում նորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների արժեքը: Տևական ժամանակահատվածում տեխնիկայի պարկը չհամալրելու, տեխնիկական խնամքներով չապահովելու հետևանքով աստիճանաբար նվազել է գյուղատնտեսական տեխնիկայի օգտակար գործողության գործակիցը:

Ոռոգման համակարգերը - Մարզում գյուղատնտեսական մշակաբույսերից երաշխավորված և բարձր բերք ստանալու կարևորագույն պայմանը ոռոգման համակարգերի անխափան աշխատանքների ապահովումն է: 181. Մարզի 37818.7 հա վարելահողերից ոռոգելի են 18760 հա-ը, սակայն ոռոգվում են 11500 հա-ը, որը խիստ բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսական արտադրության ծավալների ավելացման և հողի մշակության արդյունավետության բարձրացման վրա: 182. 2013թ. գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին մատակարարվել է 32.8 մլն խ.մ. ջուր, ոռոգման ջրի վարձավճարների գանձումը կազմել է 84.4 % նախորդ տարվա 80.1 %-ի դիմաց: 183. Այս բնագավառում նախատեսվող կարևոր միջոցառումներն են.

1. ոռոգման գոյություն ունեցող համակարգերի և ոռոգման կարիքների գույքագրումը,

2. ջրօգտագործողների գործող համակարգի վերջնական ձևավորումը, համակարգում էներգակիրների ծախսերի կրճատումը և ինքնահոս ջրամատակարարումների ցանցի ընդլայնումը, 3. փոքր և միջին կարգավորման ջրամբարների կառուցումը, համայնքում ոռոգման ջրի վերաբերյալ առկա խնդիրների ուսումնասիրումը և դրանց լուծման միջոցառումների ժամանակացույցի կազմումը: 184. 2011-2013թթ. Կոտայքի մարզի թվով 12 բնակավայրերում հրատապ ծրագրերով հիմնանորոգվել և կառուցվել են ոռոգման ջրագծեր /24700 գմ/, որոնց համար պետական բյուջեից հատկացվել է 500.0 մլն. դրամ: Արդյունքում ոռոգելի հողատարածքներն ավելացել են 1500 հա-ով: Ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 2011-2013թթ. ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով <> ծրագրերի շրջանակներում ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգմամբ իրականացվել են 5545.0 մ ոռոգման ջրագծերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ՝ 53.1 մլն. դրամ գումարի չափով:

Մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման հիմնական նպատակը- Կոտայքի մարզում գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման ու կատարելագործման միջոցով ավելացնել բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ծավալները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, լուծել իրացման հիմնախնդիրները, որի արդյունքում կավելանան գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտները, որն էլ իր հերթին կնպաստի աղքատության նվազեցմանը:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումը՝ իրացման շուկայի մատչելիության և արտադրողի պաշտպանվածության ապահովում: Այսօր գյուղացիական տնտեսություններն իրենց արտադրանքն իրացնում են տարերայնորեն, պատահական վայրերում: Այս առումով կարևորվում է ժամանակակից պահանջներին համապատասխան մեծածախ շուկայի ձևավորումը, որը կօգնի գյուղմթերք արտադրողներին բերքի կազմակերպված իրացման և արտահանման գործում:

Չունենալով երկարատև պահպանման հնարավորություններ՝ գյուղացիական տնտեսություններն իրենց մթերքներն իրացնում են կարճ ժամանակահատվածում շուկայական գներից ցածր գներով, որի հետևանքով չի ապահովվում շահութաբերության բարձր մակարդակը:

Գյուղատնտեսության ոլորտում ֆինանսական միջոցների ներդրման ծավալների ավելացում-. Ֆինանսական միջոցների մատչելիությունը կարևորագույն դեր ունի գյուղացիական տնտեսությունների տնտեսական բազայի ամրապնդման և գյուղարտադրության զարգացման համար: Դրա հետ կապված սկզբունքային նշանակություն ունի գյուղատնտեսության ոլորտի վարկավորման տոկոսադրույքների իջեցումը և գրավիչ պայմանների մատչելիության ապահովումը, որը կմեծացնի վարկերի մատչելիությունը և կարևոր խթան կհանդիսանա գյուղատնտեսական արտադրության համար:

Կոտայքի մարզում գյուղատնտեսության զարգացման ոլորտներից մեկը կարող է դառնալ ծխախոտի հումքի արտադրությունը: Նախկինում մարզի տարածաշրջաններում այն որոշակիորեն զարգացած էր: Այսպես, միայն Աբովյանի շրջանում 1982 թվականի տվյալներով ծխախոտի ցանքատարածությունները կազմում էին 150 հա, որից ստացվել էր 1860 տոննա ծխախոտի հումք, միջին բերքատվությունը կազմում էր 12.4 ցենտներ: Ներկայումս հայրենական ծխախոտ վերամշակող և արտադրող կազմակերպությունների առկայության պայմաններում այն հնարավոր տարբերակ է և արտադրանքի իրացումն իրագործելի կլինի:

Խորհրդատվական ծառայությունների ընդլայնում- Խորհրդատվական ծառայությունների բնագավառում Կոտայքի մարզի զարգացման ծրագրի հիմնական նպատակն է այդ ծառայությունների մատչելիության բարձրացումը, նրանց առավել նպատակային օգտագործումը: Ծրագրի ռազմավարությունը այս ուղղությամբ ենթադրում է հետևյալ կարևոր միջոցառումների իրականացումը:

1) Մարզային ուսուցողական-խորհրդատվական ծառայության կողմից կազմակերպել ուսուցողական-խորհրդատվական դասընթացներ գյուղմթերքների արտադրության և վերամշակման առաջավոր տեխնոլոգիաների վերաբերյալ,

2) Անցկացնել սեմինար-դասընթացներ տնտեսավարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի տարբեր ձևերի ներդրման ու զարգացման ուղղությամբ, ինչպես նաև մշակել տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ գյուղատնտեսական արտադրությանը վերաբերող մասնագիտական մոտեցումների վերաբերյալ:

Վերամշակող կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում և ընդլայնում- Մարզի բոլոր տարածաշրջաններում անհրաժեշտ է ստեղծել

կամ վերագործարկել կաթի մթերման և վերամշակման, միս և մսամթերք վերամշակող կազմակերպություններ, կազմակերպել պտղի, բանջարեղենի չորացման փոքր արտադրամասեր, ծխախոտի ֆերմենտացիոն և բուսայուղերի արտադրության փոքր արտադրություններ, բրդի ընդունման և լվացման ծառայություններ, կաշվի, մորթեղենի վերամշակման, դեղաբույսերի արտադրության և փաթեթավորման արտադրություններ և այլն: Այս նպատակին կարելի է հասնել՝ առաջնահերթությունը տալով փոքր ու միջին ձեռնարկությունների ստեղծմանը:

Անհրաժեշտ է նաև բանջարաբոստանային կուլտուրաների և պտղաբուծության զարգացման հետ մեկտեղ պայմաններ ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, պահպանության և իրացման համար: Այս առումով կարևորվում է մարզում սառնարանային տնտեսության ստեղծումը և ագրովերամշակող կազմակերպությունների ու գյուղատնտեսական հումք արտադրողների միջև հումքի գնման պայմանագրային փոխհարաբերությունների ձևավորման գործընթացի աջակցությունը: Գյուղատնտեսական հումքը վերամշակող կարողությունների ձևավորումը և գոյություն ունեցող արտադրությունների ծավալների ընդլայնումը հնարավոր է դրամաշնորհների, նպատակային վարկերի միջոցով: 196. Ծրագրի հաջող իրագործման դեպքում ակնկալվող արդյունքներն են.

1) մարզի հողային և մարդկային ռեսուրսների նպատակային օգտագործման ապահովում, ինտենսիվ տեխնալոգիաների կիրառում, ոռոգելի ցանքատարածությունների ընդարձակում, անմշակ հողերը ցանքաշրջանառության մեջ ներառում,

2) բուսաբուծական, անասնապահական մթերքների արտադրության ծավալների ավելացում (15-20%) և արդյունավետության բարձրացում, մթերքների ապրանքայնության մակարդակի բարձրացում, ինչպես նաև դրանց վերամշակումից ստացված արտադրատեսակների արտահանման ծավալների էական ավելացում (շուրջ 20%),

3) մասնագիտացված տնկարանային և սերմնաբուծական տնտեսությունների (տարբեր պտղատեսակների, կարտոֆիլի և հացահատիկային մշակաբույսերի) ձևավորում, որոնք հիմնականում կբավարարեն գյուղացիական տնտեսությունների պահանջարկը բարձրորակ տնկանյութի և սերմացուների նկատմամբ,

4) բույսերի պաշտպանության (հատկապես պտղատու այգիներում) պայքարի կենտրոնացված միջոցառումների իրականացում,

5) մարզում արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայնման միջոցով կենդանիների տոհմային հատկանիշների պահպանում և կատարելագործում, տոհմաբուծական ծառայությունների ձևավորում,

6) կերային բազայի ընդլայնում, բազմամյա արժեքավոր կերային մշակաբույսերի ծավալների ավելացում (մինչև 30%), խոտհարքների և արոտների արդյունավետ օգտագործում (մինչև 100%),

7) մարզի գյուղատնտեսության մասնագիտացմանը համապատասխան փոքր վերամշակող արտադրական հնարավորությունների (պտղի, կաթի, մսի, բրդի) ձևավորում,

8) գյուղատնտեսական տեխնիկայով արտադրության ապահովվածության մակարդակի բարձրացում, տեխնիկայի համատեղ օգտագործման (կոոպերացման սկզբունքով) ծառայությունների ձևավորում,

9) տեղեկատվական և խորհրդատվական համակարգի կատարելագործում և մատչելիության մակարդակի բարձրացում,

10) խոշոր ապրանքային ֆերմերային տնտեսությունների և կոոպերատիվների ձևավորում,

11) մարզում ապահովագրական համակարգի ձևավորման համար նախադրյալների ստեղծում:

1.18. «Կոտայք-10» միկրոռեգիոնի առկա վիճակի վերլուծություն

Միկրոռեգիոնն ընդգրկում է Ջրվեժ խոշորացված համայնքի թվով 3 բնակավայր՝ Ջրվեժ, *Ձորաղբյուր, Ջուվ:* Համայնքի կենտրոնը Ջրվեժն է:

1.18.1. Ջրի, կեղտաջրերի և կոշտ թափոնների կառավարման ենթակառուցվածքներ

Մարզի բնական կարևոր հարստություններից են խմելու ջրի մեծ պաշարները, որոնք գերազանցում են մարզի բնակչության անհրաժեշտ պահանջարկը: Խմելու ջրի պաշարների 1/3-ը օգտագործվում է մարզի և Երևան քաղաքի բնակչության կողմից, իսկ մնացած մասը հոսում է դեպի ջրային ավազան (գետեր, լճեր), որը կոյուղաջրերի կառավարման բացակայության պատճառով խառնվում է իրար՝ առաջացնելով էկոլոգիական բազմաթիվ խնդիրներ:

Աղյուսակ 5. Ջրառն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2015թ. (մլն.մ³)

	Ջրառը	որից՝ ստորգետնյա ջրաղբյուրներից
Կոտայք	**268.3**	**37.1**
Լոռի	53.6	38.6
ՀՀ	3 271.7	1 304.5

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, (http://armstat.am/am/?nid=81&id=1834)

Աղյուսակ 6. Ջրօգտագործման և կորուստների ծավալները 2015թ. (մլն.մ³)

	Ջրօգտա-գործումը	այդ թվում՝ ըստ նշանակության			Կորուստները տրանզիտային տեղափոխման ժամանակ
		խմելու	արդյունաբերություն, կոմունալ տնտեսություն և շինարարություն	գյուղատնտեսություն, ձկնաբուծություն և անտառտնտեսություն	
Կոտայք	**169.6**	**10.2**	**3.1**	**156.3**	**98.7**
Լոռի	20.2	5.6	9.1	5.5	33.4
ՀՀ	2 533.1	96.5	153.3	2 283.3	738.6

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, (http://armstat.am/am/?nid=81&id=1834)

Գծանկար 8. Կոտայքի և Լոռու մարզերի ջրմուղի ցանցերի միագիծ երկարությունը 2015թ. (կմ)



Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, (http://armstat.am/am/?nid=81&id=1834)

Մարզի բնակավայրերի 97%-ն ունի կայուն ջրամատակարարում: 48 բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումն իրականացվում է <<Վեոլիաջուր>> ՓԲԸ-ի համապատասխան տեղամասերի կողմից, որոնք սպասարկում են բնակչության 86.6%-ին, իսկ մնացած բնակավարերում՝ համայնքապետարանների կողմից: Մարզի բնակչության 82%-ն ունի 8 և ավելի ժամ ջրամատակարարում:

Ջրամատակարարումն իրականացվում է բաց աղբյուրներից, կապտաժներից՝ ինքնահոս և մեխանիկական եղանակներով: Չնայած կատարված աշխատանքներին, կան դեռևս լուծում պահանջող հիմնախնդիրներ՝ Լեռնանիստ բնակավայրը չունի ջրամատակարարման ցանց:

Մարզի 29 բնակավայրերում գոյություն ունեն կոյուղու հեռացման գործող համակարգեր, որոնք սպասարկում են մարզի բնակչության 53%-ին: Ներկայումս մարզի կոյուղու համակարգ ունեցող բոլոր բնակավայրերի կոյուղագծերը գտնվում են անմխիթար վիճակում և միացված են հոսող գետերին, ջրամբարներին: Հրազդանի տարածաշրջանում առկա է կեղտաջրերի մաքրման չգործող կայան, որը մինչև 1992թ-ը իրականացրել է Ծաղկաձորի, Հանքավանի և Հրազդանի կոյուղաջրերի կենսաբանական մաքրում:

Գծանկար 9. Կոտայքի և Լոռու մարզերի կոյուղու համակարգի միագիծ երկարությունը /կմ/ 2015թ.



Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, (http://armstat.am/am/?nid=81&id=1834)

Գծանկար 10. Կոտայքի և Լոռու մարզերի կոյուղի բաց թողնված կեղտաջրերի ծավալը 2011-2015թթ. /մլն մ³/



Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, (http://armstat.am/am/?nid=81&id=1834)

Մարզի բոլոր քաղաքներն ունեն աղբահանության համար նախատեսված մասնագիտացված մեքենաներ, որոնցով սպասարկում են մարզի բնակչության 54.3%-ին: Աղբահանություն կազմակերպող համայնքներում հավաքված աղբը տեղափոխվում է բաց աղբավայրեր:

2016թ. մեկնարկել է ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարում ծրագիրը. արդեն կազմավորվել է կառուցվող աղբավայրի

կառավարման կազմակերպությունը և ընտրվել է աղբավայրի կառուցման խորհրդատուն: Գործարանի կառուցումից հետո հնարավորություն կստեղծվի վերամշակել աղբավայրում տեղադրված աղբը՝ համաշխարհային նորմերին համապատասխան:

1.18.2. Էներգետիկ ենթակառուցվածքներ

Մարզով են անցնում մագիստրալ գազատարեր, առկա են գազի ստորգետնյա պահեստարաններ: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի 67 բնակավայրերից գազաֆիկացված է 62-ը, որտեղ բնակվում են մարզի բնակչության 98.6%-ը: Գազաֆիկացված չեն Հանքավան, Սևաբերդ, Ողջաբերդ, Սարալանջ, Բուժական բնակավայրերը, որտեղ բնակվում են մարզի բնակչության 1.4%-ը: Նշված բնակավայրերից Հանքավան բնակավայրի գազաֆիկացումը կնպաստի Հանքավանի ջրամբարի հարակից և համայնքի տարածքում առկա հանգստյան տների, առողջարանների կողմից առավել մատչելի էներգետիկ ռեսուրսի օգտագործման համար: ՀՀ Կոտայքի մարզի գազի բաշխիչ ցանցի միագիծ երկարությունը կազմում է 1051 կմ: 2016-2012թթ. ընթացքում գազաֆիկացված բնակարանների թվաքանակը աճել է համապատասխանաբար ՀՀ Կոտայքի մարզում 4002-ով,

Գծանկար 11. ՀՀ Կոտայքի և Լոռու մարզերի գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը 2012-2016թթ./միավոր/



Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, (http://armstat.am/am/?nid=81&id=1834)

ՀՀ Կոտայքի մարզում է արտադրվում հանրապետությունում արտադրված ընդհանուր էլեկտրաէներգիայի 20%-ը: Մարզում են գտնվում հանրապետության երկու խոշոր էներգաարդյունաբերող հիմնարկները՝ <<ՀրազԷԿ>> ԲԲԸ-ն և <<Հրազդան-5>> էներգաբլոկը, որոնց տեխնոլոգիայի հիմքում ընկած է նաև հովացման աշտարակների միջոցով տաք ջրի հովացումը: Նշված հիմնարկություններին կից առկա են գյուղատնտեսական բերրի հողատարածքներ, որտեղ ներդրումների իրականացման դեպքում հնարավոր կլինի կառուցել ջերմոցային տնտեսություններ՝ մատչելի ջեռուցմամբ, առանց ջրի կորուստների և ինքնահոս ոռոգման ջրով, քանի որ տեղանքը ընձեռում է այդ հնարավորությունը: ՀՀ Կոտայքի մարզը հանրապետության հիդրոռեսուրսներով համեմատաբար հարուստ տարածաշրջաններից է, որն ունի հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության զարգացման մեծ պոտենցիալ: Մարզի Հրազդան, Մարմարիկ գետերի էներգետիկ պոտենցիալի օգտագործման շնորհիվ

գործում են 3 խոշոր՝ Հրազդանի, Արգելի, Արզնիի ՀԷԿ-երը և 16 փոքր ՀԷԿ-եր (տարեկան արտադրում են մոտ 48,3 մլն.կվտժ էլեկտրաէներգիա): Կառուցման փուլում է գտնվում ևս 1 փոքր ՀԷԿ, որի շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա մոտ 2.4 մլն.կվտժ-ով:

1.19. «Կոտայք-10» միկրոռեգիոնի բնակավայրերի առկա վիճակի վերլուծություն

Միկրոռեգիոնն ընդգրկում է Ջրվեժ խոշորացված համայնքը, որն իր մեջ ընդգրկում է 3 **գյուղական՝ Ջրվեժ, Ձորաղբյուր, Ձովք բնակավայր:** Համայնքի կենտրոնը Ջրվեժն է:

1.20. Ջրվեժ

Ընդհանուր տվյալներ

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղը գտնվում է Կոտայքի մարզի հարավային մասում, սահմանակից է Երևան քաղաքի երեք վարչական՝ Նոր-Նորք, Ավան-Առինջ, Էրեբունի շրջաններին՝ և մարզի երեք գյուղական՝ Առինջ, Ձորաղբյուր, Ողջաբերդ բնակավայրերի վարչական տարածքներին: Մարզկենտրոնից գտնվում է 45 կմ հեռավորության վրա, Աբովյան քաղաքից՝ 9 կմ: Այստեղով են անցնում Երևան-Գառնի մայրուղին և Աբովյան-Մասիս ավտոճանապարհը:

Ջրվեժ տեղանունը հիշատակվում է դեռևս V դարում՝ պատմաբան Ղազար Փարպեցու, VII դարում՝ սարկավագ Ձաքարյա Քանաքեռցու աշխատություններում:

Ջրվեժ գյուղը պատմականորեն ձևավորված բնակավայր է: Այն հիշատակվում է V դարից: Այդ մասին են վկայում գյուղին բնորոշ նեղ, ծուռումուռ փողոցները և մեկ-երկու հարկանի ցածրահարկ բնակելի կառուցապատումը: Պատմական տեղեկությունների համաձայն Ջրվեժ տեղանունը ոչ մի անգամ չի վերանվանվել: Գյուղը ծովի մակարդակից բարձր է 1380 մետր, վարչական տարածքը կազմում է 1851,02 հա, աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ բարենպաստ:

Տարվա եղանակներից համեմատաբար լավ է գարունը, ամառը տևական է՝ 4,5-5 ամիս: Տարեկան տեղումների քանակը կազմում է 250-ից 350 մմ, վերջին տարիներին նկատվում է տևական ձնածածկույթի սակավություն և կարկտահարություն: Գյուղը գտնվում է Արարատյան հարթավայրի հյուսիս-արևելյան մասի նախալեռնային գոտում, չունի հարթ մակերես: Հյուսիսային մասում այն կտրտված է ձորակներով, արևելյան մասից սկիզբ են առնում Ձորաղբյուրի և Ողջաբերդի լեռնաբազուկները, հարավային մասում խոր ձորակներ են, որոնք շարունակվում են մինչև Արին-Բերդ, արևմտյան կողմով՝ ձորերով և կիրճերով միանում են Երևանին:

Դեռևս խորհրդային տարիներին գյուղին կից տեղակայվել են արտադրական ձեռնարկություններ, որոնց շուրջ կազմավորվել է խոշոր բնակելի բանավանը (ա.կ.

միկրոշրջանը)՝ իր ենթակառուցվածքներով (դպրոց, մանկապարտեզ, խանութներ և այլն): Թեև վերը նշված տարածքները, այսօր չեն մտել բնակավայրի վարչական տարածքի մեջ, դրանք համայնքում կենտրոնական դիրք են գրավում, կարևոր տեղ զբաղեցնելով բնակավայրի կենսագործունեության մեջ:

Բնակլիմայական պայմաններ, առողջարարական և ռեկրեացիոն ռեսուրսներ

Հարթավայրի և նախալեռների կցվանքատեղում հրաբխային ապարները մերկ են և հաճախ հողածածկույթի փոխարեն երևում է հզոր ժայռոտ զրահը: Հրաբխային ապարներն իրենց ամբողջ հզորությամբ պարզորոշ երևում են գետերի կանյոններում: Երևանը հյուսիս-արևելքից և հյուսիսից գոտևորող Քանաքեռի բարձրունքը և Նորքի բլրազանգվածը ձևավորում են պլատոյաձև սեղանատիպ զանգված, որը 10-15° թեքվածությամբ աստիճանաբար բարձրանում է մինչև 1250մ բարձրություն, ներառելով Ջրվեժ բնակավայրը:

Արարատյան հովտի արևելյան կողը Գեղամա լեռնաշղթան է՝ լավային ծածկույթով ուռուցիկ-վահանաձև մակերևույթի վրա վեր խոյացող հրաբխային կոներով: Լեռնաշղթայի միջին բարձրությունը 2800մ է: Գեղամա լեռների զառիթափ լանջերը համարյա ողողամաշված չեն, ինչը բացատրվում է կլիմայի չորությամբ: Լեռների գագաթային մասում հստակ երևում են հնագույն սառցապատումների հետքերը:

Լեռնային գոտու մակերևույթը բավականին բարդ է: Աժդահակի գագաթամերձ բարձրավանդակը կազմված է հրաբխային ապարներից՝ մասնատված բազմաթիվ խորը հովիտներով: Գեղամա լեռների արևմտյան լանջերն ալիքաձև և սանդղավոր են, կտրտված ժամանակավոր հոսք ունեցող հեղեղատներով, որոնք վարարում են գարնանային ձնհալքերի ժամանակ: Միջին լեռնային մասում գերակշռում են չորրորդային անդեզիտո-բազալտներ և բազալտներ: Դեպի Նորք – Ջրվեժ սարահարթ իջնող լեռնալանջերը խիստ մասնատված են էրոզիայի ենթարկված հովիտներով և ձորակային ցանցով, որոնցով ձնհալքի և գարնանային վարարումների ժամանակ հոսում են սելավներ: Դրանց մի մասը իրացնում է Գետառ գետը, իսկ մյուս, հիմնական մասը չի առաջացնում մակերեսային հոսք, այլ ներծծվում է: Շատ տեղերում ներծծված ջրերը երկրի մակերես են դուրս գալիս քաղցրահամ ջրերի աղբյուրների ձևով:

Ջրվեժ-Ողջաբերդ տարածքում գերիշխում է տափաստանային, իսկ լեռնալանջերին՝ ալպիական լանդշաֆտը, որը ծառայում է որպես արոտավայր:

Տարածքի կլիմայական պայմանները ձևավորվում են միջին լայնությունների օդային զանգվածների անմիջական ազդեցությամբ, չոր

մերձարևադարձային օդային զանգվածների ներխուժումներով տարվա տաք եղանակներին, ինչպես նաև բևեռային զանգվածների ադվեկցիայով՝ տարվա ցուրտ ամիսներին: Կլիման այստեղ առանձնանում է շեշտված կոնտինենտալ /չորային/ ռեժիմով, երբ օդի ջերմաստիճանի տարեկան ամպլիտուդը հասնում է 27,5° C, իսկ միջին տարեկան ջերմաստիճանը՝ 8,8° C: Շեշտակիորեն ընդգծված է նաև ջերմաստիճանի օրական տատանումը: Մթնոլորտային տեղումները համեմատաբար քիչ են՝ 450 մմ տարեկան, գարնանային մաքսիմումով՝ 171 մմ:

Քամու տարեկան միջին արագությունը 2-3 մ/վրկ է: Հարաբերական խոնավությունը ունի պարզ արտահայտված տարեկան և օրական ընթացք՝ ամռանը՝ 46-52 %, ձմռանը՝ 74-81 %: Ձյան ծածկույթով օրերի թիվը փոքր է, սակայն առանձին տարիներին ձևավորվում է կայուն և խորը ձյան ծածկույթ: Տարածաշրջանը հարուստ է արևի ճառագայթային էներգիայով, ուլտրամանուշակագույն ճառագայթների բալանսն ամբողջ տարվա ընթացքում դրական է: Կլիմայական պայմանների մասին ավելի մանրամասն նկարագրված է «Ջրվեժ համայնքի առողջարանային և բժշկա-կլիմայական բնութագիրը» բաժնում:

«Ջրվեժ» անտառապուրակային համալիրը հիմնվել է 20-րդ դարի 60-ական թվականներին պետական անտառային ֆոնդի տարածքում: Անատառպուրկի տարածքը ունի մոտ 420 հա մակերես: Ծառերի տեսակային կազմը ներկայացված է սոճու, եղևնու, թեղու, բարդու, հացենու և այլ ծառա-թփային բույսերի տարբեր տեսակներով: 1990-ական թվականների տնտեսական և էներգետիկ ճգնաժամը չի շրջանցել և այդ համալիրը, որը ներկայումս գտնվում է ոչ բարվոք վիճակում և կարիք ունի վերականգնողական մեծ ծավալի աշխատանքների: Վերականգնումից հետո, բնականաբար, անտառպարկի էկոհամակարգը դրական ազդեծություն կթողնի Ջրվեժ գյուղական բնակավայրի վրա:

Ջրվեժի հանգստի գոտին բնութագրվում է որպես կլիմայական առողջարանային համալիր: Այն էապես տարբերվում է հանրապետության մյուս շրջաններից կլիմայաբուժության բարենպաստ պայմաններով: Տարվա տաք եղանակներին հնարավոր է օդային և արևային լոգանքների ընդունում՝ ապրիլի 20-ից մինչև հոկտեմբեր ներառյալ: Գարնան երկրորդ կեսը առանձնանում է ջերմային ռեժիմի օպտիմալ արժեքներով՝ ապրիլի երկրորդ տասնօրյակից սկսած ձևավորվում է կլիմայաբուժության կոմֆորտային ռեժիմ: Մայիսի 20-ից և հունիսին 14¬16 օր դիտվում են օդային լոգանքների կոմֆորտային, իսկ 5 օր դիսկոմֆորտային (երբ էկվիվալենտ էֆեկտիվ ջերմաստիճանը ԷԷՏ>23°) պայմաններ (աղյուսակ N13): Հուլիս-օգոստոս և սեպտեմբեր ամիսներին 15 օր ամսվա ընթացքում ձևավորվում են դիսկոմֆորտային պայմաններ: Կլիմայական պայմանների անբարենպաստ ազդեցությունից խուսափելու նպատակով անհրաժեշտ է կիրառել համապասխան միջոցառումներ՝ համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային աշխատանքներ իրականացնելիս:

Երևանի կենտրոնին և մյուս հարակից միկրոշրջաններին ամռան ամիսներին բնորոշ՝ արևի ճառագայթումը, օդի բարձր ջերմաստիճանը, մետեոտարրերի զգալի ամպլիտուդաները, օդի և հողի արտահայտված չորությունը մեղմելու տեսանկյունից, ինչպես նաև մաքուր և սառը լեռնային օդի ներհոսքն ավելացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում անցկացնել որոշակի միջոցառումներ, որոնք պետք է իրականցվեն գլխավոր հատակագծի իրագործման փուլում:

Միկրոկլիմայական և սանիտար-հիգիենիկ տեսակետից Ջրվեժում ձևավորվում են առավել բարենպաստ ջերմառադիացիոն, խոնավության և աէրացիոն պայմաններ (Ջրվեժի տարածքում մթնոլորտում թթվածնի պարունակությունը ձմռանը մինչև 8 գր/մ^3 ավել է, քան Երևանի կենտրոնում): Շրջապատող բարձրունքների լանջերին նպատակահարմար է կառուցել տեռասային տիպի ցածրահարկ շենքեր՝ հնարավորիս ընդարձակելով կանաչապատ տարածքները: Ձմեռային կլիմայաբուժության համար նախատեսվող կառույցներ նախագծելիս առաջարկվում է կիրառել լուսաթափանցող նյութեր, որոնք անցկացնում են ուլտրամանուշակագույն ճառագայթների դիապազոնի 85 և ավելի տոկոսը, ընդ որում՝ ապակեպատ մակերևույթներն անհրաժեշտ է տեղադրել դեպի արևահայաց կողմ:

Ջրվեժում հյուսիսից և հյուսիս-արևելքից ամռանը փչում են ուժեղ լեռնա-հովտային քամիներ, ուստի նպատակահարմար է կիրառել քամապաշտպան միջոցառումներ: Վերը նշված միջոցառումներին զուգահեռաբար անհրաժեշտ է իրականացնել նաև հակաաղմկային միջոցառումներ, հատկապես Երևան-Գառնի մայրուղու հարակից տարածքներում: Առաջարկվում է ձմեռային սպորտային միջոցառումների համար օգտագործել նաև Գեղամա լեռների հարավ-արևմտյան լանջերը՝ կիրառելով ճոպանուղու շինարարությունը ստորոտից դեպի գագաթ: Այդ լանջերը Ջրվեժի առողջարանային համալիրի զարգացման համար կծառայեն որպես հանգստի արբանյակային գոտիներ՝ բարձրլեռնային սպորտային միջոցառումներ անցկացնելու նպատակով:

Ջրվեժ-Ողջաբերդ տարածքի հեռանկարային զարգացումն առաջարկվում է դիտարկել հիմնականում որպես ռեկրեացիոն գոտի, սահմանափակելով արդյունաբերական նշանակության օբյեկտների հետագա տեղադրումը: Ձմեռը համեմատաբար կարճ է, չափավոր ցուրտ, հունվարյան –5,0° միջին ամսեկան ջերմաստիճանով: Գերիշխում են <<չափավոր ցուրտ>> եղանակային տիպը, երբեմն էլ տաքացումներով եղանակները: Գերազանցում է անտիցիկլոնային (բարձր ճնշման) դաշտը, որն էլ արտահայտվում է բացառապես անհողմ, խաղաղ եղանակներով: Նշված իրավիճակն էլ իր հերթին բերում է ենթաինվերսիոն ամպամածության և մթնոլորտի ախտոտվածության մեծացմանը: Ձմռանը եղանակային ռեժիմը կրում է կայուն բնույթ, որը միանգամայն դրական

ազդեցություն ունի ինչպես առողջ, այնպես էլ հիվանդ օրգանիզմի վրա: Այս դեպքում նվազում են սիրտ-անոթային հիվանդությունների կրկնվածության տոկոսը, մետեոտրոպ ռեակցիաները: <<Զգալի սառնամանիքներով>> (միջին օրեկան ջերմաստիճանը՝ - 12,5 ° –ից - 22,5°) եղանակային տիպը հազվագյուտ երևույթ է, որն արկտիկական օդային զանգվածի ներխուժման, ինչպես նաև Սիբիրյան անտիցիկլոնի ակտիվացման արդյունք է: Այս պրոցեսների հետևանքով դիտվում է օդի ջերմաստիճանի շեշտակի նվազում: Ջրվեժի տարածքում ձևավորվում են ինվերսիայի երևույթներ, այսինքն, ըստ բարձրության՝ Երևանից դեպի Ջրվեժ-Գառնի, օդի ջերմաստիճանը նվազելու փոխարեն աճում է: Առաջարկվում է այս պրոցեսի վրա հատուկ ուշադրություն դարձնել և չկողմնորոշվել մայրաքաղաքի ջերմային ռեժիմի տվյալներով, քանի որ Ջրվեժում ձևավորվում է յուրահատուկ հիգրոթերմիկ ռեժիմ: Կապված Ջրվեժ-Ողջաբերդ տարածքի ֆիզիկա-աշխարհագրական դիրքի, Գեղամա լեռների մոտիկության և տեղանքի լանդշաֆտի հետ ինվերսիաները այստեղ հաճախակի երևույթ են:

Վերջին տարիներին մայրաքաղաքի ռեկրեացիոն և էկոլոգիական փոփոխությունների, ինչպես նաև Նորքի այգիների զգալի չափերի իրացման հետևանքով փոփոխություն է կրել Երևանի ձմեռային եղանակների ռեժիմը: Այս տեսակետից Ջրվեժի տարածքում ձմեռային եղանակները շահավետորեն տարբերվում են: Այստեղ դիտվում են արևոտ, անհողմ, համեմատաբար բարձր ջերմաստիճաններով եղանակներ: Եղանակային ռեժիմը, ունենալով հատուկ բժշկա-կենսաբանական նշանակություն, համարվում է Ջրվեժի ձմեռային ռեժիմի դրական բնութագրերից մեկը: Օդի ոչ շատ ցածր ջերմաստիճանը զուգակցված արևոտ չափավոր ցուրտ եղանակի, ձմեռային լեռնային բնապատկերի գեղեցկության էմոցիոնալ ազդեցության հետ կարող են բարենպաստ ազդեցություն ունենալ մարդու վրա: Ջրվեժի տարածքի բնական տեռասաները կարելի է օգտագործել որպես դահուկուղիներ կամ ցատկահարթակներ դահուկա-սպորտային միջոցառումների կազմակերպման համար: Ձեռուցման սեզոնը սկսվում է նոյեմբերի 5-ից, ավարտվում ապրիլի 12-ին, տևողությունը 158 օր: Ամառը երկարատև է՝ մայիսի 10-ից մինչև հոկտեմբերը ներառյալ /170 օր/: Առանձնանում է «շոգ չոր» եղանակների զգալի կրկնվածությամբ՝ 8-10, երբեմն 13 օր անընդմեջ: Հուլիս-սեպտեմբեր ամիսներին գերիշխում է <<շատ շոգ, շատ չոր>> եղանակային տիպը, երբ օդի միջին ջերմաստիճանը > 22,5°-ից 18-20 օր ամսվա ընթացքում, իսկ օգոստոսին՝ 24-25 օր: Ամռան եղանակային ռեժիմը կայուն է, չի խախտվում անգամ հազվադեպ նկատվող ֆրոնտների անցումով: Մթնոլորտային տեղումները նվազագույն են: Այս հանգամանքը նախադրյալներ է ստեղծում Ջրվեժ-Ողջաբերդ սարահարթը համարել բարենպաստ կլիմայական գոտի կլիմայաբուժության կիրառման համար, հաշվի առնելով, որ մարդու օրգանիզմում ընթացող կենսական պրոցեսների և կենտրոնական նյարդային համակարգի

գործունեության վրա էական ազդեցություն ունի ուլտրամանուշակագույն ճառագայթումը: Ամռան սեզոնում դիտվում են թթվածնի պարունակության նվազագույն արժեքները՝ 238 գր/մ³ (աղյուսակ N 12): Ցերեկային «շատ շոգ» եղանակների տոթակեզ ռեժիմը մի փոքր մեղմանում է ամառվա սեզոնում այստեղ մշտապես գործող լեռնա-հովտային քամիների ազդեցության շնորհիվ:

Պատմության և մշակույթի հուշարձաններ.

Կոտայքի մարզի բնակավայրերը հարուստ են պատմամշակութային ժառանգությամբ, որը խթան է հանդիսանում այդ մարզում զբոսաշրջության և ռեկրեացիոն գոտիները առավել զարգացնելու համար:

Ջրվեժի շրջակայքում հայտնաբերվել են մի շարք պատմական հուշարձաններ: Կատարված պեղումներով (1957 - 1958- 1962 թ.թ.) Քոսաղբյուր կոչված վայրում և գերեզմանոցում բացվել են միջնադարյան ճարտարապետական երկու՝ Քոսաղբյուր վայրի և գերեզմանատան համալիրները: Քոսաղբյուրի համալիրի կազմում են սրբատաշ դարչնագույն տուֆից կառուցված VI-VII դ.դ. խաչաձև գմբեթավոր եկեղեցին, հարավից նրան կից XII-XIII դ.դ. միանավ թաղածածկ եկեղեցին և երկու փոքր մատուռ: Պահպանվել են հուշարձանախմբի պատերի ստորին շարքերը և քանդակազարդ բեկորները: Գերեզմանատան IV-V դ.դ. հուշահամալիրը բաղկացած է եկեղեցուց, կոթողից և դամբարանից: Եկեղեցին միանավ է, կառուցված է տեղական սև և կարմիր գույնի սրբատաշ տուֆից: րվեժի տարածքում գտնվում են գմբեթավոր սրահի ավերակներ, մատուռներ, խաչքարեր: Ուշագրավ են Խաչատուրի տապանաքարը և խաչքարը:

1679 թվականին Հայաստանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը հիմնովին ավերում է բոլոր շինությունները, ինչպես նաև եկեղեցիները և վանքերը, այդ թվում նաև Ջրվեժի եկեղեցին: Երկրաշարժից հետո Ջրվեժը 212 տարի եկեղեցի չի ունեցել և միայն 1891 թվականին գյուղի բնակչությունը քանդված եկեղեցու տեղում կառուցում է նորը, որը վերաբացվել է 1991 թվականին և ներկայումս գործում է որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Կոտայքի թեմի Ջրվեժի Սուրբ Կաթողիկե Առաքելական եկեղեցի:

Հուշարձանները կարող են օգտագործվել գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով, ինչպես նաև իրենց սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ: Ջրվեժ համայնքի զբոսաշրջային ռեսուրսներում կարող են ներառվել Երևան քաղաքի տեսարժան վայրերը, ինչպես նաև՝ Գառնի բնակավայրի՝ Գառնիի ամրոցը, III-II դդ մ.թ.ա., Գառնիի տաճարը I դ, ուրարտական սեպագիրը VII դ մ.թ.ա., Գեղարդ բնակավայրի՝ Գեղարդավանքը կամ Այրիվանք համալիրը XII-XIII դդ, Սուրբ Գրիգոր կիսաքարանձավային

եկեղեցին XII դ, Սուրբ Աստվածածնի եկեղեցին 1215 թ., Երկու քարանձավային եկեղեցիները XIII դ, եզակի քարանձավային մենախցերը, խաչքարերը:

Ջրվեժ գյուղի տարածքում գտնվում են պետական ցանկում (*ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1793-Ն որոշման հավելված)* ընդգրկված 16 հուշարձանահամալիր և առանձին հուշարձան:

Գյուղի շրջակայքում կատարված պեղումներով Քոսաղբյուր կոչված վայրում (1957 թ.) և գերեզմանոցում (1958-1962 թ.թ.) բացվել են միջնադարյան ճարտարապետական երկու համալիրներ:

Հայաստանում 1679 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով ամբողջովին ավերվել է նաև գյուղի Կաթողիկե եկեղեցին և միայն 1891 թվականին վերակառուցվել է գյուղի բնակչության ուժերով: Հատկապես Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին եկեղեցին ծառայել է որպես հացահատիկի շտեմարան: Վերաբացվել է 1991 թվականին և ներկայումս գյուղում գործում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Կոտայքի թեմի Ջրվեժի Սուրբ Կաթողիկե Առաքելական եկեղեցի անվամբ:

Գյուղում է գտնվում նաև «Խաչատուրի հուշարձանը» իր փոքրիկ պուրակով: Դա մի քսանամյա երիտասարդ ջրվեժցու գերեզման է, որի տապանաքարին մինչև օրս պահպանված արձանագրության (1173թ.) համաձայն երիտասարդ հասակում Խաչատուրը զոհվել է հանուն իր ծննդավայրի՝ առաջինը ոռոգման ջրից օգտվելու իրավունքի, որպեսզի ոռոգվեն գյուղի այգիները, բանջարանոցներն ու արտերը:

Խաչատուրի հիշատակը հավերժացնելու համար Վարդ անունով մի վարպետի կողմից 1173 թ. թվագրությամբ կարմիր տուֆից հոյակերտ մի խաչքար է տաշվել, որի բարձրությունը 1.90 մ է, լայնությունը՝ 0.90 մ, հաստությունը՝ 0.28 մ: Այդ խաչքարը, ըստ հնագետ Տոկարսկու, 1930-ական թվականներին տեղափոխվել է Հայաստանի պետական պատկերասրահ: Այժմ այն՝ բաց ցուցադրությամբ գտնվում է Սարդարապատում՝ Հայաստանի ազգագրության պետական թանգարանում:

1.21. Զորաղբյուր

ՀՀ Կոտայքի մարզի Զորաղբյուր գյուղական բնակավայրը գտնվում է մարզի հարավային մասում, Աբովյան քաղաքից 10 կմ հարավ-արևելք: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 40 կմ, վարչական տարածքը կազմում է 2692.23 հա: Այն հարակից է Արամուս, Զովք, Ողջաբերդ, Ջրվեժ, Առինջ, Մայակովսկի գյուղական բնակավայերին և Երևան քաղաքին: Տեղակայված է 1425-2070մ բացարձակ նիշերով տեղանքի վրա, վարչական տարածքը կազմում է 2692.2 հա: աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ անբարենպաստ:

Այստեղով են անցնում Երևան - Զովք - Մայակովսկի և Աբովյան - Գառնի ճանապարհները:

Տեղանքի ռելիեֆը ունի հիմնականում միջին կտրտվածություն: Զգալի տարածքներ են զբաղեցնում ձորակային՝ թեք հարթությունները, ինչպես նաև լվացված մերկ լանջերը: Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Կոտայք-Զորաղբյուրի, Ջրվեժ-Նորքի հրաբխային սարավանդների վրա: Ռելիեֆը խորդ ու բորդ է, կտրտված հեղեղատներով, ձորակներով: Ռելիեֆի ձևերից տարածքում առկա են բլուրները, թմբերը, ջրբաժանը, էռոզիոնա-հողմնահարման լանջերը, հովիտները և հուները:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման գործում կարևոր մասնակցություն են ունեցել վերին երրորդական և չորրորդական ժամանակահատվածի անդեզիտաբազալտները, տուֆային լավաները: Մայր ապարները ներկայացված են խճաբեկորային էլյուվիալ և էլյուվիալ-դելյուվիալ կարբոնատային ավազակավերը: Այս նստվածքների հզորությունը, կախված ռելիեֆի ձևից, հիմնականում չի գերազանցում 0.5-1.5 մ-ից:

Տարածքը հիմնականում ունի չոր ցամաքային կլիմա, որտեղ ամռանը տաք է, իսկ ձմռանը բավականաչափ ցուրտ: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 6.6-10.9°: Բացարձակ մինիմալ ջերմաստիճանները իջնում են մինչև - 29° -ից -37°, իսկ առավելագույնը՝ +38° –ից +41°: Տարեկան տեղումների քանակը տատանվում է 320-470 մմ սահմաններում, իսկ գոլորշունակությունը 800-1100 մմ: Տարեկան խոնավացման գործակիցը կազմում է 0.38-0.51:

Զորաղբյուրի ներկայիս բնակչության նախնիները գաղթել են Պարսկաստանի Խոյ և Ալաշկերտ գավառներից 1828-1830 թվականներին:

Զորաղբյուրի շրջակայքում պահպանվել են «Պատվար» ամրոցի ավերակները (մ.թ.ա. 2–րդ–1–ին հազարամյակներ), Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (VIII-XIX դարեր): Նախկինում բնակավայրը կոչվում էր Տաճարապատ, ապա՝ Թեժրաբեկ: Զորաղբյուր է վերանվանվել 1946 թվականին, ապրիլի 4–ին:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկային կուլտուրաների /ցորեն, գարի, առվույտ/ մշակությամբ և պտղաբուծությամբ:

Հողային ռեսուրսների պահպանություն

Հողային ծածկույթի պահպանման համար առաջնահերթ առաջարկված են հակաէռոզիոն մի շարք միջոցառումներ (ագրոմելիորատիվ, անտառմելիորատիվ, հիդրոտեխնիկական, հակահեղեղային, հակասողանքային):

Առանձնակի դեր կարող է ունենալ հետագա կանաչապատումը:

Բնակավայրի առկա քաղաքաշինական իրավիճակը

Բնակավայրի կառուցապատումն որոշ մասերում անկանոն է: Բնակավայրը հատակագծային կազմակերպման նախագիծ դեռ չի ունեցել: Գյուղի վարչական տարածքի 2 հատվածներում գոյություն ունեն այգեգործական հողեր, որոնց կառուցապատումը կանոնավոր է: Բնակավայրի միջնամասում են գտնվում 3 հարկանի դպրոցը, գյուղապետարանը, ամբուլատորիան և մանկապարտեզը: Գյուղում է գտնվում նաև Արարատ ֆուտբոլային ակումբի մարզական բազան: Գյուղում առկա է մեկ գործող գերեզմանոց: Գյուղի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ և տարբեր աշխատանքներ է կատարում Երևան քաղաքում :

<u>Բնակավայրի քաղաքաշինական զարգացում</u>

Գյուղի դիրքը նպաստավոր է հանգստի գոտու ստեղծման և սպասարկման համար, ինչը կարող է խթան հանդիսանալ նաև հանգստի զարգացման համար: Ներկայումս, գյուղի բնակչության հեռանկարային աճը որոշելու համար առաջնային է դառնում տարածական զարգացման հնարավորությունը: Հաշվի առնելով տարածքային ռեզերվների սղությունը, բնակչության հեռանկարային աճը և հանգստի գոտու սպասարկող աշխատատեղերի ստեղծումը, գյուղի հեռանկարային առավելագույն բնակչության թիվը ընդունվել է 3150 մարդ մինչև 2025թվականը: Սեզոնային այգեգործական զանգվածներում հանգստացողների թիվը կարող է կազմել 7500-10000 մարդ: Ընդ որում, գյուղի բնակչության առավելագույն քանակի ապահովման համար ժամկետների նախատեսումը կապվում է հանրապետության ընդհանուր զարգացման տեմպերի հետ:

Ընտրվել է բնակավայրի հատակագծային-տարածական զարգացման հիմնական ուղղությունները: Հատակագծային կառուցվածքը և գործառնական գոտևորումը մշակվել է, հաշվի առնելով բնօգտագործման, շրջակա միջավայրի պահպանման, ինժեներական նախապատրաստման միջոցառումների իրականացման փոխկապակցված խնդիրների համախումբը: Վերլուծության և համալիր գնահատականի արդյունքում ընտրվել են կառուցապատման ենթակա տարածքները, տրվել են պահանջվող ինժեներական նախապատրաստման միջոցառումները և դրանց իրականացման ուղիները: Ճանապարհների, գերեզմանոցների, էներգետիկայի և այլ կոմունալ օբյեկտների անվտանգության և սանիտարապաշտպան տարածքները, որոնք այսօր արդեն զբաղված են բնակելի և

հասարակական կառույցներով, անհրաժեշտ է վերածել բուֆերային գոտիների, որտեղ, մինչև հաշվարկային ժամկետի ավարտը, պետք է արգելվեն բոլոր նոր բնակելի և հասարակական կառուցապատման և վերակառուցման աշխատանքները:

Գյուղական բնակավայրի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպման հիմքում դրվել են հետևյալ հիմնական սկզբունքները՝

ա/ գյուղի միասնական հատակագծային կառուցվածքի կատարելագործում, հին և նոր թաղամասերի օրգանական հատակագծային կապերի ստեղծում, բնակավայրի հետագա զարգացումը խթանող նոր ֆունկցիոնալ գոտիների ստեղծում՝ հիմք ընդունելով առկա ռեսուրսային հնարավորությունները, արտադրական և կոմունալ օգտագործման տարածքների կանոնակարգում,սանիտարական պահպանական գոտիների պահանջների ապահովում:

Հաշվի առնելով տարածքի գերակշռող գործառնական օգտագործումը, կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, առաջարկված են հետևյալ կառուցվածքահատակագծային սկզբունքները՝ առավելապես տնամերձ հողամասերով՝ ցածրահարկ 1-2 հարկանի առանձնատնային կառուցապատման նոր բնակելի տարածքային հատվածների կազմակերպում, բ/ հասարակական սպասարկման գործառույթների կանոնակարգում, սպասարկման օբյեկտների համալիր ձևավորում սպասարկման մատչելիության գոտիներում՝ ընդգրկելով նոր և գոյություն ունեցող կառուցապատումը,

Նախագծով նախատեսվում է առավելագույնս կանոնակարգել գյուղի հասարակական սպասարկման օբյեկտների գոտիները, գոյություն ունեցող հաղորդակցական ցանցը:

1.22. Զովք

Զովք, գյուղ Հայաստանի Կոտայքի մարզում՝ մարզկենտրոնից 50 կմ հարավ-արևմուտք, մայրաքաղաքից հեռավորությունը՝ 21կմ, ծովի մակերևույթից բարձրությունը՝ 1670 մ: Գյուղը հիմնադրվել է 1921թվականին: Նախկին անվանումը՝ Քյուլիջա: Զովքը սահմանակից է Գեղաշեն, Կամարիս, Արամուս և Ձորաղբյուր բնակավայրերին: Գյուղը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից: 2017 թվականին Զովք գյուղը միավորվել է Ջրվեժ խոշորացված համայնքին: Խորհրդային ժամանակաշրջանում գյուղն եղել է պետական տնտեսություն:

<u>Բնակչություն.</u> Գյուղում բնակվում են հայեր (մեծամասնությունը) և եզդիներ: Բնակչության թիվը կազմում էր 1040 բնակիչ, այդ թվում եզդիները՝56: Գյուղի բնակչությունը համալրվել է տարբեր բնակավայրերից եկած բնակիչներով (Արամուս, Գավառ, Սևան, Ջավախք, Գյումրի, Մարտունի,

Սարանիստ)։ Ըստ վիճ. Վարչության 2022 թվականի տվյլաների գյուղի բնակչությունը կազմում է 846 մարդ։

Զովքի բնակչության փոփոխությունը.

Տարի	1873	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2011
Բնակիչ	273	524	224	439	427	482	566	669	897	901

Խորհրդային ժամանակաշրջանում Սարանիստ գյուղը Զովք գյուղի մասն է կազմել։ Հետագայում գյուղը դարձել է ամբողջությամբ բնակեցված, սակայն պայմաններից ելնելով գյուղը հետզհետե դատարկվում էր։ Սարանիստ գյուղի վերջին բնակիչը՝ Ադիկ Ալեքսանյանը 1975թվականին գյուղը լքել է և վերաբնակվել Զովք գյուղում։

Տնտեսություն

Բնակչությունը զբաղվում է հողագործությամբ (հացահատիկի մշակություն), այգեգործությամբ և անասնապահությամբ։

Պատմամշակութային կառույցներ

Զովք գյուղի հարավ արևմտյան մասում բլրի վրա է գտնվում է ամրոցի ավերակները։ Այստեղ հայտնաբերվել է Ք.ա 1-ին հազարամյակի դամբարանադաշտ։ Կա պահպանված միջնադարյան ամրոցի ավերակներ։ Գյուղի հարավ արևմտյան կողմում գտնվում է 10-13-րդ դարերի քարայր-մատուռ՝ Ճգնավորը։ Վիմափոր այս մատուռը ժայռափոր շինություն է՝ կազմված երկու սրահից։ Առաջին սրահում կան շրջանաձև մի քանի փոսեր, սրահները լուսավորվում են հյուսիսային պատի կլորավուն պատուհանով։

1948 թվականին գյուղում կառուցվել է հուշաղբյուր։ 1979 թվականին կառուցվել է հուշարձան՝ նվիրված 2-րդ համաշխարհային պատերազմում զոհվածների հիշատակին։ Հուշարձանի կառուցման նախաձեռնողն եղել է Զովքի բնակիչ Պողոս Խաչատրյանը։

Գյուղում ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակով ամրագրված է 11 անուն հուշարձան, այդ թվում ամրոցներ, գյուղատեղիներ, դամբարանադաշտ, քարայր-մատուռ, խաչքարեր, հուշարձաններ երկրորդ աշխարհամարտում զոհվածներին։

Դպրոց

Ջովք գյուղի հին դպրոցը հիմնվել է 1922 թվականին։

Նոր դպրոցի շենքը կառուցվել է 1984 թվականին։ Ջովքի դպրոցը սկզբում եղել է ութամյա, ապա տասնամյա։ Ութամյա կրթության ժամանակ աշակերտները շարունակել են ուսումը հարևանությամբ գտնվող Ջորաղբյուր գյուղի դպրոցում։

1996 թվականի հունվարի 21-ին դպրոցն անվանակոչվել է արցախյան առաջին պատերազմում անմահացած Գագիկ Շահինյանի անունով՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Ջովքի Գ.Շահինյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ։

Այժմ դպրոցն ունի 110 աշակերտ և 27 աշխատակից։

1.23. Սողանքավտանգ գոտիներ

Սողանքներ, ծանրության ուժի ազդեցությամբ լեռնալանջերով կամ թեք տեղանքով ապարների զանգվածային սահաշարժեր, որոնք, լվացման հետևանքով, ապարների հավասարակշռության խախտման արդյունք են։ Սողանքային շարժընթացներն ուղղակիորեն կախված են տեղանքի կառուցվածքից, ապարների շերտերի տեղաբաշխումից, ստորերկրյա ջրերի ակտիվությունից, անտառածածկույթի կամ խոտածածկույթի խտությունից, գերխոնավացումից, ստորերկրյա ցնցումներից, մարդու անզգույշ տնտեսական գործունեության, երկրաբանական և երկրաձևաբանական պայմանների առանձնահատկությունների անտեսումից, որոնք հանգեցնում են ապարների ամրության նվազմանը և սողանքի առաջացմանը։

Խոշոր սողանքներ[6]

Հայաստանի տարածքը բնորոշվում է ուժեղ զարգացած սողանքային շարժընթացներով: Հայաստանի տարածքում գոյություն ունեն 2000-ից ավելի խոշոր սողանքներ (մոտ 500 կմ² տարածք), որոնցից շատերը գտնվում են բնակավայրերի (Դիլիջան, Իջևան, Կապան, Վանաձոր և այլն) սահմաններում, միջին բարձրության լեռնային գոտում՝ Ախուրյանի հովտում (Գյումրուց հյուսիս-արևմուտք), Դեբեդի, Աղստևի, Վեդիի, Գետիկի, Որոտանի ավազաններում, Նուբա րաշենի, Ջերմուկի սարավանդներում և այլն: Սողանքային վտանգը սպառնում է նաև տրանսպորտային (շուրջ 8 000 կմ ընդհանուր երկարության ուղիներից ավելի քան 1500 կմ-ը սողանքային ազդեցության գոտում է) և էներգետիկ մայրուղիներին, արոտավայրերին և մշակովի հողերին, պատմամշակութային հուշահամալիրներին (Մակարավանք, Գոշավանք, Ջուխտակվանք և այլն): Սողանքները շատ հաճախ ավերիչ են. օրինակ՝ Մարմաշեն (Շիրակի մարզ), Մարտիրոս (Վայոց ձորի մարզ) գյուղերն ավերվել, բնակիչները տեղափոխվել են: Նույն պատկերն է Դիլիջանում: Սողանքային փլվածքները տարածված են հանրապետության շուրջ 125 բնակավայրում:

Քանի որ մակերևութային և ստորերկրյա ջրհոսքերն ակտիվացնում են սողանքները, սողանքավտանգ տարածքներում չի թույլատրվում ջրագծեր (ջրմուղկոյուղու), առավել ևս բաց ջրանցքներ կառուցել: Ջրագծերից ու ջրանցքներից ներծծվող անխուսափելի կորուստների հետևանքով սողանքներն ակտիվացել են Գառնի-Հացավան-Ողջաբերդ, Արզնի-Գետամեջ-Պտղնի և այլ տեղամասերում:

Սողանքային մարմնի հետագա ակտիվացումները կանխելու նպատակով իրականացվելու է ինժեներաերկրաբանական հետազոտություն, որի հիման վրա կնախապատրաստվեն առաջարկություններ սողանքի վտանգը և հետագայում հնարավոր վթարային իրավիճակները կանխելու համար: Նախնական միջոցառումների շրջանակում իրականացվելու են առաջացած ճեղքերի կավային ջրակայուն գրունտներով փակման աշխատանքներ, ինչը կբացառի մակերևութային ջրերի հետագա ներթափանցումը գրունտի մեջ: Քանի որ տեղանքի ռելիեֆը թույլ չի տալիս ստանալ մեծ կետայնության պանարամային լուսանկարներ՝ իրավիճակը առավել պատկերավոր դարձնելու նպատակով լուսանկարահանումները կիրականացվեն անօդաչու թռչող սարքերի (դրոններ) միջոցով:

Կոտայքի մարզպետի աշխատակազմի տվյալների համաձայն, վերջին 10 տարիների ընթացքում 100 հազար հա- ից ամենահամեստ հաշվարկներով հատվել է 30 հազարը: Անտառների խտությունը տեղ-տեղ 10-ից հասել է 0.3-ի (0.2 խտության դեպքում համարվում է նոսրանտառ): Անտառների չհամակարգված հատումը հանգեցրել է անապատացման, հողերի քայքայման և սողանքների առաջացման: Մարզի 10-12 հազար հեկտարը համարվում է սողանքավտանգ օջախների գոտի, սողանքները սպառնում են 18 բնակավայրերի:

6 https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%B8%D5%B2%D5%A1%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80

Սողանքների դեմ պայքարելու համար կառուցվում են գետափերն ամրացնող ու ցամաքուրդային կառույցներ, կատարվում ծառատնկումներ և այլ միջոցառումներ:

Առհասարակ Հայաստանի տարածքի 60 տոկոսից ավելին սողանքավտանգ է՝ վտանգավորության տարբեր աստիճանի: Հանրապետության 145 ակտիվ սողանքային գոտիներից այս պահին առավել ակտիվ հատվածներում կանխարգելիչ աշխատանքներ իրականացվում են:

Հակասողանքային միջոցառումների իրականացումը խիստ անբավարար են ամբողջ հանրապետության տարածքում, որովհետև տեխնիկական միջոցներից սկսած (պատնեշապատում, բետոնային կոնստրուկցիաներ) վերջացրած լանջերի բուսածածկումից, սողանքային պրոցեսների առաջացման նախնական հիդրոերկրաբանական գործոնների ապահովում չի արվում:

1.24. Հողերի ռեկուլտիվացիա

Ռեկուլտիվացման ենթակա են բոլոր այն նպատակային նշանակությունների խախտված հողերը և հողամասերը, որոնք բացասական ներգործության արդյունքում ամբողջովին կամ մասնակի կորցրել են իրենց առաջնային տնտեսական արժեքը:

Խախտված հողեր և հողամասերի վերականգնումն իրականացնում է հողամասի սեփականատերը, հողօգտագործողը, հողը տնօրինողը, վարձակալը, սերվիտուտը տիրապետողը, իսկ ֆիզիկական կամ իրավաբանական անձի գործունեության հետևանքով առաջացած խախտման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այդ անձը:

Խախտված հողերի և հողամասերի ռեկուլտիվացիայի իրականացման աշխատանքներ նախատեսված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքով, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:

Ռեկուլտիվացման աշխատանքներն իրականացվում են երկու փուլով՝ տեխնիկական և կենսաբանական:

Խախտված հողերի և հողամասերի ռեկուլտիվացման տեխնիկական փուլը ներառում է միջոցառումներ մակերեսը կենսաբանական փուլի իրականացման նախապատրաստելու համար՝ հաշվի առնելով հողի ռեկուլտիվացման ուղղությունը և հետագա օգտագործումն ըստ նպատակային նշանակության: Տեխնիկական փուլը նախատեսում է հողի վրա բացասական ազդեցության աղբյուրների և հետևանքների վերացմանն ուղղված համալիր աշխատանքների իրականացում, ներառյալ գրունտների և լեռնային ապարների տեղափոխում, հատակագծում, թեքությունների ձևավորում, հողի ու բերրի ապարների հանում, տեղափոխում ու ռեկուլտիվացվող հողերի վրա դրանց տեղադրում, ճանապարհների ու հիդրոտեխնիկական կառույցների շինարարության միջոցով:

Հողի բերրի շերտի հանման, տեղափոխման և պահման ժամանակ ձեռնարկվում են միջոցառումներ, որոնք բացառում են հողի որակի վատթարացումը, ինչպես նաև կանխարգելում հողի բերրի շերտի լվացումը՝ խոտերի ցանքով և այլ միջոցներով լցակույտի մակերեսի ամրացմամբ:

Խախտված հողերի և հողամասերի ռեկուլտիվացման կենսաբանական փուլը խախտված հողերի բերրիության, կենսաբանական արդյունավետության և էկոհամակարգի տեսակային բազմազանության վերականգնման ագրոքիմիական և ֆիտոմելիորատիվ միջոցառումների համալիր է:

Ռեկուլտիվացիան կենսաբանական փուլը հանդիսանում է խախտված հողերի և հողամասերի վերականգնման ավարտական փուլ:

Ռեկուլտիվացման կենսաբանական ուղղություններն են՝ գյուղատնտեսական, բնապահպանական, անտառապատման կամ հանգստի (ռեկրեացիոն): Ռեկուլտիվացման կենսաբանական ուղղությունների ընտրությունն իրականացվում է մի շարք գործոնների հիման վրա.

1. բնակլիմայական գործոններ՝ տարածքի ռելիեֆ, երկրաբանական, հիդրոերկրաբանական և հիդրոլոգիական կառուցվածք, կլիմա և բնակլիմայական պայմաններ, հողային և բուսական ծածկույթ, կենսաբազմազանություն,

2. սոցիալական գործոններ՝ ենթակառուցվածք, տնտեսական մասնագիտացում, սանիտարահիգիենիկ պայմաններ,

3. խախտված հողերի փաստացի և ռեկուլտիվացման ավարտին նախատեսվող վիճակ՝ ռեկուլտիվացվող մակերես, տեխնածին ռելիեֆ, լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո ձևավորված ռելիեֆ, բերրի կամ հնարավոր բերրի հողերի և ապարների առկայություն, տեխնածին աղտոտվածության բնույթ և աստիճան, բուսականության բնական վերաճի հեռանկար, արտածին երկրաբանական երևույթներ (սողանքներ, էրոզիա, մակերևույթի նստեցումներ),

4. տարածքային զարգացման և քաղաքաշինական հեռանկարային ծրագրեր,

5. հարակից հողատարածքների նպատակային նշանակություն,

6. կենսաբանական վերականգնման փուլի տևողություն:

Գյուղատնտեսական ուղղվածության ռեկուլտվացիոն աշխատանքների կատարման նպատակն է ստեղծել գյուղատնտեսական գործունեության համար բարենպաստ տարածքներ՝ վարելահողեր, խոտհարքեր, արոտներ, բազմամյա տնկարկներ, գյուղատնտեսական մթերքների աճեցում (այդ թվում՝ ձկնաբուծարաններ) և այլն:

Խախտված տարածքներում անտառապատման աշխատանքների նպատակն է հիմնել պաշտպանական և հատուկ նշանակության անտառներ:

Բնապահպանական ուղղության կենսաբանական ռեկուլտիվացիայի իրականացման նպատակը աղտոտված, խախտված տարածքների, արտադրական լցակույտերի, ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ներառյալ պոչամբարների տարածքների երկարաժամկետ կոնսերվացումն է:

Հանգստի (ռեկրեացիոն) ուղղությամբ ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունքում հիմնվում են պուրակներ կամ անտառպուրակներ, ստեղծվում են հանգստի գոտիներ (ներառյալ արհեստական ջրավազաններ) և այլընտրանքային տուրիզմի վայրեր:

Ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների նախագծերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության և գնահատման փորձաքննության:

Ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների ընդունման ժամանակ հաշվի են առնվում հողաբուսական շերտի, կամ հողի հնարավոր բերրի շերտի հզորությունը, տարածման համաչափությունը, բուսականությամբ ծածկման մակերեսը տոկոսային արժեքով, իրականացված միջոցառումների որակը, ռեկուլտիվացված տարածքներում մոնիթորինգի դիտակետերի առկայությունը՝ նախագծին համապատասխան, ինչպես նաև, վերականգնված տարածքի օգտագործման հնարավորությունը՝ ըստ նախընտրած ռեկուլտիվացման ուղղության:

Խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների ընդունումն իրականացվում է ընդերքօգտագործման

հետ կապված շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից:

Դեգրադացված են համարվում այն հողերը, որոնք մարդու ուղղակի կամ անուղղակի ազդեցությամբ կորցրել են իրենց սկզբնական տնտեսական արժեքը և բացասական աղբյուր են հանդիսանում շրջակա միջավայրի համար: Անթրոպոգեն լանդշաֆտներում մարդու ագրեսիվ ճնշման հետևանքով ոչնչացվել է բուսականությունը, փոփոխվել են մակերևույթային շերտի հիդրոլոգիական ռեժիմները և տեղանքի ռելիեֆը, ոչնչացվել կամ աղտոտվել է հողային ծածկոցը: Հողերի ռացիոնալ օգտագործումն ու պահպանումը պետք է իրականացնեն բոլոր շահառուները՝հողօգտագործողները, հողատերերը, վարձակալները: Ռեկուլտիվացիայի (վերականգնում) տեսակները՝

Գյուղատնտեսական - իրականացվում է աշխատանքների այնպիսի համալիր, որպեսզի հողերը հնարավոր լինի օգտագործել գյուղատնտեսական նպատակով:

Անտառային - քայքայված հողերի օգտագործում անտառների տնկման և էրոզիայի դեմ պայքարելու նպատակով:

Ջկնատնտեսային - վերականգնված հողային տարածքներում ջրամբարների կառուցում ձկների բուծման նպատակով

Ջրատեսային - վերականգնված հողային տարածքների վրա տարբեր նպատակներով ջրամբարների ստեղծում:

Ռեկրեացիոն - Ռեկուլտիվացված հողերի վրա հանգստյան և զբոսաշրջային վայրերի ստեղծում:

Շինարարական - Խախտված և քայքայված հողերի վերականգնում մինչև այն աստիճան ,որ հնարավոր լինի դրանք օգտագործել շինարարական նպատակներով:

Հողերի ռեկուլտիվացիան իրականցվում է հատուկ սահմանված կարգով՝ հողային աշխատանքների հետ միասին կամ ոչ ուշ, քան հողային աշխատանքների ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում:

Հողերի ռեկուլտիվացիան կատարվում է 2 փուլով՝

1. ***Տեխնիկական*** — նախատեսվում է պլանավորում, ակոսների ձևավորում, բերրի հողաշերտի հանում և տեղափոխում, հիդրոտեխնիկական և մելիորատիվ կառույցների կառուցում, թունավոր նյութերի խորը թաղում, ինչպես նաև այլ աշխատանքների իրականացում՝ հետագայում ռեկուլտիվացված հողերի նպատակային օգտագործման համար:
1. ***Կենսաբանական*** — ներառում է ագրոտեխնիկական և ֆիտոմելիորատիվ միջոցառումների համալիր, որոնք ուղղված են ագրոֆիզիկական, կենսաբանաքիմիական և հողի այլ հատկությունների բարելավմանը:

Հողերի բերրի շերտի հանված մասն օգտագործվում է խախտված հողերի ռեկուլտիվացիայի կամ ցածր բերրիություն ունեցող հանդակների բարելավման համար: Բերրի հողաշերտի այլ նպատակով օգտագործումը, որը կապված չէ գյուղական և անտառային տնտեսության հետ, թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում, երբ տնտեսապես նպատակահարմար չէ կամ բացակայում է գյուղատնտեսական նշանակության և անտառային ֆոնդի հողերի բարելավման նպատակով օգտագործման հնարավորությունը: Դեգրադացված հողերի ռեկուլտիվացիայի մեթոդները և նպատակները. Հողերի ռեկուլտիվացիայի նպատակն է վերականգնել առաջնային նշանակության հողատարածքները, որոնք դուրս են մնացել գյուղատնտեսության բնագավառում օգտագործումից: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ճիշտ կազմակերպման համար պետք է անցկացնել հողի որակական գնահատում՝ սահմանված բալերով, որոնք արտահայտում են հողի բերրիության մակարդակը տվյալ տնտեսության համար, որը հնարավորություն է տալիս ռացիոնալ օգտագործել երկրի հողային ֆոնդը և պլանավորված կերպով բարձրացնել հողի բերրիությունը: ՀՀ հողային ծածկույթի

յուրօրինակությունը, տարբեր հողատիպերի առկայությունը և խոնավացման տարբեր աստիճանները պահանջում են ռեկուլտիվացիոն միջոցառումների տեխնոլոգիաների տարբերակում:

- Բույսերի նորմալ կենսագործունեության համար հողի ներքին հատկությունների փոփոխում՝ստեղծելով
- բարենպաստ ջրաօդային ռեժիմ մելիորատիվ գործունեության միջոցով,
- հողերի թթվայնության օպտիմալ վիճակ՝ կրայնացմամբ,
- հողում հումուսի բավարար պաշարի և սնուցման համար անհրաժեշտ տարրերի օպտիմալ քանակության ապահովություն հանքային և օրգանական պարարտանյութերի ներմուծման ճանապարհով
- Հողատարածքների վիճակների բարելավում
- Միջոցառումներ, որոնք կնպաստեն հողի բերրիության բարձրացմանը Հողերի բերրիության բարձրացման մեթոդներն են՝
- կենսաբանական — հողում օրգանական նյութերի առաջացման և քայքայման գործընթացների կարգավորում, մշակաբույսերի ճիշտ ընտրություն, ցանքաշրջանառության ճիշտ կազմակերպում,
- քիմիական — հանքային պարարտանյութերի, կրային և կավային հողերի օգտագործործում, որոնք ապահովում են հողի բերրիություն
- ֆիզիկական — հողի ագրոֆիզիկական հատկությունների կառուցվածք, խտություն, ծակոտկենության և հերկվող շերտի կառուցվածքային վիճակի փոփոխություն: Ռեկուլտիվացիայի ավելի արդյունավետ արդյունքներ են ստացվում նշված երեք մեթոդների զուգակցումից:

II ԳԼՈՒԽ
ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՑԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

2.1. Սոցիալ տնտեսական զարգացում

Հայաստանում վերջին տարիներին մեծանում են տարածքային անհամաչափությունները, ինչը հիմնականում դրսևորվում է ՀՆԱ-ի կառուցվածքում Երևանի մասնաբաժնի զգալի աճով: Մարզերը տարբերվում են միմյանցից և Երևանից՝ հանրապետության տնտեսական կյանքում ներգրավվածության աստիճանով: Լիարժեք կայացած չէ գործարար միջավայրը, բավական բարձր է գործազրկության մակարդակը: Գործարար ակտիվության և տնտեսական մրցակցության տեսանկյունից տնտեսավարողների համար անհավասար պայմաններ է ձևավորում արտադրողականության մակարդակների տարբերությունը:

Մարզերում բնակչության իրական եկամուտների տարբերությունների զգալի կրճատում, քաղաքների տնտեսական, մշակութային ակտիվության աճ.

- մարզերում տեխնոլոգիական խզվածքների հաղթահարում և արտադրողականության մակարդակների բարձրացում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և դրանցից օգտվելու կարողությունների մեծացում,
- մարզերում պետություն-մասնավոր հատված համագործակցության ընդլայնում, ենթակառուցվածքների մատչելիության մակարդակի բարձրացում,
- մարզերում փոքր և միջին ձեռնարկատիրության, զբոսաշրջության խթանում և զարգացում՝ ռեսուրսները կենտրոնացնելով տնտեսական աճի կառավարման վրա: Երևանում ճանաչում գտած տեղական և միջազգային բրենդերի մասնաճյուղերի հիմնմանն աջակցություն,
- մարզերում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ձեռնարկատիրությանն աջակցության ընդլայնում, համապատասխան մոնիթորինգի համակարգի ներդրում,
- գյուղատնտեսական մթերքներ վերամշակող և էկոլոգիապես մաքուր արդյունաբերական փոքր ձեռնարկությունների հիմնում (օրինակ՝ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող կամ դրանից ստացվող սննդամթերքի փաթեթավորման, սառեցման և պահեստավորման փոքր արտադրություններ):

Երիտասարդության համար բնակության բարենպաստ պայմանների ապահովման գործընթացում հրատապ է նաև նորաստեղծ ընտանիքներին տնամերձ հողամասեր տրամադրելու խնդիրը:

Մարզի համայնքներում մասնավոր հատվածը ձևավորված է հիմնականում առևտրի ոլորտում՝ մանրածախ առևտրի կետեր ու խանութներ, ծառայությունների ոլորտում՝ կենցաղային ծառայություններ, արտադրության ոլորտում՝ տեղական գյուղմթերքի վերամշակում և տեղական հումքից շինանյութերի արտադրություն, շինարարության ոլորտում՝ փոքրածավալ շինարարություն և վերանորոգման աշխատանքներ:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, անցում կատարել

առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը.

- ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել՝ մասնավոր ներդրումները խրախուսելու համար:
- Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտն են գյուղմթերքի վերամշակումն ու իրացումը, զբոսաշրջությունն ու հարակից ծառայությունները: Բայց որպեսզի ներդրումները արդարացված լինեն, և նվազի դրանց ռիսկայնությունը, անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալներն ու իրացման շուկաները:
- Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: Հետազոտությունները վկայում են, որ ներդրումներ կատարելու ցանկություն և մտադրություններ ունեն և՛ տեղացի արտագնա, և՛ այլ արտաքին ներդրողներ, սակայն այդ գործընթացները հաճախ դանդաղում և չեն իրագործվում՝ տեղերում շահագրգռության և համագործակցության բացակայության պայմաններում: Այս առումով անհրաժեշտ է կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների համար:
- Արդյունաբերական օբյեկտների տեղադրում՝ նոր արտադրություններով (հիմնականում գիտատեխնիկական ճյուղի օբյեկտներ):
- Տարածաշրջանային և միջմարզային ինտեգրման ճանապարհով տնտեսական կապերի ստեղծում:
- Արդյունաբերական օբյեկտներում առաջավոր, շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող տեխնոլոգիաների կիրառումը (թափոնների կրկնակի վերամշակում, թափոնների վնասազերծում, փակ ցիկլեր և այլն):
- Աշխատունակ բնակչության բարձր ներուժի օգտագործում:

2.2. Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը

2.2.1. <u>Զբոսաշրջային ոլորտ</u>

Զբոսաշրջիկները տարբերվում են նաև ըստ իրենց պահանջների՝ կախված իրենց ակտիվությունից և այլ գործոններից: Դրանք են՝ խաղաղ հանգստի կողմնակիցներ (փնտրում են հանգիստ ստրեսներից), հաճույքների կողմնակիցներ, ակտիվ հանգստի կողմնակիցներ (բնության սիրահարներ), սպորտային հանգստի կողմնակիցներ, արկածների սիրահարներ:

Մշակութային և ժողովրդա-էթնոգրաֆիական ոլորտը կարող է դրվել զբոսաշրջության հետևյալ տեսակների հիմքում.

- գործարարական և ճանաչողական-գործարարական զբոսաշրջություն՝ գործարարների և այլ մասնագետների համար, ովքեր գալիս են տարբեր քաղաքներից և գործարար գործընթացը համատեղում հանգստի և տեղական բնակչության ավանդույթների,

ժողովրդական արհեստներին ծանոթացման, ազգագրական երգի-պարի փառատոներին մասնակցության հետ:

- Ինսենթիվ կամ խրախուսական զբոսաշրջությունը, որը հիմնված է ինչպես խմբային այցելությունների վրա՝ էքսկուրսիոն նպատակներով, այնպես էլ տարբեր հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցների ճանապարհորդությունները զբոսաշրջության գոտիներ՝ հանգստի նպատակով,
- մասնագիտացված զբոսաշրջություն.
- մասնագիտացված զբոսաշրջության հեռանկարային տեսակներից է էկոզբոսաշրջությունը: Առաջին հերթին նախատեսվում է զարգացում էկոլոգիապես մաքուր շրջաններում (լքված, բարձրլեռնային գյուղերում, տեղակայված հենց այդպիսի շրջաններում): Այս տեսակը դասվում է զբոսաշրջության զարգացման փոքրամասշտաբ տեսակներին և հանգում է զբոսաշրջիկների ոչ մեծ խմբերի հանգստի կազմակերպմանը ավանդական, հեռավոր վայրերում տեղակայված գյուղերում և տեղաբնակների բնակարաններում:
- լիցենզավորված գիտական (հնագիտական պեղումների անցկացում, պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրություններ),
- գիտական և ուսումնական զբոսաշրջություն, որը ենթադրում է լեզվի ուսումնասիրություն, ազգագրության, պատմության ուսումնասիրություն, հուշարձանների վերականգնում,
- պաշտամունքային՝ կապված եկեղեցիների ու վանքային համալիրների այցելությունների հետ: Այս տեսակի զարգացումը՝ ծիսակարգերի, տոնակատարությունների, կենցաղի և մշակույթի հետ համատեղ կարող է զարգանալ առանձին կազմակերպված վայրերում՝ զբոսաշրջային գյուղերում:
- Էթնոգրաֆիական զբոսաշրջություն, հիմնված ժողովրդի կյանքի, ազգային ավանդույթների, ծիսակատարությունների, մշակույթին և ստեղծագործության նկատմամբ պոտենցիալ սպառողի հետաքրքրության վրա (պատմամշակութային արժեք ներկայացնող կառուցվածքները կարող են օգտագործվել որպես նշված միջոցառումների անցկացման համար իրական դեկորացիաներ):
- Իրադարձային զբոսաշրջություն, որը հիմնված է որևէ մշակութային կամ սպորտային իրադարձության անցկացումը տվյալ վայրում կազմակերպելու միջոցով զբոսաշրջիկների զանգվածային հոսք ձևավորելու վրա (փառատոներ, մրցույթներ, քաղաքային տոնակատարություններ, օլիմպիադաներ):
- Էթնիկական զբոսաշրջություն, որը հաշվի է առնում երկրի անցյալը, արտասահմանից գրավելով զբոսաշրջիկների խմբեր, որոնց նախնիները տեղաբնակներ են եղել և որոնց հայրենիքը տեսնելու ցանկությունն են իրականացնում:
- Այլընտրանքային զբոսաշրջություն, որը ենթադրում է ծառայությունների ավելի մանր մասշտաբ, առավել ցածր գներ՝ գրավելով առավել լայն խավեր, որոնք իրենք են ընտրում իրենց ժամանցի ձևերը:

Հնագույն ավանդույթների վերածնումը, ազգային տոնակատարությունների կազմակերպված անցկացումը, ծանոթացումը ավանդույթներին, տոնակատարությունների կազմակերպումը նոր տարրերի լրացումով, անտարակույս հետաքրքրություն կներկայացնեն զբոսաշրջիկների համար և կհանդիսանան անհրաժեշտ պայման ժողովրդի պատմությանն ու կենցաղին առավել լիարժեքորեն ծանոթանալու համար: Ներկայումս պահպանված են մի շարք ավանդական տոնակատարություններ ու ծեսեր:

2.3. Բնակավայրերի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպում և գործառական կառուցվածք

2.3.1. Բնակավայրերի տարածքային զարգացման հիմնական սկզբունքները

Գլխավոր հատակագծի նպատակն է բնակավայրերի տնտեսական զարգացման և հատակագծային հավասարակշռված կառուցվածքի փոխկապակցված կազմակերպմամբ խթանել բնակչության կենսամակարդակի բարձրացմանը՝ հետևյալ գործընթացքների իրականացմամբ.

- բնակավայրերի տնտեսական աճի խթանում և աշխատատեղերի ստեղծում,
- ներդրողների համար բարենպաստ միջավայրի ձևավորում,
- քաղաքի ձևավորված քաղաքաշինական միջավայրի վերակառուցում և բարեկարգում,
- ենթակառուցվածքների բարելավում և կատարելագործում,
- պատմական ժառանգության պահպանություն և ճարտարապետական միջավայրի վերականգնում,
- կրթության և մշակույթի զարգացում,
- սոցիալական ենթակառուցվածքների զարգացում,
- բնակչության աճ:

Նշված կարճաժամկետ, միջնաժամկետ և հեռահար ծրագրերի իրականացմամբ կձևավորվեն տնտեսական միջավայրի համար բարենպաստ պայմաններ՝ քաղաքը դրաձնելով գրավիչ ինչպես բնակչության տարբեր խմբերի և խավերի, այնպես էլ այցելուների համար:

Հատակագծային կառուցվածքի ձևավորման մեթոդական հիմքն են հանդիսանում.

- Սեյսմիկ վտանգի պայմաններում բնակավայրերի բոլոր կառուցվածքային-հատակագծային տարրերի հուսալիությունն ու կայունությունը ապահովող սկզբունքները (բնակվելու գոտու ռելիեֆին և սեյսմիկ վտանգին համապատասխանեցված խտություններ, ներքին ռեզերվային տարածքների ընդգրկում, կանաչ գոտու ընդլայնում, սանիտարական պահպանման գոտիների սահմանում, շրջանցիկ ճանապարհի նախատեսում):
- Հին և նոր թաղամասերի օրգանական հատակագծային կապերի ապահովումը՝ ընդգրկելով քաղաքի գործառական տարածքում ռեկրեացիայի զարգացման համար բարենպաստ տեղամասերը և պատմամշակութային հուշարձանները:

2.4. Հասարակական սպասարկման ոլորտ

Ներկայումս միկրոռեգիոնում առկա է սոցիալական ոլորտի միջին զարգացվածություն: Սոցիալական ենթակառուցվածքից գրեթե բոլոր բնակավայրերում առկա են հանրակրթական դպրոցների շենքերը՝ հիմնականում ապահովված ջրամատակարարման և կոյուղու համակարգերով, գրեթե բոլոր բնակավայրում առկա են բուժկետ, մշակույթի տան, մսուր-մանկապարտեզի շենք: Շենքերը տեխնիկական տարբեր վիճակներում են՝ որոշները կարիք ունեն նորոգման, մյուսները՝ հիմնանորոգման: Առկա են նոր մասնաշենքերի իրականցման անհրաժեշտություն և/կամ շենքերի արդիականացման՝ նոր պամաններին համապատասխանեցման անհրաժեշտություն: Որոշ դեպքերում նոր շենքի իրականացումն առավել նպատակահարմար է քան գոյություն ունեցողի հիմնանորոգումը:

Համայնքի բնակավայրերի ուսումնական (հանրակրթական) հաստատությունների առկա վիճակի վերաբերյալ տեղեկատվություն (ըստ մարզպետի աշխատակազմի տրամադրած տվյալների)

Հ/Հ	***Համայնքը***	***Բնակավայրը***	***Հաստատության անվանումը***	***Գործառնական նշանակությունը***	***Շենքի նախագծային հզորությունը***	***Դպրոցի տեխնիկական վիճակը, վերանորոգումը (հիմնովին,մասնակի)***
4	Ջրվեժ	գ. Ջրվեժ	«Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» ԱԿՈՒՀ ՀՈԱԿ	կրթական-մշակութային	140	բավարար (գտնվում է Ջրվեժի միջնակարգ դպրոցի շենքում)

Հ/Հ	***Համայնքը***	***Բնակավայրը***	***Հաստատության անվանումը***	***Գործառնական նշանակությունը***	***Շենքի նախագծային հզորությունը***	***Վերանորոգումը (հիմնովին,մասնակի)***
61	Ջրվեժ	գ. Ջրվեժ				Շենքը առկա է, բայց չի շահագործվել
62	Ջրվեժ	գ.Ջորաղբյուր	Ջորաղբյուրի մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ	նախադպրոցական կրթական ծրագիր	85	մասնակի
63	Ջրվեժ	գ. Ջովք				Շենքը առկա է, բայց չի շահագործվել

Հ/Հ	***Համայնքը***	***Բնակավայրը***	***Հաստատության անվանումը***	***Գործառնական նշանակությունը***	***Շենքի նախագծային հզորությունը***	***Դպրոցի տեխնիկական վիճակը, վերանորոգումը (հիմնովին,մասնակի)***
66	Ջրվեժ	գ. Ջրվեժ	Ջրվեժի միջնակարգ դպրոց	կրթական և ոսումնական	760	հիմնանորոգված
67	Ջրվեժ	գ.Ջորաղբյուր	Ջորաղբյուրի միջնակարգ դպրոց	կրթական և ոսումնական	280	մասնակի
68	Ջրվեժ	գ. Ջովք	Ջովքի միջնակարգ դպրոց	կրթական և ոսումնական	192	մասնակի

2.5. Համայնքի քաղաքաշինական զարգացում

Ջրվեժի բնակավայրի տնտեսության հեռանկարային զարգացման հիմնական ուղղություններն են.

- Գյուղատնտեսությունը՝ բանջարանոցների և մրգատու այգիների մշակում, հողագործություն, մեղվաբուծություն, գյուղատնտեսական մթերքների վերամշակում,
- Փոքր և միջին բիզնեսը՝ արտադրական ձեռնարկությունների, սպասարկման և առևտրական կազմակերպությունների շահագործում, նորերի ստեղծում և զարգացում,
- Ռեկրեացիայի, կարճատև և երկարատև հանգստի որտներում ծառայությունների մատուցում, ամառանոցային տնտեսության զարգացում:

Համայնքի քաղաքաշինական զարգացումը նախագծվել է հաշվի առնելով.

- տարածքի փաստացի օգտագործման առանձնահատկությունները,
- տարածքի համալիր գնահատման արդյունքները,
- համայնքի ներկա կարիքները,
- առկա զարգացման միտումները,
- հեռանկարային զարգացման հնարավորությունները,
- համայնքի զարգացման քառամյա ծրագիրը,
- բնակչության կենցաղն, ավանդույթները և հիմնական զբաղմունքը:

Նախագծային լուծումներն ընտրվել են, ապահովելով՝ առկա տարածքային և բնական ռեսուրսների խնայողական օգտագործումը, պատմամշակութային ժառանգության պահպանումը, բնական և քաղաքաշինական լանդշաֆտների բարելավումը, բնակավայրի հատակագծային կառուցվածքի կատարելագործումը, ապրելու, աշխատելու և հանգստի համար բարենպաստ և հրապուրիչ միջավայրի ստեղծումը:

Համայնքի հեռանկարային առավելագույն բնակչության թիվը՝ մշակվող միկրոռեգինալ փաստաթղթի գործողության ժամկետում հաշվարկվել է՝ հիմնվելով բնակավայրի առկա աճի միտումների վրա և կրում է որոշակի մոտավորության բնույթ՝ հաշվի առնելով երկրում անկանխատեսելի միգրացիայի միտումներն ու աշխարհագրությունը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծում բնակչության հեռանկարային թվաքանակի հաշվարկման նոր մեթոդաբանություն՝ արդի չկառավարվող տեղաշարժերի ենթատեքստում, որը հիմնված է երկրի կայուն ռեսուրսների վրա (հողային, ջրային և ռեկրեացիոն) և արտահայտվում է դեմոգրաֆիական տարողունակություն եզրույթով:

Միկրոռեգիոնի գյուղական բնակավայրերի հեռանկարային զարգացման հայեցակարգ

Միկրոռեգիոնի գյուղական բնակավայրերի զարգացման հիմնախնդիրները դիտարկվում են հետևյալ գործոնների հետ փոխկապակցված.

- Գյուղերի դիրքը մարզի և միկրոռեգիոնի տարաբնակեցման համակարգում,
- Բնակչության աճի դինամիկան,
- Տարածքային ռեսուրսների օգտագործման միտումները, հնարավորությունները,
- Տրանսպորտային կապերը, դրանց կատարելագործման հնարավորությունները,
- Ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների զարգացման և կատարելագործման հնարավորությունները,

- Ռեկրեացիոն, հումքային, գյուղատնտեսական ռեսուրսային պոտենցիալի օգտագործման հնարավորությունները և արդյունավետությունը:
- Տնտեսության հեռանկարային զարգացման հիմնական ուղղություններն են.
- Արդյունաբերական համալիր:
- Ագրոարդյունաբերական համալիրը, որը կզարգանա հիմնականում անասնապահական, պտղաբուծական ուղղությամբ:

2.5.1. Արդյունաբերության զարգացման հեռանկարները

Սույն նախագծով արդյունաբերության զարգացման հեռանկարները դիտարկվում են բնական (հումքային, ռեկրեացիոն, գյուղատնտեսական) ռեսուրսներ, հանրապետության արդի տնտեսական-քաղաքական փուլի վերափոխումների ընձեռած լայն հնարավորությունների, տնտեսական գործունեության նոր մոտեցումների տեսանկյունով, որոնցից կարևորագույնն են.

- Տարածաշրջանի գյուղատնտեսական արտադրության օգտագործումը՝ ագրոարդյունաբերական ճյուղի զարգացման համար:
- Փոքր և միջին բիզնեսի (գործարարության) խթանումը և աջակցումը՝ ներդրումների համար բարենպաստ միջավայրի ձևավորմամբ: Փոքր և միջին բիզնեսի օբյեկտները շատ հարմար կառույցներ են հանդիսանում հատկապես բարձր տեխնոլոգիաներով արտադրությունների ներդրման և սպասարկման համար, քանի որ համեմատաբար արագ և փոքր ծախսերով յուրացնել նոր տեխնոլոգիաները և նորարարությունները, արագ են հարմարվում շուկայի պահանջներին և սպասարկման արդիական ձևերին:
- Տարածաշրջանային և միջմարզային ինտեգրման ճանապարհով տնտեսական կապերի ստեղծում:
- Արտադրական օբյեկտներում ժամանակակից, միջազգային ստանդարտներին համապատասխանող, շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող տեխնոլոգիաների կիրառում:
- Աշխատունակ բնակչության բարձր ներուժի կիրառում:

2.5.2. Ագրոարդյունաբերական համալիրի զարգացման հեռանկարները

Համայնքում զարգացած է եղել անասնապահությունը, դաշտավարությունը, բանջարաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը, գյուղմթերքների վերամշակման արտադրությունը: Այժմ չեն գործում գյուղմթերքների վերամշակման արտադրությունները, կենտրոնացված գյուղտեխնիկայի բացակայության, հողակտորների մասնատման, ագրոտեխնիկական կազմակերպված միջոցառումների բացակայության պայմաններում դժվարացել է հողերի մշակման աշխատանքները: Գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիրները նույնպես մեծ դժվարություններ են առաջացնում:

Համայնքում գյուղատնտեսության (անասնաբուծություն, դաշտավարություն, բանջարաբուծություն) հողօգտագործման ինտենսիվությունը բարձրացնելու, ագրոարդյունաբերական համալիրի զարգացման նպատակով նպատակահարմար է իրականացնել փոքր (50-60 հա), միջին (150-200 հա) ֆերմերային տնտեսությունների ստեղծումը՝ կոոպերացիայի, փայատիրական սկզբունքներով միավորելով և խոշորացնելով մանր հողակտորները: Նշված միջոցառումները կնպաստեն նաև շրջանառությունից դուրս մնացած հողերն օգտագործել նպատակային նշանակությամբ:

Ագրոարդյունաբերական համալիրի արտադրանքի ստացումը (միս, յուղ, բանջարեղեն) կազմակերպելու և իրացնելու նպատակով անհրաժեշտ է տեղական

ինքնակառավարման մարմինների և ներդրողների համագործակցությունը՝ տարածաշրջանային, միջմարզային, միջհամայնքային կապերի ստեղծումով, առաջնահերթ տարածաշրջանային մեծածախ շուկայի ստեղծումով:

2.5.3. Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը

Գյուղական բնակավայրերում՝ ռեսուրսների գնահատմամբ, ռեկրեացիոն ոլորտի զարգացմանը նպաստող առկա են զգալի պաշարներ, ինչը հնարավորություն է ստեղծում գյուղերի հետագա զարգացման ծրագրերում նպատակաուղղված միջոցառումների ներդրմամբ ձևավորել ռեկրեացիոն զբաղմունքների ցիկլեր՝ բարձրացնելու դրանց գրավչությունը, ինչպես նաև հնարավորություն ստեղծելու տեղաբնակեների հանգիստն ու ժամանցը առավել լիարժեք անցկացնելու:

Ռեկրեացիոն ոլորտի զարգացումը նպատակահարմար է ռեկրեացիոն բոլոր ռեսուրսների ռացիոնալ, համատեղ օգտագործումով, գեղագիտական արժեքավոր միջավայրի ստեղծումով՝ փոխկապակցված գոյություն ունեցող տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական, սոցիալական ենթակառուցվածքների զարգացման և կատարելագործման հետ:

Ռեկրեացիոն ենթագոտու կազմակերպումը կնպաստի նաև.

- Տեղական բնակչության ամենօրյա հանգստի կազմակերպմանը,
- Նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- Կրթական մակարդակի բարձրացմանը,
- Բժշկական սպասարկման կատարելագործմանը,
- Տեղեկատվության տարածման նոր ձևերի ներմուծմանը,
- Տարածաշրջանի գյուղական բնակավայրերի խոշորացմանը:

2.7. Գյուղերի հատակագծային կառուցվածքի հեռանկարային զարգացում

Գյուղերում պահուստային մեծաչափ տարածքներ չկան: Համայնքապատկան, համայնքի հեռանկարային զարգացման համար նախատեսված պահուստային տարածքների զգալի մասը տրանսֆորմացված է բնակավայրերի կատեգորիայի:

Համայնքի հեռանկարային կառուցվածքի կանոնակարգման ընթացքում հաշվի են առնվում արդեն իսկ ձևավորված քաղաքաշինական իրավիճակը, ի հայտ բերելով ներքին փոքրաչափ պահուստային տարածքները, որոշ դեպքերում առաջարկելով օգտագործումից դուրս ատաղրական տարածքների վերակազմավորումը բնակելի ինքնաբավ հատակագծային միավորների կամ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների՝ ինչը մեծապես կբարձացնի բնակավայրերի գրավչությունը ինչպես այցելուների այնպես էլ տեղաբնակների համար:

Հեռանկարային զարգացման տարածքների հատակագծային կազմակերպման գործընթացում նախատեսվում է պահպանել արդեն իսկ ձևավորված հատակագծային կառուցվածքը՝ կազմակերպելով որպես տնամերձ հողամասերով կառուցապատված սակավահարկ կառուցապատման գոտի՝ պահպանելով գոյություն ունեցող փողոցային ցանցի սկզբունքը: Շենքերը նախատեսվում են երկհարկանի՝ ձեղնահարկերի հնարավորությամբ, միմյանց կցման տարբեր մոտեցումներով (մանրամասն տրված է գոտևորման բաժնում):

2.7.1. Գյուղական լանդշաֆտների վերլուծություն

Ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերի լանդշաֆտները ձևավորված են կառուցապատված և սատ՝ բնական լանդշաֆներից: Բնակավայրերի տարածքների կառուցապատումը ներկայացված է գլխավորապես բնակելի

կառուցապատմամբ, հասարակական սպասարկման օբյեկտների կենտրոնացած կամ ցրված տեղակայմամբ:

Գյուղերի տարածքների լանդշաֆտի ներկա վիճակի վերլուծությունը տալիս է հետևյալ պատկերը.

Բնակավայրերի կառուցապատված հատվածները հիմնականում տեղակայված են ինչպես հանդարտ ռելիեֆային պայմաններում այնպես էլ բավականին բարդ ռելիեֆային պայմանների համեմատաբար մեղմ հատվածներում:

Գյուղերի հատակագծային կառուցվածքներն ունեն տարաբնույթ կառուցապատում, որտեղ առանձնանում են ինչպես տարերայնորեն ձևավորված հատվածներ, այնպես էլ կանոնավոր նախագծային լուծումներով կառուցված հատվածներ /թաղամասեր/՝ հիմնականում պայմանավորված ռելիեֆային պայմանների ընձեռած հնարավորություններից:

Պայմանավորված նկարագրված բարդ ու կտրտված ռելիեֆային պայմաններով, բնակավայրի փողոցային ցանցը ձևավորվել է՝ հիմնականում ներգծվելով ռելիեֆին և առավելագույնս հարմարավետ թույլատերլի թեքություններ ապահովելով: Այնուհանդերձ, որոշ հատվածներում դրանց ձգվում են ռելիեֆին գրեթե ուղղահայաց ուղղությամբ և զգալիորեն գերազանցում թույլատրելի առավելագույն թեքությունները:

Հիմնական մայրուղային ճանապարհները լայնական կտրվածքում ունեն մոտ 9-12 մ լայնություն, մինչդեռ մյուս փողոցների և մոտեցումների լայնական կտրվածքների չափը կազմում է 3.5-ից 8.5 մետր: Մայթերը մեծամասամբ բացակայում են:

Էական վերակառուցման և նախագծման խիստ կարիք ունեն գյուղերի ներքին ճանապարհատրանսպորտային ցանցը:

Գյուղերի կենտրոնական հատվածում որոշակիորեն ձևավորված է հասարակական կենտրոն՝ կից տեղակայված է մշակույթի տան շենքը:

Այնուհանդերձ, նկարագրված անկանոնության մեջ նշմարվում է որոշակի օրինաչափություն և քաղաքաշինական հորինվածք՝

Բնակավայրերը կազմավորել են գլխավոր և երկրորդական հորինվածքային առանցքների շուրջ:

Այնուհետև կառուցապատված հատվածը գրեթե շրջանցում է պարփակող փողոցը:

Բնակավայրի գրեթե երկրաչափական կենտրոնում որոշակիորեն ձևավորված է հասարակական կենտրոնը՝ կից հիմնականում հասարակական-վարչական բնույթի շենքերով կառուցապատմամբ:

Գյուղական բնակավայրերում դրանք հիմնականում փոքրաչափ բաց հրապարակներ են՝ կից գյուղապետարանի որոշ դեպքերում նաև մշակույթի տան շենքերով:

Արտադրական բնույթի տարածքներից գյուղերի տարածքում առկա են անասնապահական համալիրի հիմնականում չգործող հատվածները, որոնք սակայն սափականաշնորհված են, որոշ դեպքերում մասնակի փոխած իրենց սկզբնական գործառնական նշանակությունը, ուստի գյուղերի հեռանկարային խնդիրների լուծման գործընթացին մասնակցությունից դուրս:

Բնակելի տնամերձ կառուցապատումը կրում է ինչպես կանոնավոր, այնպես էլ անկանոն բնույթ՝ կապված ռելիեֆի և դրանով պայմանավորված փողոցային ցանցի հետ:

Տնամերձ բնակելի կառուցապատմամբ թաղամասերը ներկայացված են գլխավորապես 8-10 մ լայնությամբ կանոնավոր փողոցային ցանցերով սահմանազատված թաղամասերի՝ 800-1500 քմ հողամասերով, գծային կամ պարագծային կառուցապատմամբ, 1-2 հարկանի քարե տներով բնակելի գոտիներով: Բնակելի տները տեղ-տեղ կցաշար են, որոշ հատվածներում ազատ կանգնած՝ հողամասի ճակատային հատվածի միջնամասում: Կառուցապատման գիծը, հիմնականում պահպանված է և

սահմանված փողոցների կարմիր գծից մոտ 3 մ հեռավորությամբ: Ընդհանուր առմամբ կառուցապատումը կանոնավոր է:

Գլխավոր հատակագիծն ու գոտևորման նախագծի ուղեցույցը նպատակ ունեն բնակավայրերը դարձնել ինչպես ապրելու, աշխատելու, սովորելու, այնպես էլ այցելությունների, զնումների կամ ճաշելու համար ամենացանկալի վայրերից մեկը՝ հագեցած հանրային և ժամանցային ենթակառուցվածքներով և գործունեության այլ հնարավորություններով:

Բնակավայրերում բնակչության կարիքների հետազոտմանը միտված բազմաթիվ հանդիպումների արդյունքում կանխորոշվել են տեղի բնակչության անմիջական պահանջները, որոնց վերլուծությունների արդյունքում առաջադրվել են գյուղի բնակչության կարիքները հաշվի առնող տնտեսական տարբեր ուղղությունների այդ թվում նաև զբոսաշրջության պոտենցիալ հնարավորությունները զարգացնող ենթակառուցվածքի կազմակերպման ուղղությունները՝ միտված լրացնելու առկա հասարակական, մշակութային և ենթակառուցվածքային բացերը:

Բնակավայրերի հատակագծային՝ որոշակի առումով կոմպակտ կառուցվածքի վերլուծությամբ բացահայտվել է հետևյալ պատկերը.

- բնակավայրերի ձևավորված հատակագծային կառուցվածքը կրում է հիմնականում անկանոն, սակայն որոշակի հատվածներում նաև կանոնավոր բնույթ: Տեղակայված լինելով ռելիեֆային ինչպես խիստ մեծ թեքություններով, այնպես էլ որոշակի հատվածներում համեմատաբար հարթ պայմաններում, հատակակագծային կառուցվածքը՝ առավելագույնս համապատասխանեցված է ռելիեֆային պայմաններին:
- ընդ որում գործառական առումով ևս գյուղերի տարածքը հստակ տարաբաժանված է առանձին ֆունկցիոնալ գոտիների՝ մասնավորապես կենտրոնական միջուկը՝ մշակութային, վարչական և հոգևոր օբյեկտներով:
- գյուղապետարանների վարչական շենքերը (միահարկ կամ երկհարանի քարե կանոնավոր շարվածքով, երկթեք լանջավոր տանիքով, տիպային մշակույթի շենք-վարչական կառույց):

Գյուղապետարանների շենքերի որոշ մասը գտնվում է բարվոք վիճակում, վերանորոգված և արդիականացված է:

Սակայն կան նաև ոչ բարվոք վիճակում գտնվող շենքեր, որոնք կարիք ունեն վերանորոգման և արդիականացման:

Բնակավայրերից որոշներում վերը նշված շենքերի հիմնանորոգմանը զուգահեռ բարելավված են հիմնական մոտեցնող ճանապարհի կարծր ծածկույթը և քաղաքային դիզայնի տարրերը (աղբարկղներ, լուսավորության սյուներ և այլն):

<u>Առաջարկ</u>

Աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակընկալել բնական ռեսուրսների (հումքային, ռեկրեացիոն, տուրիստական, գյուղատնտեսական) տարածքային, բնական ռեսուրսների պոտենցիալ հնարավորությունների ռացիոնալ օգտագործումից և ներդրումային ճկուն քաղաքանությունից:

Այսպիսով, բնակավայրերի հեռանկարային տնտեսական զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Ագրոարդյունաբերական համալիրի ձևավորում,
- Ռեկրեացիոն ոլորտի զարգացում, որի շրջանակներում՝
  - հանգստի, առողջության վերականգնման, լեռնակլիմայաբուժական,
  - մշակութային, կրոնական, ճանաչողական, սպորտային, ընտանեկան և տուրիզմի այլ ձևերի ասպեկտներով:

• Զարգացման հիմնական ուղղությունների ընտրության և իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների և գործարարության համատեղ գործունեությունը, ներդրումային գրավիչ միջավայրի ստեղծումը, գյուղի տեղաբնակների մասնակցությունն ու նրանց ավանդական մոտեցումների հաշվառումը քաղաքաշինական կարգավորման հիմնական ուղղությունների և սկզբունքների սահմանման գործընթացում:

• Նախկին սոցիալ-տնտեսական փուլի պլանային համակարգով գործող տարածաշրջանի արդյունաբերական համալիրը (սննդի, թեթև, գյուղ մթերքների վերամշակում, տեղական արդյունաբերություն) այլևս չի գործում:

• Արդյունաբերական և արտադրական բոլոր օբյեկտները սեփականաշնորհվել են և ներկայումս որոշ մասը կիսաքանդ վիճակում են:

• Սույն նախագծով տնտեսական զարգացման հեռանկար դիտարկվում են բնական (հումքային, ռեկրեացիոն, գյուղատնտեսական) պաշարների, հանրապետության արդի տնտեսական-քաղաքական փուլի վերափոխումների ընձեռած լայն հնարավորությունների, տնտեսական գործունեության նոր մոտեցումների տեսանկյունից, որոնցից կարևորագույններն են՝

➢ Տարածաշրջանային, մարզային և միջհամայնքային ինտեգրման ճանապարհով տնտեսական կապերի ստեղծումը:

➢ Արդյունաբերական օբյեկտներում նախատեսվում է շրջակա միաջավայրին նվազագույն վնաս հասցնող առաջավոր տեխնոլոգիաների կիրառում (թափոնների կրկնակի վերամշակում, դրանց վնասազերծում, փակ ցիկլեր և այլն):

➢ Փոքր և միջին բիզնեսի (գործարարության) խթանումը և աջակցումը՝ ներդրումների համար տրամադրվող գրավիչ միջավայրի քաղաքաշինական կարգավորմամբ և ճարտարապետական ձևավորմամբ: Փոքր և միջին բիզնեսի օբյեկտները շատ հարմար կառույցներ են հանդիսանում հատկապես բարձր տեխնոլոգիական արտադրությունների ներդրման և սպասարկման համար, քանի որ արագ և փոքր ծախսերով կարող են յուրացնել նոր տեխնոլոգիաներ և նորարական մշակումներ:

Այդ օբյեկտները ավելի ճկուն են, արագ են հարմարվում շուկայի պահանջներին և սպասարկման ձևերին:

- Արտադրական օբյեկտների տեղադրումը նոր տեխնոլոգիաներով (հիմնականում գյուղ մթերքների վերամշակում):
- Աշխատունակ բնակչության ներուժի օգտագործում:
- Իրավական և գործարարական տեղեկատվական կենտրոնի ստեղծում՝ բնակչությանն ու հիմնականում ներդրողներին իրազեկելու նպատակով:

Գյուղերի հանքահումքային ներուժը փոքր է: Չկան մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր, վառելիքային և պարարտացման հումքեր:

Հատակագծային միավորի տարածքում առաջարկվում է նախաձեռնել այնպիսի կառուցապատում, որը կառաջարկի բնակարանավորման լայն ընտրություն՝ յուրաքանչյուր կենսակերպին և սոցիալ-տնտեսական կարգավիճակին համապատասխան: Այդ մոտեցումը ներառում է ինչպես տնամերձ հողամասերով անհատական բնակելի կառուցապատման գոտի, այնպես էլ միջին խտության քաղաքատիպ (թաունհաուսներ) բնակելի սակավահարկ շենքերով կառուցապատում՝ հասարակական սպասարկման գործառույթների լայն տեսականիով՝ մարդու հիմնական կարիքների բավարարման համար տարածքներն առավելագույնս մոտեցնելով իր բնակության վայրերին: Նշվածի իրականացման համար թաղամասի սահմաններում առանձնացվել են խառը կարուցապատման գոտիներ:

2.8. Քաղաքաշինական հեռանկարային զարգացում

Վերլուծության և համալիր գնահատականի արդյունքում ընտրվել են կառուցապատման համար նախընտրելի տարածքները: Ճանապարհների, էներգետիկայի, գերեզմանատների և այլ կոմունալ օբյեկտների այն պաշտպանիչ գոտիների տարածքները, որոնք ներկայումս արդեն զբաղված են բնակելի և հասարակական կառույցներով՝ առաջարկվում է վերափոխել բուֆերային գոտիների, որոնցում պետք է արգելվեն նոր բնակելի և հասարակական կառուցապատման աշխատանքները: Բնակավայրերի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպման հիմքում դրվել են հետևյալ հիմնական սկզբունքները.

- գյուղի միասնական հատակագծային կառուցվածքի կատարելագործում, հին և նոր թաղամասերի հարմարավետ հատակագծային կապերի ստեղծում,
- արտադրական և գյուղատնտեսական օգտագործման տարածքների կանոնակարգում, սանիտարական գոտիների նորմատիվային պահանջների պահպանման ապահովում և կանաչ գոտիների ընդլայնում,
- սեյսմիկ վտանգի և այլ արտածին երկրաբանական երևույթների առկայության պայմաններում գյուղական բնակավայրի կառուցվածքային-հատակագծային տարրերի հուսալիության և կայունության ապահովում:

Հաշվի առնելով տարածքի գերակշռող գործառնական օգտագործումը և կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, գյուղական բնակավայրերի տարածքում առաջարկվում է կիրառել կառուցապատման հետևյալ սկզբունքները.

- առավելապես տնամերձ հողամասերով՝ ցածրահարկ առանձնատնային կառուցապատման նոր բնակելի թաղամասերի կազմակերպում,
- ամառանոցային թաղամասերի զարգացում և բարեկարգում,
- տարածքում հասարակական սպասարկման գործառույթների կանոնակարգում, սպասարկման օբյեկտների համալիր ձևավորում՝ սպասարկման մատչելիության գոտիներում ընդգրկելով նոր և գոյություն ունեցող բնակելի թաղամասերը,
- ճանապարհափողոցային ցանցի կատարելագործում,
- անտառպարկային և ռեկրեացիոն գոտու ձևավորում:

Առաջարկված լուծումները ներկայացվում են ըստ վերը նշված հատվածների.

1) Հին թաղամաս՝

Ջրվեժի հին թաղամասը խիտ կառուցապատված է անկանոն հատակագծման սկզբունքով՝ հիմնականում 1-2 հարկանի սեփական առանձնատներով: Տներով զբաղեցրած մակերեսը հասնում է տնամերձերձ հողամասերի մոտ 40% - ին: Գլխավոր հատակագծով կանոնակարգվել է փողոցային ցանցը, հստակեցվել է առանձին հողակտորների նշանակությունը: Սահմանվել են հուշարձանների զբաղեցրած տարածքները և պահպանական գոտիների սահմանները:

2) Բագրևանդի ճանապարհին հարակից տարածք՝

Նախատեսվել է 36.7 հա տարածք նոր բնակելի կառուցապատման համար: Թաղամասը հատակագծվելու է տնամերձ հողամասերի կանոնակարգված բաժանումներով: Համեմատած հաստատված գլխավոր հատակագծի, նոր կառուցապատման համար նախատեսված հատվածը փոքրացվել է (հյուսիսից)՝ ապահովելով գործող գերեզմանոցից սանիտարական հեռավորությունը (250-300մ): Գերեզմանոցի համար նախկինում հատկացված տարածքի հաշվին և մասամբ դրանից դուրս՝ գերեզմանատան պարագծով նախատեսվել է 55.0-85.0մ կանաչապատ շերտ, որը նպատակահարմար է կանաչապատել հատուկ ծառատեսակներով:

Բագրևանդի և դեպի Ձորաղբյուր տանող ճանապարհներին հարող հողամասերի առաջին շերտը (ներկայումս մի մասը տնամերձերով բնակելի տներ, մյուսը հասարակական) նախատեսվել է որպես հասարակական և խառը կառուցապատման

գոտիներ: Թաղամասի ներսում առանձնացվել են հողամասեր նոր դպրոցի (1.5 հա) և մանկապարտեզի (5400 քմ) համար: Կանոնակարգվել է առանձին հողամասերի նշանակությունը (սանիտարական գոտի չպահանջող արտադրականի՝ պահածոների և երշիկի արտադրամասերի կազմակերպման համար), նախագծվել է հարմարավետ փողոցային ցանց և ինժեներական համակարգ: Առանձնացվել է թաղամասի արևելյան ծայրով անցնող էլեկտրահաղորդման գծերի օտարման շերտը:

3) Դեպի Գառնի-Գեղարդ և Աբովյան գնացող ճանապարհներին հարող թաղամասեր՝

Նախատեսվել է 30.3 հա և 47.2 հա տարածքներ նոր բնակելի կառուցապատման համար: Տնամերձ հողամասերի բաժանումը նախատեսվել է կանոնակարգված՝ իրար զուգահեռ փողոցային ցանցի մեջ: Երևան-Գառնի-Գեղարդ ճանապարհին երկու կողմից հարող մեկից երկու շերտ հողամասերի տարածքները նախատեսվել են հասարակական և խառը կառուցապատման համար: Մեծ տրանսպորտային հանգույցի տարածքը նախատեսվում է կանաչապատ՝ պահպանելով ճանապարհային տեսանելիության պահանջները: Գառնի-Գեղարդ ճանապարհից հարավ - արևելքում գտնվող պատմական գերեզմանոցի (փակվող) պարագծով առանձնացվել է սանիտարական կանաչապատ գոտին:

Ջախակողմյան թաղամասի հյուսիսային մասիշարունակության վրա, Երևանի վարչական սահմանում, կառուցվում է նոր թաղամաս, որի հատակագծումը հաշվի առնելով Ջրվեժի նախորդ հատակագծով նախատեսված ճանապարհահատվածը փոփոխության նախագծով հանվել է, որպեսզի Ջորաղբյուր գնացող ճանապարհը չդառնա տարանցիկ:

4) Երևան-Գառնի-Գեղարդ ճանապարհի հյուսիսային մասում գտնվող ամառանոցային թաղամասեր (հին և նոր)՝

Գոյություն ունեցող ամառանոցային թաղամասի արևելյան ծայրամասում նախատեսվել է եռանկյունաձև տարածք խառը կառուվապատման գոտի կազմակերպելու համար, որի շարունակության վրա՝ դեպի արևելք նախագծվել է նոր ամառանոցային թաղամաս (15.1 հա):

5) «Ջրվեժ» անտառպարկ – արգելավայր՝

«Ջրվեժ» անտառպարկի տարածքը ներառվել է բնակավայրի վարչական սահմանում: Անտառպարկի տարածքը գրանցված է որպես բնության հատուկ պահպանվող տարածք (արգելավայր): Նշված տարածքում ցանկացած գործունեություն պետք է իրականացվի «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին համապատասխան:

6) Այլ նախագծային լուծումների մասին՝

Գյուղի բնակեցված տարածքներից հարավ գտնվող (անտառպարկից արևմուտք) գյուղատնտեսական այլ նշանակության հողերից 80.9 հա փոխադրվել է վարելահողերի, հաշվի առնելով հողածածկույթի որակը և հյուսիսում կառուցապատման համար օգտագործված վարելահողերի կոմպեսացման ցանկությունը: Այս տարածքին կից նախորդ գլխավոր հատակագծով նախատեսված էր նոր գերեզմանոցի համար տարածք, որը փոփոխության նախագծով հանվել է, քանի որ գործողը բավարարում է հաշվարկային կարիքները: Միաժամանակ, հաշվի առնելով ռելիեֆի առանձնահատկությունները, գործող գերեզմանոցից 100-ից 300մ հեռավորությամբ միջակայքում նախատեսվել են տարածքներ նոր կառուցապատման համար (8.46 հա, III փուլ), պայմանով, որ այս տարածքներում կառուցապատման նպատակով հողերի տրամադրումն իրականացվի սանիտարահամաճարակային ծառայությունների հետ համաձայնեցմամբ:

Երևանի Էրեբունի թաղամասից դեպի Աբովյան քաղաք գնացող ավտոճանապարհի մոտ գտնվող (վերը նշված վարելահողերից հարավ) աղբավայրի տարածքը

նախատեսվում է շրջապատել 20 մ լայնությամբ ծառապատ շերտով: Հաշվի առնելով, որ աղբավայրի տարածքը մոտ է ճանապարհին, ինչպես նաև այն, որ համայնքում գերակայում են ռեկրեացիոն գործառույթները, շրջակա տարածքով աղբի տարածումը կանխելու նպատակով անհրաժեշտ է աղբավայրի տարածքի կազմակերպումն իրականացնել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 29-ի N 321-Ա հրամանով հաստատված՝ Աղբավայրերի նախագծման և շահագործման ձեռնարկում նշված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես՝ մուտքի ճանապարհը նախատեսել երկկողմ շարժման, թափոնների պահեստավորման տեղամասին հատկացնել տարածքի 85-95%, տարածքւ բաժանել փուլային հատվածների, յուրաքանչյուրը 3-5 տարվա համար, յուրաքանչյուր հատվածքւմ կազմակերպելով աղբի կուտակումները 2-ից 3 հարկաբաժիններով՝ 2-ից 2.5 մ բարձրությամբ և թափոնների միջանկյալ և վերջնական մեկուսացմամբ գրունտով լիցքերի շերտերով: Տեղամասի սահմանի վրա նախատեսել ջրահեռացման առվակ, որից 1-2մ հեռավորության վրա ցանկապատել տարածքը, ընդ որում՝ ճանապարհի կողմից առաջարկվում է պարսպապատել քարե 1.5 – 1.8 մ բարձրությամբ ցանկապատով, ցանկապատից 5-8 մ, իսկ ճանապարհի կողմից 20մ լայնությամբ գոտիներում նախատեսել ծառապատում և կանաչապատում, ջրմուղ կոյուղու ցանցերի անցկացում, էլեկտրալուսավորում, նշված գոտու ճանապարհից հեռու հատվածում կարող է պահեստավորվել նաև թափոնների ծածկման համար նախատեսված գրունտը: Կենցաղային և արտադրական շինություններով տնտեսական գոտին տեղադրել մուտքի ճանապարհի աղբավայրի սահմանի հետ հատման մասում: (տարածքը նախագծելիս)

Հին թաղամասի հարավում են գտնվում ընդերք օգտագործման 22.08 հա տարածքները (բազալտ և գիպսակավեր): Դրանք ներկայումս չեն գործում, սակայն նախագծով առայժմ պահպանվում են որպես այդպիսիք: Դրանցից հարավ գտնվում են Ջրվեժի շնաբուծարանը, որը ևս անհրաժեշտ է պարսպապատել, և ձկնաբուծարանը՝ փոքր բնական լճի տարածքում, որը ներկայումս ծառայում է, որպես ռեկրեացիոն ծառայություններ տրամադրող գոտի:

2.9. Զբոսաշրջության ռեսուրսները և զարգացման միտումները

Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության դինամիկ զարգացող և հեռանկարային ճյուղերից է, որն իր առաջխաղացմամբ ոչ միայն մեծ դեր կարող է խաղալ տնտեսության զարգացման համար, այլև նպաստել մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը: Հայաստանը միջազգային զբոսաշրջային շուկայում նոր երկիր է: Այս բնագավառում մեր հանրապետությունն ունի զգալի ներուժ, քանզի զբոսաշրջիկների կողմից որպես զբոսաշրջային ուղղություն ընտրելու հիմնական պատճառներն են երկրի բնությունը, պատմամշակութային արժեքները, ինչպես նաև ավանդույթներն ու հայկական սփյուռքի առկայությունը: Հանրապետություն այցելած զբոսաշրջիկների կողմից ընդհանուր առմամբ հնչել են դրական գնահատականներ: Հայաստանն աշխարհի այն երկրներից է, որտեղ կան զբոսաշրջության զարգացման համար բարենպաստ պայմաններ, որոնց արդյունավետ և նպատակային օգտագործման զբոսաշրջությունը կարող է դառնալ հանրապետության ազգային տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկը:

Զբոսաշրջությունը և հանգստի կազմակերպումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության գերակա ճյուղերից մեկը և սկսած 1998թ. գտնվում է առանձնահատուկ ուշադրության ներքո, ինչի հետևանքով հանրապետությունում վերջին տարիներին նկատվում է հանգստի և զբոսաշրջային ոլորտի ակտիվություն: Այդ ակտիվությունն ուղղակի արդյունքն է ոլորտի ծրագրային բարեփոխումների, որոնց

շնորհիվ զբոսաշրջային այցելությունները դեպի Հայաստանի Հանրապետություն դինամիկորեն աճում են:

Վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են եղել համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի, նկարագրի ձևավորման շարունակական կատարելագործմանը:

Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման համար կարևորվում է առանձին մարզերի ներգրավվածությունը, ինչպես նաև նրանց ենթակառուցվածքների զարգացվածության մակարդակը, զբոսաշրջային ռեսուրսների հասանելիությունը, զբոսաշրջային ռեսուրսների ճիշտ գնահատումն ու դրանց ճիշտ օգտագործումը:

Կոտայքի մարզի զբոսաշրջության ոլորտն իր հարակից ենթակառուցվածքներով և նպաստավոր բնակլիմայական պայմաններով, ինչպես նաև պատմամշակութային և բնական հուշարձանների հարուստ բազմազանությամբ, պահպանված ժողովրդական ավանդույթների և սովորույթների շնորհիվ կարող է դառնալ ոչ միայն հանրապետության, այլ տարածաշրջանի տուրիստական կենտրոններից մեկը, քանզի վերը նշված նպաստավոր պայմանները կարող են դառնալ տուրիզմի տարբեր տեսակների զարգացման ամուր հենքը՝ մասնավորապես, ագրոտուրիզմի, գյուղական տուրիզմի, լեռնադահուկային, ինչպես նաև այլ տուրիստական կենտրոնների: Կոտայքն իր պատմամշակութային արժեքներով համարվում է ամենահարուստ մարզը հանրապետությունում, որը չունի պետական սահման: Այն հարուստ է իր բնակլիմայական պայմաններով: Սաղարթախիտ անտառները զբաղեցնում են մարզի տարածքի շուրջ 1/3 մասը: Առկա են նաև քաղցրահամ ջրերի բազմաթիվ աղբյուրներ:

Հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակով Կոտայքի մարզը զիջում է միայն մայրաքաղաք Երևանին: Բարձրակարգ հյուրանոցային ծառայությունների մատուցումը, ինչպես նաև հանրային սննդի կազմակերպումը հանդիսանում են զբոսաշրջության զարգացման հիմնական նախադրյալները: Հյուրանոցային օբյեկտների հիմնականում տեղակայված են Ծաղկաձոր, Հանքավան, Արզնի բնակավայրերում, ինչպես նաև Աղվերան հանգստյան գոտում:

Մարզում կայացած զբոսաշրջության կենտրոններն են՝ Ծաղկաձորը, Աղավնաձոր, Հանքավան, Աղվերան հանգստյան գոտիները, ինչպես նաև Գառնի-Գեղարդ պատմամշակութային վայրերը: Վերը նշված գոտիները հագեցած են հյուրանոցային և հանգստյան տներով, դրանով իսկ ստեղծված են զբոսաշրջության համար անհրաժեշտ տուրիստական ենթակառուցվածքներ:

Մարզի տարածքում են գտնվում հազարից ավելի պատմամշակութային օբյեկտներ՝ եկեղեցական համալիրներ, եկեղեցիներ, մատուռներ, տուն-թանգարաններ և այլն, սակայն դրանց մեծ մասը դեռևս գտնվում են անմխիթար վիճակում: Դեռևս չլուծված խնդիր է համարվում դրանց շրջակայքում սանհանգույցների տեղակայման, հուշանվերների վաճառքի կազմակերպման ու համակարգման հարցերը:

Մարզն ունի բավարար ավտոճանապարհային ցանց, այն լիովին ընդգրկում է թե մարզի բոլոր համայնքները, թե պատմամշակութային օջախները: Ընդ որում հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկումը հիմնականում բավարարում են միջազգային չափանիշներին, իսկ մարզային ու համայնքային նշանակության ավտոճանապարհների վիճակը հետզհետե բարելավվում է:

Ունենալով զգալի ներուժ և տուրիզմի տարատեսակների զարգացման հնարավորություններ՝ մարզում միաժամանակ առկա են զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող մի շարք գործոններ, որոնցից կարելի է առանձնացնել.

1) զբոսաշրջային ենթակառուցվածքների անհամաչափ տեղաբաշխումը,

2) մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգի բացակայությունը,

3) մարզի, ինչպես նաև առանձին ճարտարապետական կառույցների մասին գովազդայինտեղեկատվական գրքույկների բացակայությունը, մարզային գիդերի ինստիտուտի բացակայությունը,

4) առանձին պատմամշակութային հուշարձանների անմխիթար վիճակը,

5) մարզային ենթակայության, ինչպես նաև համայնքային ճանապարհների ոչ բավարար վիճակը,

6) միջազգային շուկայում զբոսաշրջային ծառայությունների մատուցման ոչ մրցունակ լինելը,

7) միջազգային հանրությանը Հայաստանը որպես զբոսաշրջության համար բարենպաստ, գրավիչ և ապահով երկիր համակողմանիորեն չներկայացնելու հանգամանքը,

8) զբոսաշրջության բնագավառում ներդրումային ծրագրերի ոչ բավարար մակարդակը։

2.10. Զբոսաշրջություն

Ագրարային զբոսաշրջությունը ստեղծում է ծառայությունների ոլորտի աշխատատեղեր: Ուստի, ագրարային զբոսաշրջության զարգացումը կարելի է դիտարկել որպես դեգրադացվող, լճացող գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման խթան: Ագրարային զբոսաշրջության ծառայությունների ծրագիրը սովորաբար իր մեջ ներառում է.

– գիշերակաց հարմարավետ մասնավոր առանձնատներում;
– էկոլոգիապես մաքուր սննդամթերք;
– ծանոթացում տարածքի պատմությանը;
– հավաքչություն շրջակա միջավայրում (սունկ, հատապտուղ, վայրի մրգեր և այլն);
– մանակցություն ժողովրդական, ազգային ծեսերին;
– էքսկուրսիաներ:

Ռեսուրսների գնահատական

Ագրոտուրիզմի գլխավոր զբոսաշրջային ռեսուրսը հանդիսանում են.

- հողը,
- ընտանի կենդանիները,
- գյուղատնտեսական ռեսուրսները
- գյուղական բնակավայրերը:

Ագրոտուրիզմը զբոսաշրջության/ժամանակավոր հանգստի տեսակ է, որը կազմակերպվում է հիմնականում գյուղական վայրերում՝ գեղագիտական, ճանաչողական և առողջարարական նպատակներով, որի ժամանակ գիշերակացն իրականացվում է գյուղական բնակչության բնակարաններում, առանձնատներում և օգտվում տվյալ վայրի զբոսաշրջային ռեսուրսներից:

Հայաստանի Հանրապետության տարածքը հարուստ է ինչպես գյուղական ինքնատիպ բնակավայրերով, այնպես էլ պատմա-հնագիտական հուշարձաններով, տեսարժան

վայրերով, բնության անկրկնելի տեսարաններով, ռելիեֆային բարդ ու կլիմայական պայմաններով: Այս բոլորը նախադրյալներ են տարածաշրջանում գրեթե ամենուր զարգացնել ագրոտուրիզմը:

Մարզի ագրոտուրիզմի զարգացման համար առանձնացվում են մի շարք գործոններ.

- տնտեսական,
- էթնիկ,
- բնաաշխարհագրական,
- պատմամշակութային:

Ագրոզբոսաշրջային առումով մեծ հետաքրքրություն կարող են առաջացնել գյուղմթերքների արտադրության պրոցեսը.

- Կաթնամթերքի (կարագ, կաթնաշոռ և այլն)
- Պանրի:
- Մեղվաբուծությունը:

Մարզի տնտեսության մեջ վերջին տարիներին ձևավորվել են նոր ճյուղեր, ինչպիսիք են ճագարաբուծությունը և ջայլամաբուծությունը[7]:

<u>Կենսաբազմազանություն.</u> Մարզի բուսական և կենդանական աշխարհը հիմնականում լեռնային տափաստանային և մարգագետիններին բնորոշ տեսակներն են: Հանդիպում են՝ բուրավետ օշինդր, բարձր լեռնային երիցուկ, օշեյի ջուխտակ, գայլաթաթ և այլն, որոնք գրանցված են Կարմիր գրքում: Որոշ վայրերում հանդիպում են կաղնու ոչ ընդարձակ (Բյուրականի մոտ), փշատերևների (Ապարանից հյուսիս, Արագածի լանջերին) անտառակներ[8]:

2.11. Բնակչություն և ժողովրդագրության վերլուծություն

<u>Կոտայքի մարզի բնակչության սեռատարիքային կազմը</u>



[7] Գրիգորյան [illegible] թյուն, Երևան, 2016թ,

[8] Մարտիրոսյան Լ.Մ., Ռեկրեացիոն աշխարհագրություն, Վանաձոր, 2014թ.,

Բնակչության թվի և միջին խտության ցուցանիշներով Կոտայքը Հայաստանում զիջում է միայն Արմավիրի և Արարատի մարզերին, ինչպես նաև մայրաքաղաքային ինքնավարություն և մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքին: Կոտայքը մարդու բնակության հնագույն վայրերից է: Առաջին մարդիկ այստեղ հաստատվել են դեռևս վաղ ժամանակներում՝ հազարամյակներ առաջ:

Մարզի բնակչության ներկայիս պատկերը ձևավորվել է բնակչության մեխանիկական աճի ազդեցությամբ:

Կոտայքի մարզի քաղաքային բնակչության կամ ուրբանիզացման մակարդակը նորմայից բարձր է՝ 54 %: Այս ցուցանիշով Կոտայքի մարզը Հայաստանում զիջում է Սյունիքի, Լոռու և Շիրակի մարզերին:

Կոտայքի մարզի կազմի մեջ մտնող գյուղական բնակավայրերը մարդաշատ են: Մարզի 62 գյուղերից 11-ն ունի ավելի քան 3000 բնակիչ: Առավել խոշոր և հայտնի գյուղերից են Գառնի (7,0 հազար մարդ), Նոր Գեղի (6,0 հազար մարդ), Քասախ (5,6 հազար մարդ) և Զովունի (5,5 հազար մարդ) գյուղերը:

Համայնքի բնակչության թվաքանակը (առկա և հեռանկարային)

ՀՀ	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ	Հեռանկարային (15 տարի)
1	2	3	4
Ջրվեժ համայնք			
1	Ջրվեժ	6 206	7447[9]
2	Զովք	846	1015
3	Ձորաղբյուր	2 446	2935[3]

Համայնքի բնակչության և տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2023թ.)[10]

Հ/Հ	Բնակավայրի անվանումը	Վարչական տարածք հա	Մշտական բնակչության թվաքանակը	Առկա բնակչության թվաքանակը	Մշտական տնտեսությունների թվաքանակը	Առկա տնտեսություն-ների թվաքանակը
1	**Ջրվեժ**	**1851.02**	**7465**	**7400**	**1724**	**1460**
2	**Ձորաղբյուր**	**2692.23**	**2655**	**2736**	**775**	**770**
3	**Զովք**	**947.23**	**1033**	**804**	**285**	**259**
	Ընդամենը	**5490.66**	**11153**	**10940**	**2784**	**2489**

Աղյուսակ 2. Բնակչության տարիքային կազմի ցուցանիշները (01.01.2023թ.)

Հ/Հ	Ցուցանիշը	Ջրվեժ բնակավայր	Ձորաղբյուր բնակավայր	Զովք բնակավայր

[9] *Մշտական բնակչությանը զուգահեռ առկա է միտում՝ ժամանակավոր բնակչության աճի (հաշվի առնելով մայրաքաղաքի բարենպաստ մատչելիությամբ պայմանավորված բեռնաթափման միտումները*

[10] *ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի 2023-2027 թթ. զարգացման հնգամյա ծրագիր*

1	Բնակչության թիվը, այդ թվում՝	7465	2567	1035
	Տղամարդիկ	3754	1290	540
	Կանայք	3711	1277	495
	0–17 տարեկան	1459	437	208
	18–62 տարեկան	4611	1679	680
	63–ից բարձր	1395	451	147

2.12. Համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի նկարագրություն

Նախկինում համայնքում գործող արտադրական խոշոր ձեռնարկությունները, որոնք ապահովում էին աշխատատեղերի գերակշիռ մասը, այժմ մասնավոր են և գործունեություն չեն ծավալում: Ներկայումս համայնքում գործում են 122 ձեռնարկություններ և 6 գործարաններ, որոնք հիմնականում զբաղվում են մրգերի և բանջարեղենի պահածոների, մետաղապլաստե դռների ու պատուհանների, երշիկի, քաղցրավենիքի պատրաստման արտադրական գործունեությամբ: Արտադրանքի սպառման հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է: Համայնքում գյուղատնտեսական արտադրանքի ծավալները մեծ չեն, որի գլխավոր պատճառը ոռոգման համակարգի խնդիրներն են: Համայնքում մասնավոր անձանց կողմից գցված է 25 հա նորատունկ այգի: Մրգի որոշ մասն արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն, իսկ մյուս մասը՝ սպառվում Հաաստանում:

Ջրվեժ գյուղում գործում են՝ Ջրվեժ բնակավայրում «Ջրվեժի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ը, «Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» ԱԿՈՒՀ ՀՈԱԿ–ը «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ը, «Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը և «Ռազմիկ Կարապետյանի անվան մենապայքարային մարզաձևերի օլեմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ–ը:

Աղյուսակ 4. Ջրվեժ բնակավայրի կրթական հաստատությունների ցուցանիշներ

Հ/Հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
1	«Ջրվեժ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	131	1306
2	«Ջրվեժի երաժշտական դպրոց» ԱԿՈՒՀ ՀՈԱԿ	18	126
3	«Ռազմիկ Կարապետյանի անվան մենապայքարային մարզաձևերի օլեմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ	21	230
4	«Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ	39	190

Ջրվեժ բնակավայրին սպասարկող միակ առողջապահական հաստատությունը «Ջրվեժի Բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ–ն է, որն ունի 11 աշխատող և սպասարկում է 5606 քաղաքացիների, ինչպես նաև բնակչությանը հասանելի են մայրաքաղաքի առողջապահական կենտրոնների ծառայությունները: Բնակչությունը անվճար օգտվում է Աբովյանի շտապ օգնության ծառայությունից:

Համայնքում գործում են արտադրական ՓՄՁ-ներ, ջերմոցային տնտեսություններ: Ջրվեժ բնակավայրում գործող արտադրական ձեռնարկությունների, հանրային սննդի օբյեկտների, խանութների, սպասարկման օբյեկտների թիվը 95-ն է:

Արտադրված արտադրանքի սպառման շուկան Հայաստանի Հանրապետությունն է, կատարվում է նաև արտադրանքի որոշ քանակի արտահանում: Բնակչությունը գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ հիմնականում զբաղվում է սեփական կարիքների համար:

Առևտուր և ծառայություններ

Այս ոլորտում ***<u>Ջրվեժ</u>*** համայնքի վարչական տարածքում առավել աշխույժ գործունեություն է իրականացվում Ջրվեժ բնակավայրում, որտեղ գործում են հանրային սննդի, հանգստի կազմակերպման 34 օբյեկտներ, 28 խանութ: Խանութները հիմնականում ունեն ոչ մեծ չափեր՝ մակերեսը՝ մինչև 20-30 քառ. մ, որտեղ առևտուրն իրականացվում է հիմնականում անհատ ձեռնարկատերերի կողմից: Համայնքում գործում են նաև սպասարկման 8 օբյեկտ, հացի փռեր, հյուրանոցներ, Արեգա պահածոների գործարանը, մսամթերքի արտադրության մեկ ձեռնարկություն, չրերի պատրաստման, եվրոպատուհանների և դռների պատրաստման և այլ ձեռնարկություններ:

<u>Ձորաղբյուր</u> բնակավայրում գործում են անհատ ձեռնարկատեների պատկանող 12 խանութ, «Մեր աշխարհ», ռեստորանային համալիրը, «Ձորաղբյուր» հանրային սննդի օբյեկտը, գործում են հանգստի կազմակերպման գոտիներ: Զովք բնակավայրում գործում է 2 խանութ:

Գործող ձեռնարկություններից են Ջրվեժ բնակավայրում՝

- ✓ «Արեգա» ՍՊԸ՝ զբաղվում է պահածոների արտադրությամբ,
- ✓ «Ջրվեժի մսամթերք» ՍՊԸ՝ զբաղվում է մսամթերքի արտադրությամբ,
- ✓ «Հայր և որդի Միհրանյաններ» ՍՊԸ, զբաղվում է հացի և հրուշակեղենի արտադրությամբ,
- ✓ «Ագրոֆութեր» ՍՊԸ, զբաղվում է անասնակերի վաճառքով
- ✓ «Արտաշես» ՍՊԸ՝ զբաղվում է պահածոների արտադրությամբ,խմելու ջրի ջրալցմամբ
- ✓ «Մավաէքսիմ» ՍՊԸ՝ բանջարեղենի արտադրությամբ,
- ✓ «Աղյուս» ՍՊԸ, զբաղվում է շինարարական աշխատոնքներով
- ✓ «Բելլա Վիտա» ՍՊԸ, զբաղվում է չրերի արտադրությամբ
- ✓ «Սիգնալ» ԲԲԸ, զբաղվում է եվրոպատուհանների և դռների արտադրությամբ

Ձորաղբյուր բնակավայրում գյուղատնտեսության և անասնապահության զարգացման համար անհրաժեշտ են կապիտալ ներդրումներ, քանի որ այն չունի ոռոգման ցանց, նախկին ցանցը ամբողջովին քայքայվել է, հողատարածքների փոքր մասի ոռոգումը կատարվում է հիմնականում ինքնահոս եղանակով, հողերը էռոզացված են:

Համայնքի Ձորաղբյուր բնակավայրում գործում են «Վ.Կարապետյանի անվան Ձորաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ը և «Ձորաղբյուր մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ–ը: Բնակավայրում գործում է առողջության առաջնային պահպանման մեկ կազմակերպություն՝ «Ձորաղբյուրի ամբուլատորիա» ՊՈԱԿ–ը, որն ունի 8 աշխատող, սպասարկում է Ձորաղբյուրի և Զովքի բնակչության թվով 3111 քաղաքացիների:

Աղյուսակ 5. Զորաղբյուր բնակավայրի կրթական հաստատությունների ցուցանիշները

Հ/Հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
1	«Զորաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	33	223
2	«Զորաղբյուրի մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	16	80

Ջովք բնակավայրում բնակչության մեծամասնությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ, որոշ մասն էլ՝ մանր առևտրով: Ջովքում գործում է կաթնամթերքի մշակման «Չանախ» ՍՊԸ-ն, որի շնորհիվ բնակավայրում լուծվում է կաթի իրացման հարցը: Ջովք բնակավայրում գործում է 2 խանութ:

Ջովք բնակավայրում գործում է «Ջովքի Գագիկ Շահինյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ը: Դպրոցն ունի մեկ մասնաշենք, որը հիմնանորոգման կարիք ունի, 2021 թվականին իրականացվել է մասնակի հիմնանորոգում: Դպրոցն ապահովված է ջեռուցման լոկալ համակարգով:

Համայնքի Ջովք բնակավայրում հիմնանորոգվել է Ջովքի նախկին մանկապապարտեզի շենքը: Մանկապարտեզում գործում է երկու խումբ

Աղյուսակ 6. Ջովք համայնքի հանրակրթական հաստատությունների վերաբերյալ ցուցանիշներ

Հ/Հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
1	«Ջովքի Գագիկ Շահինյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	26	108
2	«Ջովքի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ	16	45

2.13. Կրթություն

Կրթության ոլորտում առկա իրավիճակը ըստ համայնքի առանձին բնակավայրերի ներկայացվում է ստորև:

Ջրվեժ

Ջրվեժ գյուղում գործում է միջնակարգ հանրակրթական դպրոց, ուր սովորում են 1306 երեխա: Դպրոցի շենքը վերանորոգվել է 2014-2015 թվականներին:

Դպրոցի շենքում է գործում նաև «Ջրվեժի երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ը և դրադարանը

Ջրվեժ բնակավայրում 2020 թվականին սուբվենցիոն ծրագրով մեկնարկել է մանկապարտեզի շինարարություն: Մանկապարտեզը շահագործման է հանձնվելու 2023 թվականին: Ջրվեժում այն կգործի 8 խմբով, 39 հաստիքով:Մանկապարտեզ կհաճախեն 190 երեխա: Սուբվենցիայի ծրագրով /համայնքի ներդրում՝ 65 %/ ձեռք են բերվել գույք և սարքավորումներ, համայնքը 2022 թվականին հայտ է ներկայացրել նաև Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով անհրաժեշտ մի շարք գույքի ձեռքբերման համար, ինչպես նաև նախատեսվում է համայնքի միջոցներով գույքի ձեռքբերում՝ նախքան նշված ծրագրի հաստատումը: Կիրականացվի նաև մանկապարտեզի տարածքի կանաչապատում:

Գյուղ Ջորաղբյուր

Ջորաղբյուր գյուղում գործում է «Ջորաղբյուրի Վահունի Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը, որտեղ հաճախում է 223 աշակերտ: Դպրոցն ունի վերանորոգման կարիք:

Ջորաղբյուր գյուղում կա մանկապարտեզ՝ «Ջրվեժ համայնքի Ջորաղբյուրի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ը, որն ունի 83 սան: Մանկապարտեզն ունի վերանորոգման կարիք, առկա չէ երաժշտական դահլիճ և մարզադահլիճ:

Գյուղ Ջովք

Ջովքում գործում է «Գագիկ Շահինյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը: Դպրոցում դասավանդում են 16 մանկավարժներ: Դպրոց է հաճախում 108 երեխա: Շենքն ունի կապիտալ վերանորոգման կարիք:

Գյուղն ուներ մանկապարտեզի շենք, որը չէր գործում: 2020 թվականին սուբվենցիոն ծրագրով իրականացվել է մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները: Նախատեսվում է նաև մանկապարտեզի տարածքի կանաչապատում:

Ջովք բնակավայրը գեղեցիկ, կանաչապատ, էկոլոգիապես մաքուր տարածք է երեխաների ամառային հանգստի և նախադպրոցական կրթության կազմակերպման համար:

2.14. Սոցիալական ենթակառուցվածքի հեռանկարային զարգացում

2.14.1. Կրթական հաստատություններ

Հանրակրթության զարգացման գործընթացը բազմակողմանի դարձնելու համար կարևորվում է ներառական կրթությունը հասանելիությունը առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

Մատչելիության տեսանկյունից բոլոր դպրոցներում անհրաժեշտ է հնարավորություններ ստեղծել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար, որպեսզի յուրաքանչյուր երեխա հաճախի իր բնակավայրի դպրոց:

Մարզի 39 դպրոցներում ՄԱԿ-ի Պարենի Համաշխարհային ծրագրի կողմից իրականացվում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը, որում ընդգրկված երեխաների թիվը կազմում է 6800:

Ելնելով մարզի սոցիալ-տնտեսական զարգացման դինամիկայից՝ կարիք կա նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտի արդիականացման և վերազինման: Անհրաժեշտ է այն իրականացնել հատկապես 3 ուղղությամբ՝ գյուղատնտեսական, բժշկական և տեղեկատվական ուղղվածություն ունեցող քոլեջների և ուսումնարանների մասնագիտությունները համապատասխանեցնել և հնարավորինս մոտեցնել աշխատաշուկայի պահանջներին:

2.14.2. Առողջապահության մատչելիություն:

ՀՀ Կոտայքի մարզում գործում են 100 տոկոս պետական բաժնեմասով 35 առողջապահական ընկերություններ՝ 4 բժշկական կենտրոն, 1 ծննդատուն, 1 քաղաքային պոլիկլինիկա, 1 մարզային արյան բանկ, գյուղական բնակավայրերում գործում են 2 առողջության կենտրոն, 26 առողջության առաջնային պահպանման հաստատություններ: Մարզի 5 առողջապահական ընկերություններ ունեն համայնքային ենթակայություն: Մարզում գործում է ՀՀ ԱՆ Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն (ք. Աբովյան) և ՀՀ ԱՆ նևրոզների կլինիկա (գ. Քասախ):

2.14.3. Մշակութային մատչելիություն

Կոտայքի մարզում կան մի շարք մշակութային օջախներ՝ գրադարաններ, թանգարաններ, թատերասրահներ և այլն: Դրանցից 14-ը գտնվում են Կոտայքի մարզի քաղաքներում, իսկ մնացած 51-ը՝ գյուղերում: Եվս մեկը ունի մարզային կարգավիճակ և համարվում է Կոտայքի մարզի գլխավոր գրադարանը: Նշանավոր գրադարաններից է Ծաղկաձոր քաղաքի հանրային գրադարանը: Այն 2013 թվականին ստացել է հանրային կարգավիճակ՝ ի շնորհիվ նորագույն կահավորման, գրական բազայի և տեխնոլոգիական զարգացման:

	այլ հողատեսքեր	հա	399.59	390.645	388.925
	Անտառային հողեր	հա	**503.98**	**503.98**	**503.98**
	Ջրային հողեր	հա	**12.02**	**12.02**	**12.02**
	գետեր	հա		0	0
	ջրամբարներ	հա	1.5	1.5	1.5
	լճեր	հա	6.48	6.48	6.48
	ջրանցքներ	հա	2.81	2.81	2.81
	հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա	1.23	1.23	1.23

Ջովք

Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները				
Հողամասի N գծագրի վրա	**Առկա նպատակային և գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**	**Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Բնակավայրերի հողերից՝			
			Բնակավայրերի հողերի	
ԲԲ-1	բնակելի կառուցապատման	**0.29**	հասարակական կառուցապատման	**0.29**
ԲԲ-2	այլ հողեր	**0.05**	բնակելի կառուցապատման	**0.05**
ԲԲ-3	այլ հողեր	**0.16**	բնակելի կառուցապատման	**0.16**
ԲԲ-4	այլ հողեր	**0.03**	հասարակական կառուցապատման	**0.03**
ԲԲ-5	Ընդհանուր օգտագործման (փողոց) տարածքներ	**0.31**	ընդհանուր օգտագործման (կանաչ)	**0.31**
Ընդհանուր		**0.84**		
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Բնակավայրերի հողերի	
ԳԲ-13	այլ հողատեսքեր	**1.42**	բնակելի կառուցապատման	**1.42**
ԳԲ-14	*վարելահող*	**0.6**	բնակելի կառուցապատման	**0.6**
ԳԲ-8	*վարելահող*	**0.8**	բնակելի կառուցապատման	**0.8**
ԳԲ-21	այլ հողատեսքեր	**0.08**	բնակելի կառուցապատման	**0.08**
ԳԲ-22	*վարելահող*	**1.68**	բնակելի կառուցապատման	**1.68**
ԳԲ-23	*վարելահող*	**0.8**	բնակելի կառուցապատման	**0.8**
ԳԲ-24	*վարելահող*	**0.15**	բնակելի կառուցապատման	**0.15**
ԳԲ-25	*վարելահող*	**0.47**	բնակելի կառուցապատման	**0.47**
ԳԲ-26	*վարելահող*	**0.14**	բնակելի կառուցապատման	**0.14**
ԳԲ-27	*վարելահող*	**0.09**	բնակելի կառուցապատման	**0.09**
ԳԲ-28	*վարելահող*	**0.09**	բնակելի կառուցապատման	**0.09**
ԳԲ-29	*վարելահող*	**0.29**	բնակելի կառուցապատման	**0.29**
ԳԲ-30	այլ հողատեսքեր	**0.57**	բնակելի կառուցապատման	**0.57**
ԳԲ-31	*վարելահող*	**0.65**	բնակելի կառուցապատման	**0.65**
Ընդհանուր		**7.83**		

	Հատուկ պահպանվող տարածքների հողերից՝			
			էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերի	
Հպէ-1	պատմական և մշակութային	**0.73**	կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոց)	**0.73**
Ընդհանուր		**0.73**		
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից՝			
			Բնակավայրերի հողերի	
ԱԲ-1	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	**0.16**	բնակելի կառուցապատման	**0.16**
ԱԲ-3	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	**0.35**	հասարակական կառուցապատման	**0.35**
ԱԲ-4	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	**0.37**	հասարակական կառուցապատման	**0.37**
Ընդհանուր		**0.88**		
	Ջրային հողեր			
ՋԲ-1	լճեր	**0.07**	բնակելի կառուցապատման	**0.07**
Ընդհանուր		**0.07**		
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Բնակավայրերի հողերի	
ԳԲ-1	այլ հողատեսքեր	**0.02**	ընդհանուր օգտագործման (փողոց)	**0.02**
ԳԲ-4	այլ հողատեսքեր	**0.11**	ընդհանուր օգտագործման (փողոց)	**0.11**
ԳԲ-5	այլ հողատեսքեր	**0.08**	ընդհանուր օգտագործման (փողոց)	**0.08**
ԳԲ-6	*վարելահող*	**0.01**	ընդհանուր օգտագործման (փողոց)	**0.01**
ԳԲ-7	այլ հողատեսքեր	**0.11**	բնակելի կառուցապատման	**0.11**
ԳԲ-10	*վարելահող*	**1.2**	բնակելի կառուցապատման	**1.2**
ԳԲ-11	այլ հողատեսքեր	**0.36**	բնակելի կառուցապատման	**0.36**
ԳԲ-12	վարելահող	**0.21**	ընդհանուր օգտագործման (փողոց)	**0.21**
ԳԲ-15	վարելահող	**0.2**	բնակելի կառուցապատման	**0.2**
ԳԲ-16	վարելահող	**0.26**	բնակելի կառուցապատման	**0.26**
ԳԲ-17	վարելահող	**0.61**	բնակելի կառուցապատման	**0.61**
ԳԲ-18	վարելահող	**0.14**	բնակելի կառուցապատման	**0.14**
ԳԲ-19	վարելահող	**0.31**	բնակելի կառուցապատման	**0.31**
ԳԲ-20	վարելահող	**0.32**	բնակելի կառուցապատման	**0.32**
Ընդհանուր		**3.94**		
			Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ	

			արտադրական նշանակության հողերի	
ԳՄ-1	այլ հողատեսքեր	**0.51**	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	**0.51**
Ընդհանուր		**0.51**		
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից՝			
			Բնակավայրերի հողերի	
ԱԲ-2	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	**0.57**	բնակելի կառուցապատման	**0.57**
ԱԲ-5	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	**1.57**	բնակելի կառուցապատման	**1.57**
Ընդհանուր		**2.14**		
Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)				
	Բնակավայրերի հողերից՝			
			Հատուկ պահպանվող տարածքների հողերի	
ԲՀպ-1	ընդհանուր օգտագործման	**0.07**	պատմական և մշակութային	**0.07**
Ընդհանուր		**0.07**		
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Բնակավայրերի հողերի	
ԳԲ-9	այլ հողատեսքեր	**1.92**	բնակելի կառուցապատման	**1.92**
ԳԲ-23	այլ հողատեսքեր	**3.25**	բնակելի կառուցապատման	**3.25**
Ընդհանուր		**5.17**		

	Տեխնիկատնտեսական ցուցանիշներ				
	Ցուցանիշը	**Չափման միավորը**	**Փաստացի**	**Առաջնահերթ**	**Հեռանկարային**
	1	2	3	4	5
	Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	**հա**	**947.23**	**947.23**	**947.23**
	Բնակավայրերի հողեր, որից՝	**հա**	**85.19**	**93.97**	**105.15**
	բնակելի կառուցապատման	հա	72.9	80.88	91.7
	հասարակական կառուցապատման	հա	2.05	3.09	3.09
	խառը կառուցապատման	հա		0	0
	ընդհանուր օգտագործման,	հա	*9.99*	9.68	10.04
	Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա		*0.31*	*0.31*
	այլ տարածքներ	հա		*0*	*0*
	այլ հողեր	հա	0.25	0.01	0.01
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝	**հա**	**19.53**	**18.65**	**17.02**

	արդյունաբերական օբյեկտների	հա		0	0
	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	19.53	18.65	17.02
	պահեստարանների	հա		0	0
	ընդերքի օգտագործման	հա		0	0
	էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	**հա**	**2.35**	**3.08**	**3.08**
	էներգետիկայի	հա	0.01	0.01	0.01
	կապի	հա		0	0
	տրանսպորտի	հա	2.34	2.34	2.34
	կոմունալ ենթակառուցվածքների	հա		0.73	0.73
	Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	**հա**	**10.27**	**9.54**	**9.61**
	բնապահպանական	հա		0	0
	հանգստի համար նախատեսված	հա		0	0
	պատմական և մշակութային	հա	10.27	9.54	9.61
	Հատուկ նշանակության հողեր	**հա**		**0**	**0**
	Գյուղատնտեսական նշանակության հողեր,	հա	**601.71**	**593.88**	**584.26**
	վարելահող	հա	225.9	220.14	216.88
	բազմամյա տնկարկներ	հա	*1.41*	*1.41*	*1.41*
	խոտհարքներ	հա	81.16	81.16	81.16
	արոտավայր	հա	198.17	198.17	198.17
	այլ հողատեսքեր	հա	95.07	93	86.64
	Անտառային հողեր	հա	**220.15**	**220.15**	**220.15**
	Ջրային հողեր	հա	**8.03**	**7.96**	**7.96**
	գետեր	հա		0	0
	ջրամբարներ	հա		0	0
	լճեր	հա	0.22	0.15	0.15
	ջրանցքներ	հա	7.81	7.81	7.81
	հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա		0	0

Բնակավայրերի տարածքներում ինչպես սույն նախագծի շրջանակում՝ հեռանկարային զարգացման հետ կապված զարգացումներով պայմանավորված նպատակային նշանակությունների փոփոխությունների արդյունքում բացասական ազդեցություններով (արտանետումներ, աղմուկ, վիբրացիա, վիզուալ աղտոտում և այլն) տարածքներից բնակվելու գոտիները սահմանազատելու նպատակով նախատեսվում է իրականացնել մեղմման միջոցառումներ՝ պաշտպանիչ ծառատնկումներ, պաշտպանիչ էկրան և այլն (կախված կոնկրետ իրադրությունից և տարածքային հնարավորություններից)։

Կոտայք -10 միկրոռեգիոնի ընդհանուր տեխնիկատնտեսական ցուցանիշների աղյուսակ

*-Ներկայացված տվյալները համապատասխանում են 2017 թվականի /մինչև համայնքների միավորումը/ նախկին գյուղական համայնքների հողային հաշվեկշիռների տվյալներին:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ		Կոտայք-10. Ընդամենը		Ջրվեժ		Չորաղբյուր		Զովք	
Ցուցանիշը	Չափման միավորը	Փաստացի*	Հեռանկարային	Փաստացի*	Հեռանկարային	Փաստացի*	Հեռանկարային	Փաստացի*	Հեռանկարային
1	2 3	4	5	6	7	8	9	10	11
Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	հա	**5490.48**	**5490.48**	**1851.02**	**1851.02**	**2692.23**	**2692.23**	**947.23**	**947.23**
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	հա	**940.47**	**1199.223**	**329.62**	**488.85**	**525.66**	**605.223**	**85.19**	**105.15**
բնակելի կառուցապատման	հա	690.07	933.688	256.4	401.72	360.77	440.268	72.9	91.7
հասարակական կառուցապատման	հա	51.76	59.93	13.83	15.46	35.88	41.38	2.05	3.09
խառը կառուցապատման	հա	17.86	22.78	1.83	10.58	16.03	12.2		
ընդհանուր օգտագործման,	հա	104.3	114.422	37.36	44.57	56.95	59.812	9.99	10.04
Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա	0	6.44		4.57		1.56		0.31
այլ տարածքներ	հա	0	0						
այլ հողեր	հա	76.48	61.963	20.2	11.95	56.03	50.003	0.25	0.01
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ	**հա**	**77.04**	**68.05**	**38.26**	**36.47**	**19.25**	**14.56**	**19.53**	**17.02**

ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝									
արդյունաբերական օբյեկտների	հա	12.71	12.09	9.72	9	2.99	3.09		
գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	40.65	32.12	4.86	3.63	16.26	11.47	19.53	17.02
պահեստարանների	հա	1.6	1.76	1.6	1.76				
ընդերքի օգտագործման	հա	22.08	22.08	22.08	22.08				
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	**հա**	**37.6**	**69.75**	**22.71**	**50.41**	**12.54**	**16.26**	**2.35**	**3.08**
էներգետիկայի	հա	0.67	4.27	0.41	0.69	0.25	3.57	0.01	0.01
կապի	հա	0.92	0.92	0.92	0.92				
տրանսպորտի	հա	29.24	29.24	14.93	14.93	11.97	11.97	2.34	2.34
կոմունալ ենթակառուցվածքների	հա	6.77	35.32	6.45	33.87	0.32	0.72		0.73
ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	**հա**	**497.43**	**472.46**	**461.37**	**437.06**	**25.79**	**25.79**	**10.27**	**9.61**
բնապահպանական	հա	423.82	423.82	423.82	423.82				
հանգստի համար նախատեսված	հա	0	0						
պատմական և մշակութային	հա	73.61	48.64	37.55	13.24	25.79	25.79	10.27	9.61
ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	**հա**	**7.79**	**7.79**	**0**	**0**	**7.79**	**7.79**	**0**	**0**
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	**հա**	**3181.15**	**2924.277**	**994.24**	**833.41**	**1585.2**	**1506.607**	**601.71**	**584.26**
վարելահող	հա	1352.09	1141.012	295.88	160.4	830.31	763.732	225.9	216.88

բազմամյա տնկարկներ	հա	113.81	102.81	26.44	16.22	85.96	85.18	1.41	1.41
խոտհարքներ	հա	229.55	228.98		0	148.39	147.82	81.16	81.16
արոտավայր	հա	379.4	379.4	60.28	60.28	120.95	120.95	198.17	198.17
այլ հողատեսքեր	հա	1106.3	1072.075	611.64	596.51	399.59	388.925	95.07	86.64
ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐ	**հա**	**724.13**	**724.13**		**0**	**503.98**	**503.98**	**220.15**	**220.15**
ՋՐԱՅԻՆ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	**հա**	**24.87**	**24.8**	**4.82**	**4.82**	**12.02**	**12.02**	**8.03**	**7.96**
գետեր	հա	0	0		0				
ջրամբարներ	հա	1.5	1.5		0	1.5	1.5		
լճեր	հա	9.83	9.76	3.13	3.13	6.48	6.48	0.22	0.15
ջրանցքներ	հա	12.24	12.24	1.62	1.62	2.81	2.81	7.81	7.81
հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա	1.3	1.3	0.07	0.07	1.23	1.23		0

2.23. Ինժեներական ենթակառուցվածքներ

2.23.1. Ջրամատակարարում

Կոտայքի մարզի տարածքը հարուստ է բնական ջրի պաշարներով: Այն ոչ միայն բավարարում, այլև գերազանցում է բնակչության անհրաժեշտ պահանջարկը: Կոտայքի մարզի բնակչության կողմից խմելու ջրի պաշարների տնօրինվող ռեսուրսները ընդհանուր հաշվով կազմում են 1929 լիտր/վրկ: Այն իր հերթին կազմում է ամբողջ խմելու ջրի 30 %-ը: Խմելու ջրի արտաքին ցանցի երկարությունը կազմում է 566.9 կմ:

Այնուամենայնիվ, ջրամատակարարման համակարգերի անկատարության պատճառով բնակչությանը ջրի մատակարարումը շարունակում է մնալ համայնքի առաջնահերթ խնդիրներից մեկը:

Ըստ Վեդիաջուր ՓԲԸ տրամադրած տեղեկատվության՝ Ջրվեժ բնակավայրի ջրամատակարարումն իրականացվում է մեկ ջրաղբյուրից՝ 150-300 մմ տրամագծով խողովակաշարերի միջոցով, որոնց վիճակը գնահատվում է անբավարար: Գործում է մեկ օրվա կարգավորիչ ջրամբար, որի ծավալը կազմում է 7500 մ³: Ջրամատակարարման ցանցը գոտիավորված չէ: Ջրաղբյուրում առկա է քլորակայան:

Ջովք բնակավայրը վերոնշյալ ընկերության կողմից չի սպասարկվում:

Ջորաղբյուր բնակավայրում գոյություն ունեցող ջրագծերը շատ հին են, քայքայված: Այս խնդրի լուծման համար 2019-2021 թթ Հայաստանի Հանրապետության կառավարության, հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների ծրագրով Ջորաղբյուր բնակավայրի Մասիսի և Ազատության փողոցներում կառուցվել է 5525 գծմ խմելու ջրի ջրագիծ: 2022 թվականին ավարտին է հասել Ջորաղբյուր գյուղում ջրագծերի կառուցման ևս մեկ սուբվենցիոն ծրագիր՝ 6919գծմ երկարությամբ ցանցի կառուցմամբ: Ըստ Ջրվեժ համայնքի զարգացման ծրագրի՝ 2023 թվականին նախատեսվում էր Ջրվեժ համայնքի Ջորաղբյուրի «Մեծ աղբյուր» աղբյուրակապերի և «Լճի մոտ» պոմպակայանի վերակառուցում:

Ստորև աղյուսակում տրված է դիտարկվող միկրոռեգիոնում ներառված Ջրվեժ համայնքի խմելու ջրամատակարարման համակարգերի վերաբերյալ տեղեկատվություն.

Միկրոռեգիոն	բնակավայր	խմելու ջրի աղբյուրներ		Սնող ջրատարները				ՕԿՋ-ների					ջրամատակարարման վրկվող ցուցանիշների ընդհանուր տոկոսային արտահայտությունը	ներկայումս վրկվող ջրի ընդհանուր ծավալի %-ը	տեղեկատվություն
		քանակը	հզոր-ը (լ/վ)	երկար-ը կմ	Տրամագիծը մմ	տեխն. վիճակը	մատ-ը(ինչն-ից/ինչ-ի)	քանակը	Ծավալները մ/խ	համապատասխան վակարձանների մեծության	ընդհանուր թվից առկա-ի տոկոսային արտահայտությամբ				
	1	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Կոտայք-10	Ջրվեժ	1	200-220	42.5	150-300	անբավ	հիմնակա նում ինքնահո ս	1	7500	1420	առկա է ջրաղբյու րում	առկա է	առկա չէ	առկա կի կոյուղ ացված	Աէրացիա կոյուղու մաքրման կայան
	Ջովք														
	Ջորաղբյուր	Չնայած, որ ընգրկվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման գոտի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ցանց գոյություն													

Ջրամատակարարման նորմերը և հաշվարկային ջրապահանջը

Բնակավայրերի համար խմելու ջրամատակարարման համակարգը նախատեսվում է՝

- բնակչության խմելու-տնտեսական նպատակով,

- արտադրական այն օբյեկտների համար, որոնց արտադրական կարիքների համար անհրաժեշտ է խմելու որակի ջուր,
- բնակավայրի հակահրդեհային կարիքների բավարարման համար:

Բնակչության խմելու-տնտեսական կարիքների նպատակով պահանջվող ջրաքանակը որոշելու համար որպես ելակետային տվյալ Ջրվեժ բնակավայրի համար ընդունվել է 200 լ/օր/մարդ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն Երևան քաղաքի սպասարկման գոտում է, մյուս: Սույն նորմն ընդգրկում է գյուղական բնակչության խմելու-կենցաղային ջրապահանջը (150 լ/օր /ըստ ՇՆևԿ 2.04.02.84/), ինչպես նաև ընտանի կենդանիների ջրման պահանջարկը՝ բերված մեկ բնակչի հաշվարկով:

Արտադրական կարիքների համար պահանջվող խմելու որակի ջրաքանակն ընդունվում է բնակչության ջրապահանջի 15%-ի չափով:

Հակահրդեհային կարիքների համար պահանջվող ջրաքանակը հաշվարկվում է համաձայն գործող նորմերի պահանջների (ՇՆևԿ 2.04.02.84) :

Ստորև աղյուսակում տրված է Կոտայք-10 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի խմելու-տնտեսական, արտադրական և հակահրդեհային կարիքների համար պահանջվող հաշվարկային ջրապահանջը (ներառյալ նաև հոսակորուստները).

Հաշվարկային ջրապահանջն՝ ըստ բնակավայրերի

N	Բնակավայրի անվանումը	Հեռանկա-րային բնակչութ-յան քանակը	Ջրա-սպառմ ան նորմը	Ջրապահանջը				
				Խմելու-տնտե-սական	Արտադ րական (15 %)	Հակահր-դեհային կարիք-ներ	Հոսակո-րուստ-ներ (30 %)	Ընդամենը մ³ / լ/վրկ
		մարդ	լ/օր	մ³/օր				
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
1	Ջրվեժ	7981	200	1596.1	239.4	216.0	478.8	2530.3
2	Ձորաղբյուր	2860	-//-	572.0	85.8	162.0	171.6	991.4
3	Ձովք	903	-//-	180.6	27.1	81.0	54.2	342.9
Ընդամենը		***11744***		***2348.7***	***352.3***	***459***	***704.6***	***3864.6/***

Ջրամատակարարման նախատեսվող համակարգերը և գոտիները

Ջրամատակարարման համակարգերը նախատեսվում են կենտրոնացված. բնակչության խմելու-կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջներն իրականացվում են մեկ ջրատարով:

Ջրմուղի ցանցում անհրաժեշտ թույլատրելի ճնշում և պահանջվող ջրաքանակ ապահովելու համար բնակավայրերի ջրամատակարարումը նպատակահարմար է իրականացնել գոտիներով՝ նախատեսելով նոր ՕԿՋ-ներ /անհրաժեշտության դեպքում առանձին թաղամասերի համար ճնշման կարագավորիչներ/, որտեղից խմելու ջուրը բնակչությանը կտրվի ինքնահոս եղանակով :

Շուրջօրյա ջրամատակարարում, ինչպես նաև անհրաժեշտ հակահրդեհային ելք ապահովելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր բնակավայրում ունենալ որոշակի ջրապաշար, որն իր մեջ ներառում է ծավալային երեք բաղադրիչ՝ $W_կ$ (կարգավորման), $W_{հհ}$ (հակահրդեհային), $W_{վթ}$ (վթարային): Պահանջվող ընդհանուր ծավալը ($W_{ընդ}$), որն անհրաժեշտ է նախատեսել յուրաքանչյուր բնակավայրում, ձևավորվում է այս երեք

բաղադրիչների հաշվարկային արժեքների գումարից՝ $W_{ընդ}=W_{կ}+W_{հհ}+W_{վթ}$: Ստորև աղյուսակում տրված է միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի խմելու ջրի պահանջվող ծավալների հաշվարկային արժեքները.

Խմելու ջրի պահանջվող ծավալների հաշվարկային արժեքները

N	Բնակավայրը	Կարգավոր-ման ծավալ $W_{կ}$	Հակահրդե-հային կարիքներ $W_{հհ}$	Վթարային ծավալ $W_{վթ}$	Ընդհանուր պահանջվող ծավալ $W_{ընդ}$
		$մ^3$			
1	Ջրվեժ	759.1	216,0	798.1	1773.2
2	Ձորաղբյուր	297.4	162,0	286.0	745.4
3	Ձովք	102.9	81,0	90.3	274.2

Ջրամատակարարման գլխավոր փողոցային ցանցերն անհրաժեշտ է նախատեսել օղակային՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով: Փակուղային կարող են լինել 200 մ-ից պակաս երկարություն և 100 մմ-ից պակաս տրամագիծ ունեցող ջրագծերը:

Խողովակաշարերի թեքություններն ընդունել ոչ պակաս 0.001, հարթ ռելիեֆի պայմաններում՝ 0.0005:

Խմելու որակի ջուր տեղափոխող խողովակների տեղադրման խորությունը պետք է նախատեսել.

- 0.5 մ-ով ավելի, քան գրունտ ներթափանցող զրոյական ջերմաստիճանի հաշվարկային խորությունն է,
- կոյուղու խողովակաշարերից ուղղաձիգ ուղղությամբ 0.4 մ-ով բարձր:

Հաշվի առնելով, որ ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է, օղակային խողովակաշարերի տրամագծերը պետք է նախատեսել 100 մմ-ից ոչ պակաս:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ջրամատակարարման համակարգերի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերջիններիս արդիականացում և վերակառուցում:
- Բնակչությանն անհրաժեշտ քանակի խմելու ջրով բավարարելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել պահանջվող ծավալով օրվա կարգավորիչ.

N	Բնակավայրը	ՕԿՋ-ների Պահանջվող ծավալը ($մ^3$)
1	Ջրվեժ	2000
2	Ձորաղբյուր	800
3	Ձովք	300

- Բոլոր բնակավայրերում խմելու ջրամատակարարման օղակային բաշխիչ ցանցի նախատեսում՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով:
- Ջրամատակարարման բոլոր համակարգերում (գլխամասային կառույցներ, ՕԿՋ-ներ) հերմետիկության ապահովում և սանիտարական 1-ին (30-50 մ շառավղով) գոտու սահմանում:

- Խմելու ջրի վարակազերծման նպատակով ջրամատակարարման գլխամասային կառույցներում քլորակայանների նախատեսում:
- Խմելու ջրի պարբերաբար լաբորատոր հսկողություն:
- Ջրի սպառման նկատմամբ վերահսկողության սահմանում, ջրաչափերի տեղադրում բոլոր սպառողների մոտ:
- Հոսակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված անընդհատ աշխատանքների իրականացում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Ջրային ռեսուրսների պահպանություն, տնտեսում և կայուն օգտագործում:
- ✓ Ջրամատակարարման համակարգի հուսալիություն:
- ✓ Հոսակորուստների կրճատում:
- ✓ Ջրի սպառման արդյունավետության բարձրացում:
- ✓ Բնակչության ջրամատակարարման տևողության ավելացում:
- ✓ Խմելու ջրի բարձր որակի ապահովում և աղտոտման վտանգի նվազում:

2.23.2. Ջրահեռացում

Կենցաղային և արտադրական կոյուղի

Մարզում բացակայում են մաքրման կայանները, որի պատճառով կեղտաջրերը լցվում են գետերը և Աղբյուրակի ջրամբար: Այս խնդիրը ավելի է կարևորվում հաշվի առնելով այն, որ մարզի ջրային ավազանը բավականին հարուստ է՝ Հրազդան, Մարմարիկ, Դալար, Ծաղկաձոր, Մեղրաձոր գետեր, Մարմարիկի ջրամբար:

Դիտարկվող միկրոռեգիոնի բնակավայրերից մասնակի կոյուղացված է Ջրվեժ բնակավայրը, որի կոյուղու հոսքաջրերը հեռացվում են Աէրացիայի կոյուղու մաքրման կայան: Զովք և Ձորաղբյուր բնակավայրերը կոյուղացված չեն:

Գյուղական բնակավայրերի բնակչությունն օգտվում է բակային հորատիպ զուգարաններից :

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով սույն նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր բնակավայրերը: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով:

Ինքնահոս ջրահեռացման խողովակների տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս.

- փողոցային ցանցի համար՝ 200 մմ, թեքությունը՝ 0.007,
- ներթաղամասային կենցաղային և արտադրական կոյուղու ցանցի համար՝ 150 մմ, թեքությունը՝ 0.008:

Կոյուղու հեռացման ենթակա հոսքաջրերը նախատեսվում է մաքրման ենթարկելուց հետո միայն ուղղել բաց ջրահոսքեր:

Այն արտադրական օբյեկտներում, որոնց հեռացման ենթակա հոսքաջրերը կարող են պարունակել կոյուղու համակարգը վնասող կամ դրա աշխատանքը խոչընդոտող նյութեր, նախատեսվում է (նախքան կոյուղու միասնական համակարգին միանալը) իրականացնել կեղտաջրերի նախնական մաքրում:

Ստորև աղյուսակում տրված է Կոտայք-10 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի կոյուղու (կոմունալ-կենցաղային և արտադրական) հեռացման ենթակա հոսքաջրերի հաշվարկային ելքերը:

Կոյուղու հաշվարկային ելքերն ՝ըստ բնակավայրերի

N	Բնակավայրի անվանումը	Հեռանակարային բնակչության քանակը (մարդ)	Հեռացման ենթակա հոսքաջրերի քանակը մ³/օր		
			Կոմունալ-կենցաղային	Արտադրական և	Ընդամենը
1	*2*	*3*	*5*	*7*	*9*
1	Ջրվեժ	7981	1596.1	215.5	1811.6
2	Ջորաղբյուր	2860	572.0	77.2	649.2
3	Ջովք	903	180.6	24.4	205.0
Ընդամենը		***11744***	***2348.7***	***317.1***	***2665.8***

Հեղեղատար կոյուղի

Հեղեղատար կոյուղու նպատակը համայնքի տարածքից անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի կազմակերպված հեռացումն է, ինչը հնարավորություն կստեղծի համայնքում բարեկարգ վիճակ և սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու համար:

Թեև բնակավայրերի տարածքում կա մակերեսային հոսքաջրերի ուղղորդման և հեռացման հնարավորություն, սակայն ջրահեռացման համակարգերի որոշ մասը գտնվում է ոչ բավարար վիճակում (դեֆորմացված է, թեքությունները չեն պահպանված), հետևաբար և վերջիններս լիարժեք չեն կարող ծառայել իրենց նպատակին, ինչի արդյունքում տարածքի հեռացման ենթակա հոսքաջրերը ներծծվում են հողի մեջ կամ անկանոն առուների միջոցով հեռանում են :

Սույն նախագծով կենցաղային կոյուղուն զուգահեռ նախատեսվում է նաև հեղեղատար կոյուղի, ինչը հնարավորություն կտա անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս հավաքել և, նախքան բաց ջրահոսքեր ուղղելը, ենթարկել մաքրման:

Հեղեղատար ցանցերը՝ կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից, կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով: Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/բետոնե, թուջե խողովակներ և ե/բ կիսախողովակներ:

Անձրևաջրերի հեռացման փակ համակարգի դեպքում խողովակաշարերի տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս՝ 250 մմ փողոցային ցանցի համար, 200 մմ՝ ներթաղամասային ցանցի համար:

Անձրևաջրերի հեռացման բաց համակարգի դեպքում երթևեկելի ասֆալտապատ ճանապարհերի ճամփեզրերի, առանձին խրամառուների (կյուվետ) և ջրահեռացման առվակների թեքությունները համապատասխանաբար ընդունել ոչ պակաս 0.003, 0.005 և 0.003:

Սեղանաձև հատվածքով կյուվետների և ջրահեռացման առվակների նվազագույն չափերն անհրաժեշտ է ընդունել՝

- հատակի լայնությունը՝ 0.3 մ,
- խորությունը՝ 0.4 մ:

Անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս կարող է ենթարկվել մաքրման: Անձրևաջրերի մաքրումը կարող է իրականացվել ինչպես առանձին մաքրման սարքավորումներով, այնպես էլ կենցաղային և արտադրական կոյուղու հոսքաջրերի հետ համատեղ՝ նախատեսելով կարգավորող ջրավազաններ՝ որոնք հնարավորություն կստեղծեն մակերեսային հոսքաջրերը կուտակել և միայն կենցաղային կոյուղու ամենաքիչ հոսքի ժամերին մղել կոյուղու համակարգ՝ դրանք մաքրման կայանում լրիվ մաքրման ենթարկելու համար:

Նախագծային առաջարկություններ

- Բնակավայրերի լրիվ կոյուղացում, կոյուղու ինքնահոս համակարգերի նախատեսում :
- Կենցաղային կոյուղուն զուգահեռ հեղեղատար կոյուղու նախատեսում:
- Կոյուղու հոսքաջրերի լրիվ մաքրում և վարակազերծում՝ հաշվի առնելով մակերևութային ջրերն աղտոտումից պաշտպանելու պահանջները: Ըստ ՇՆևԿ 2.04.02-85-ի 6.1 կետի պահանջների՝ կեղտաջրերը պետք է անցնեն լրիվ կենսաբանական մաքրում և ունենան հետևյալ ցուցանիշը՝ ԹԿՊլրիվ=6 մգ/լ:
- Միկրոռեգիոնի բնակավայրերի կոյուղու հոսքաջրերի մաքրման նպատակով առաջարկվում է տեղադրել լոկալ, ժամանակակից տեխնոլոգիաներով, գործարանային արտադրության կոյուղու կենսաբանական մաքրման սարքավորումներ՝ հզորությունները համաձայն համապատասխան հաշվարկների (տես՝ "Ջրահեռացում" բաժնի աղյուսակը):
- Վերոնշյալ սարքավորումները բաղկացած են շղթայաբար իրար միացված տեխնոլոգիական տարրաների ցանցից, որոնցում իրականացվում են կոյուղու հոսքաջրերի փուլային մաքրման գործընթացներ: Կոյուղու հոսքաջրերը հաջորդաբար մուտք գործելով բազմաշերտ պոլիմերային ծածկույթով մետաղից, պոլիէթիլենից կամ պոլիպրոպիլենից պատրաստված տարրաների մեջ, ենթարկվում են կենսաբանական մաքրման (98 %), որից հետո կարող են բաց թողնվել բաց ջրահոսքեր կամ ուղղել ոռոգման համակարգեր՝ խթանելով կրկնակի ջրօգտագործումը:

2.23.3. Ոռոգման համակարգեր

Ըստ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության՝ դիտարկվող միկրոռեգիոնի գրեթե բոլոր բնակավայրերում ոռոգումն իրականացվում է ինքնահոս եղանակով՝ երկաթբետոնե ջրանքների միջոցով, որոնց տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար: Հոսակորուստներն այդ դեպքում կազմում են 40-55 տոկոս:

Ստորև աղյուսակում տրված է դիտարկվող միկրոռեգիոնի ոռոգման աղբյուրների և ոռոգման համակարգերի վերաբերյալ տեխնիկական տվյալները.

Հ	Միկրոռեգիոն (բնակավայրերի անվանումը)	Ոռոգման ջրի աղբյուրները	Ստառակարարման եղանակը	Ստառակարարվող ջրի քանակ (հազ.խմ)	Ոռոգման ցանցի կառուցվածքը	Տեխնիկական վիճակը	Կորուստ % (առանձնահատկության ՕՁԳ)	Փոխարինման ենթակա ցանցերի երկարությունը (կմ)	Ոռոգելի հողերի տարածքը (հա)	Գործող ջրաղբյուրներից ընդհանուր շրջանագործումը (հազ.խմ/տ)	Ոռոգվող տարածքների տեխնիկական վիճակը
1	**Կոտայք-10**										
1	Ջրվեժ	Ողջաբերդի խորքային հոր,Դոտացիոն խորքային հոր,Ջրվեժ գյուղի խորքային հոր,Ազատի 4-րդ աստիճան ջրհան կայան, Կոտայք ջրանցք	մեխանիկական, ինքնահոս	748.04	Մետաղական խողովակաշար	բավարար	38.6	2	494.83	1217.555	
2	Զովք	Դոտացիոն խորքային հոր,Զովքի նոր խորքային հոր	մեխանիկական	222.15	Մետաղական խողովակաշար	բավարար	21.2	1.5	53.9	281.812	
3	Զորաղբյուր	Ազատի 4-րդ աստիճան ջրհան կայան,Կոտայք ջրանցք,Ողջաբերդի ջրհան կայան	մեխանիկական, ինքնահոս	465.45	Մետաղական խողովակաշար	բավարար	21.5	4	85.34	592.8	

Ըստ "Կոտայք" ՋՕԸ տրամադրած տեղեկատվության՝ ոռոգման համակարգերի տեխնիկական վիճակը բարելավելու ուղղությամբ անհրաժեշտ են հետևյալ միջոցառումները.

Ջրվեժ բնակավայրում անհրաժեշտ է կատարել ջրագծի փոխարինում՝ D=100 մմ, 6000 մ խողովակով, D=150 մմ 6000 մ խողովակով:

Զովք բնակավայրում անհրաժեշտ է կատարել ջրագծի փորինում՝ D=220 մմ 1500 մ խողովակով:

Զորաղբյուր բնակավայրում անհրաժեշտ է կատարել ջրագծի փոխարինում՝ D=150 մմ 2000մ խողովակով, D=200 մմ 1500 մ խողովակով:

Տեխնիկական այլ առաջարկություններ

Ոլորտում առկա խնդիրների լուծման համար հատկապես կարևոր է ոռոգման արդյունավետ եղանակների ներդրումը, ինչը կնպաստի ոռոգման ջրի նպատակային օգտագործմանը:



Ոռոգման համակարգերը պետք է բաղկացած լինեն ջրամբարներից (գլխամասային հանգույց), ջրանցքների համակարգից (մայրուղային ջրանցք, առանձին ճյուղավորումներով բաշխիչ ցանց), որոնց միջոցով հնարավոր կլինի կանոնավոր ոռոգում իրականացնել տարբեր եղանակներով (մակերեսային՝ ակոսներով, շերտերով, խողովակաշարերի միջոցով, անձրևացման, կաթիլային):

ԱՌԱՋԱՐԿ - 1

Ոռոգման փակ համակարգ

Նախկինում և այժմ նույնությամբ գործող ոռոգման ջրի բաց տիպի համակարգերի (մետաղական կամ ասբեստե կիսախողովակներ, բետոնե կամ հողային հունով առուներ) գործարկումը դարձել է անարդյունավետ, քանի որ դրանցով տեղափոխվող ջրի 25-30 տոկոսը կորուստներն են կազմում:

Իրավիճակի լիցքաթափման, այն է՝ կանոնավոր ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև համակարգի վերահսկման և ոռոգման ջրի կորուստների դեմն առնելու նպատակով նախատեսվում է ոռոգման «ԲԱՑ» համակարգից անցում կատարել ոռոգման «ՓԱԿ», ջրաչափերով կահավորված ջրամատակարարման համակարգին, ինչը հնարավորություն կտա ապահովել ջրի արդյունավետ օգտագործումն ու հավասարաչափ բաշխումը:

Հաշվի առնելով ոռոգման կանոնավոր բաշխիչ ցանցերի բացակայությունը գրեթե բոլոր համայնքներում, ոռոգման ջրի անհարկի կորուստներից խուսափելու, ինչպես նաև տնամերձ հողատարածքների արդյունավետ ոռոգում ապահովելու նպատակով նպատակահարմար է բնակավայրերի տարածքում նախատեսել փակ խողովակաշարերով ոռոգման ներտնտեսային բաշխիչ ցանց, որոնք կանցնեն փողոցներին զուգահեռ՝ յուրաքանչյուր հողակտորի համար ունենալով մեկ ջրթող կառուցվածք:

ԱՌԱՋԱՐԿ - 2

Կաթիլային ոռոգման համակարգ

Մի շարք երկրներում ոռոգելի երկրագործության մեջ լայնորեն կիրառվող կաթիլային ոռոգումը հիմնված է բույսի արմատային համակարգին ջրի անմիջական մատուցման սկզբունքի վրա, ինչը բացառում է ջրի անհարկի վատնումը:

Կաթիլային ոռոգումը հորինվել է որպես բերքի ավելացման հիմնական միջոց՝ ջրի ոչ մեծ ծախսերի դեպքում: Ոռոգման այս տիպն իդեալական է ցանկացած տիպի բույսերի համար և կիրառվում է ինչպես մասնավոր ֆերմերային տնտեսություններում, այնպես էլ արդյունաբերական մասշտաբներում:

Կաթիլային ոռոգման համակարգի հիմնական տարրը հանդիսանում է կաթիլային



խողովակը, որն իրենից ներկայացնում է բացվածքներով խողովակ:
Կաթիլային ոռոգման խողովակներն, ի տարբերություն սովորական խողովակների, տնտեսող են, ջուրն անմիջապես հասնում է արմատներին, ինչն ապահովում է որակյալ ոռոգում: Ջրի ծախսերը 3-4 անգամ քիչ են, կորուստները՝ երեք անգամ քիչ, իսկ դրա յուրացման արդյունավետությունը՝ կրկնակի անգամ ավելի:

Խողովակները կարող են լինել տարբեր, բայց էությունը մեկն է. կայունացված պոլիէթիլենից խողովակն ընկած է հողի վրա ակոսների երկայնությամբ, և մատակարարում է ջուր կաթոցիկի միջոցով: Փոքր ճնշման դեպքում՝ կաթիլային, մեծի դեպքում՝ միկրոշիթերով:

Կաթիլային ոռոգումը զգալիորեն խթանում է գյուղատնտեսական արտադրության ծավալների մեծացումը: Կաթիլային ոռոգման համակարգը կարող է օգտագործվել.

- Բոլոր տեսակի մրգատու այգիների համար (խաղող, սեխ, ձմերուկ և այլն):
- Բոլոր տեսակի բույսերի (բամբակ, արևաճաղիկ, և այլն) և ծաղիկների աճեցման համար:
- Բոլոր տեսակի բանջարեղենների աճեցման համար (վարունգ, սմբուկ, լոբի, կարտոֆիլ, պղպեղ, և այլն):
- Հատկապես ջերմոցներում, որտեղ կաթիլային համակարգը թույլ կտա իրագործել կայուն, տարիների ընթացքում խնդիր չհարուցող ոռոգում:

Կաթիլային ոռոգման առավելությունները.

- ***Հողի օդափոխություն (քամահարում)***
  Կաթիլային համակարգի միջոցով հնարավոր է հողի խոնավությունը պահել օպտիմալ սահմաններում, ինչը արմատների աճի ողջ շրջանում դրանց համար կապահովի ինտենսիվ շնչելու հնարավորություն՝ անգամ անմիջապես ոռոգումից հետո: Հողում եղած թթվածինը հնարավորություն է տալիս արմատային համակարգին ակտիվորեն գործելու:
- ***Արմատային համակարգ***
  Արմատային համակարգը զարգանում է զգալիորեն ավելի լավ, քան ցանկացած այլ ոռոգման դեպքում՝ կենտրոնանալով կաթոցիկների շրջանում և վերածվելով ակտիվ արմատային թելիկներց բաղկացած առատ զանգվածի:
- ***Սնուցում***
  Լուծված պարարտանյութերը ոռոգման հետ տրվում են անմիջապես արմատային համակարգին, ինչի արդյունքում տեղի է ունենում սնուցող նյութերի ինտենսիվ յուրացում: Սա շոգ տարածաշրջաններում պարարտացման ամենաարդյունավետ եղանակն է:
- ***Բույսերի պահպանություն***

Բույսերի տերևները չեն խոնավանում ինչպես անձևացման ժամանակ: Փոքրանում է հիվանդությունների տարածման հնարավորությունը, քանի որ մանրեասպան միջատները չեն լվացվում տերևներից:

- ***Ագրոտեխնոլոգիա***

  Կաթիլային ոռոգումը թույլ է տալիս հողի մշակում, սրսկում և բերքահավաք իրականացնել ցանկացած ժամանակ՝ անկախ ոռոգումից, քանի որ շարքերի միջև ընկած հողատարածքները սեզոնի ողջ ընթացքում չոր են մնում:

Որոշ երկրներ հաջողությամբ անցում են կատարել կաթիլային ոռոգման համակարգին, որը թեև զգալիորեն տնտեսում է ջրային ռեսուրսները, սակայն դեռևս բավականին ծախսատար միջոց է:

Հաշվի առնելով, որ երկրի պարենային անվտանգության երաշխավորը՝ գյուղատնտեսությունն է, ուստի ոռոգման համակարգը կարգավորելը պետության կայացման լուրջ նախադրյալ է, հետևաբար և կաթիլային ոռոգման համակարգի նախատեսումը ևս արդարացված է:

2.23.4. Էներգամատակարարում

2.23.4.1. Էլեկտրամատակարարում

Ըստ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տեղեկատվության՝ դիտարկվող տարածքով անցնում են «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի տնօրինության տակ գտնվող բարձ լարման հետևյալ էլեկտրահաղորդման գծերը.

ՀՀ Կոտայքի մարզի վարչական տարածքով անցնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ տնօրինության 110÷400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի վերաբերյալ

հ/հ	Օդային գծի կարգավարական անվանումը	Լարումը /կՎ/	Ընդհանուր երկնը	որից Կոտայքի մարզում		
			/կմ/	/կմ/	ՈՒղեգծի սկիզբը	ՈՒղեգծի վերջը
1	«Կենտրոն»	220	56,3	56,2	Կոտայքի մ-զ, «Հրազդան» ՋԷԿ	ք. Երևան, Դավթաշեն թ-ս, «Զովունի» ԵԿ
2	«ՊՇԷԿ-1»	220	11,70	11,7	Կոտայքի մ-զ, «Հրազդան» ՋԷԿ	«Հրազդան» ՀԷԿ
3	ՊՇԷԿ-2	220	11,94	11,94	Կոտայքի մ-զ, «Հրազդան» ՋԷԿ	«Հրազդան» ՀԷԿ
4	«Նորադուզ»	220	42,38	7,02	Կոտայքի մ-զ, «Հրազդան» ՋԷԿ	Գեղարքունիքի մ-զ, ք. Գավառ, «Կամո» ԵԿ
5	«Սևան»	110	19,40	7,7	Կոտայքի մ-զ, «Հրազդան» ՀԷԿ	Գեղարքունիքի մ-զ, ք. Սևան, «Սևան» ՀԷԿ
6	«Գագարին	110	11,20	7,7	Կոտայքի մ-զ, «Հրազդան» ՀԷԿ	Գեղարքունիքի մ-զ, ք. Գագարին, «Գագարին» ԵԿ
7	«Գոշ»	110	74,42	8,8	Կոտայքի մ-զ, «Հրազդան» ՋԷԿ	Տավուշի մ-զ, գ. Աչաջուրի տարածք
8	«Ջրաբեր-1» եվ «Ջրաբեր-2» (լարման տակ չեն)	110	4,2	4,2	Կոտայքի մ-զ, գ. Բյուրեղավանի տարածք	Կոտայքի մ-զ, գ. Բյուրեղավանի տարածք
9	«Երևան»	220	53,2	47,8	Ք. Երևան, «Շահումյան 2» ԵԿ	«Հրազդան» ՀԷԿ
10	«Սեբաստիա»	220	19,64	14,24	Ք. Երևան, «Շահումյան 2» ԵԿ	ք. Երևան, Դավթաշեն թ-ս, «Զովունի» ԵԿ
11	«Մարաշ»	220	62,5	60,65	ք. Երևան, «Մարաշ» ԵԿ	Կոտայքի մ-զ, «Հրազդան» ՋԷԿ
12	«Բջնի»	110	47,42	21,8	Արմավիրի մ-զ, ՀԱԷԿ	Կոտայքի մ-զ, գ. Արգել, «Արգել» ՀԷԿ
13	«Գուգարք-1»	220	49,97	22,5	Լոռու մ-զ, ք. Վանաձոր, «Վանաձոր-2» ԵԿ	Կոտայքի մ-զ, «Հրազդան» ՋԷԿ
14	«Գուգարք-2»	220	43,12	16,5	Լոռու մ-զ, ք. Վանաձոր, «Վանաձոր-2» ԵԿ	Կոտայքի մ-զ, «Հրազդան» ՋԷԿ
15	«Դդմաշեն-Այրում» /նախատեսված է կառուցել «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց-1» վարկային ծրագրի շրջանակներում /	400	95	1,8	Գեղարքունիքի մ-զ, գ. Դդմաշեն	Լոռու մ-զ, գ. Այրումի տարածք



Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Գեղամա» մասնաճյուղի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում: Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին:

Միկրոռեգիոնի բնակավայրերի էլեկտրամատակարարումն իրականացվում է տրանսֆորմատորային ենթակայանների միջոցով:

Էլեկտրահաղորդման օդային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար:

Բնակավայրերի որոշ հատվածներում իրականացվել են էլեկտրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ: Էլեկտրական հաղորդալարերի հին, փայտե հենասյուները փոխարինվել են նոր, մետաղական կամ բետոնե սյուներով, գլխավոր փողոցներում անցկացվել է արտաքին լուսավորություն:

Ստորև աղյուսակում տրված է դիտարկվող միկրոռեգիոնի բնակավայրերի համար էլեկտրաէներգիայի սնուցման աղբյուր հանդիսացող ենթակայանների, ինչպես նաև բնակավայրերում տեղակայված տրանսֆորմատորային ենթակայանների մասին տեղեկատվությունը ՝ ըստ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տեղեկատվության.

«Կոտայք 10» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

ԿՈՏԱՅՔ-10 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆ											
հ/հ	Բնակավայր	Գլխավոր սնուցող ենթակայաններ				10/0.4 ենթակայան			Էլ.էներգիայի տարեկան գումարային ծախսը, այդ թվում		1 մարդու փաստացի տարեկան սպառումը
		Անվանումը	Լարումը կՎ	Հզորությունը կՎԱ	Տեղակայման վայրը	Առկա տրանսֆ-ի քանակը	Հզորությունը կՎԱ	Տեղակայման վայրը	Կոմունալ կենցաղային	Արտա-դրական	
1	Ջրվեժ	*՛՛Ջրվեժ՛՛ 110/35/10* *՛՛Ամառանոց՛՛35/10*	10 10		*Գ. Ջրվեժ* *գ.Ձորաղբյուր-Ամառանոցներ*	53 45	20050 13187	*Գ.Ջրվեժ* *Գ Ջրվեժ*	14014127	10048639	3027
2	Զովք	*՛՛Ձորաղբյուր՛՛35/10*	10		*Գ.Ձորաղբյուր*	8	2750	Գ. Զովք	590500	123300	1817
3	Ձորաղբյուր	*՛՛Ձորաղբյուր՛՛35/10* *՛՛Ամառանոց՛՛35/10*	10 10		*Գ. Ձորաղբյուր* *գ.Ձորաղբյուր-Ամառանոցներ*	52 11	12997 2023	*Գ. Ձորաղբյուր* *գ.Ձորաղբյուր-Ամառանոցներ*	6711784	1154569	1954

Էլեկտրական բեռնվածքների հաշվարկը

Հաշվարկային առավելագույն հզորությունը հաշված է որպես հզորությունների գումար՝

- կոմունալ-կենցաղային պահանջներ, հասարակական, կուլտուր-կենցաղային շինություններ, հանգստի օբյեկտներ, արտաքին լուսավորություն,
- արտադրական օբյեկտների բեռնվածություններ:

Առավելագույն հզորությունների քանակի որոշման համար հաշվարկները կատարվել են ըստ հեռանկարային բնակչության քանակի:

Համաձայն ՇՆևԿ 2.07.01-89-ի՝ գյուղական բնակչության համար՝ մեկ մարդու էլեկտրաէներգիայի սպառման տարեկան խոշորացված ցուցանիշը ընդունված է 950 կվտ.ժամ, տարվա օգտագործվող ժամերի քանակը՝ 4100 ժամ:

Ստորև աղյուսակում տրված է բնակավայրերի էլեկտրամատակարարման հեռանկարային կարիքները բավարարելու համար պահանջվող առավելագույն հզորությունների, ինչպես նաև այդ բնակավայրերում ներկայումս առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները.

Բնակավայրերի հեռանկարային պահանջվող առավելագույն հզորություններն ու առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները.

N	Բնակավայրերի անվանումները	Հեռանկարային Բնակչության քանակը (մարդ)	Մեկ մարդու համար պահանջվող էլ. Էներգիայի քանակը (կվտ.ժամ/տարի)	Էլ. Էներգիայի գումարային ծախսը (հազ. Կվտ.ժամ/տարի)			Տարվա օգտագործվող ժամերի քանակը (ժամ)	Պահանջվող առավելագույն հզորությունը (կՎԱ)	Առկա Տրանսֆորմատորային ընդհանուր հզորությունը (կՎԱ)
				Բնակչ	Արտադր 15 %	Կորուստ 30 %			
1	Ջրվեժ	7981	950	7581,5	1137,2	2274,4	4100	2681,3	33237
2	Ձորաղբյուր	2860	-//-	2717,0	407,6	815,1	-//-	960,9	2750
3	Ձովք	903	-//-	857,9	128,7	257,4	-//-	303,4	15020
Ընդամենը		***11744***		11156.4	1673.5	3346.9		3945.6	

Տրանսֆորմատորային հզորությունների առկա և պահանջվող առավելագույն հզորությունների համեմատությունից երևում է, որ միկրոռեգիոնի բոլոր բնակավայրերն ունեն բավարար պահուստային հզորություններ՝ բնակավայրի հեռանկարային պահանջարկը բավարարելու համար:

Շահագործվող ՀԷԿ-երը

Հիդրոէներգետիկան համարվում է վերականգնվող էներգետիկայի կարևորագույն ճյուղ, և այն ողջ աշխարհում համարվում է այլընտրանքային և էկոլոգիապես մաքուր:

Ստորև աղյուսակում տրված է Կոտայքի մարզում շահագործվող հիդրոէլեկտրակայանների տվյալները.

N	Անվանումը	Դրվածքային հզորությունը	Հաշ. ճնշումը

1	“Կոտ Ջր” փոքր ՀԷԿ	7x315=2605	62
2	“Գառնի” փոքր ՀԷԿ	2x630+1x315=1575	151.0
3	“Սեվան” ՀԷԿ	2x100=200	90.0
4	“Նարեկ” փոքր ՀԷԿ	2x600=1200	100.0
5	“Գառնի-1” ՀԷԿ	1x200+1x315=515	80.0/48.0
6	“Թեժ” փոքր ՀԷԿ	2x1200=2400	265.9
7	“Գողթ-1” փոքր ՀԷԿ	2x1250=1500	245.6
8	“Գողթ-2” փոքր ՀԷԿ	2x1600+1x950=4150	365.5
9	“Յոթաղբյուր-4” փոքր ՀԷԿ	1x417=417	237.7
10	“Յոթաղբյուր-5” փոքր ՀԷԿ	1x319=319	211.8
11	“Յոթաղբյուր-3” փոքր ՀԷԿ	1x605=605	272.8
12	“Յոթաղբյուր-2” փոքր ՀԷԿ	1x573=573	241.1
13	“Արջաձոր”փոքր ՀԷԿ	1x450+1x350=800	114.1
14	“Յոթաղբյուր-1” փոքր ՀԷԿ	1x547=547	230.2
15	“Գնդասար” փոքր ՀԷԿ	2x500=1000	103.6
16	“Ազատ”	1.663	52.0
17	“Աբաջուր”	946	77.3

ՀՀ ՓՀԷԿ-երի գործունեության արդյունքում արդեն իսկ ի հայտ են եկել մի շարք խնդիրներ և խոչընդոտներ, որոնք մեծացնում են ՓՀԷԿ-երի ռիսկայնությունը բնապահպանական տեսանկյունից: ՓՀԷԿ-եր կառուցելիս գետերի էկոլոգիային հսկայական վնաս է հասցվում, քանի որ դրանք խախտում են գետերի ջրային և ջերմային ռեժիմները, խոչընդոտում են ձկների բազմացմանը, նպաստում են գետերի ծանծաղացմանը:

Ջրային համակարգի օգտագործման թույլտվությունը տրվում է դիմողի հայտի հիման վրա: Հայտը կարող է մերժվել, եթե դրանով պահանջվող ջրային համակարգի օգտագործումը և կառավարումը՝

1) չի համապատասխանում սույն օրենսգրքին, ջրօգտագործման պլաններին և ռազմավարությանը, ինչպես նաև դրանց առնչվող իրավական այլ ակտերին.

2) ունի վնասակար ազդեցություն ջրային ռեսուրսների որակի կամ քանակի վրա:

Համաձայն ՀՀ Ջրային օրենսգրքի 30.1-րդ հոդվածի 2-րդ մասի, նույն հոդվածի 1-ին մասով սահմանված մերժման հիմքերից բացի, նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մերժվում են նաև, եթե.

1) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը նախատեսվում է այն գետերի վրա՝

ա. որոնցում առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր,

բ. որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է,

գ.որոնց վրա կան ջրաչափական դիտակետեր և նախատեսվող ջրառի և ջրահեռացման նիշերը շրջանցում են ջրաչափական դիտակետերը:

2) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումն իրականացվում է՝

ա. Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում,

բ. բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում,

գ. բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում,

դ. ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներում,

ե. գետերի հոսքի ձևավորման տարածքներում,

զ. գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ,

է. անտառային հողերում կամ տարածքներում, որտեղ շինարարական տարածքին մոտեցող ճանապարհներ կառուցելու նպատակով առաջանում է ծառեր հատելու անհրաժեշտություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 20-րդ հոդվածով նախատեսված պետական անտառային հողերում աշխատանքների իրականացման համաձայնության առկայության դեպքերի:

Որպես օրինագծի հիմնավորում նշված է. «Վերջին տարիներին փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացմանը զուգընթաց փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման ընթացքում առաջացել են էկոլոգիական ու սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում: Փոքր հիդրոէլեկտրակայանների շինարարությունը էական վնաս է հասցնում բնությանը, իսկ փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացմանը զուգընթաց նկատվում է կենսաբազմազանության կորուստ, վտանգվում են Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակները, գետերը ծանրաբեռնվում են դերիվացիոն խողովակներով և հայտնվում ճգնաժամային վիճակում»:

2.23.4.2. Գազամատակարարում

Կոտայք-10 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի գազամատակարարումն իրականացվում է “Գազպրոմարմենիա” ընկերության “Աբովյան” ԳԳՄ-ի կողմից:

Ջրվեժ և Ձորաղբյուր բնակավայրերի տարածքով անցնում են Ջրաբեր-ԳԲԿ-2 (Dպ=700 մմ), Ղազախ-Երևան (Dպ=700 մմ, Երևանի շուրջ օղակաձև գազատար (Dպ=1200 մմ, կողմնատար գազատար-Ջրվեժ ԳԲԿ (Dպ=300 մմ և ԳԲԿ Ջրվեժ գազատարները, որոնց ուղեգծերը գրաֆիկական նյութում արտահայտված չեն:

ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք-10 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման մեջ ընդգրկված տարածքների վերաբերյալ տեղեկատվություն

Համայնք	Բնակավայրը	Սնուցման աղբյուր հանդիսացող գազատարի տվյալները		
		Անվանումը	Տրամագիծը $D_ш$ (մմ)	Տեղակայման վայրը
1	2	3	4	5
Կոտայք-10	Ջովք	-	-	-
	Ջրվեժ	Ջրաբեր-ԳԲԿ-2	700	նշված չէ
		Ղազախ-Երևան	700	նշված չէ
		Երևանի շուրջ օղակաձև գազատար	1200	նշված չէ
		Կողմնատար-գազատար ԳԲԿ Ջրվեժ	300	նշված չէ
		ԳԲԿ Ջրվեժ	-	նշված չէ
	Ձորաղբյուր	Ջրաբեր-ԳԲԿ-2	700	նշված չէ
		Ղազախ-Երևան	700	նշված չէ
		Երևանի շուրջ օղակաձև գազատար	1200	նշված չէ
		Կողմնատար-գազատար ԳԲԿ Երևան-1	700	նշված չէ

Ըստ “Գազպրոմարմենիա” ՓԲԸ-ի տրամադրված տեղեկատվության՝ Կոտայք-10 միկրոռեգիոնում ներառված Ջրվեժ, Ձորաղբյուր և Ջովք բնակավայրերը գազաֆիկացված են:

Բնակավայրերի տարածքում գազամատակարարումն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ միջին և ցածր:

Ստորև աղյուսակում տրված է օպերատիվ տեղեկություններ գազամատակարարման ցանցի վերաբերյալ.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

"Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ կողմից շահագործվող ԳԲ ցանցի գազատարների վերաբերյալ

01.07.2022թ. դրությամբ

	ՀՀ մարզի, ԳԳ մասնաճյուղի և բնակավայրի անվանումը	Ընդամենը	Գազատարների երկարությունն ըստ ճնշումների, կմ	
			բ/ճ	մ/ճ
1	2	3	4	5
23	գ. Զովք	4.873	0.000	4.873
24	գ. Ջորաղբյուր	7.263	0.000	7.263
25	Ջրվեժի և Ջորաղբ. ամառ.	5.752	0.000	5.752
26	գ. Ջրվեժ	3.208	0.000	3.208

Ջերմամատակարարում

Ներկայում դիտարկվող տարածաշրջանում որևէ գործող կենտրոնական կաթսայատուն չկա: Բնակավայրերի վարչական, հասարակական, ուսումնական, առողջապահական և արտադրական օբյեկտների, ինչպես նաև անհատական շենքերի ջերմամատակարարումն իրականացվում է ինչպես գազի վառարանների, այնպես էլ էլեկտրական տաքացուցիչների միջոցով:

Դիտարկվող տարածաշրջանի գյուղական բնակավայրերի բնակչության որոշ հատված բնակելի տների ջեռուցման նպատակով օգտագործում է նաև փայտի վառարաններ:

Գազի հեռանկարային ծախսը

Գազի ընդհանուր պահանջարկի նախնական հաշվարկները կատարելիս հաշվի է առնված բնական գազով ապահովել.

- Բոլոր բնակելի և հասարակական նշանակության շենքերի (կրթական, առողջապահական, մշակութային, վարչական) ջեռուցման համար անհրաժեշտ կարիքների բավարարումը:
- Բնակչության տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար անհրաժեշտ պահանջարկը:
- Արտադրական ձեռնարկությունների ջեռուցման, օդափոխության և տեխնոլոգիական կարիքների համար պահանջարկը:

Ստորև աղյուսակում տրված է բնակավայրերի գազի հեռանկարային տարեկան պահանջարկի խոշորացված հաշվարկների (ըստ ՇՆՁ IV-12.101-04) ցուցանիշները.

Գազի հեռանկարային տարեկան պահանջարկի
խոշորացված ցուցանիշներն ըստ բնակավայրերի[12]

N	Բնակավայրերը	Հեռանկարային	Գազի հեռանկարային

[12] *Խոշորացված ցուցանիշներում ներառված են կոմունալ-կենցաղային, հասարակական և այլ կազմակերպությունների, արտադրական ձեռնարկությունների գազասպառման պահանջը*

		բնակչությունը	տարեկան պահանջարկը հազ. մ^3
1	Ջրվեժ	7981	1755,7
2	Զորաղբյուր	2860	629,2
3	Զովք	903	198,7
Ընդամենը			2583,6

Ըստ կատարված մոտավոր հաշվարկների, Կոտայք-10 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի գազի հեռանկարային տարեկան ընդհանուր պահանջարկը կկազմի մոտ 2.6 մլն մ^3:

Նախագծային առաջարկություններ

- Էլեկտրական համակարգի արդիականացում, վերազինում ժամանակակից պահանջներին համապատասխան:
- Էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում ապահովելու համար անցում երկտրանսֆորմատորային ենթակայանների:
- Համակարգերի համապատասխանեցում անվտանգության տեխնիկայի պահանջներին:
- Հին փայտյա հենասյուների փոխարինում նոր, բետոնե սյուներով:
- Արտաքին լուսավորության նախատեսում բոլոր փողոցներում:
- Բնակավայրերի տարածքով անցնող բարձր լարման հոսանքալարերի անվտանգության գոտիների առանձնացում, դրանց օգտագործման սահմանափակումների, ռեժիմների սահմանում:
- Բնակավայրերի վարչական, հասարակական, կրթական, առողջապահական, արտադրական օբյեկտների, ինչպես նաև անհատական տների ջեռուցումը նախատեսվում է ապակենտրոնացված ջերմամատակարարման համակարգերով՝ հիմնականում փոքր հզորության անհատական գազի կաթսաներով կամ վառարաններով: Տաք ջրի ստացումը՝ գազային ջրատաքացուցիչների, սննդի պատրաստումը՝ գազօջախների միջոցով:
- Գազի արդյունավետ և անվտանգ շահագործման նպատակով անհրաժեշտ է գազամատակարարման ներտնային ցանցի տեխնիկական վիճակի ապահովում:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակարաններում բնական գազ ունենալը մշտապես մարտահրավեր է հանդիսանալու մարդկանց կյանքի և գույքի անվտանգության ապահովման տեսանկյունից, ջերմամատակարարման և տաք ջրի արտադրության առումով անհատական ջեռուցման կաթսաներին այլընտրանք կարող են հանդիսանալ արևային ջրատաքացուցիչները և էներգիայի սեփական կարիքների արտադրության համար վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերը:

2.23.4.3. Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ

21-րդ դարի սկզբին ողջ աշխարհը գնում է հանքային ռեսուրսների խիստ տնտեսման և միաժամանակ այլընտրանքային էներգիայի աղբյուրների հայտնաբերման ուղղությամբ: Ընդ որում որոշ զարգացած երկրներ վաղուց են անցել այլընտրանքային էներգետիկ աղբյուրների օգտագործման պրակտիկային ոչ միայն տնտեսական, այլև՝ բնապահպանական դրդապատճառներով:

Հայաստանի Հանրապետությում արտադրվող էլեկտրաէներգիայի հիմնական աղբյուրներ համարվում են ատոմակայանը և ջերմային էլեկտրակայանները: Եթե հաշվի առնենք, որ ջերմակայանները աշխատում են գազով, ինչը ներկրվող էներգետիկ ռեսուրս է և կախվածություն է առաջացնում արտաքին աշխարհից, ապա Էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական աղբյուրի՝ ատոմակայանի, աշխատանքի դադարեցման արդյունքում ողջ հանրապետությունը կարող է կանգնել էներգետիկ սովի առջև:

ՀՀ Կոտայքի մարզը մեկն է Հայաստանի Հանրապետության այն մարզերից, որտեղ առկա է վերականգնվող էներգետիկայի բավականին լուրջ պոտենցիալ՝ հիդրոէներգետիկայի, արեգակնային և հողմային էներգիայի, կենսագազի ստացման և օգտագործման ոլորտներում: Վերջին տարիների ընթացքում մարզում լուրջ առաջընթաց է գրանցվել արեգակնային էներգիայի օգտագործման ոլորտում: Միջազգային ծրագրերի աջակցությամբ մարզում իրականացվել են արեգակնային էներգիայի կիրառմամբ ավելի քան երկու տասնյակ տարբեր ծրագրեր՝ արևային էլեկտրակայան, տաք ջրամատակարարման արևային համակարգ, Էներգաարդյունավետ փողոցային լուսավորություն, ջերմոցի ջեռուցման արևային օդատաքացուցիչ համակարգ, չորանոց, կաթիլային ոռոգման համակարգ և այլն:

Հաշվի առնելով մարզի կլիմայական պայմանները՝ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր կարելի է դիտարկել արևային էներգիան:

Արևային ճառագայթմամբ աշխատող համակարգերի անվնաս ու անաղմուկ տեխնոլոգիայի հուսալիությունը, բաղադրամասերի երկարակեցությունը հաստատվել են տարիների ընթացքում և սկզբնական մեծ ներդրումները, որոնք պահանջվում են արևային համակարգերի գործարկման համար, արդարացնում են իրենց, ինչով էլ հենց հիմնավորվում է դրանց կիրառման նպատակահարմարությունը:

Որպես առավելություն հարկ է նշել նաև, որ արևային կոլեկտորների կիրառման համար առանձին տարածքներ հարկավոր չէ զբաղեցնել, քանի որ դրանք կարելի է տեղադրել անմիջապես շենքերի տանիքներին:

Հաշվի առնելով, որ ածխաջրածնային վառելիքը տարեցտարի թանկանում է, ուստի այլընտրանքային էներգետիկայի զարգացումն ավելի ձեռնտու է:

Արեգակնային էներգիան անսպառ և հուսալի աղբյուր է, որը տալիս է էներգետիկ անկախություն և չի աղտոտում շրջակա միջավայրը:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերի տեղակայման նպատակով արդեն իսկ իրականացվում են որոշ ծրագրեր, մասնավորապես՝ «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» մասնակցությամբ Հայաստանի չգազաֆիկացված բնակավայրերում իրականացվում է «Էներգաարդյունավետ» վարկային ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախատեսում է աստիճանականորեն ընդլայնել այսպիսի ծրագրերի իրականացումը, խրախուսելով որ յուրաքանչյուր շինություն ունենա ջեռուցման և տաք ջրի արտադրության իր անհատական համակարգը՝ հիմնված վերականգնող էներգետիկ ռեսուրսների վրա:

Ըստ ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040թ.) նախատեսվում է վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն օգտագործում, որը, հաշվի առնելով դրանց՝ նվազագույն ծախսումներով

էլեկտրաէներգիայի արտադրական հզորությունների զարգացման պլանի մաս կազմելու հանգամանքը, հանդիսանում է էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթություններից մեկը: Արևային կայանների կառուցումը, հանդիսանալով տնտեսապես ամենաշահավետը Հայաստանի պարագայում, հաշվի առնելով առկա ռեսուրսները և այս տեխնոլոգիայի զարգացման միտումները ողջ աշխարհում, կլինի գերակա մնացած տեսակների նկատմամբ՝ հաշվի առնելով համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշներով պայմանավորված սահմանափակումները:

2.23.5. Հեռահաղորդակցություն

Ըստ ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ դիտարկվող տարածաշրջանի տարածքում բջջային կապն ապահովում են "ՄՏՍ Հայաստան" և "Տելեկոմ Արմենիա" ՓԲ ընկերությունները:

Մարզի բնակավայրերը 100%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Ստորև աղյուսակով տրված են վերոնշյալ նախարարության տրամադրած տեղեկատվությունը «Տելեկոմ Արմենիա», «UCOM» և «ՄՏՍ Հայաստան» ՓԲ ընկերությունների և «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ» ՓԲ ընկերության կայանների առկայության վերաբերյալ տեղեկատվությունը:

Բջջային կայանների վերաբերյալ տեղեկատվություն

հ/հ	Բնակավայրի անվանում	Բջջային կայանի հասցե	Հողամասի մակերես (հա)	Պատկանելիություն
Կոտայք-1 Հրազդանի տարածաշրջան				
67	Ջրվեժ	Ջրվեժ գյուղ	0.0064	ՄՏՍ Հայաստան
67	Ջրվեժ	Կոտայք, գ. Ջրվեժ, այգեգործական ընկերություն, 2րդ զանգված բն.1		Տելեկոմ Արմենիա
68	Զովք			
69	Ձորաղբյուր	Ձորաղբյուր գյուղ	0.01	ՄՏՍ Հայաստան
69	Ձորաղբյուր	Կոտայք, գ. Ձորաղբյուր		Տելեկոմ Արմենիա
69	Ձորաղբյուր	Կոտայք, գ. Ձորաղբյուր (Օրբիտա կայան)		Տելեկոմ Արմենիա
69	Ձորաղբյուր	Կոտայք, գ. Ձորաղբյուր, Ազատության փող. Թիվ 31	0.02	UCOM

2.23.6. Աղբահանություն

Համայնքում կարևորագույն խնդիրներից մեկը կենցաղային աղբի հավաքման և տեղափոխման հարցն է: Աղբի անկանոն կուտակումների հիմնական կիզակետերն են համայնքի տարածքում գործող հանրային սննդի կազմակերպման և արտադրական հիմնարկների, Երևան-Գառնի տանող ավտոճանապարհի եզրամասերի, այգեգործական թաղամասերի, ինչպես նաև գերեզմանատների տարածքները: Ներկայումս

աղբահանության կազմակերպումը իրականացվում է «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի միջոցով, որը կազմակերպում է փողոցների սանիտարական մաքրումը, կենցաղային աղբի հավաքումը և տեղափոխումը աղբավայր, գերեզմանատների տարածքների մաքրումը

Ըստ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության Հրազդանում գործելու է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերը սպասարկող տարածաշրջանային սանիտարական աղբավայր:

Հայաստանի Հանրապետության Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև ստորագրված, ՀՀ ԱԺ-ի կողմից վավերացված միջազգային համաձայնագրով իրականացման փուլում է գտնվում «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է կառուցել ԵՄ չափանիշներին համապատասխան սանիտարական աղբավայր և երկու մարզերում ներդնել աղբահանության ինտեգրված արդյունավետ համակարգ:

Ակունք համայնքում գործելու է փոխաբեռնման կայան, որտեղ նախատեսվում է Աբովյանի տարածաշրջանի բնակավայրերից հավաքված աղբը կուտակել, խտացնել, ապա մեծ կոնտեյներներով տեղափոխել նոր կառուցվող սանիտարական աղբավայր:

Այս աշխատանքներին զուգահեռ երկու մարզերի ինտեգրված աղբահանության համակարգի ներդրման նպատակով միջազգային մրցույթով ընտրված շվեդական

«ՍՎԵԿՈ» ընկերության խորհրդատուների հետ մշակվում և ավարտական փուլում են ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի բոլոր բնակավայրերի համար աղբահանության սխեմաները: Մշակվել են աղբավայրի և փոխաբեռնման կայանների շահագործման համար անհրաժեշտ տեխնիկայի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը և ընթացքում են վերջիններիս գնման համար մրցութային փաթեթների պատրաստման աշխատանքները: Մշակվել են նաև երկու մարզերի բոլոր բնակավայրերում աղբահանության ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աղբատար մեքենաների ու աղբամանների տեխնիկական բնութագրերն ու քանակը: Նախատեսվում է իրականացնել գնումների գործընթացը:

2.24. Աղետների ռիսկերի կառավարումը

Համայնքում համայնքի ղեկավարի որոշմամբ 2018 թվականից ստեղծված է աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման համակարգ, կառավարման խորհուրդ, աղետների դեպքում բնակիչների տարհանման հանձնաժողով, բնակչության տարհանման, ուժեղ երկրաշարժերի դեպքում Ջրվեժ համայնքի գործոծողությունների, հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների պլանները:

Համայնքում իրականացվել է տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման գործողություններ, որը հիմք է հանդիսացել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման, նպատակային գործողությունների ու միջոցառումների պլանավորման և իրականացման համար:

Համայնքապետարանի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցները պարբերաբար վերապատրաստվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման» պետական ակադեմիայում:

2.25. Արտադրական և ընդերքօգտագործման տարածքներ

Համայնքի տարածքում գրանցված են բազալտի և գիպսակավի հանքավայրեր, որոնք ներկայումս չեն շահագործվում: Գործում է «Արեգա» պահածոների գործարանը, «Ջրվեժի մսամթերքի կոմբինատ»-ը, հացաթխման, հրուշակեղենի մի քանի փոքր ծավալի արտադրություններ:

2.26. Գերեզմանոցները

Ջրվեժ բնակավայրի տարածքը կազմված է երեք՝ իրարից անջատված հատվածներից: Դրանցից յուրաքանչյուրում կա այդ հատվածը սպասարկող գերեզմանատուն: Երկուսը՝ հարավային և արևելյան գերեզմանատները չունեն ընդլայնվելու տարածքային ռեզերվներ և դիտարկվում են որպես փակման ենթակա գերեզմանատներ: Հյուսիսայինը շրջապատված է գյուղատնտեսական հողերով /վարելահողեր/ և պետք է ունենա առնվազն 40 մետր լայնությամբ սանիտարական գոտի, որի առնվազն 60 % նախատեսվում է ծառապատել, ստեղծելով ստվար պաշտպանիչ ծառաշերտ գերեզմանատան պարագծով:

Ստորև ներկայացվում են համայնքի բնակավայրերում գերեզմանատների ցուցանիշները.

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑՆԵՐ

	ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ՄԱԿԵՐԵՍԸ
1	Ջրվեժ	3	2.95
2	Ձորաղբյուր	2	0.26
3	Ձովք	2	2.37

2.27. Կլիմայի փոփոխությունն ու գյուղատնտեսությունը

Հայաստանին բնորոշ է չոր, բարձրադիր մայրցամաքային կլիմա՝ տարվա չորս հստակ եղանակներով: Միջին տարեկան ջերմաստիճանը տատանվում է -8 ° C- ից (> 2500 մ)՝ բարձրադիր լեռնային շրջաններում, մինչև 12-14 °C՝ հովիտներում: Կլիմայի փոփոխությունը, ջերմաստիճանի բարձրացմամբ և տեղումների քանակի նվազմամբ, կարագացնի անապատացման գործընթացները՝ բացասաբար անդրադառնալով մշակաբույսերի արտադրության ոլորտի զարգացման վրա, ներառյալ՝ վնասատուներն ու հիվանդությունները: Կլիմայի փոփոխությունները կհանգեցնեն տափաստանային գոտու տեղաշարժի 250-300 մ դեպի վեր՝ անտառային էկոհամակարգերի ուղղությամբ: Միևնույն ժամանակ, անտառային գոտու տեղաշարժը փոքրացնելու է մարգագետնային

էկոհամակարգերի տարածքը, ինչը կհանգեցնի էկոհամակարգերի կառուցվածքի նշանակալի փոփոխությունների: Հայ ֆերմերներն արդեն իսկ առնչվում են օրվա և գիշերվա ընթացքում ջերմաստիճանի բարձրացման, ավելի անկանոն տեղումների, հիվանդությունների և վնասատուների հետ կապված փոփոխությունների, ինչպես նաև ավելի հաճախակի և ուժգին եղանակային երևույթների հետ, ինչպիսիք են ջրհեղեղները, երաշտը և անժամանակ ցրտահարությունները: Ընդհանուր առմամբ, Հայաստանը խիստ խոցելի է կլիմայի փոփոխության նկատմամբ, հատկապես կլիմայի հետ կապված բնական աղետների բարձր ռիսկերի տեսանկյունից, որոնք ազդում են կենսամակարդակի, տնտեսական և սոցիալական կայունության վրա: Ընդհանուր առմամբ, Արմավիրի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերը առավել ռիսկային են բնական աղետների առումով: Ակնկալվում է, որ ջերմաստիճանի հետ կապված ազդեցությունները հատկապես խիստ կնկատվեն Արարատյան դաշտում, քանի որ այդ տարածքում ջերմաստիճանն արդեն համեմատաբար բարձր է: Արարատյան դաշտավայրը (Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզեր) հատկապես խոցելի է երաշտի և ուշ գարնանային ցրտերի առումով, իսկ Շիրակը, Լոռին, Տավուշը և Վայոց ձորը ավելի խոցելի են կարկուտի և ջրհեղեղի նկատմամբ: Տաք քամին (խորշակը) առավել հաճախակի երևույթ է Սյունիքի, Վայոց ձորի, Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերում: Այլ մարզերի համեմատությամբ՝ Արարատյան դաշտն ավելի լավ է պաշտպանված երաշտի դեմ, քանի որ դաշտավայրում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասը ոռոգվում է: Ընդհանուր առմամբ, Հայաստանի գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցության հետևանքները կհանգեցնեն արտադրողականության զգալի անկման, վնասատուների և հիվանդությունների կողմից ճնշման ուժգնացման, անապատացման և հողերի քայքայման (էրոզիա) և վատթարացման (դեգրադացիա) հետևանքով գյուղատնտեսական ռեսուրսների կորստի, սննդի անվտանգության մարտահրավերների: Կանխատեսվում է, մասնավորապես.

♣ Ոռոգվող հողերի արտադրողականության կրճատում մոտ 24%-ով

♣ Արոտավայրերի ընդհանուր տարածքի և դրանց արտադրողականության կրճատում 4-10%-ով, մինչ 2030 թվականը

♣ Խոտի բերքատության նվազում 7-10%ով, ինչն էլ իր հերթին կհանգեցնի անասնակերի արտադրության ծավալների նվազմանը

♣ Գյուղատնտեսական նշանակության հողերի վատթարացում (դեգրադացում), բնական արոտավայրերի վատթարացման ուժգնացում

♣ Անկայուն եղանակ, զուգորդված ուժգին փոթորիկների, սաստիկ քամիների և հորդառատ անձրևների հետ, ինչը վնաս կհասցնի մշակաբույսերին, բերքատվությանը, նվազեցնելով բերքատվությունը 8-14%-ով մինչ 2030թ-ը

♣ Ոռոգման ջրի լրացուցիչ պահանջ, որը կկազմի մոտ 202 միլիոն մ3

♣ Բույսերի և կենդանիների հիվանդությունների և վնասատուների ճնշման ավելացում

♣ Պարենային անվտանգության խնդիրներ

Անասնապահություն. կլիմայի փոփոխության պատճառով երկարատև երաշտը լուրջ ռիսկեր է առաջացնում անասնապահության համար՝ բացասաբար ազդելով խոտի և անասնակերի արտադրության վրա: Կլիմայի փոփոխության սցենարների վերլուծության համաձայն՝ Հայաստանում կգրանցվի արոտավայրերի և խոտհարքների կրճատում 4-10%-ով, այդ թվում՝ ալպյան և ենթաալպյան արոտավայրերի կրճատում 19-22%- ով: Ակնկալվում է խոտհարքների արտադրողականության նվազում 7- 10%-ով, ինչը կհանգեցնի կերերի արտադրության կրճատման: Ջերմաստիճանի բարձրացումը և փոփոխական տեղումները կավելացնեն վնասատուների և հիվանդությունների ճնշումը

անասնապահության ոլորտում՝ առաջացնելով հիվանդությունների հաճախակի և ուժգին բռնկումներ:

Գյուղատնտեսության զարգացման 2020-2030-թ.թ. ռազմավարությունը գյուղատնտեսության գերակա ռազմավարության փաստաթուղթն է: Իր յոթ սկզբունքների շարքում ռազմավարությունն ընդգրկում է «կլիմայի փոփոխության հարմարվողականության, դիմակայության և շրջակա միջավայրի կայունության» սկզբունքը: Ռազմավարությունը ներառում է մի շարք կարևոր առաջնահերթություններ և միջոցառումներ, որոնք աջակցում են կլիմայի փոփոխության հարմարվողականությանը գյուղատնտեսության ոլորտում, ներառելով գյուղատնտեսության և կլիմայի վերաբերյալ տվյալների և կանխատեսման համակարգերի բարելավումը, բնական աղետներից պաշտպանության համակարգերում (օրինակ՝ հակակարկտային), ներդրումների խթանումը, երաշտի հանդեպ դիմացկուն մշակաբույսերի տեսակների ընտրությունը և խելացիգ գյուղատնտեսական ժամանակակից տեխնոլոգիաների խթանումը: Այնուամենայնիվ, այս գերակայություններն ու միջոցառումները հատվածային են և մասամբ են ընդգրկում կլիմայի փոփոխության մեղմացումն ու հարմարվողականությունը: Բացակայում են համարժեք ֆինանսական ռեսուրսները՝ Ռազմավարությունն ազդեցիկ դարձնելու համար: Այս համատեքստում կարևոր է նաև վերանայել ենթա-ճյուղային ռազմավարությունները՝ դրանցում կլիմայի փոփոխության ազդեցության և կլիմայի փոփոխության մեղմացման ու հարմարվողականության վերաբերյալ դրույթներ ներառելու համար, օրինակ, Բույսերի պաշտպանության ազգային ծրագրի նախագծում՝ նախքան ՀՀ կառավարության կողմից դրա ընդունումը:

Այլ ճյուղերի ռազմավարությունների հետ արդյունավետ կապերի հաստատում: Գյուղատնտեսության մեջ կլիմայի փոփոխության մեղմացումը և հարմարվողականությունը ներառում են բազմաթիվ փոխկապակցված ոլորտներ, ինչպիսիք են գյուղատնտեսական տեխնոլոգիաները, աղետների կանխարգելումը և կառավարումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, ռեսուրսների (ջուր, հող և այլն) բաշխումը և կառավարումը, գյուղական զարգացումը և այլն: Հետևաբար, վճռորոշ նշանակություն ունի բազմաթիվ դերակատարների կողմից համաձայնեցված գործողությունները՝ տարբեր ոլորտների ռազմավարությունների միջև սիներգիա հաստատելու ուղղությամբ:

Հողի էրոզիա: Հողի էրոզիայի պատճառ դարձած գործելակերպերը ներառում են՝ լանջերի օգտագործումն առանց տեխնիկական կառուցվածքների, վարի գործընթացների խախտումը, լանջերին ոռոգման կանոնների խախտումը, ոռոգման համակարգի անբավարար վիճակը, տրանսպորտային միջոցների կանոնավոր մուտքը դաշտեր, լեռնային և գյուղական տարածքների գերբնակեցումը և խոտհարքների անհարկի օգտագործումը, ցանքաշրջանառության բացակայությունը, ցանքսային կառուցվածքի խախտումը, գյուղատնտեսական բույսերի կողմից սննդանյութերի կլանումը, անբավարար կամ միակողմանի պարարտացումը, անտառների մելիորացման գործողությունների բացակայությունը, չկարգավորված (ոչ սանիտարական) ծառահատումները, գյուղական բնակչության (հատկապես լեռնային և սահմանամերձ շրջաններում) սոցիալական վատ պայմաններն ու այլն: Երկարաժամկետ դիտարկումները ցույց են տալիս, որ էրոզիայի արդյունքում հողի կորուստը հանրապետության լեռնային տափաստանային գոտիներում, որտեղ կիարռվում է թևավոր զութանով վարի համակարգը, և որտեղ կենտրոնացված է հումուսը՝ հողի ամենաարժեքավոր մասը, տարեկան կազմում է 1,5-24,0 տ / հա և ավելին 11 : Հողի հորիզոնների հզորությունը, հումուսի և հիմնական սննդանյութերի քանակը (ազոտ, ֆոսֆոր, կալիում) և ջրակայուն հատկությունները (> 0,25 մմ) զուգահեռաբար նվազում են հողի ավելի բարձր էրոզիայի, հատուկ և ծավալային կշիռների ավելացմանը,

նվազում է ընդհանուր ծակոտկենությունը և բույսերի համար հասանելի խոնավությունը, ինչը հանգեցնում է գյուղատնտեսական հողի տեսակների արտադրողականության նվազմանը: Մասնավորապես, բույսերի աճը էրոզիայի ենթարկված հողի վրա աղքատ է, արտադրողականությունը կրճատվում է, և մթերքները կորցնում են իրենց որակական հատկությունները: Հողի առողջության ու որակի վրա լուրջ ազդեցություն են թողել նաև ենթակառուցվածքների և հանքարդյունաբերական գործունեության ընդլայնումն ու քիմիական թափոնների արտանետումը (հաճախ ապօրինի) `պատճառելով հողի և ջրի աղտոտում[13]:

Ինտենսիվ այգիների ավելացմանը զուգընթաց մարզում կավելանա նաև սառնարանային տնտեսությունների թիվը: 2017թ. մարզում գործել են 18 սառնարանային տնտեսություններ՝ մոտ 9000 տ պահպանման կարողությամբ: 2018թ. կառուցվել է ևս 1 տնտեսություն 400 տոննա կարողությամբ և նախատեսվում է վերակառուցել 600 տոննա կարողությամբ սառնարանը՝ հասցնելով 1200 տոննայի: Սառնարանային տնտեսությունների պահպանման կարողությունը կհասնի մոտ 10000 տոննայի:

- **Արոտների արդյունավետ օգտագործում**. ներկայումս օգտագործվում է առկա արոտների 25 - 30 տոկոսը: Նշված ցուցանիշն ավելացնելու նպատակով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հեռագնա արոտներն էլեկտրասնուցմամբ ապահովելու ուղղությամբ, որի արդյունքում կկրճատվի միավոր արտադրանքի ինքնարժեքը և կավելանան անասնապահական մթերքների ծավալները:

- **Հողերի արդյունավետ, ամբողջական և նպատակային օգտագործում.** հողերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է սկսել չօգտագործվող հողերի հետ վերադարձի գործընթացը՝ համաձայն գործող կարգի (ըստ անհրաժեշտության կատարել նաև օրենսդրական փոփոխություններ) և նպատակային օգտագործման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարների վրա:

- **Ոռոգման համակարգերի կառուցում.** մարզի համայնքների ոռոգման համակարգերում հոսակորուստների նվազեցման և առանձին բնակավայրերին ոռոգման ջրով ապահովելու համար անհրաժեշտ է կառուցել նոր ջրագծեր և վերանորոգել հին ցանցերը:

Ելնելով ՀՀ կառավարության կողմից ներկայումս իրականացվող գյուղատնտեսական մթերքների արտադրությունը խրախուսող քաղաքականությունից (գազի գնի իջեցում, հարկային արտոնություններ և այլն), միաժամանակ մարզում առկա հողային ռեսուրսներից և նպաստավոր բնակլիմայական պայմաններից՝ նախատեսվում է մարզում ավելացնել փակ գրունտի բանջարեղենի և ծաղկի արտադրությունը: Մարզում ջերմոցային տնտեսության վարման ուղղությամբ մեծ փորձ կա:

Նախատեսվում է մարզում զարգացնել հացահատիկային մշակաբույսերի սերմարտադրությունը՝ ստեղծելով հացահատիկի սերմարտադրողների միություն: Սա ենթադրում է մի շարք երկարաժամկետ հետևողական միջոցառումների իրականացում, որոնք ուղղված կլինեն մարզում հացահատիկի ամբողջ տնտեսության վերականգնմանը:

Գյուղատնտեսության ոլորտի զարգացման մյուս կարևոր նախադրյալը անասնապահության արտադրողականության բարձրացումն է տոհմային տնտեսությունների հիմնման և արհեստական սերմնավորման միջոցառումներ իրականացնելու շնորհիվ:

[13] http://nature-ic.am/Content/announcements/12692/NAP_Agriculture%20assessment%20report_arm_FINAL.pdf

Գլուխ III. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումները

Բնապահպանական միջոցառումների հիմնական նպատակն է ապահովել բնակավայրի կայուն զարգացման ընթացքը, նվազեցնել զարգացման ծրագրերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

3.1. Շրջակա միջավայրի բարելավման միջոցառումներ

Նկատի ունենալով համայնքի տեղադիրքը, ռելիեֆի առանձնահատկությունները (թույլ բլրակային, միատարր, համեմատաբար հարթ), բուսածածկից ազատ չհրացված տարածքները, նպատակահարմար է Ջրվեժ-Ողջաբերդ գոտին՝ ընդհանուր առմամբ, և մասնավորապես, Ջրվեժ բնակավայրը զարգացնել որպես հանգստի, զբոսանքի, սպորտի և բուժման քաղաքամերձ գոտի՝ մայրաքաղաքի բնակիչների համար: Նշված ճյուղերի զարգացման նպատակով անհրաժեշտ է համապատասխան ենթակառուցվածքի առկայության ապահովում: Մասնավորապես, օգտագործելով շրջապատի պատմաճարտարապետական վայրերը, զբոսաշրջության զարգացման համար հարկ է նախատեսել հյուրանոցներ, կեմպինգներ և նմանատիպ այլ օբյեկտներ:

Գլխավոր հատակագծով նախատեսվում են համայնքի բնակլիմայական պայմաններից բխող և շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված հետևյալ քաղաքաշինական և տեխնոլոգիական միջոցառումները, որոնք պետք է նախատեսվեն հողամասերի կառուցապատման նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ.

- առողջարանների, հանգստյան տների, պանսիոնատների, բնակելի միկրոշրջանների նախագծման ժամանակ հաշվի առնել տեղանքի ինչպես լանդշաֆտա-կլիմայական, այնպես էլ միկրոկլիմայական առանձնահատկությունները,
- ընդարձակել լողավազանների, ցայտաշատրվանների, արհեստական լճակների կազմակերպումը՝ միկրեկլիմայական պայմանները մեղմացնելու նպատակով,
- կլիմայաբուժության կազմակերպման նպատակով նախագծային աշխատանքներ իրականացնելիս, հիպերինսոլյացիայի ազդեցությունից խուսափելու համար նախատեսել մասնակի օդափոխում ապահովող հատուկ սարքեր, այդ թվում՝ պտտվող տենտերի օգտագործմամբ արևաբուժության իմպուլսային մեթոդի կիրառման համար,
- հնարավորինս սահմանափակել արևի ուղիղ ճառագայթների ու տաքացած օդի ներթափանցումը շենքեր, մասնավորապես՝ պաշտպանական սարքեր բացվածքներին, բնակարանների և շրջապատող տեղանքի արհեստական հովացում, աէռարիաների մասնակի օդափոխում,
- քամուց և փոշուց պաշտպանության միջոցների կիրառում, մասնավորապես՝ միակցված կիսափակ կառուցապատում, որի անկյունը ուղղված է դեպի գերիշխող ուժեղ քամիների կողմը: Քամապաշտպան էֆեկտիվ միջոց են նաև ծառատունկերը, որոնք նաև կատարում են օդի թթվածնի կուտակչի դեր,
- հակաաղմկային միջոցառումների իրականացում, հատկապես Երևան-Գառնի մայրուղու հարակից տարածքներում և այլն:

Համայնքի զարգացման հիմնական ուղղվածությունն ընդունելով զբոսաշրջության և ռեկրեացիոն ճյուղերը, մասնավորապես՝ հաշվի առնելով այգեգործական կառուցապատման հատվածը, գլխավոր նախագծով նախատեսվում են մթնոլորտային օդի պահպանության հետևյալ միջոցառումները.

- համայնքի բնակելի և հասարակական շենքերի ջերմամատակարարման համակարգի կատարելագործում,
- համայնքի ճանապարհափողոցային ցանցի բարելավում,
- համայնքի կառուցապատված հատվածի կանաչապատման ընդարձակում, ինչպես նաև՝
- ավտոտրանսպորտի զինումը արտանետվող գազերի չեզոքացուցիչներով՝ համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 17-ի «Տրանսպորտային միջոցների վնասակար նյութերի արտանետման նվազեցման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1033-Ն որոշման պահանջների:

3.1.1. Համայնքի կանաչապատման միջոցառումներ

Համայնքի կանաչ տարածքների ընդհանուր մակերեսումը բավականաչափ մեծ է («Ջրվեժ» անտառ-պուրակ, տնամերձ հողամասեր, ամառանոցային այգիներ):

Գլխավոր հատակագծով առանձնացնել է ընդհանուր առմամբ 7.45 հա տարածք սանիտարական գոտիների կանաչապատման համար, 15.23 հա տրամադրվել է ամառանոցային կառուցապատման համար, որտեղ հողամասի առնվազն 70% -ը տրամադրվում է այգիների, բանջարանոցների և ծաղկանոցների կազմակերպման համար, բնակելի կառուցապատման առնվազն 60% -ը և հասարակական կառուցապատման առնվազն 20%-ը սահմանվել են կանաչապատման համար:

Աղյուսակ 11.2.-1. Կանաչ տարածքների տոկոսը գործառնական գոտիներում

Տարածքների գործառնական նշանակությունը	Կանաչապատ տարածքների բաժինը
1. ամառանոցային	70%
2. բնակելի	60%
3. հասարակական	20%
4. սանիտարական	1.45ա, որից առնվազն 50%-ը ծառապատ

Բոլոր բնակավայրերի տարածքներում նախատեսվում են կանաչապատման աշխատանքներ՝ հաշվի առնելով ՀՀՇՆ 30-01-2023 նորմերի պահանջները և նախատեսելով չընդհատվող (անընդհատ) լանդշաֆտառեկրեացիոն տարածքների համակարգ, որը պետք է ձևավորվի որպես ընդհանուր օգտագործման կանաչապատ գոտիների և բնական ռեկրեացիոն համալիրների հետ փոխկապակցված բաց տարածությունների ամբողջություն, որտեղ ներառվում են քաղաքային անտառապուրակների, զբոսայգիների, լայն ծառուղիների, բուլվարների, ճեմուղիների, պուրակների և դրանց սահմաններում գտնվող լճակների, ջրամբարների, լողափերով զբաղեցված տարածքները, բնակավայրերի անտառները, անտառապուրակները, անտառապաշտպան գոտիները, ջրամբարները, գյուղատնտեսական հողերը և այն հանդակները, ինչպես նաև տարածքները, որոնք օգտագործվում են հանգստի, զբոսաշրջության, ֆիզիկական դաստիարակությամբ և սպորտով զբաղվելու

նպատակներով: Տեսակային կազմին ներկայացվող պահանջները՝ ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներին համապատասխան նախատեսելով Հայաստանի Հանրապետությունում աճող ծառերի ու թփերի ցանկի և տարածքների ուղղահայաց գոտիականության համաձայն:

Փողոցային տնկարկների, ինչպես նաև ճեմելիքների համար կանաչապատող տեսականին ըստ ուղղահայաց գոտիականության՝

1) ստորին գոտու հյուսիսային անտառապատ շրջաններում (ծովի մակերևույթից 400-900 մ բարձրություն), Զանգեզուրում (ծովի մակերևույթից 400-1200 մ բարձրություն) և կիսաանապատային շրջաններում (ծովի մակերևույթից 800-1250 մ բարձրություն)՝ թխկի սրատերև, լայնատերև, թխկի դաշտային, նշենի սովորական, դրախտածառ, սզնի արևելյան, սերկևիլենի սովորական, սոսի արևելյան, կեռասենի, հացենի սովորական, հացենի սրապտուղ, ընկուզենի սովորական, տանձենի սովորական, տանձենի ուռատերև, տանձենի կովկասյան, բարդի նրբագեղ, բարդի ձյունասպիտակ, կաղնի վրացական, կաղնի արաքսյան, ուռենի բարձրաբուն, ուռենի սպիտակ, ուռենի սպիտակ, լացող, արոսենի սովորական, արոսենի պարսկական, արոսենի հունական, լորենի կովկասյան, գիհի կազակական, ցախակեռաս կովկասյան, սրնգենի կովկասյան, նոնենի, թխենի սովորական.

2) միջին գոտու հյուսիսային անտառապատ շրջաններում (ծովի մակերևույթից 900-1600 մ բարձրություն), Զանգեզուրում (ծովի մակերևույթից 1200-1800 մ բարձրություն), չորային սակավանտառ և չոր տափաստանային (ծովի մակերևույթից 1200-1850 մ բարձրություն) շրջաններում՝ թխկի սրատերև, լայնատերև, թխկի դաշտային, նշենի սովորական, դրախտածառ, սզնի արևելյան, սզնի հինգվարսանդանի, իլենի լայնատերև, հացենի սրապտուղ, հացենի սովորական, ընկուզենի սովորական, խնձորենի արևելյան, տանձենի կովկասյան, տանձենի սիրիական, տանձենի ուռատերև, թխենի սովորական, սոճի կովկասյան, կեռասենի, բալենի սովորական, արոսենի սովորական, սոսի արևելյան, բարդի նրբագեղ, բարդի ձյունասպիտակ, կաղամախի, կաղնի վրացական, դրախտածառ, ուռենի բարձրաբուն, ուռենի սպիտակ, ուռենի սպիտակ, լացող, ուռենի հնգառէջ, արոսենի պարսկական, արոսենի հունական, արոսենի երկակի, լորենի կովկասյան, թեղի էլիպսատերև, գերիմաստի ցախակեռաս կովկասյան, ցախակեռաս վրացական, ամելանխիեր կլորատերև, կոկռոշենի, գիհի կազակական, կիպրոս սովորական, հաղարջենի արևելյան, կեռասենի մահալերյան, դազիֆորա թփային (կուրիլյան թեյ), զկեռենի սովորական, սրնգենի կովկասյան.

3) վերին (բարձրադիր) գոտու մեզոֆիլ անտառային (ծովի մակերևույթից 1600-2000 մ բարձրություն), հարաբերական մեզոֆիլային (ծովի մակերևույթից 1800-2200 մ բարձրություն), լեռնատափաստանային և լեռնամարգագետնային (ծովի մակերևույթից 1800-2200 մ բարձրություն) շրջաններում՝ թխկի բարձր լեռնային, թխկի՝ սրատերև, թխկի՝ հիրկանյան, կեչի՝ Լիտվինովի, կեչի՝ ելունդավոր, բոխի՝ կովկասյան, բալենի՝ սովորական, սզնի՝ արևելյան, իլենի՝ լայնատերև, հացենի՝ արևելյան, թխենի՝ սովորական, սոճի՝ կովկասյան, կաղամախի, տանձենի՝ կովկասյան, տանձենի՝ սիրիական, տանձենի՝

ուռատերև, խնձորենի՝ արևելյան, կաղնի՝ արևելյան, արոսենի՝ սովորական, արոսենի՝ երկակի, արոսենի՝ հայկական, արոսենի՝ Կուզնեցովի, լորենի՝ կովկասյան, լորենի՝ մանրատերև, թեղի՝ էլիպսատերև, գերիմաստի, սրնգենի՝ կովկասյան, ամելանխիեր՝ կլորատերև, գիհի՝ բազմապտուղ, գիհի՝ երկարատերև, գիհի կազակական, այծուռենի, ուռենի սպիտակ, ուռենի բոսորագույն, կոկռոշենի եվրոպական, հաղարջենի արևելյան, հաղարջենի Բիբերշտեյնի, ցախակեռաս կովկասյան, չմենի ողկուզածաղկավոր:

Զբոսայգիների, զբոսապուրակների և բնակավայրերի կանաչ գոտիների համար կանաչապատող տեսականին, ըստ ուղղահայաց գոտիականության՝

1) ստորին գոտում կանաչապատման համար կիրառվում են ցանկում ներկայացված բոլոր ծառերն ու թփերը, բացի մրտավարդից, հապալասից, ինչպես նաև աստրագալուս (գազազգիներ), հալոստախուս և նիտրարիա (բորակազգիներ) տեսակներից՝ ցածր դեկորատիվություն ունենալու պատճառով.

2) միջին գոտում կանաչապատման համար կիրառվում են ցանկում ներկայացված բոլոր ծառերն ու թփերը, բացի ստորին գոտու համար ոչ հարմար տեսականուց, ինչպես նաև նռնենուց, թզենուց, կովկասյան խուրմայից, փշատերև ջունջուլենուց, սովորական ունաբիից, անտառային խաղողից, հունական շրջահյուսից, բարձր պարիլյակից, սովորական բաղեղից, որոնք ջերմասեր լինելու պատճառով այս գոտում ցրտահարվում են.

3) վերին (բարձրադիր) գոտում կանաչապատման համար կիրառվում են ցանկով ներկայացված բոլոր ծառերն ու թփերը, բացի միջին գոտու համար ոչ հարմար տեսականուց, ինչպես նաև գեղեցիկ թխկուց, ասորական, վրացական թխկիներից, նռնենուց, փոշնենուց, ալեհեր, մանրապտուղ բալենիներից, երկարակոթուն, վրացական, արաքսյան, ոսկեգույն կաղնիներից, սրաթփուկ գիհուց, ցաքուց, թփային հասմիկից, աղվեսաագիանման արմավաթփից, արևելյան սոսուց, եփրատյան բարդուց, Տիգրանի կտկենուց, փշատերև ջունջուլենուց:

Անտառատնկման աշխատանքեր

Ներկա պահին ՀՀ անտառները կազմում են երկրի ամբողջ տարածքի 10-11%–ը: ՀՀ-ի տարածքում անտառները բաշխված են շատ անհավասարաչափ: Անտառների գերակշռող՝ 60%-ից ավելին տարածված է Հյուսիսարևելյան հատածում , իսկ մոտ 40%-ը Հարավարևելյան հատվածում: Մեր անտառները ունեն բույսերի 323տեսակ: ՀՀ-ի անտառները ունեն սահմանափակ տարածք ինչն էլ պայմանավորած է բնակլիմայական պայմաններով,մեր երկրի աշխարհագրական դիրքով,մարդու ազդեցությամբ և մի շարք այլ գործոններով: ՀՀ-ի անտառների առանձնահատկություններից մեկն այն է, որ նրանք ունեն հարուստ կենսաբազմազանություն: Անտառներն ունեն կլիմայակարգավորիչ, հողապաշտպան և ջրապաշտպան նշանակություն: Դրանք կատարում են նաև սոցիալ-տնտեսական դեր:Ցավոք սրտի մարդու կողմից անտառների գերշահագործումը և բնական գործոնների բացասական հետևանքները ժամանակի ընդհացքում շատ մեծ վնաս են հասցրել ՀՀ անտառային էկոհամակարգերին: Ներկայումս ՀՀ-ի անտառազուրկ հատվածների մեծ մասը ժամանակին պատված է եղել անտառներով, բայց դարերի ընդհացքում մարդկանց կողմից անկանոն կերպով անտառների շահագործման և հատման հետևանքով դրանց զգալի մասը

ոչնչնացվել է, ինչպես նաև անհետացել են բույսերի բազմաթիվ արժեքավոր տեսակներ, իսկ այժմյան պահպանված անտառների մեծ մասը ցածրարժեք տնկարկներ: ՀՀ-ում ներկայումս հատուկ պահպանության տակ են գտնվում շատ անտառներ, բնության հատուկ պահպանվող տարածքների մոտ 90%-ը անտառներ են, այդ տարածքների մակերեսը կազմում է մոտ 311 հազար հեկտար: Քանի որ ՀՀ-ն ծովային երկիր չէ, այդ իսկ պատճառով թթվածնային օդի միակ աղբյուրն են հանդիսանում մեր անտառները, դրանք բարձրացնում են օդի հարաբերական խոնավությունը, կարգավորում մթնոլորտային տեղումների քանակը,մեղմացնում կլիման, լավ ազդեցություն թողնում շրջակա դաշտերի բերքատվության և մարդու առողջության վրա: ՀՀ անտառային ոլորտում առկա են տարբեր խնդիրներ, որոնք պայմանավորված են անտառամերձ համայքներում չքավորության և փայտանյութի մեծ պահանջարկի ապօրինի անտառահատումների շարունակման, չհամակարգված անտառօգտագործման, ինստիտուցիոնալ բարեփոխումների դանդաղ ընթացքի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարգավիճակի և կառուցվածքի անկատարության, ֆինանսական և մարդկային ռեսուրսների սակավության և այլ պատճառներով, ինչը հանգեցնում է ոչ արդյունավետ կառավարմանը, անտառների որակական և քանակական հատկանիշների նվազեցմանը: Անկանոն անտառահատումների և անտառապաշտպանական միջոցառումների բացակայության հետևանքով անտառներում առաջ է եկել կլիմայական պայմանների փոփոխության խնդիրը, ինչպես նաև դա նպաստում է հրդեհավտանգության բարձրացմանը: Մեծ վնաս են հասցնում նաև վնասատուներն ու հիվանդությունները, անասունների գերարածեցումը ինչպես նաև հողմերն ու երաշտը: Փայտանյութի մեծ պահանջարկի և սոցիալական պահանջարկների հետևանքով կատարվում են անօրինական անտառահատումներ, այս ամենը կրճատում է անտառային տարածքները և տեղի է ունենում տեսակային կազմի, կառուցվածքի փոփոխություններ: Ներկայումս ՀՀ բնական անտառների մոտ 70%-ը կազմալուծված ու ծերացած են, համեմատաբար դժվարամատչելի հասուն և գերհասուն անտառներում կենտրոնացած են փայտանյութի զգալի պաշարներ, որոնք ռելիեֆի կտրտվածության և դժվար հասանելիության պատճառով զերծ են մնում անտառօգտագործման շատ տեսակներից: Վերջին մեկ դարի ընդացքում մարդու կողմից կատարված տնտեսական գործունեության պատճառով ՀՀ-անտառների տարածքը կրճատվել է մոտ երկու անգամ, նվազել է անտառների արտադրողականությունը և թուլացել պաշտպանական ունակությունը: Անտառածածկ տարածքների ընդլայնման և էրոզացված լեռնալանջերի անտառաբարելավման նպատակով Հայաստանում կատարվում են արհեստական անտառատնկումներ: Անտառածածկ տարածքների ընդլայնման և բարելավման նպատակով մեկնարկել են 2020 թվականին 10 մլն ծառ տնկելու ծրագրի նախապատրաստական աշխատանքները: Հայաստանի վերջին մեկ, երկու տասնամյակի համար 10 մլն ծառ տնկելն աննախադեպ է, սակայն պետությունը պլանավորում է առաջիկա 5-6 տարվա ընթացքում այդ թիվն ավելացնել: Հայաստանը պարտավորություն է ստանձնել մինչև 2050 թվականը անտառածածկը կրկնապատկել, ինչը ենթադրում է 265 հազար հա լրացուցիչ անտառի տնկում: Խոսքը գնում է 800-900 մլն տնկիների մասին: Դա նշանակում է տարեկան պետք է սկսել տնկել 30 մլն ծառ: Եթե ամեն բան ընթանա ըստ

պլանավորվածի՝ ներկայացված ծառ տնկելու մասին ծրագրի, ապա ՀՀ անտառածածկը 2050թ.-ին կունենա շատ լավ հեռանկար:

Մարզում հնարավորության սահմաններում նախատեսել անտառապատման աշխատանքներ:

3.1.2. Մթնոլորտային օդի պահպանություն

Դիտարկվող տարածաշրջանի մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները հեռանկարում դարձյալ կմնան ավտոտրանսպորտը և ջեռուցման համակարգերը:

Հաշվի առնելով բնակավայրերի ավտոմոբիլային պարկի սպասվող աճը, հաշվարկային ժամկետի վերջում նախկինի պես օդի աղտոտման մեջ գերակայող բաժինը կկազմի ավտոմոբիլային տրանսպորտը: Միևնույն ժամանակ ջեռուցման շրջանի ընթացքում որոշակի մաս կկազմեն նաև ջեռուցման համակարգերում վառելիքի այրման արտանետումները, որոնք նույնպես ունեն ածխի միտում:

Ավտոտրանսպորտի արտանետումներով օդի աղտոտման մակարդակի իջեցմանն ուղղված են հետևյալ միջոցառումները.

- փողոցա-ճանապարհային ցանցի զարգացման սխեմայի իրականացումը: Սխեմայի իրականացումը թեկուզ որոշակիորեն կմեծացնի տրանսպորտային հոսքերը, սակայն նաև կհանգեցնի անմիջապես բնակավայրի մեջ տեսակարար արտանետումների 10 – 15 %-ով կրճատմանը
- ճանապարհային ծածկի բարելավում
- ճանապարհային երթևեկության կազմակերպման կատարելագործում և փողոցների թողունակության մեծացում
- բնական գազով աշխատող ավտոմեքենաների քանակի ավելացում
- մայրուղիների երկարությամբ տեսակային կայուն կազմով պաշտպանիչ կանաչ շերտերի ստեղծում:

Ջեռուցման համակարգերի արտանետումների կրճատման հիմնական ուղղությունը՝ ժամանակակից կաթսայական սարքավորումների ներդրումն է և էներգաարդյունավետության բարձրացումը:

Հաշվի առնելով ժամանակակից ջեռուցիչ համակարգերի ավելի բարձր էներգաարդյունավետության բնութագրերը, բնակչության որոշակի մասի կողմից դրանց ներդրման արդյունքում վնասակար նյութերի արտանետումների սպասվող կրճատումները կկազմեն 10 – 12 % (հիմնականում ՕԳԳ-ների տարբերության հաշվին): Ջրային ռեսուրսների պահպանություն

Նախատեսված են ջրամատակարարման ցանցերի վերանորոգման աշխատանքներ, որոնք կնպաստեն ջրի կորուստների կտրուկ կրճատմանը և հողերի աղտոտման նվազեցմանը:

Կեղտաջրերի խնդրի լուծման հիմնական միջոցառումներն են՝

- բնակավայրի կոյուղացում,
- մաքրման կայանի շինարարություն,
- Երևան քաղաքի Ջրվեժ բնակելի թաղամասի կոյուղու ցանցին միացնող կոյուղատարի կառուցում:

Ջրապաշտպան գործունեության կառավարման արդյունավետության բարձրացման և ջրային օբյեկտների վիճակի օբյեկտիվ գնահատման համար անհրաժեշտ է իրականացնել կազմակերպչական հետևյալ միջոցառումները.

- հաշվառել աղտոտման բոլոր աղբյուրները, հոսքաջրերի քանակը և կազմը և սահմանել հսկողություն
- ընդլայնել մակերևութային ջրահոսքերի մոնիտորինգի համակարգը:

Զարգացման ծրագրի իրականացման արդյունքում սպավում է ջրամատակարարման և ջրահեռացման ծավալները ավելացում բնակչության աճին համաչափ:

Հաշվի առնելով ջրապահպան միջոցառումները, ջրային ավազանի վրա ազդեցության ավելացում չի նախատեսվում:

3.1.3. Հողային ռեսուրսների պահպանություն

Հողերը դեգրադանում են մարդու ոչ խելամիտ տնտեսական գործունեության հետևանքով և բնական ճանապարհով՝ էրոզիայի, աղակալման, ճահճացման, օգտակար հանածոների ոչ ռացիոնալ արդյունահանման, քաղաքների, արդյունաբերական ձեռնարկությունների, ճանապարհների, շինարարական օբյեկտների սխալ պլանավորման, հողերի քիմիական աղտոտման և այլ պատճառներով: Հայաստանում հողերի պահպանության հիմնական ուղղությունն էրոզիայի դեմ պայքարն է՝ հողի վերին բերրի շերտը դեգրադացումից և հողատարումից պաշտպանելու համար: Հողատարման երևույթների զարգացմանը նպաստում են վերընթաց գոտիականությունը, ռելիեֆի մասնատվածությունը, բարձրությունների տատանումները՝ լանջերի թեքությունները, արոտավայրերի գերշահագործումը, սխալ անտառհատումները, հողի ոչ ճիշտ մշակումը, մակերևութային հոսքի չկարգավորվածությունը և այլն: Հայաստանում տարբեր աստիճանների էրոզացված են հողերի ընդհանուր տարածքի 47 %-ը, մշակելի հողերի՝ 26 %-ը, որի հետևանքով կորսվում է հողի սննդարար շերտի 25 %-ը: Հողատարման երևույթներն առավել ուժեղ են Արագածոտնի, Սյունիքի, Կոտայքի, Լոռու և Վայոց ձորի մարզերում:

Հողերի պահպանության և ռացիոնալ օգտագործման լուծման ուղիները

Հայաստանում հողային պաշարների պահպանության ընթացքում անհրաժեշտ է ապահովել հողերի նպատակային օգտագործումը, կատարելագործել հողերի պահպանության և օգտագործման պետական վերահսկողությունը՝ կիրառելով Հայաստանի հողերի օրենսդրական պահպանության հիմունքները, ստեղծել խախտված հողերի վերականգման հիմնադրամ, ապահովել արոտավայրերի ընդհանուր օգտագործման սզբունքները, ինչպես նաև կանխարգելել տարբեր ախտոտիչների վտանգավոր ազդեցությունը հողերի վրա: Հողերի աղտոտման կանխման նպատակով ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, որոնցից են մաքուր տեխնոլոգիաների ներդրմանը նպաստող տնտեսական մեխանիզմները, արտանետումների և թափոնների առաջացման նվազեցմանը ուղղված միջոցառումները:

Հողերի պահպանության ոլորտում իրականացվում են մի շարք ծրագրեր ու նախագծեր, այդ թվում նաև՝ միջազգային կազմակերպությունների հետ: Հողերի պահպանությունը, որն ուղղված է հողերի նպատակային և ռացիոնալ օգտագործմանը,

ներառում է տնտեսական, կազմակերպչական, օրենսդրական և այլ միջոցառումների մշակում և կիրառում:

Հողերի դեգրատացիայի դեմ պայքարելու հարցը Հայաստանում համարվում է առաջնակարգ խնդիր: Այն ճիշտ հիմքերի վրա դնելու համար ավելի արդյունավետ է դեգրատացիայի կանխումը, քան պայքարել դրա հետևանքների դեմ, որն ավելի դժվար է ու պակաս արդյունավետ:

Առկա հիմնախնդիրներով պայմանավորված հողային ռեսուրսների կառավարման ոլորտում որպես ուղղություններ են դիտարկվում.

Օրենսդրության ոլորտում՝ հողային ռեսուրսների կառավարման համակարգում սահմանել հողերի ըստ նպատակային նշանակության օգտագործման նկատմամբ սահմանափակումները և իրավական ռեժիմը, սակայն բարելավելով հողային ֆոնդի հաշվառման համակարգը և ներդնելով հողօգտագործումն ու քաղաքաշինական գործունեությունը կարգավորող հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթերում հողերի գոտևորման նոր համակարգ:

Ուժեղացնել հողերի օգտագործման ու պահպանության նկատմամբ վերահսկողությունը՝ իրականացնելով հանրապետական, մարզային, համայնքային ծրագրեր՝ ուղղված հողերի օգտագործմանն ու պահպանությանը:

Հողերի պահպանության ոլորտում հողերի դեգրադացիայի նվազեցումը և կանխարգելումը, այդ նպատակով հակաէրոզիոն, հակասողանքային և մելորատիվ միջոցառումների կազմակերպումը, խախտված հողերի վերականգնման (ռեկուլտիվացիա) միջոցառումների իրականացումը, սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության հողամասերի միավորման, խոշորացման սկզբունքների սահմանումը:

Տեղեկատվության ոլորտում՝ արդիական տեխնոլոգիաների վրա հիմնված երկրատեղեկատվական համակարգերի ստեղծումը՝մոնիթորինգի չափորոշիչների կիրառումով, համայնքների միջև, լիազորությունների փոխանցումը համայնքներին (բացառելով դրանց մասնավորեցումը) ապահովելով հողերի դեգրատացիայի կանխարգելումը և կենսաբազմազանության պահպանությունը:

Իրավիճակը բարելավելու լավագույն տարբերակը կլիներ թերևս այն, որ պարարտանյութերի ներկրման դժվարություններն օգտագործվեին ի նպաստ օրգանական կամ կենսաօրգանական ուղղվածությամբ գյուղատնտեսության զարգացման, երբ անօրգանական բնույթի սննդատարրերը փոխարինվում են տարբեր եղանակներով վերամշակված գոմաղբում և այլ թափոններում (կենսահումուս, մեթանային խմորման կոնվերտ) առկա բաղադրիչներով: Այս դեպքում հողը ոչ միայն հարստանում է անհրաժեշտ սննդատարրերով, այլ նաև հումուսի առաջացման համար անհրաժեշտ բակտերիալ կազմով: Այդպիսի հողերում աճող բույսերը գրեթե կարիք չունեն քիմիկատների միջամտության, իսկ աճեցրած բերքը որակվում է որպես էկոլոգիապես մաքուր և հեշտությամբ է գտնում իր տեղը շուկայում: Վերջին տաս տարիների ընթացում մասնակի հաջողությամբ փորձեր են արվել Հայաստանում տարածել կենսահումուսի մշակույթը: Առաջին քայլերն են արվում գյուղատնտեսության թափոնները՝ գոմաղբ, բուսական մնացորդներ, օգտագործել կենսագազ և բարձրաարժեք կենսաօրգանական պարարտանյութ ստանալու ուղղությամբ: Կենդանիների գլխաքանակը երկրում այնպիսին է, որ ոչ միայն կապահովի բոլոր գյուղատնտեսական հողերն արժեքավոր կենսապարարտանյութերով, այլև թույլ կտա արտահանել խտացված պատրաստուկներ: Հայաստանն ունի ևս մեկ բնական ռեսուրս, որը հողի որակը բարելավող հիանալի միջոց է: Խոսքը երկրի հյուսիսում և հյուսիս-արևելքում հայտնաբերված ցեոլիթների մեծ պաշարների մասին է: Դրանք բարելավում են հողի գազափոխանակությունը և ապահովում սննդանյութերի մուտքը բույսի մեջ փոքրիկ

չափաբաժիններով, ինչը չի հանգեցնում սննդատարրերի կուտակման բույսի մեջ և դրանով նպաստում է բույսի աճի և արտադրողականության բարձրացմանը: Հայաստանի հողերին սպառնում է աղակալման, իսկ այն չկանխելու դեպքում՝ անապատացման վտանգ: Հայաստանը ունի 5 հազար հեկտար առաջնային աղակալման հողեր, ինչը պայմանավորված է հողերի կազմով ու կառուցվածքով, և երկրորդային աղակալման 25 հազար հեկտար հողեր, որոնք առաջացել են սխալ շահագործման կամ ոչ պատշաճ ագրոտեխնիկայի կիրառման հետևանքով[3]: Խնդիրը ոչ միայն այն է, որ Հայաստանը առանց այն էլ սակավահող է, այլ որ այդ հողերը գտնվում են գյուղատնտեսության վարման համար ամենաբարենպաստ գոտում՝ Արարատյան հարթավայրում, ուր կա և ոռոգման ջուր և ավելի քան բավարար ինսուլացիա մեկ սեզոնի ընթացքում մի քանի բերք ստանալու համար: Միջոցառումները, որոնք կարող են կանխել հետագա աղակալումը և դարձնել այդ հողերն օգտագործելի, հետևյալն են.

- Մակերեսային ջրերի խորացում դրենաժային համակարգի միջոցով
- Տրանսպիրացիայի նվազեցում ջրածնատեխնոլոգիաների կիրառման և դաշտապաշտման անտառաշերտերի միջոցով
- Հալոֆիտ և աղադիմացկուն բուսատեսակներ մշակելու ու ճիշտ ցանքաշրջանառությանուն կատարելու միջոցով

Գյուղատնտեսության համար գլխավոր արտադրամիջոց ծառայող հողատարածությունը մեր անփոխարինելի հարստությունն է և այն ամեն կերպ պետք է պահպանվի, պետք է բարձրացվի նրա բերրիությունն ու օգտագործման ինտենսիվությունը: Այսպիսով քանի, որ Հայաստանի հողային ռեսուրսների մի մասն է միայն հարմար երկրագործության համար, ըստ որում, դրանց բնական բերրիությունն էլ բարձր չէ, բավարար արդյունք ստանալու համար անհրաժեշտ է կիրառել մեծ աշխատանք ու միջոցներ պահանջող բարելավման միջոցառումների մի ամբողջ համալիր: Այստեղից էլ բխում է հողային ռեսուրսների, հատկապես նրանց արժեքավոր մասի՝ մշակովի հողերի պահպանման ու անընդհատ բարելավման հույժ կարևորությունը:

Հողային ծածկույթի պահպանման համար առաջնահերթ առաջարկված են հակաէռոզիոն մի շարք միջոցառումներ (ագրոմելիորատիվ, անտառմելիորատիվ, հիդրոտեխնիկական, հակահեղեղային, հակասողանքային):

Առանձնակի դեր կարող է ունենալ հետագա կանաչապատումը:

3.1.4. Աղբահանում

Շրջակա միջավայրի վրա քաղաքային թափոնների վնասակար ազդեցության մեղմման և կանխարգելման համար անհրաժեշտ է հետևյալ համալիր միջոցառումների իրականացումը.

- կենցաղային թափոնների կուտակման ժամանակակից աղբավայրի կազմակերպում,
- կենցաղային թափոնների տեղափոխման շարժակազմի և տեխնիկական սարքավորումների արդիականացում
- անկազմակերպ աղբյուսների վերացում:

Ելնելով բնակչության աճի ցուցանիշներից աղբի քանակները կկազմեն՝ 3449.2 մ3/տարի: Սակայն նախատեսված միջոցառումների իրականացումը թույլ կտա կրճատել տեղակայվող աղբի քանակները մինչև 2759.4 մ³/տարի՝ ավելի քիչ, քան ներկա իրավիճակում:

Գլուխ IV. Քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ

4.1 Ներածություն

Գլխավոր հատակագծի մշակման հիմնական նպատակը, տարածքային պլանավորման միջոցով, համայնքների համար բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման ու կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է:

Քաղաքացիական պաշտպանության (ՔՊ) ինժեներատեխնիկական և արտակարգ իրավիճակների (ԱԻ) կանխարգելիչ միջոցառումներն ուղղված են մարտական գործողությունների, ինչպես նաև տարերային և տեխնածին բնույթի ռիսկերի կանխատեսմանը, կանխարգելմանը, իսկ դրանց առաջացման դեպքում բնակչության և տարածքների պաշտպանությանը: Այս միջոցառումներն ապահովում են բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում և մանրամասն հատակագծման նախագծերում հատուկ կարևորագույն նշանակության օբյեկտների գործունեության կայունությունը, շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, տրանսպորտային հաղորդակցության ուղիների անվտանգությունը:

ՀՀ Կոտայքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ Կոտայք - 10 համակցված տարածքի ինժեներա-երկրաբանական նախապատրաստումը, տարերային և տեխանծին վտանգավոր երևույթներից պաշտպանությունը (այդ թվում՝ երկրաշարժից), ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ինժեներա-տեխնիկական միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, սեյսմիկ ռիսկի նվազեցման անհրաժեշտ միջոցառումների իրականացում կարգավորվում են համապատասխան իրավական ակտերով, համայնքային և մարզային մակարդակներում մշակված արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններով և այլ նորմատիվա-իրավական ակտերով, որոնք նպատակաուղղված են բնակավայրի տարածքում անվտանգ, բարենպաստ, կայուն կենսամիջավայրի ձևավորմանը: Փողոցների նախագծային լայնությունը, կարմիր գծերում, նախատեսվում է նվազագույնը 3.0 մ, որպեսզի շենքերի և շինությունների փլուզման գոտիներում հնարավոր լինի փրկարարական ստորաբաժանումների առաջխաղացումը:

Ինժեներական հաղորդակցության ուղիների նախագծման հիմքում դրվում է բնակավայրերի կենսագործունեության հուսալի ապահովումը, ինչպես խաղաղ, այնպես էլ արտակարգ իրավիճակներում և ռազմական գործողությունների ժամանակ:

Անհրաժեշտ է նախատեսել բնակավայրերի կենտրոնացված ազդարարման համակարգի վերականգնում:

4.2. Ընդհանուր բնութագիրը

Կոտայք - 10 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքը ներառում է Ջրվեժ, Զովք, Ջորաղբյուր՝ թվով 3 բնակավայրեր:

4.3. Վտանգավոր բնական երևույթներ

Կոտայք - 10 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքի բնակավայրերը մտնում են 8-9 բալ ուժգնություն ունեցող սեյսմիկ գոտում:

Մարզի տարածքով է անցնում 200 կմ երկարությամբ, հինգ սեգմենտից բաղկացած Գառնիի տեկտոնիկ ակտիվ խզվածքը (ԳԽ), որն անցնում է Նախիջևանով, Երևանի արևելյան մասով (ԳԽ-2, ԳԽ-3) և միանում է Փամբակ – Սևան – Սյունիք խզվածքին:

Մարզի տարածքին հատկապես մեծ վնաս պատճառած երկրաշարժերից հայտնի են՝ 906, 1679, 1828 թվականների երկրաշարժերը:

Հարկ է նշել, որ սեյսմամիկրոշրջանացման աշխատանքներն իրականացվում են սեյսմաշրջանացման տվյալները հստակեցնելու նպատակով՝ կախված տեղային գրունտային, տեկտոնական, գեոմորֆոլոգիական պայմաններից:

4.4. Տարածքի սեյսմիկ շրջանացման քարտեզ



Կոտայք - 10 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքների բնակավայրերին սպառնացող բնածին վտանգների վերաբերյալ տեղեկատվություն՝

N	Բնակավայրեր	Ուժեղ կարկնուտ	Ուժեղ քամի	Սողանք	Քարաթափ	Փլուզում	Հեղեղ	Սելավ	Հորդառատ անձրև	Ամպրոպ	Ցրտահարություն	Երկրաշարժ	Ուժեղ ձյունատեղում	Ուժեղ ձնաբուք
	Կոտայք-10													
1.	Ջրվեժ		V									V		
2.	Ձովք		V									V		
3.	Ձորաղբյուր		V						V			V	V	

Տարածքի ջրաերկրաբանական քարտեզ
(սողանքավտանգ և սելավավտանգ տեղամասեր)



4.5. Տեխնածին վտանգներ

Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներ կարող են առաջանալ կոմունալ-էներգետիկ ցանցերում և հրդեհապայթունավտանգ օբյեկտներում:

Կոտայք – 10 համակցված տարածքում ընդգրկված բնակավայրերում տեխնածին արտակարգ իրավիճակների օջախներ են համարվում կոմունալ-էներգետիկ ցանցը՝ կենցաղային գազատարները, կոյուղու նխմելու ջրագծերը, էներգամատակարարման համակարգերը, հրդեհապայթունավտանգ օբյեկտները:

Բնակելի շինություններից հակահրդեհային միջտարածությունը ԱԳԼՃԿ-ների համար սահմանված է 50 մետր, իսկ ԲԼԿ-ների համար 8-15 մետր՝ կախված շինությունների հրակայունության դասից:

Կոտայք – 10՝ հրդեհապայթունավտանգ օբյեկտների ցանկ.

Հ/հ	Օբյեկտի անվանումը	Հասցեն	Գործունեության տեսակը	Նշումներ
1.	«Մուլտի Լեոն»	Ջրվեժ-Գառնի	ԱԳԼՃԿ	մայրուղի թիվ 2

Տեղեկատվություն

ՀՀ Կոտայքի մարզում գտնվող ջրամբարների վերաբերյալ

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Գտնվելու վայրը	Տնօրինող կազմակերպության անվանումը (տնօրեն / հեռախոս)	Ջրի ծավալը (մ³)			Տեխն. Վիճակ /Ջրամաբարի նպատակը
				նախագծային	փաստացի	օգտակարը	
1.	Աղբյուրակի (Ախպարայի, Ծովինարի)	Հրազդան	«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ, գլխ. տն.՝ Ա. Կիրակոսյան, 055-771-177, 093-900-223, 010-245-099, 012-280-028, 093-900-209	5 600 000	2 200 000	4 100 000	բավարար / էներգետիկ
2.	Մարմարիկի	Արտավազ	«Ջրառ» ՓԲԸ, տն.՝ Աբգարյան, 012-910-909, 012-750-077, 012-740-077, 093-287-884, «Մարմարիկ»	24 000 000	3 950 000	23 000 000	բավարար / ոռոգման

			ջրամբ. տն.՝ Անդրեասյան, 041-799-000				
3.	Սևաբերդի	Սևաբերդ	«Ջրառ» ՓԲԸ, տն.՝ Աբգարյան, 012-910-909, (հերթ.՝ Ա. Մովսիսյան, 093-962-244)	6 000 000	0	3 400 000	պատվարը՝ բավարար, թասը՝ անբավարար / ոռոգման
4.	Գեղարդալիճ	գ. Դվին		3 400 000	0	1 540 000	բավարար / ոռոգման
5.	Արգելի	Նոր Հաճընի և Նոր Գեղիի տարածք		1 000 000	500 000	300 000	բավարար / էներգետիկ

Ջրամբարներում վթարի դեպքում ջրածածկման ենթակա տարածքները

Հ/հ	Մարզի անվանումը	Ջրամբարների անվանումը	Ջրածածկման ենթակա բնակավայրերի անվանումը
4.	Կոտայք	Աղբյուրակի	Բջնի, Արզական, Քարաշամբ, Գետամեջ
		Մարմարիկ	Բջնի, Արզական, Քարաշամբ, Գետամեջ
		Սևաբերդ	Ակունք, Նոր գյուղ, Մայակովսկի, Բալահովիտ, Առինջ

Կոտայք – 10 համակցված տարածքում ճառագայթավտանգ, քիմիապես վտանգավոր օբյեկտներ չկան:

Ջրամբարների և դրանց հնարավոր փլուզման դեպքում ջրածածկման գոտիների ցանկը տեղադրված է ամբողջությամբ, քանի որ արտակարգ իրավիճակների արձագանքման պլաններով, որոշակի իրավիճակներում նախատեսված են հարևան համայնքների փրկարարական ուժերի արձագանքման կազմակերպումը:

4.6. Պաշտպանական կառույցներ

Բնակչության պատսպարումն իրականացվում է նաև այլ դեպքերում՝ խոշոր աղետների և ռազմական գործողությունների ժամանակ: Այս դեպքերում բնակչության պատսպարումն իրականացվում է ապաստարաններում, հակաճառագայթային թաքստոցներում և պարզագույն թաքստոցներում, վերջիններս կարող են հանդիսանալ նկուղներ, կիսանկուղներ, գետնանցումներ, հանքախորշեր և այլ:

Կոտայքի մարզի Կոտայք - 10 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքային պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման համար ներառված

բնակավայրերում բնակչության պատսպարումը կազմակերպելու նպատակով՝ մարզում առկա և անհրաժեշտ պաշտպանական կառույցների ցանկ՝

Համայնք	ապաստարաններ			հակաճառագայթային թաքստոցներ			նկուղներ	
	տիպը, դասը	քանակը/ տարող. հատ/մարդ	պատրաստ հատ/մարդ	դասը	քանակը/ տարող. հատ/մարդ	պատրաստ հատ/մարդ	քանակը	տար.
1	2	3	4	5	6	7	8	9
1. Գառնի		0			0		230	4600
2. Հացավան		0			0		33	660
3. Գեղադիր		0			0		42	880
4. Ողջաբերդ		0			0		80	1200
5. Ջրվեժ		0			0		188	5760
6. Ձորաղբյուր		0			0		166	3320
7. Մայակովսկի		0			0		89	1780
8. Առինջ		0			0		145	670
9. Ռադիոկայան		0			0		50	920
10. Պտղնի		0			0		35	720
11. Բալահովիտ	ՆԿ/2 ՆԿ/3	1/50 2/950	1/300		0		760	3500
12. Գետամեջ		0			0		35	700
13. Նոր գյուղ		0			0		120	2400
14. Աբովյան	ՆԿ/2 ՆԿ/3	2/2050 1/300	2/2050	IV	12/11497	0	1103	42039
1. Քանաքեռավան		0			0		78	1560
2. Քասախ		0			0		225	4050
3. Պռոշյան		0			0		200	4200

Պաշտպանական կառույցների ցանկը տեղադրված է ամբողջությամբ, որպեսզի համայնքների ղեկավարները մարզի զարգացման ծրագրերում ներկայացնեն անհրաժեշտ կառույցների շինարարության կամ եղածների վերակառուցման ու վերազինման ծախսերը:

4.7. Բնակչության պատսպարում

Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝

ա) պաշտպանական կառույցների վաղօրոք շինարարությունը.

բ) պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստ վիճակում.

գ) պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը.

դ) արագ կառուցվող թաքստոցների շինարարության կազմակերպումն (անհրաժեշտ շինանյութերի պահեստավորում և պահանջվող տեխնիկա) ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ:

Խաղաղ ժամանակ, պաշտպանական կառույցները, համաձայն քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերի պահանջների, կարող են օգտագործվել տնտեսական նպատակներով կառույցի ծավալի 40%-ի չափով, ազատման ժամանակը պետք է լինի ոչ ավելի 6 ժամից, օգտագործման ժամանակ պետք է ապահովվի շինությունների և կառուցվածքների պահպանությունն ավերածությունից ու խոնավությունից:

Պաշտպանական կառույցները տարբերվում են կառուցման ժամկետներով՝

ա) խաղաղ ժամանակ կառուցվող թաքստոցներ.

բ) պատերազմի սպառնալիքի ժամանակ կառուցվող պաշտպանական կառույցներ՝

- արագ կառուցվող թաքստոցներ,

- պարզագույն թաքստոցներ:

Արագ կառուցվող թաքստոցները կառուցվում են ամենասեղմ ժամկետներում՝ առավելագույնս օգտագործելով առկա հավաքովի կառուցվածքներն ու նյութերը, պարզեցված սարքավորումները:

Արագ կառուցվող պաշտպանական կառույցների տեղակայման վայրը և թիվը որոշվում են քաղաքացիական պաշտպանության մարմինների կողմից՝ ելնելով խաղաղ ժամանակ դրանցով բնակչության փաստացի ապահովվածությունից:

Պարզագույն թաքստոցները կառուցվում են արտակարգ իրավիճակների ու պատերազմի սպառնալիքի ժամանակահատվածում բնակչության այն մասի համար, որն ապահովված չէ պաշտպանական կառույցներով, որոնց շինարարության պլաններն ու ժամանակացույցերը վաղօրոք մշակվում են արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարմինների կողմից:

4.8. Բնակչության ազդարարում և իրազեկում

